



## ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2008 թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԵՐԿՐՈՒՄ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ  
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏԱՆ ՍԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2009

## Սուֆիներից

Մի անգամ Աբու ալ-Վիստամիի աշակերտները քողոքեցին նրան Սատանայից: Նրանք ասացին. «Սատանան խլում է մեր հավատը»: Շեյխը կանչեց Սատանային և սկսեց նրան հարցաքննել: Սատանան ասաց. «Ես ի զորու չեմ ստիպել որևէ մեկին անել որևէ մի քան: Ես չափազանց վախենում եմ Աստծուց, որ հանդգնեմ նման քայլի: Իրականում մարդկանց մեծամասնությունը քողմում է իր հավատը ամենաանհերեթ պատճառներով: Ես ուղղակի հավաքում եմ նրանց կողմից դեմ նետված հավատի կտորտանքները»:

Շեյխ Մուզամեթ

«Սինչ կվատնես սեփական ուժերդ մեկ ուրիշի բարեհաճությունը շահելու վրա, քաց չքողնես հնարավորությունը վերագտնելու ինքդ քեզ»:

Միրզա Հալիք

## Զգուշացե՛ք, նրանք շարունակում են պաշտոնավարել

1. Քաղաքացի Ա.Ս.-ն նախաքննության ընթացքում ներկայացվել է ճանաչման՝ ձեռնաշղթան ձեռքից կախված վիճակում (տե՛ս, օրինակ 2, էջ 133):

2. «Հատուկ քննչական ծառայության հատկապես կարևորագույն գործերով քննիչ Կ.Թ.-ի որոշմամբ կալանք է դրվել քաղաքացի Է.Ը.-ի անվամբ գրանցված անասնապահական համալիրի վրա, պատճառաբանելով, որ այդ գույքի փաստացի սեփականատերը հանդիսանում է քրեական գործով մեղադրյալ Ա.Ս.-ն (տե՛ս, էջ 135):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b> .....	<b>4</b>
<b>ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ</b> .....	<b>6</b>
<b>ԲԱԺԻՆ 1.</b> .....	<b>11</b>
<b>ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՄԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b> .....	<b>11</b>
<b>1.1. Դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանք</b> .....	<b>11</b>
<b>1.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն</b> .....	<b>11</b>
<b>1.1.2. Խորհրդատվություն</b> .....	<b>20</b>
<b>1.1.3. Ընդունելություն</b> .....	<b>25</b>
<b>1.1.4. Այցելություններ, արագ արձագանքում</b> .....	<b>26</b>
<b>1.2. Դրական արդյունքներով ավարտված գործեր</b> .....	<b>33</b>
<b>1.3. Իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն</b> .....	<b>36</b>
<b>1.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտ</b> .....	<b>43</b>
<b>1.5. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն</b> .....	<b>51</b>
<b>1.6. Սիցազգային համագործակցություն</b> .....	<b>52</b>
<b>1.7. Փորձագիտական խորհուրդ</b> .....	<b>59</b>
<b>ԲԱԺԻՆ 2.</b> .....	<b>61</b>
<b>ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՏճԱռՆԵՐԸ</b> .....	<b>61</b>
<b>2.1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ</b> .....	<b>61</b>
<b>2.1.1. Խոշտանգումների արգելում</b> .....	<b>61</b>
<b>2.1.2. Արդար դատաքննության իրավունք</b> .....	<b>63</b>
<b>2.1.3. Անձնական ազատության և անձեռնմխելության իրավունք</b> .....	<b>66</b>
<b>2.1.4. Տեղեկատվության ազատության իրավունքը</b> .....	<b>68</b>
<b>2.1.5. Ընտրելու և ընտրվելու իրավունք</b> .....	<b>73</b>
<b>2.1.6. Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք</b> .....	<b>93</b>
<b>2.2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ</b> .....	<b>98</b>
<b>2.2.1. Աշխատանքի ընտրության ազատություն</b> .....	<b>98</b>
<b>2.2.2. Սոցիալական ապահովության իրավունք</b> .....	<b>98</b>
<b>2.2.3. Սեփականության իրավունք</b> .....	<b>101</b>
<b>2.2.4. Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունք</b> .....	<b>109</b>
<b>ԲԱԺԻՆ 3.</b> .....	<b>113</b>
<b>ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՍԱՐՍԻՆՆԵՐԻ</b> .....	<b>113</b>

<b>3.1. ՀՀ ոստիկանություն</b>	115
<b>3.2. ՀՀ դատախազություն</b>	127
<b>3.3. Հասուկ քննչական ծառայություն</b>	131
<b>3.4. Դատարաններ</b>	135
<b>3.4.1. Դատական նիստերի և դատական պրակտիկայի մոնիթորինգ (դիտարկում)</b>	135
<b>3.5. ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</b>	145
<b>3.6. ՀՀ արդարադատության նախարարության համակարգի մարմիններ</b>	147
<b>3.6.1. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն</b>	147
<b>3.6.2. Քրեակատարողական հիմնարկներ</b>	160
<b>3.7. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն</b>	166
<b>3.8. ՀՀ պաշտպանության նախարարություն</b>	168
<b>3.9. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն /Ենթակառուցվածքներ/</b>	168
<b>3.9.1. Միջքացիոն գործակալություն</b>	170
<b>3.9.2. Զրային տնտեսության պետական կոմիտե</b>	171
<b>3.10. ՀՀ կրթության և գիտության նախարարություն</b>	172
<b>3.11. ՀՀ առողջապահության նախարարություն</b>	175
<b>3.12. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</b>	178
<b>3.12.1. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական ծառայություն</b>	178
<b>3.12.2. Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով /ԲՍՓՀ/</b>	184
<b>3.12.3. Աշխատանքի պետական տեսչություն</b>	185
<b>3.13. Երևանի քաղաքապետարան</b>	186
<b>3.14. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ</b>	197
<b>3.14.1. Մարզպետարաններ</b>	198
<b>3.14.2. Երևանի քաղաքապետարաններ</b>	199
<b>3.14.3. Քաղաքապետարաններ</b>	202
<b>3.14.4. Գյուղապետարաններ</b>	205
<b>ԲԱԺԻՆ 4.</b>	210
<b>ՀԱՏՈՒԿ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ</b>	210
<b>4.1. Զինվորական ծառայության հետ կապված իրավունքներ</b>	210
<b>4.2. Հաշմանդամների իրավունքներ</b>	232
<b>4.3. Փախստականների իրավունքներ</b>	235
<b>4.4. Երեխանների իրավունքներ</b>	238
<b>4.5. Ազգային փորբամասնությունների իրավունքներ</b>	244
<b>ԱՍՓՈՓՈՒՄ</b>	247
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>	258

## **ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ**

**«Եթե մեր պետականության բնականոն զարգացումը չընդհատվեր, գուցե ինքներս լինեինք լոկոմոտիվն այն արժեքների, որոնք այսօր բնկած են արևմտյան ժողովրդավարության հիմքում», - ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցազրույցը՝ տրված «Հայաստանի զրուցակից» շաբաթաթերթին (07/25/2008)**

- *Մեր հյուրն է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը: Պարո՞ն Հարությունյան, մեր երկրում բնական՞ն ճանապարհով զարգացում ապրեցին հասարակական, քաղաքական, տնտեսական հարաբերությունները:*

- Հայաստանում, ինչպես և հետխորհրդային մի շարք երկրներում, ձևախեղվեցին թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական համակարգերը: Եթե ցանկանում ենք, որ Հայաստանը դառնա իրավական պետություն, որտեղ հնարավոր լինի պաշտպանել մարդու իրավունքները, ապա ձևախեղումները պետք է շտկվեն: Քաղաքական համակարգը մենակենտրոն է: Իսկ տնտեսական համակարգը հիմնված է մենաշնորհների վրա, որը հանգեցնում է երկրում կապիտալի լեզիտիմության կասկածներին: Զնավորվել է օլիգարխիկ համակարգ, գործարարները կայանում են ոչ թե շուկայական հարաբերությունների գործընթացում, այլ նրանց «նշանակում են» համապատասխան «փնտիտուտները»: Արդյունքում իշխանությունն իր ձեռքում է կենտրոնացրել քաղաքական և տնտեսական ողջ ռեսուրսը: Չի գործում զապումների և հակակշիռների համակարգը: Նման իշխանությունը հասարակությանը դնում է ոլիենայի առջև: Ցանկանում ես ապրել տնտեսապես ապահով, բարեկեցիկ կյանքով՝ մաս կազմիր համակարգին: Ցանկանում ես ապրել ինքնարավ և սեփական սկզբունքներիդ համաձայն՝ կիմես կիսաքաղցած: Այս համակարգի վտանգն այն է, որ մարդկային այն տեսակը, որն ըստ էության երկրի ապագան կերտողն է, մնում է «խառից դուրս»: Իսկ հանուն աթոռի ցանկացած բարոյական նորմ ուժնահարողների համար բացվում է կանաչ ճանապարհ: Քանզի քաղաքական-տնտեսական ճնշումների միջոցով, ինչպես նաև դրւս մղման մեխանիզմի կիրառումով համակարգը ձգտում է հավերժացնել սեփական իշխանությունը: Արդյունքում, այդ իշխանությունը հասարակության համար դառնում է օտար: Եվ նշանակություն չունի արդեն՝ ով է իշխանության ոեկին՝ հա՞յ է, թե՞ հայ չէ: Դրանում է հետխորհրդային երկրների օլիգարխիկ համակարգի վտանգը. հասարակությունը խորթանում է սեփական իշխանությունից: Այն այլև իրենն է միայն ձևականորեն, իսկ փաստացի օտար է, ինչպես կիմեր զավթիչների դեպքում: Իսկ պետական շինարարության նպատակը միանշանակ քաղաքական բազմակենտրոն համակարգի,

ինչպես նաև շուկայական առողջ հարաբերությունների ձևավորումն է: Այն բնավ օբյեկտների շինարարություն չէ:

- *Սեր երկրում իշխանության շահը նույնացվում է պետության շահի հետ, այս իրողությունը մեզ չի՝ տանում սխալ, նաև՝ վտանգմերով հղի ճամապարհով:*

- Սեր երկրում մեթոդաբանական առումով թույլ են տրվում բավականին սխալներ, անգամ՝ պաշտոնյանների, գիտական աստիճան ունեցող մարդկանց կողմից: Սակայն կան որոշակի հասկացություններ, որոնց առումով նման սխալները պարզապես անթույլատրելի են, մասնավորապես, այդպիսիք են պետություն, իշխանություն, ընդդիմություն հասկացությունները: Շատերի համար իշխանությունն ու պետությունը նույնացվող հասկացություններ են: Իշխանամետության ու պետականամետության միջև ևս դնում են հավասարության նշան: Մինչդեռ դրանք տարբեր են ըստ էության և պարտավոր ենք միմյանցից տարանջատել: Ընդհանրապես իշխանությունը և ընդդիմությունը նույն քաղաքական համակարգի հավասարազոր բաղադրիչներն են: Երկուսն էլ նպաստում են պետության կայացմանը: Միշտ չէ՝ ինչ իշխանությունն է անում, լավ է պետության համար, և միշտ չէ, որ ինչ ընդդիմությունն է անում, վաստ է պետության համար: Ավելին, շատ դեպքերում պետականամետությունը ենթադրում է, որ պարտավոր ես քննադատել իշխանությանը, իշխանության եկած տվյալ քաղաքական ուժին: Հենց այդ նպատակով է, որ կան խորհրդարանի կողմից ընտրվող հատուկ ինստիտուտներ՝ Մարդու իրավունքների պաշտպանը, Սահմանադրական դատարանը, Գլխավոր դատախազը և այլն: Վերջիններս չպետք է ձուլվեն ո՞չ իշխանությանը, ո՞չ ընդդիմությանը: Պետք է լինեն և մնան պետականամետ: Մինչդեռ մեր որոշ պաշտոնյաններ, ելնելով մեթոդաբանական սխալից, կարծում են, որ եթե քննադատում ես իշխանությանը, ապա դեմ ես պետությանը: Բերեմ փայլուն մի օրինակ (չանդրադառնանք զարգացած, ժողովրդավարական ավանդույթներ ունեցող երկրի՝ Թուրքիայի դատախազությունը հայտ է ներկայացնում իշխող կուսակցության դեմ՝ համարելով, որ այն խարիսխում է պետության հիմքները:

Անդրադառնալով Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին՝ կարող ենք արձանագրել, որ այն իշխանության օպոնենտն է, նրա միջոցով իշխանությունը հնարավորություն ունի կողքից նայել իրեն և առավել կատարելագործել սեփական գործունեությունը: Իսկ եթե խնդիրներ են առաջանում, դրանք պետք է լուծվեն արդեն համապատասխան մարմինների՝ դատախազության, դատարանների կողմից: Սակայն եթե վերջիններս դիտարկվում են որպես իշխանության շարունակություն, ապա դժվարանում է մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Եթե ամփոփենք՝ կան ինստիտուտներ, որոնք պետք է լինեն անպայման պետականամետ: Նրանց մոտեցումները կարող են համընկնել, կարող են չհամընկնել իշխանության մոտեցումներին: Նույնը՝ ընդդիմության առումով:

- Արևմտյան ժողովրդավարական արժեքները որքանո՞վ են հոգեհարազատ մեր ժողովրդին, և ըմբիանապես մենք էթնիկ-հոգեբանական առումով պատրա՞նտ ենք յուրացնել դրանք:

- Վերջերս ոմանք, այդ թվում՝ նրանք, ովքեր իրենց համարում են լուրջ մասնագետներ, պնդում են, թե հայերն ասիական ժողովուրդ են: Մյուսներն էլ մեկ այլ տարրերակ են ընտրել. հայերը ասիացի են, բայց՝ Եվրոպական անցյալով: Այսինքն՝ Խորհրդային Սիությունն ապահովեց իրենց ասած Եվրոպական անցյալը:

Մինչդեռ, նման պատասխանատու հայտարարություն անելուց առաջ հարկ է քաջատեղյակ լինել սեփական ժողովրդի քաղաքական և իրավական ժառանգությանը: Նախ հասկանանք, թե հայկական քաղաքակրթության հիմքում ինչ արժեքային համակարգ է ընկած, ապա պարզենք՝ վերջինիս մեջ գերակա են արևելյա՞ն, թե՞ արևմտյան արժեհամակարգերի տարրերը: Նախապես ասենք, որ Եվրոպական քաղաքակրթական համակարգ կոչվածը միանշանակ չէ, այն առավել լայն հասկացություն է: Նրա կրողներն են առաջին հայացքից իրարից բավականին տարրերվող երկրներ և ժողովուրդներ՝ Իտալիա, Գերմանիա, Շվեյցարիա և այլն: Բայց համակարգի հիմքում ընկած են մի քանի ընդհանուր՝ բոլորին միավորող սկզբունքներ՝ ինդիվիդուալիզմը (անհատը կողեւկտիվի մեջ չի ձուլվում, պահպանվում է մարդու անհատականությունը), մարդու իրավունքների գերակայությունը, իշխանությունների տարարանջատումը, քաղաքացիական հասարակության առկայությունը: Իսկ արևելյան քաղաքակրթությունը հիմնված է կուռ հիերարխիայի վրա, որտեղ անհատը ձուլվում է հզոր կողեւկտիվներում: Հայացք նետենք միջնադարյան մեր պետությունների իրավունքի պատմությանը: Եվ խնդրեմ, պառլամենտարիզմի հիմքն ապահովող ներկայացուցչականության տարրերը որքան ցայտուն էին Կիլիկիայում կամ Արցախում՝ Վաշագան թագավորի տարիներին: Չորրորդ դարում Արցախում Վաշագան թագավորն ընդունում է հարկային խնդիրները կարգավորող կանոնակարգ: Սկզբնական շրջանում կանոնակարգի նախագիծն ուղարկվում է տեղեր, բնակավայրերում հավաքներ են անում, քննարկում են, բնակչությունն իր համաձայնությունն է տալիս, որից հետո թագավորը գումարում է համապետական մեծ համագումար և նոր միայն համագումարով ընդունում կանոնակարգը: Ընդ որում, համագումարը վարում էր մի շարքային գինվոր: Այս մոտեցումները 800-1000 տարի անց միայն երևան եկան Եվրոպայում: Կամ՝ Կիլիկիայում 1204 թվականին գումարվում է Սիսի ժողովը, որտեղ ազգային եկեղեցին պետք է ընդուներ կանոնակարգային սահմանադրություն: Բայց, քանի որ ներկայացուցչականությունը թափարար չէր, սահմանադրությունը չեն ընդունում: Այն ընդունվում է միայն 30 տարի հետո՝ 1234 թվականին: Ավելին, այդ ժամանակ կաթողիկոսը դիմում է հայ իշխաններին, որպեսզի նրանք իրենց ստորագրություններով գրավոր համաձայնություն տան կանոնակարգին: Կամ հիշենք Մխիթար Գոշի, Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը:

Այս փաստերը խոսում են այն մասին, որ եթե մեր պետականության բնականոն գարզացումը 600-700 տարով չընդհատվեր, գուցե ինքներս լինենք լոկոմոտիվն այն արժեքների, որոնք այսօր ընկած են արևմտյան ժողովրդավարության հիմքում: Պարզապես դարեր շարունակ ապրելով արևելյան ժողովրդների տիրապետության տակ և նրանցով շրջապատված միջավայրում՝ վերջիններիս բնորոշ շատ արժեքներ արմատավորվել են մեզանում: Եվ այժմ դժվարանում ենք տարրերակել՝ ո՞րն է մերը և որը մերը չեն: Այնպես որ, մեզ չափազանց հոգեհարազատ են եվրոպական ժողովրդավարական արժեքները՝ մարդու իրրավունքների գերակայությունը, իշխանության ապակենտրոնացումը, այնպիսի կոլեկտիվիզմը, որի մեջ անհատը չի ճուղում ու կորցնում իր անհատականությունը: Հայատանի ամեն նոր սերունդ առավել է մոտենալու հայկական գենետիկային և հեռանալու է ձեռքբերովի արժեքներից: Եթե մենք մեր պետական համակարգը կառուցենք ձեռքբերովի արժեքների վրա, ապա այն հակասության մեջ է մտնելու գալիք սերունդների պատկերացումների հետ: Արդյունքում իշխանական համակարգը դառնալու է չընդունված և օտարված նոր սերունդների կողմից:

Սակայն ամեն մի եվրոպական պետություն օգտագործում է ժողովրդավարության սեփական մեխանիզմները: Եթե մենք նրանց մեխանիզմները փորձում ենք ավտոմատ կիրառել մեր երկրում, ստեղծվում է չափազանց վտանգավոր իրավիճակ. լավ գաղափարը բովանդակագրկվում է, ու ձևավորվում է այն մտայնությունը, թե եվրոպական արժեքները մեզ համար չեն: Ուստի պետք է ինքներս գտնենք մարդու իրավունքներն ապահովելու մեր սեփական մեխանիզմները: Սահմանադրական վերջին փոփոխությունները, ըստ Էության, դրան էին ուղղված: Ωչ թե հայեցակարգն է փոխվում, այլ փորձում ենք մեխանիզմներ հաստատագրել:

- *Մեր պետական-քաղաքական դաշտում ինչպիսի՝ փոխարարերության մեջ են գտնվում ամձը և համակարգը:*

- Առայժմ մեթոդաբանական լուրջ սխալ կա մեզանում: Մի քան պետք է հստակ հասկանալ. կարևորը համակարգն է, ոչ թե՝ անձը: Անփոխարինելի անձեր չեն լինում: Ուսումնասիրնենք արտասահմանյան փորձը: Որևէ մեկն ավելի շատ քան չեր արել Ֆրանսիայի համար, քան Դը Գոլը: Նրա մասին ասում են՝ «Պարտված Ֆրանսիայի սուրը բարձրացրեց և Ֆրանսիան վերադարձրեց հաղթող երկրների շարքը»: Բայց եթե նույն Դը Գոլը հարցում անցկացրեց և տեսավ, որ հասարակության մեջ բավարար հենարան չունի, հեռացավ իշխանությունից: Ընդ որում, հարցման արդյունքները պարտադիր չեն: Այսինքն՝ չպետք է աստվածացնել որևէ մարդու, մտածել, թե նրանից է կախված ամեն ինչ: Չերչի նման գործչից ևս անզիացիները հրաժարվեցին. պատերազմից հետո՝ ընտրություններում, նա չհաղթեց: Գտան, որ այլևս նա ակտուալ չէ, նոր գործիչներ են հարկավոր երկրին:

Միանշանակ՝ ցանկացած երկրի համար առաջնայինը պետք է լինի մի բան՝ ձևավորել և պահպանել ճկուն և գործող պետական համակարգ: Համակարգ, որում յուրաքանչյուր մարդ կատարում է իր ֆունկցիան: Ոչ մի պետական գործիչ կամ միապետ չի կարող առաջնային դիտվել համակարգից:

Ցավալին այն է, որ մեր քաղաքական-պետական շրջանակներում դեռևս արմատավորված չէ այս գիտակցությունը, և մեթոդաբանական տվյալ սխալը շատ հաճախ է իրեն զգացնել տալիս տարբեր առիթներով:

- *Մարդու իրավունքների պաշտպանությունն ընդամենը անհատին վերաբերող խնդիր է: Ինչո՞ւ է այդ հարցն այդքան առանցքային տեղ գրաղեցնում ժամանակակից աշխարհի պետական կառավարման համակարգերում:*

- Ինչպես ժողովուրդների, այնպես էլ մարդու մեջ գործում է երկու բնագդ՝ հարմարվողականության և պայքարելու: Մենք՝ հայերս, պայքարող ժողովուրդ ենք, սակայն ժամանակի ընթացքում, հաճախ ուժերի անհավասարության պայմաններում նաև հարմարվողականության բնագդն է զարգացել: Այսօր դրանք հավասարակշռված կերպով նստած են մեզանում:

Սեփական իշխանության առաքելությունն այն է, որ իր քաղաքացիների մեջ հնարավորինս զարգացնի պայքարողի բնագդը, ձևավորի սեփական իրավունքների համար պայքարող քաղաքացիներ, թեկուզ այդ նույն իշխանություններն ունենան որոշակի «անհարմարություններ» նման քաղաքացիների պատճառով: Սրանով է տարբերվում քո սեփական իշխանությունն օտարի իշխանությունից: Օտարի իշխանությունն է իր երկարակեցությունն ապահովելու համար մարդու մեջ զարգացնում հարմարվողականությունն ու անտարբերությունը: Ուստի այս հարցում ևս պետք է մեթոդաբանական լուրջ խնդիր դնենք մեր առջև և պետականորեն պատասխան տանք հետևյալ հարցին. ի՞նչ հատկանիշներ ենք զարգացնում մեր քաղաքացիների մեջ՝ վախսվորվածությո՞ւն, հարմարվողականությո՞ւն: Եթե այս, ապա մարդկային այդ որակներով ինչպե՞ս պետք է ապահովի այս երկրի ապագան, նրա վաղվա օրը: Մեծ առումով սա ուզմավարական խնդիր է. քաղաքացու տեսակից է կախված պետության ամրությունն ու նրա ապագան:

Մենք չպետք է նեղվենք, եթք քաղաքացին պահանջում է, եթք քաղաքացին բողոքում է: Պետք է այն գիտակցությունն ունենանք, որ այդ ճանապարհով ձևավորվում է համակարգ, և երկիրը գնում է ինքնամաքրման ճանապարհով:

Գոհար Սարդարյան

# ԲԱԺԻՆ 1.

## ՊԱՇՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1.1. Դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանք

#### 1.1.1. Դիմում-բողոքների վիճակագրական վերլուծություն

2008թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 5806 անձանցից ստացել է 4090 դիմում-բողոք, որից 1227-ը՝ գրավոր (դրանցից 58-ը կազմում են կոլեկտիվ դիմում-բողոքները՝ ներկայացված 1774 դիմումատուի կողմից), իսկ 2863-ը՝ բանավոր: Նշված ժամանակահատվածում դրական լուծում է ստացել 122 դիմում-բողոք, ինչի արդյունքում վերականգնվել է 429 անձանց խախտված իրավունքը: Հաշվետու ժամանակահատվածում ընդհանուր առմամբ վերականգնվել են 6526 անձանց խախտված իրավունքները: Այս թվի մեջ ներառված են նաև այն 6097 քաղաքացիները, որոնց իրավունքները վերականգնվել են Պաշտպանի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի որոշ հոդվածներ հակասահմանադրական ճանաչելու մասին դիմումի բավարարման արդյունքում:

Այլուսակ 1-ում ներկայացված է 2007-2008 թվականներին Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների քանակական համեմատությունը՝ համաձայն միջին ամսական թվերի:

#### Այլուսակ 1


##### Դիմում-բողոքների քանակական պատկերը

	ընդամենը		միջին ամսական			
	2007թ.	2008թ.	2007թ.	2008թ.	տարրերություն	% հարաբերություն
ընդամենը	3697	4090	308	341	+33	110,7 %
այդ թվում՝ գրավոր	1101	1227	92	102	+10	111,1 %
այդ թվում՝ բանավոր	2596	2863	216	239	+23	110,6 %
անձանցից	5764	5806	480	484	+4	100,8 %

Աղյուսակ 1-ում բերված համեմատությունը ցույց է տալիս, որ 2008թ. Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ընդհանուր թվի միջին ամսական տոկոսային հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 10.7 տոկոսով, գրավոր դիմում-բողոքների թիվը՝ 11.1 տոկոսով, իսկ բանավորներին՝ 10.6 տոկոսով: 0.8 տոկոսով աճել է Պաշտպանին դիմող անձանց թիվը:

2008թ. ընթացքում մարդու իրավունքների խախտման վերաբերյալ դիմում-բողոքներ ստացվել են Հայաստանի բոլոր մարզերի բնակիչներից, ինչի մասին վկայում է աղյուսակ 2-ում ներկայացված գրավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

**Գրաֆիկ 1. Դիմում-բողոքների քանակական պատկերը միջին ամսական կտրվածքով**



**Գրավոր դիմում-բողոքների քանակական և տոկոսային պատկերը՝ ըստ ՀՀ  
վարչատարածքային միավորների**


		<b>2007թ.</b>		<b>2008թ.</b>	
	<b>մարզի անվանում</b>	<b>քանակ</b>	<b>%</b>	<b>քանակ</b>	<b>%</b>
<b>1.</b>	<b>Երևան</b>	<b>725</b>	<b>65.8</b>	<b>795</b>	<b>64.8</b>
<b>2.</b>	<b>Շիրակ</b>	<b>48</b>	<b>4.4</b>	<b>68</b>	<b>5.5</b>
<b>3.</b>	<b>Լոռի</b>	<b>75</b>	<b>6.8</b>	<b>49</b>	<b>4</b>
<b>4.</b>	<b>Կոտայք</b>	<b>59</b>	<b>5.4</b>	<b>67</b>	<b>5.5</b>
<b>5.</b>	<b>Արարատ</b>	<b>41</b>	<b>3.7</b>	<b>37</b>	<b>3</b>
<b>6.</b>	<b>Գեղարքունիք</b>	<b>29</b>	<b>2.6</b>	<b>45</b>	<b>3.6</b>
<b>7.</b>	<b>Սյունիք</b>	<b>23</b>	<b>2.1</b>	<b>23</b>	<b>1.9</b>
<b>8.</b>	<b>Արագածոտն</b>	<b>22</b>	<b>2</b>	<b>23</b>	<b>1.9</b>
<b>9.</b>	<b>Արմավիր</b>	<b>21</b>	<b>1.9</b>	<b>42</b>	<b>3.4</b>
<b>10.</b>	<b>Տավուշ</b>	<b>19</b>	<b>1.7</b>	<b>22</b>	<b>1.9</b>
<b>11.</b>	<b>Վայոց ձոր</b>	<b>11</b>	<b>1</b>	<b>13</b>	<b>1</b>
<b>12.</b>	<b>Անիայտ<sup>1</sup></b>	<b>28</b>	<b>2.6</b>	<b>43</b>	<b>3.5</b>
<b>ընդամենը</b>		<b>1101</b>	<b>100</b>	<b>1227</b>	<b>100</b>

Պաշտպանին հասցեագրված գրավոր դիմում-բողոքների թվաքանակի համեմատությունը ցույց է տալիս, որ ինչպես 2007թ., այնպես էլ 2008թ., գերակշռում են Երևան քաղաքից ստացվող դիմում-բողոքները: Աղյուսակից նաև երևում է, որ 2008թ. Երևան քաղաքից, Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի և Արմավիրի մարզերից, 2007թ. համեմատությամբ, ստացված դիմում-բողոքների տոկոսային հարաբերակցությունն աճ է արձանագրել: Միևնույն ժամանակ 2008թ. նվազել է Լոռու և Արարատի մարզերից ստացված դիմում-բողոքների քանակը:

Աղյուսակ 2-ում բերված վիճակագրական տվյալները հաստատում են մարզերում Պաշտպանի հաստատության ներկայացուցությունների ստեղծման անհրաժեշտությունը:

<sup>1</sup> Այստեղ նկատի են ունեցվել այն դիմում-բողոքները, որոնցում քաղաքացիները չեն նշել իրենց հասցեները:

**Գրաֆիկ 2. Գրավոր դիմում-բողոքների քանակական և տոկոսային պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների՝ 2008թ.**



Աղյուսակ 3-ում ներկայացված են 2008թ. ստացված գրավոր դիմում-բողոքների առնչությամբ ընդունված որոշումների, ինչպես նաև դիմումատուի խնդրանքով քննարկումը դադարեցված և ուսումնասիրության ընթացքում գտնվող դիմում-բողոքների մասին վիճակագրական տվյալները:

**Գրավոր դիմում-բողոքների առնչությամբ ընդունված որոշումները**

2008թ.			
	որոշում	քանակ	%
1.	ընդունվել են քննարկման	517	42.1
2.	ճերկայացվել են իրավունքի պաշտպանության հնարավորությունները	128	10.4
3.	փոխանցվել են այլ մարմինների քննարկմանը	37	3
4.	քննարկման չեն ընդունվել	406	33.1
5.	քննարկումը դադարեցվել է դիմումատուի խնդրանքով	24	2
6.	ուսումնասիրության ընթացքում են առ 31.12.2008. դրության	115	9.4

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2008թ. նույնպես շարունակվում է քաղաքացիների կողմից այնպիսի դիմում-բողոքների հասցեազրումը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, որոնք ուղղված են ոչ պետական մարմինների և կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց դեմ, ինչպես նաև անանուն և այնպիսի բողոքներ, որոնք Պաշտպանի կարծիքով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում կամ դրանց վերականգնման պահանջ չեն ճերկայացնում, որոնց վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կայացվում է բողոքը չքննարկելու մասին որոշում /«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մաս, 9-րդ և 10-րդ հոդվածներ/:


Աղյուսակ 3-ում նշված 406 դիմումների կապակցությամբ կայացվել է բողոքը չքննարկելու վերաբերյալ որոշում՝ վերը նշված հիմնավորմամբ: Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս դիմողին բացատրվում է այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը, իսկ դատական ակտերի հիմնավորվածության և օրինականության դեմ բերված բողոքներով քաղաքացիներին պարզաբանվում են դրանցից բխող իրավական

հետևանքները, ինչպես նաև դատարանների անկախության և նրանց գործունեությանը միջամտելու անթույլատրելիության սկզբունքները:

2008թ. ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների կեսից ավելին կազմել են բանավորները: Դրանք ստացվել են Պաշտպանի կամ նրա աշխատակազմի լիազոր անձանց կողմից մարզեր, պետական հիմնարկներ և կազմակերպություններ կատարած այցելությունների ընթացքում, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիների այցելության կամ հեռախոսով քաղաքացիներին բանավոր խորհրդատվության տրամադրման կապակցությամբ աշխատանքների կազմակերպման արդյունքում:

Փորձը ցույց է տալիս, որ ինչպես Պաշտպանի հաստատության գործունեության նախորդ տարիներին, այնպես էլ 2008թ. բանավոր դիմում-բողոքներ ներկայացնողների մի մասը խուսափում են գրավոր բողոք ներկայացնելուց, ինչպես նաև իրենց անունը, ազգանունը, հասցեն արձանագրելուց՝ պատճառաբանելով, որ դիմում ներկայացնելը կարող է բացասաբար անդրադառնալ իրենց վրա: Վերը նշված փաստերն ու հիմնավորումները իրենց համապատասխան արտացոլումն են գտել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2007թ. տարեկան գեկույցում:

**Գրաֆիկ 3. “Դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ կայացված որոշումների 2008 թ.**




Աղյուսակ 4-ում նշված է հանրային մարմինների դեմ ուղղված դիմում-բողոքների վիճակագրական տվյալները:

**Գրավոր դիմում-քողոքներն ըստ հանրային մարմինների**

<b>Հանրային մարմնի անվանում</b>		<b>2008թ.</b>
1.	Ոստիկանություն	<b>259</b>
2.	Դատարաններ	<b>157</b>
3.	Երևանի քաղաքապետարան	<b>97</b>
4.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	<b>83</b>
5.	ՀՀ արդարադատության նախարարություն	<b>78</b>
6.	Դատախազություն	<b>55</b>
7.	ՀՀ պաշտպանության նախարարություն	<b>49</b>
8.	Երևանի քաղաքապետարաններ	<b>31</b>
9.	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	<b>26</b>
10.	Հասուկ քննչական ծառայություն	<b>25</b>
11.	Մարզպետարաններ	<b>22</b>
12.	Քաղաքապետարաններ /քաջի Երևանի քաղաքապետարանից/	<b>18</b>
13.	ՀՀ առողջապահության նախարարություն	<b>13</b>
14.	Տարածքային կառավարման նախարարություն /ենթակառուցվածքներ/	<b>12</b>
15.	Գյուղապետարաններ	<b>12</b>
16.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<b>12</b>
17.	ՀՀ կառավարություն	<b>11</b>
18.	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն	<b>9</b>

Աղյուսակ 4-ից երևում է, որ 2008թ. առավել շատ թվով դիմում-քողոքներ ստացվել են ստիկանության, դատարանների, Երևանի քաղաքապետարանի դեմ:

Գրաֆիկ 4. Գրավոր դիմում-բողոքներն ըստ հանրային մարմինների 2008թ.



Հարկ է նշել, որ դիմում-բողոքների 2008թ. վերը նշված վիճակագրության մեջ արտացոլվել են նաև 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների ընթացքում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացված դիմում-բողոքները: Այդ առումով պետք է նշել, որ հաշվետու տարում Պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից մեկն էլ հենց հանդիսացել է նախագահական ընտրությունների ժամանակ տեղի ունեցած ընտրախախտումների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացված ահազանգերին, ինչպես նաև հետընտրական զարգացումների հետ կապված գործընթացներին արձագանքելը:

2008թ. նախագահական ընտրությունների օրը Պաշտպանի աշխատակազմն աշխատել է շորջօրյա ռեժիմով և առկա ռեսուրսների հնարավորության սահմաններում արձագանքել է ընտրախախտումների վերաբերյալ աշխատակազմ ստացված մի քանի տասնյակի հասնող հաղորդումներին, այդ թվում՝ որոշ նախընտրական շտաբներում քաղաքացիներին թիվ 9 ձևի տեղեկանքի տրամադրման, այնուհետև նրանց միկրոավտոբուսներով տեղամասային կենտրոններ տեղափոխելու դեպքերի մասին, վստահված անձանց ծեծի ենթարկելու, տեղամասային կենտրոններում լցոնումների, ուրիշի փոխարկելու, իրականացվող հակաքարողական, տեղամասային կենտրոնում միաժամանակ թեկնածուներից մեկի՝ երկու վստահված անձանց ներկայության, ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահին ծեծի ենթարկելու և բազմաթիվ այլ խախտումների մասին: Այդ կապակցությամբ Պաշտպանը ձեռնարկել է համապատասխան միջոցներ. որոշ ընտրախախտումների վերաբերյալ դիմել է իրավապահ մարմիններին՝ դրանք կանխելու և հետագայում բացառելու, ինչպես նաև իրավախախտում կատարած անձանց պատասխանատվության հարցը լուծելու առաջարկով:

Պաշտպանի աշխատակազմն առավել լարված և ծանրաբեռնված է աշխատել մարտի 1-ի դեպքերից հետո: Այդ ժամանակահատվածում ստացված մոտ 60 դիմումներում քաղաքացիները բողոքել են՝

ա) որպես մեղադրյալ ներգրավված անձանց առաջադրված մեղադրանքների անհիմն լինելուց կամ քաղաքական ենթատեքստ ունենալուց,

բ) ՀՀ ոստիկանությունում անձանց ապօրինի պահելու, ձերբակալման կարգի և ժամկետների խախտումների դեպքերից,

գ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով քերման ենթարկված անձանց պաշտպան չտրամադրելուց,

դ) Երևանի Հյուսիսային պողոտայում կազմակերպվող միջոցառումներին մասնակցող անձանց ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումների դեպքերից:

### **1.1.2. Խորհրդատվություն**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղղություններից է քաղաքացիներին խորհրդատվություն տրամադրելը: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը Պաշտպանի գործունեության ոլորտում տարբերակում է խորհրդատվության երկու տեսակ՝ պարտադիր և Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվող<sup>2</sup>:

Պաշտպանը 2008թ.-ի ընթացքում 534 դեպքերում տրամադրել է պարտադիր խորհրդատվություն, որոնք իրականացվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված հետևյալ դեպքերում և ձևերով.

1. դատարանի որոշման, վճոփ կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ խորհրդատվություն (Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերություն),

2. դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունների ներկայացում (Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ),

3. բողոքը չըննարկելու մասին որոշում ընդունելիս դիմողին այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգի պարզաբանում (Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս):

2008թ. ընթացքում Պաշտպանն իր նախաձեռնությամբ քաղաքացիներին խորհրդատվություն է տրամադրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ընդունելությունների ժամանակ, հեռախոսով, աշխատանքային գործուղումների ժամանակ: Այդախսիք իրականացվել են նաև Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից:

2008թ.-ին հիմնականում պահպանվել է հարցերի նույն շրջանակը, որոնցով Պաշտպանը խորհրդատվություն էր տրամադրել նախորդ տարիներին, սակայն հաշվետու տարում ավելացել են ընտրական գործընթացներին առնչվող հարցերի վերաբերյալ տրված պարզաբանումները, որոնց մասին հանգամանորեն լուսաբանված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2008թ. ապրիլի 25-ի արտահերթ հրապարակային գեկույցում:

2008թ. ընթացքում Պաշտպանի կողմից իրականացված խորհրդատվական գործունեությունը, ըստ դրանցում արծարծվող հարցերի բնույթի և ոլորտների, կարելի է դասակարգել հետևյալ խմբերի:

**Առաջին խումբը կազմում են քաղաքացիական, քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավունքների խախտմանը վերաբերող դիմումները, որոնց կապակցությամբ տրվել են Պաշտպանի պարզաբանումները:**

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների շարքում գերակշռում են մարտի 1-ի

<sup>2</sup> Պարտադիր և Պաշտպանի նախաձեռնությամբ իրականացվող խորհրդատվության դեպքերի և եղանակների իրավական վերլուծությունը առավել հանգամանորեն ներկայացված է «Մարդու իրավունքների պաշտպանի 2006թ. տարեկան գեկույցում» (էջեր 17-18):

դեպքերի կապակցությամբ հայտարարված արտակարգ դրության ժամանակ քաղաքացիական և քաղաքական որոշ իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումներին վերաբերող դիմումները: Մասնավորապես, թեև արտակարգ իրավիճակի ռեժիմը հայտարարված էր միայն Երևան քաղաքում, սակայն ՀՀ նախագահի հրամանագրով սահմանված որոշ սահմանափակումներ, ըստ էության, գործում էին նաև ՀՀ այլ քաղաքներում (հանրահավաքների ազատության սահմանափակում, ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակում):

Վերը նշված իրավունքների խմբին առնչվող բողոքները վերաբերել են նաև խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի դրսերումներին, ազատության և անձեռնմխելության իրավունքի ուսնահարմանը, կամայական ձերբակալման և կալանավորման դեպքերին, կալանավորված անձանց փաստաբան տրամադրելու հարցերին, երբ, որոշ դեպքերում, պաշտպանին ներգրավելը կրել է ձևական բնույթ, քանի որ թույլ չեն տվել հանդիպել իրենց պաշտպանյաների հետ կամ պաշտպանի ներկայությունն ապահովել է սահմանված կարգի խախտումներով: Ըստ կալանավորված անձանցից ստացված բողոքների, խախտվել է նաև արդար դատաքննության իրենց իրավունքը:

Անհրաժեշտություն է առաջացել նաև պարզաբանել քաղաքացիական և քաղաքական իրավունքներին առնչվող այլ հարցեր՝ ընտրական գործընթացների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվություն ստանալու, ՀՀ ընտրական օրենսգրքի որոշ հոդվածների պարզաբանման, ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի իրականացման, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված տեղազննության կարգի, «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված օպերատիվ հետախուզական միջոցառումների կատարման կարգի և դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց, «Ոստիկանության մասին» և «Ոստիկանական գորքերի մասին» ՀՀ օրենքներով սահմանված մարմնական վճարվածքներ ստացած անձանց առաջին բուժօգնության տրամադրման, ոստիկանության կողմից հատուկ միջոցների կիրառման սահմանափակումների, պատասխանատվության առաջացման վերաբերյալ, երբ հատուկ միջոցները գործադրվել են թույլատրելի սահմանների անցումով:

Զգալի թիվ են կազմել նաև դիմումատումներին տրված՝ նրանց *սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող խորհրդատվությունները*, որոնց շարքում գերակշռում են նպաստների, փախստականների բնակարանային հարցերի, հաշմանդամների իրավունքների, ԽՍՀՄ խնայքանկերում քաղաքացիների կողմից ներդրված ավանդների փոխհատուցման գործընթացի, սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներով տրված պարզաբանումները:

Քաղաքացիներին խորհրդատվություն է տրամադրվել նաև կենսաթոշակի տեսակներին, մասնակի կենսաթոշակի նշանակման և տրամադրման առանձնահատկություններին, լիազորագրով կենսաթոշակ ստանալու իրավունքի իրականացմանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2007թ. հոկտեմբերին դիմում էր ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության հարցի քննարկման նպատակով: Մեկ այլ դիմումով առաջարկվել էր քննարկել նույն օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին համապատասխանության հարցը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վերը նշված դրույթները վերաբերում են ապահովագրական ստաժը հաստատելու կարգին, ստաժը հաստատող փաստաթղթերին, ինչպես նաև կենսաթոշակը վերահաշվարկելու կարգին:

2008թ. հունվարի 15-ին ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-723 որոշմամբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին, իսկ 29.01.2008թ. ՍԴՈ-731 որոշմամբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ ՀՀ Սահմանադրության 18 և 37-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Պաշտպանի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովագրության պետական ծառայությանը 21.07.2008թ. հասցեագրված 2-0234 գրությամբ առաջարկվել է ներկայացնել տեղեկատվություն, թե ՀՀ Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումների արդյունքում քանի<sup>8</sup> քաղաքացու իրավունք է վերականգնվել:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովագրության պետական ծառայության պետի տեղակալի 04.08.2008թ. թիվ 04/5774 գրությամբ տեղեկացվել է, որ հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա Ծառայության կողմից 14.02.2008թ. տրված թիվ 03/1141 հանձնարարականը՝ տարածքային բաժիններում քաղաքացիների գրավոր դիմումների հիման վրա վերականգնվել է 6097 քաղաքացու իրավունք:

Պաշտպանին հասցեագրվող դիմում-բողոքների շարքում առանձնանում են հաշմանդամների խնդիրներին առնչվող, այդ թվում՝ հաշմանդամության խմբի փոփոխմանը, հաշմանդամներին տրամադրվող արտոնություններին վերաբերող բողոքները:

Բնակարանային հարցերի առկա իրավիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լուրջ խնդիր է շարունակում մնալ նաև քաղաքացիների՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված բավարար կենսապայմանների իրավունքը, որտեղ առանձնահատուկ

նշանակություն է տրվում բնակարանային հիմնախնդիրներին: Տվյալ պարագայում առանձնակի կարևորություն ունեն վթարային շենքերի բնակիչների խնդիրները: Հարկ է նշել, որ այդպիսի շենքերում բնակվող քաղաքացիների մի մասը 2008թ. արդեն ապահովվել է նոր բնակարաններով, իսկ մյուս մասը կապահովվի ծրագրով նախատեսված ժամկետներում:

Քաղաքացիների սեփականության իրավունքի խախտումների վերաբերյալ 2008թ. Պաշտպանի աշխատակազմը առացել է ավելի քան 150 դիմում-բողոք:

Իրացման գոտում գտնվող Լալայանց և Տերյան փողոցների բնակիչների բողոքի կապակցությամբ Պաշտպանը ընդունել է դիմումատուներին: Նրանց բացատրվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի դրույթները և իրենց իրավունքների պաշտպանության հմարավորությունները:

Անհրաժեշտ է նշել, որ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի կապակցությամբ Պաշտպանը ժամանակին ներկայացրել էր մի շարք դիտողություններ և առաջարկություններ, որոնց մի մասն է միայն ընդունվել: Մյուս առաջարկությունների և դիտողությունների չընդունելը, կարծում ենք, ներկայումս հիմք է հանդիսանում քաղաքացիների սեփականության իրավունքի խախտումների համար:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների կապակցությամբ խորհրդատվություն է տրամադրվել նաև ՀՀ հողային օրենսգրքի մի շարք դրույթների վերաբերյալ, որոնք վերաբերել են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու, այդպիսի հողամասերը սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու, ինչպես նաև նշված հողամասերից ՀՀ կառավարության կողմից սահմանված առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերին: Պաշտպանին հասցեագրված մի շարք դիմումների կապակցությամբ ներկայացվել են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ սերվիտուտին վերաբերող դրույթները:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում առաջ են քաշվել ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և նրա ստորաբաժանումների կողմից կատարված գործողությունների բողոքարկման ընթացակարգի հետ կապված հարցեր: Այսպիսի դեպքերում Պաշտպանի որոշմամբ ներկայացվել են ոլորտի իրավական կարգավորվածությունը, տվյալ մարմնի գործողությունների (անգործության) բողոքարկման կարգը:

Ինչպես անցյալ տարի, այս տարի ևս ԽՍՀՄ Խնայքանկում ներդրված ավանդների փոխսհատուցման խնդիրը շարունակում է արդիական մնալ: Այդ մասին են վկայում տվյալ հարցի կապակցությամբ Պաշտպանին հասցեագրվող բազմաթիվ դիմում-բողոքները,

որոնցով քաղաքացիները խնդրել են պարզաբանել, թե ի՞նչ կարգով է կատարվելու իրենց ներքրած ավանդների փոխհատուցումը:

Փախստականների բնակարանային հարցերը ևս շարունակում են ուշադրության կենտրոնում մնալ: Հարկ է նշել, սակայն, որ որոշ դեպքերում փախստական ընտանիքները շարունակում են իրենց բնակարային պայմանների բարելավման հավակնորդ համարվել՝ առանց հաշվի առնելու ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափանիշներն ու չափորոշիչները:

**Երկրորդ խումբը կազմել են զինծառայողների, ինչպես նաև քրեական դատավարության ոլորտում անձանց իրավունքների ապահովման խնդիրներին վերաբերող դիմումները, որոնց կապակցությամբ նույնպես դիմողներին տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:**

Զինծառայողների, ինչպես նաև քրեական դատավարության ոլորտում անձի իրավունքների ապահովման վերաբերյալ խորհրդատվություններն, ըստ իրենց բնույթի, կարելի է դասակարգել որոշակի ենթախմբերի:

Առաջին ենթախմբում կարող ենք նշել այն դեպքերը, որոնցով դիմումատուններին պարզաբանվել են իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները՝ կապված հանցագործության մասին հաղորդման առնչությամբ քրեական գործի հարուցումը մերժելու, քրեկան հետապնդումը դադարեցնելու հետ:

Երկրորդ ենթախումբն են կազմում խորհրդատվություն տրամադրելու այն դեպքերը, որոնք կապված են եղել քրեական գործերի մինչդատական վարույթի ընթացքում ինչպես քրեական հետապնդման մարմինների, այնպես էլ դատարանի կողմից (խոսքը վերաբերում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը) անձի իրավունքների և ազատությունների խախտումներին:

Երրորդ ենթախումբը կազմող դեպքերով խորհրդատվություններ են տրամադրվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված անկախ հանձնաժողովի գործունեության առնչությամբ:

Մի շարք դիմումներով էլ ներկայացվել են ՀՀ զինված ուժերում ծառայությանն առնչվող օրենսդրությանը, զինկոմիսարիատների գործողությունների (անգործության), զինծառայողների ու նրանց ընտանիքի անդամների իրավունքներին վերաբերող հարցերը:

Քիչ չեն դիմում-բողոքները, որոնք կրում են բացառապես քաղաքացիական բնույթ, մինչդեռ դիմումատունները կտրականապես հրաժարվում են իրենց իրավունքների դատական պաշտպանության ձևից և դիմում են այնպիսի պետական մարմինների, որոնք օժտված չեն նմանատիպ հարցերի լուծման իրավասությամբ:

Վերոգրյալից բացի, խորհրդատվություններ են տրամադրվել քաղաքացիություն ձեռք բերելու, անձնագիր ստանալու, ինչպես նաև արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների զինվորական հաշվառման կապակցությամբ իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցերի շուրջ:

**Երրորդ խմբում ներառվել են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների միջազգային-իրավական պաշտպանության եղանակների վերաբերյալ տրված պարզաբանումները:**

Չափ դեպքերում քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել ՀՀ դատարանների կայացրած վճիռներից, դատավճիռներից և որոշումներից, համարելով, որ դրանցով խախտվում են իրենց իրավունքները: Նման դեպքերում Պաշտպանի որոշմամբ նրանց ներկայացվել է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումը սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան: Միաժամանակ քաղաքացիներին տեղեկացվել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված վերջնական որոշման հետ համաձայն չլինելու դեպքում նրանք իրավունք ունեն վերջնական դատական ակտի իրապարակման պահից վեցամյա ժամկետում դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Անհրաժեշտության դեպքում դիմումատուններին հանգամանորեն ներկայացվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու պայմաններն ու կարգը:

### **1.1.3. Ընդունելություն**

Բնակչության հետ Պաշտպանի անմիջական շփումն ապահովելու և դիմումներին հնարավորինս արագ ու արդյունավետ արձագանքելու նպատակով՝ ինչպես 2007թ., այնպես էլ 2008թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից հատուկ ուշադրություն է հատկացվել քաղաքացիների ընդունելության կազմակերպմանն ու անցկացմանը: Հաշվետու ժամանակահատվածում միայն իր աշխատակազմում Պաշտպանն ընդունել է 175 քաղաքացիների: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություններ են կազմակերպվել Պաշտպանի՝ ՀՀ մարզեր կատարած այցերի ընթացքում, որոնց մասին ազգաբնակչությունը նախօրոք տեղեկացվել է: Ընդունելության ընթացքում՝

– ընդունվել են գրավոր դիմումներ, եթե այցելուների կողմից առաջադրված հարցերը պահանջել են լրացնելությունը կամ ստուգումներ:

Սիածամանակ, այցելուներին բացատրվել է, թե ի՞նչ պատճառներով նրանց խնդրանքները չեն կարող բավարարվել, պարզաբանվել են դիմումների քննարկման կարգն ու ժամկետները:

– Եթե դիմումի բովանդակությունն այնպիսինն է եղել, որ դրանում բարձրացված հարցերի քննարկումը գտնվել է Պաշտպանի լիազորությունների շրջանակից դուրս, ապա դիմումատուին բացատրվել է, որ դիմումներն ընդունելու դեպքում հնարավոր է՝ կկայացվի դրանք չքննարկելու մասին որոշում, իսկ եթե, այնուամենայնիվ, դիմումատուները պնդել են, դրանք ընդունվել են:

– Մրամադրվել է խորհրդատվություն:

Ընդհանուր առմամբ, պահպանվել են քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման գործընթացի նկատմամբ նախանշված մոտեցումները: 2008թ.-ին աշխատանքներ են տարվել խախտված իրավունքների դեպքերին առավել արագ տեղեկանալու և արդյունավետ արձագանքելու ուղղությամբ: Այս առումով լայնորեն օգտագործվել են նաև ինտերնետային ցանցի հնարավորությունները:

#### 1.1.4. Այցելություններ, արագ արձագանքում

Ինչպես նախորդ տարիներին, 2008 թվականին նույնպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների կողմից կատարվող այցելությունները հանդիսացել են հանրային մարմինների գործունեության վերահսկողության արդյունավետ միջոցներից: Այցելություններն իրականացվել են կոնկրետ բողոքի հիման վրա կամ Պաշտպանի նախաձեռնությամբ: Կատարված ացելությունները նպատակ են հետապնդել նաև անմիջականորեն ծանոթանալ քաղաքացիներին առավել հուզող հարցերին, և տրամադրել դրանց լուծման օրենքով նախատեսված հնարավորությունների ու մեխանիզմների վերաբերյալ խորհրդատվություն: Նման միջոցառում իրականացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից նաև «Լոռի» և «Գալա» հեռուստաընկերություններում տեղի ունեցած ուղիղ հեռուստաեթերների միջոցով:

2008թ. կատարված բազմաթիվ այցելությունների արդյունքում պարզված իրողությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ ինչպես նախորդ տարիներին, ներկայումս նույնպես առկա են մի շարք լուծում պահանջող հարցեր, որոնցից են ծերանցների, մի շարք քրեակատարողական հիմնարկների, զորամասերի շենքային ոչ բարվոք պայմանները, ցածր աշխատավարձի պատճառով քրեակատարողական հիմնարկների, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների աշխատակիցների թվի նվազումը և այլն:

Այսպես, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՎՐԾՈՒՅԹ» կատարած այցելության ժամանակ պարզվել է, որ այնտեղ ցածր աշխատավարձի պատճառով թափուր է մնացել ատամնաբույժի հաստիքը: Արդյունքում դատապարտյալներն ատամնացավի դեպքում ստիպված են լինում այն մեղմել ցավազլկող հարերով, ինչը, սակայն, կարող է ունենալ միայն ժամանակավոր ազդեցություն:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՎՐԾՈՒՅԹ» կատարած այցելության ժամանակ պարզվել է, որ առաջնային խնդիրը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՎՐԾՈՒՅԹ» գումարների հետ: Այդ պատճառով էլ ջուրն իրենց տրվում է ժամանակ գրաֆիկով, բացի այդ, այն խմելու համար այդքան էլ անվտանգ չէ: Այցելության ժամանակ պարզվել է նաև, որ վերանորոգման ընթացքում են գտնվում պատժախցերը, իսկ ճաշարանը վերանորոգվել է ամբողջությամբ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՎՐԾՈՒՅԹ» կատարած այցելության ժամանակ պարզվել է, որ միակ խնդիրը այդ պահի դրությամբ բժշկի թափուր հաստիքի համալրումն է: Դատապարտյալների հետ երկարատև և կարճատև տեսակցության սենյակները, ինչպես նաև դատապարտյալների պատժախցերի և ճաշարանի պայմանները բարվոք են եղել:

«Լոռու մարզի Հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ կատարած այցելության ժամանակ Պաշտպանի ներկայացուցիչները պարզել են, որ մեկ հիվանդ է ի պահ հանձնված՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՎՐԾՈՒՅԹ» գումարում պահպանակության ժամանակաշրջանում: Հոգեբուժական հաստատությունում տեղավորվել հոգեբուժական հաստատությունում: Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը քույլատրվում է քննիչի պատճառաբանված որոշմամբ, որը հաստատում է դատարանը: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, հանձնումը կատարվել էր առանց դատարանի հաստատման:

Համաձայն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՎՐԾՈՒՅԹ» գումարում պահպանակության օրենսգրքի 459 հոդվածի՝ քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած և հասարակության համար վտանգ ներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նա կարող է տեղավորվել հոգեբուժական հաստատությունում: Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը քույլատրվում է քննիչի պատճառաբանված որոշմամբ, որը հաստատում է դատարանը: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, հանձնումը կատարվել էր առանց դատարանի հաստատման:

Այս և նման այլ դեպքերում, երբ այցելության ժամանակ բացահայտվել են մարդու իրավունքների խախտումներ, Պաշտպանը որոշում է կայացրել սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկում սկսելու մասին՝ հիմք ընդունելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» «Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը»:

Լոռու մարզում տեղակայված զորամասերից մեկում կատարած այցելության ժամանակ Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են, որ բուժական մասի հիվանդասենյակներում օդի ջերմաստիճանը սահմանվածից ցածր է, մինչդեռ այդ պայմաններում այնտեղ բուժում էին ստանում չորս զինծառայողներ՝ սուր ուսապիտառոր

վիրուսային հիվանդությամբ: Նշված խնդիրների վերաբերյալ կազմվել են համապատասխան տեղեկանքներ և տեղադրվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում:

2008թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմի աշխատակիցները այցելություններ են կատարել նաև ՀՀ ԱՆ «Նորարաշեն», «Վարդաշեն», «Երևան-Կենտրոն», «Արթիկ», «Դատապարտյալների հիվանդանոց» ԶԿՀ-ներ, հանդիպել կալանավորների հետ, այդ թվում՝ 2008 թվականի մարտի 1-2-ի դեպքերի կապակցությամբ անազատության մեջ գտնվող անձանց հետ: Վերջիններն իրենց անհամաձայնությունն են արտահայտել իրենց նկատմամբ առաջադրված մեղադրանքների վերաբերյալ, պնդելով, որ դրանք անհիմն են և կրում են բացառապես քաղաքական բնույթ, իրենք չեն կատարել քրեորեն պատժելի արարքներ և իրենց համարում են քաղաքական բանտարկյալներ: Պաշտպանի ներկայացուցիչները պարզաբանել են, որ մեղադրանքների հիմքում ընկած փաստերի հիմնավորվածության գնահատումը դատական ատյանների իրավասությունն է, որոնց գործունեությանը Պաշտպանը միջամտելու լիազորություններ չունի: Պարզաբանվել է, որ այս փուլում Պաշտպանի իրավասությանն են վերաբերում տվյալ անձանց քրեադատավարական իրավունքների խախտումներին առնչվող դեպքերի ուսումնասիրությունը և խախտումների բացահայտման դեպքում դրանք վերացնելու առաջարկով իրավասու մարմիններին դիմելը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը տարբեր առիթներով իր կարծիքն է հայտնել մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ կալանավորված կամ դատապարտված անձանց դատական գործերի վերաբերյալ, առ այն, որ եթե այդ գործերը հայտնվեն Մարդու իրավունքի եվրոպական դատարանում, ապա Հայաստանի կառավարությունը կարող է տանուլ տալ:

## Օրինակ 1

2008թ. ապրիլի 2-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խումբն այցելել է ՀՀ ԱՆ «Նորարաշեն» ԶԿՀ և հանդիպել մարտի 1-2-ի դեպքերի կապակցությամբ կալանավորված և հացադուլ հայտարարած 12 անձանց հետ: Վերջիններս Պաշտպանի ներկայացուցիչներին հայտնել են, որ հացադուլի պատճառ է հանդիսացել այն, որ հեռուստատեսությամբ իրենց հայտարարել են քրեական հանցագործներ, այնինչ իրենք իրենց համարում են քաղաքական բանտարկյալներ: Պաշտպանի ներկայացուցիչները փաստել են, որ հացադուլ հայտարարած կալանավորները գտնվում են բժշկի հսկողության տակ և ԶԿՀ-ի վարչակազմից բողոք չունեն:

## Օրինակ 2

2008թ. հունիսի 23-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և նրա կողմից ստեղծված աշխատանքային խումբն այցելել են ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» և ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներ, հանդպել և առանձնազրույցներ են ունեցել կալանավորված ԱԺ պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Մյասնիկ Մալխասյանի, Սասուն Միքայելյանի, ինչպես նաև Արարատ Չուրաբյանի, Ալեքսանդր Արզումանյանի և գլխավոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Զհանգիրյանի հետ:

Գրեթե բոլոր նշված կալանավորված անձինք դարձյալ իրենց դժգոհությունն ու վրդովմունքն են արտահայտել իրենց պնդմամբ չհիմնավորված մեղադրանքների, անօրինական կալանավորումների, ինչպես նաև իրենց ազգականների և բարեկամների նկատմամբ անհիմն հետապնդումների վերաբերյալ:

2008 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրվել են մեծաթիվ գրավոր և բանավոր դիմում-բողոքներ, որոնցում քարձրացված հարցերի լուծման արդյունավետ միջոցներից է հանդիսացել արագ արձագանքումը:

Արագ արձագանքումը նարդու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների հիման վրա, դրանց շուտափույթ վերացմանը և իրավունքների վերականգնմանն ուղղված, իրատապ ու անհետաձգելի միջոցառումների ձեռնարկումն է: Նման դեպքերում, Պաշտպանի մոտ շտապ խորհրդակցութուն է հրավիրվում և նրա հանձնարարությամբ ստեղծվում է խումբ, որն անհապաղ այցելում է խախտումների գրանցման վայրեր: Արագ արձագանքման խմբերը համալրվում են Պաշտպանի աշխատակազմի համապատասխան ոլորտում մասնագիտացված աշխատողներից:

Չափ դեպքերում քաղաքացիներն իրենց իրավունքների կամ ազատությունների պաշտպանության խնդրանքով Պաշտպանին են դիմել ոչ աշխատանքային օրերին, ինչպես նաև գիշերային ժամերին, նման դեպքերում Պաշտպանի անմիջական դեկավարությամբ աշխատակազմի աշխատակիցներից ձևավորվել են արագ արձագանքման խմբեր՝ ոստիկանության բաժանմունքներում ձերբակալված անձանց պահման, զանգվածային միջոցառումների անցկացման վայրեր կամ քրեակատարողական հիմնարկներ և զորամասեր այցելելու համար:

Գրեթե բոլոր զանգվածային կամ ոչ զանգվածային միջոցառումներին՝ հանրահավաքներին, երթերին և ցույցերին անկախ դրանց անցկացման ժամերից, Պաշտպանի ներկայացուցիչները ներկա են գտնվել: Դրա շնորհիվ է նաև, որ որոշ դեպքերում հնարավոր է եղել միջոցառման մասնակիցների և ոստիկանության աշխատակիցների միջև ստեղծել հանդուրժողականության մթնոլորտ:

Ստորև ներկայացվում են արագ արձագանքման դեպքերի որոշ օրինակներ:

## **Օրինակ 1**

2008թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ահազանգ է ստացվել, որ Իջևանում տեղակայված ՀՀ ՊՆ Ենթակայության N գ/մ-ի պարտադիր ժամկետային գինծառայող, շարքային Հ.Խ.-ն մի քանի օր առաջ ածելիով իրեն վճառվածքներ է հասցրել նախարարկի շրջանում:

Պաշտպանի հանձնարարությամբ արագ արձագանքման խումբը գինծառայողի առողջական վիճակին և դեպքի մանրամասներին ծանոթանալու նպատակով նույն օրն այցելել է գորամաս և տեղում պարզել կատարվածը: Այդ մասին առավել մանրամասն ներկայացված է սույն գեկույցի «Զինվորական ծառայության հետ կապված իրավունքներ» բաժնում:

## **Օրինակ 2**

2008թ. մայիսի 4-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ է այցելել Հակոբ Հակոբյանի շահերի պաշտպան Մելանյա Առուստամյանը և հայտնել, որ իր պաշտպանյալն արդեն 7-րդ օրն է գտնվում հացադուլի մեջ և ցանկանում է տեսակցություն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ: Միևնույն ժամանակ Մելանյա Առուստամյանը նշել է, որ իր պաշտպանյալն ունի առողջության հետ կապված լուրջ խնդիրներ և ունի բժշկի կարիք: Այդ մասին Պաշտպանի ներկայացուցիչները անհապաղ տեղեկացրել են քրեակատարողական իիմնարկի պետին, որի արդյունքում նույն օրը ԶԿՀ է հրավիրվել Հակոբ Հակոբյանի անձնական բժիշկը:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները 2008 թվականի մայիսի 5-ին այցելել են ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ԶԿՀ և հանդիպել Հակոբ Հակոբյանի հետ:

## **Օրինակ 3**

2008 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված ահազանգի հիման վրա՝ Պաշտպանի հանձնարարությամբ, արագ արձագանքման խմբի անդամները գտնվել են Երևանի Թումանյան-Մաշտոց փողոցների խաչմերուկում, որտեղ արտոնված հանրահավաքի մասին բնակչությանն իրազեկելու համար կազմակերպված երթը խոչընդոտվել է ոստիկանության աշխատակիցների կողմից:

Խաչմերուկում հավաքված մոտ 50 մարդ ցանկացել են երթ անցկացնել՝ նկատի ունենալով, որ դրա համար նախապես թույլտվություն չի նախատեսվում: Սակայն ոստիկանները համառորեն չեն թույլատրել երթ անցկացնել, ավելին, երթի կազմակերպիչները տեղեկացրել են, որ քաղաքացիական համազգեստով Ոստիկանության աշխատակիցներն իրենց ձեռքից խլել են բարձրախոսը, ապա, մարդկանց հրելով, փորձել են

հեռացնել տարածքից: Որոշ ժամանակ անց ոստիկանության աշխատակիցները թույլատրել են երբն անցկացնել, սակայն առանց բարձրախոսի, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից: Մասնակիցները պահանջել են ոստիկաններից շխոշընդոտել երթի անցկացումը: Փոխարենը, Ոստիկանության շուրջ 50 աշխատակիցներ, իրենց հավաքված մարդկանց, տարել են նրանց դեպի Հյուսիսային պողոտա:

Նշված փաստերն արձանագրվել են Պաշտպանի ներկայացուցիչների կողմից: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մեկ անգամ ևս կոչ է արել ՀՀ ոստիկանությանը՝ գործել ՀՀ Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան և չսահմանափակել ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքները:

#### Օրինակ 4

2008թ. հոկտեմբերի 17-ին, ժամը 12.00-ից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ հեռախոսազնգեր են ստացվել այն մասին, որ միջքաղաքային և միջմարզային հասարակական տրանսպորտն ըստ էության նորմալ չի գործում: Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբի անդամներն այցելել են քաղաք Արովյան և տեղում արձանագրել հետևյալ փաստերը.

Արովյան-Երևան թիվ 260, 261 երթուղիների տրանսպորտը Երևան էր գալիս առանց ուղևորների և Երևանից բեռնված գնում Արովյան: Բացի այդ, մի քանի կանգառներում կանգնած մարդկանց հավաստմամբ, ողջ օրվա ընթացքում հասարակական տրանսպորտի բոլոր միջոցների վարորդները իրաժարվել են Արովյանից Երևան տեղափոխել ուղևորներին, պատճառաբանելով, թե դիսպեչերներից ստացել են հրահանգներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված է յուրաքանչյուր անձի ազատ տեղաշարժման իրավունքը՝ Պաշտպանը կոչ է արել լիազորված պետական մարմիններին՝ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել հասարակական տրանսպորտի անխափան աշխատանքն ապահովելու համար:

#### Օրինակ 5

Քաղաքացիներ Մ.Հ.-ն և մյուսները 25.11.2008թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով տեղեկացրել են, որ 2008թ. նոյեմբերի 26-ից, որպես Արցախյան ազատամարտի մասնակիցներ, հայտարարում են եռօրյա հացադուլ «Եռարլուր» պանթեոնի մատուիին հարակից տարածքում «Ոչ մի թիզ հող» և «Արցախը ճանաչել Հայաստանի անբաժանելի մասը» պահանջներով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները նոյեմբերի 27-ին այցելել են «Եռարլուր» պանթեոն և հանդիպել հացադուլ հայտարած քաղաքացիներ Մ.Հ.-ին, Հ.Ա.-ին, Ս.Մ.-ին և Վ.Մ.-ին: Նրանք հայտնել են, որ 2008 թվականի

Առյեմբերի 26-ի երեկոյան ոստիկանները տարել են իրենց վրանները, իսկ ժամը 23-ին պահանջել են դադարեցմել միջոցառումը և հավաքել նաև իրենց պաստառները: Այնուհետև, Առյեմբերի 27-ի առավոտյան իրենց հրավիրել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժին, որտեղ իրենց է վերադարձվել նախորդ օրը վերցված վրանները և առաջարկվել է միջոցառումը անցկացնել մեկ այլ վայրում:

Պաշտպանի ներկայացուցիչների հարցերին ի պատասխան, ՀՀ ոստիկանության աշխատակիցը հայտնել է, որ Ոստիկանության կողմից ուժային մեթոդներ չեն կիրառվել, իսկ պաստառները վերցվել են, քանի որ դրանք փակցված են եղել մատուի պատերին:

Հաջորդ օրը՝ Առյեմբերի 28-ին, Պաշտպանի աշխատակազմ է զանգահարել հացադրության աշխատարած Մ.Հ.-ն և հայտնել, որ Ոստիկանության աշխատակիցներն ուժի գործադրմամբ իրենց հեռացրել են մատուի հարակից տարածքից:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցը կրկին այցելել է «Եռաբլուր» և արձանագրել, որ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից արգելվում է հացադրության անձանց մուտքը «Եռաբլուր» պանթեոն և ակցիայի մասնակիցները ստիպված այն շարունակում էին դեպի «Եռաբլուր» տանող ճանապարհի հարակից տարածքում:

Այսպիսով, ՀՀ ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել են մի խումբ անձանց հրապարակային միջոցառում անցկացնելու իրավունքի իրականացմանը:

Արագ արձագանքման վերաբերյալ կազմված տեղեկանքները տեղադրվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում:

## Օրինակ 6

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուիի Փոստանջյանը 21.11.2008թ. դիմելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հայտնել է, որ ՀՀ ոստիկանության աշխատակիցներն արգելում են իրեն և մի խումբ քաղաքացիների խաղաղ երթ անցկացնել Երևան քաղաքի փողոցներով, որը պետք է մեկնարկեր ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի մոտից:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներն այցելել են հրապարակային միջոցառման անցկացման վայր, որտեղ ականատես են եղել, թե ինչպես են ՀՀ ոստիկանության աշխատակիցները շարք կազմելու միջոցով արգելում Զարուիի Փոստանջյանին և մոտ իիսուն քաղաքացիներին երթ անցկացնել:

Ոստիկանության աշխատակիցներն երթի արգելումը պատճառաբանել են նրանով, որ միջոցառմանը մասնակցում են 100-ից ավելի քաղաքացիներ, իսկ այդ դեպքում, գործող օրենսդրությունը պահանջում է իրազեկում Երևանի քաղաքապետարան, ինչը

կազմակերպիչների կողմից չի կատարվել: Սինչդեռ, Պաշտպանի աշխատակիցները արձանագրել են, որ միջոցառմանը մասնակից են եղել մոտ 50 քաղաքացիներ:

## 1.2. Դրական արդյունքներով ավարտված գործեր

Իր որոշումների ոչ պարտադիր բնույթից ելնելով՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը չի կարող հանդես գալ որպես քաղաքացիների իրավունքների պաշտպանության մյուս հաստատություններին փոխարինող կառուցակարգ: Պաշտպանի որոշումները չեն դադարեցնում հանրային մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի գործողությունը: Այդ որոշումներն ունեն բացառապես խորհրդատվական բնույթ:

Պաշտպանի գործունեության արդյունավետության հիմնական ցուցանիշները՝ հենց մարդու և քաղաքացու իրավունքների վերականգնման փաստերն են:

2008թ. ընթացքում Պաշտպանի գործունեության արդյունքում արձանագրվել է իրավունքների վերականգնման 122 դեպք (ներառյալ նաև կոլեկտիվ կարգով ներկայացված դիմում-բողոքները), որոնց թվում եղել են նաև այնպիսի գործեր, որոնք քննարկման են ընդունվել նախորդ տարիներին, սակայն վերջնական լուծում են ստացել 2008թ.:

Ստորև ներկայացնում ենք Պաշտպանի միջամտության արդյունքում դրական լուծում ստացած գործերից մի քանիսը.

### Օրինակ 1

Երևան քաղաքի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքում հայտնել է, որ ՀՀ կառավարության 25.10.2000թ. h.682 որոշմանը համապատասխան՝ Երևանի քաղաքապետի 2006թ. որոշմամբ Երևանի Աջափնյակ թաղամասի Շինարարների փողոցի 4-րդ կարգի վերաբային թիվ 23 շենքի 58-րդ բնակարանի փոխարեն, որի վարձակալներն են ինքը և իր ընտանիքի անդամները, հատկացվել է Աջափնյակ համայնքի Արգումանյան փողոցի թիվ 43 շենքի 26-րդ՝ չորս սենյականց բնակարանը:

Դիմումատուն բողոքում է, որ Երևանի քաղաքապետարանն իր ընտանիքի հետ կնքել է հատկացված բնակարանի վարձակալության պայմանագիր, որում, սակայն, տեղ են գտել իր մահացած տատի և մոր անունները, ինչի պատճառով իրենք չեն կարողացել նոտարական կարգով վավերացնել պայմանագիրը: Պայմանագրում ուղղումներ կատարելու նպատակով այն հետ են վերադարձրել Երևանի քաղաքապետարան, սակայն, ըստ դիմումատուի, շուրջ յոթ ամիս Երևանի քաղաքապետարանը որևէ գործողություն չի կատարել հարցը լուծելու համար:

Քաղաքացու դիմում-բողոքում քարձրացված հարցերի վերաբերյալ Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել Երևանի քաղաքապետից և առաջարկել միջոցներ ձեռնարկել խնդրի շուտափույտ լուծման ուղղությամբ:

Ի պատասխան, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը 06.06.2008թ. գրությամբ տեղեկացրել է, որ հնարավորինս սեղմ ժամկետներում կը ննարկվի դիմումատուի հետ վարձակալության պայմանագիր կնքելու հարցը: Իսկ 30.07.2008թ. գրությամբ Երևանի քաղաքապետի աշխատակազմի ղեկավարը Պաշտպանին է ներկայացրել քաղաքացու ընտանիքի անդամների հետ կնքված վարձակալության պայմանագիրը և պայմանագրից ծագող իրավունքների գրանցման վկայականների պատճենները:

## Օրինակ 2

Կոտայքի մարզի Զորադրյուր գյուղի բնակիչ Հ.Մ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է հետևյալը.

1969թ.-ից մինչև 1978թ. մայիս ամիսն աշխատել է Երքաղխորհրդի գործկոմի «Ավտոտրանսպորտ» միավորումում: Կեսաթոշակի տարիքը լրանալուց հետո աշխատանքային ստաժի հաստատման համար անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու նպատակով դիմել է քաղաքապետարան, սակայն ստացել է մերժում:

Դիմումի կապակցությամբ պարզաբանումներ է պահանջվել Երևանի քաղաքապետից: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը գրությամբ հայտնել է, որ Հ.Մ.-ն Երևանի քաղաքապետարան դիմել է 07.03.2008թ.՝ 1969-1978թթ. Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի ավտոտրանսպորտի արտադրական միավորումում աշխատելու վերաբերյալ տեղեկանք տրամադրելու խնդրանքով: 25.03.2008թ. հիշատակված տեղեկանքը նշված տարիներին աշխատելու վերաբերյալ տրամադրվել է քաղաքացուն:

## Օրինակ 3

Երևանի բնակիչը հայտնել է, որ 1998 թվականից տառապում է հազվագյուտ անբուժելի Վիլտն-Կոնովալով հիվանդությամբ: Այդ հիվանդության դեմ միակ ղեղամիջոցը պենիցիլ-ամինն է, որը Հայաստանի Հանրապետություն չի ներկրվում: Մինչև 2007թ. դեղորայքը ստանում էր ՀՀ առողջապահության նախարարության միջոցով ԱՄՆ-ից ստացվող հումանիտար օգնությամբ, սակայն արդեն մեկ տարուց ավել է օգնությունը դադարեցվել է, և ՀՀ առողջապահության նախարարությունը չի տալիս իրեն որոշակի պատասխան:

Պաշտպանի կողմից կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ առողջապահության նախարարը հայտնել է, որ «Պեմիցիլ-ամին/Կուալրինիլ» դեղը ՀՀ առողջապահության

նախարարությունը պարբերաբար ստանում էր մարդասիրական օգնության ճանապարհով: Ներկայումս՝ դրույ կազմակերպության տեղեկատվությամբ, նշված դեղը դրուս է եկել արտադրությունից: Հաշվի առնելով, որ 2008թ. ավելացել է Վիլսոն-Կոնովալով հիվանդությամբ տառապող հիվանդների թիվը, ՀՀ առողջապահության նախարարությունը միջոցներ է ձեռնարկում արտերկրից հիշյալ դեղը ձեռք բերելու և անվճար հատկացնելու համար:

2008թ. ապրիլի 9-ին ՀՀ առողջապահության նախարարությունը քաղաքացուն որպես օգնություն տրամադրել է չորս հարյուր (400) հաք 250 մգ Կուպրինիլ և հայտնել է, որ հնարավորության դեպքում կաջակցի հիվանդին:

#### **Օրինակ 4**

Քաղաքացի Կ.Խ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ բնակարան չունենալու հետևանքով չի կարողանում ստանալ անձնագիր: Ներկայումս ընտանիքով փաստացի բնակվում է Երևան, Ռուսավելի հասցեում:

Պաշտպանի գրություններից հետո բողոքում նշված հարցերի կապակցությամբ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետք թիվ 25/01-14987 գրությամբ հայտնել է, որ Կ.Խ-ի անվամբ 10.03.2008թ. տպագրվել է ՀՀ քաղաքացու անձնագիրը՝ փաստացի բնակության վայրի նշումով: Հայտնել է նաև, որ քաղաքացին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնի անձնագրային ծառայությունից 21.03.2008թ ստացել է նշված անձնագիրը:

#### **Օրինակ 5**

Քաղաքացի Գ.Մ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած դիմումով հայտնել է, որ ինքն ընտանիքի հետ հաշվառված է ք.Երևան Արշակունյաց փողոցի արդեն իսկ քանդված շենքում: Քաղաքապետարանի հետ կնքած պայմանագրի համաձայն, նրանք այդ հասցեում հաշվառված պետք է մնային այնքան ժամանակ, մինչև քանդված շենքի փոխարեն կկառուցվեր նորը և նրանց կտրվեր նոր բնակարան: Քաղաքացին բողոքում է, որ 2008թ. փետրվարի 19-ին հետին ամսաթվով՝ 29.04.2007թ., իրեն հանել են հաշվառումից՝ նշելով, որ իմննվում են քաղաքապետարանի որոշման վրա:

Պաշտպանի գրություններից հետո բողոքում նշված հարցերի կապակցությամբ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետք գրությամբ հայտնել է, որ նշված շենքը քանդված է, և տարածքը գտնվում է քաղաքապետարանի ենթակայության տակ: Հաշվառված քաղաքացիները հաշվառումից հանվելու են նրանց բնակարանային հարցի վերջնական լուծումից հետո: Պարզապես, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի անձնագրային ծառայությունը ընտրացուցակներում

անձտությունները վերացնելու ընթացքում սխալմամբ Գ.Մ.-ին և Ռ.Կ.-ին հանել է Երևան քաղաքի վերը նշված հասցեում հաշվառումից: Ներկայումս Գ.Մ.-ի և Ռ.Կ.-ի հաշվառումը Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի այդ հասցեում վերականգնվել է:

### **Օրինակ 6**

Քաղաքացի Ա.Հ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղած դիմումով հայտնել է, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության քննչական բաժնում քննվում է թիվ 56200206 քրեական գործը, որի շրջանակներում նա հարցաքննվել է որպես վկա:

Դիմումատուն հայտնել է նաև, որ 29.01.2008թ. ավագ քննիչի կողմից կայացվել է որոշում՝ իր անվամբ գրանցված Տավուշի մարզի Բերդ քաղաքում գտնվող բնակելի տան և այլ գույքի վրա կալանք դնելու մասին:

Դիմումատուն բողոքում է, որ սույն գործով հանդես է գալիս որպես վկա և որևէ պատասխանատվություն չի կարող կրել գործով մեղադրյալ հանդիսացող անձանց գործողությունների համար, հետևաբար չի կարող կալանք դրվել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի վրա:

Դիմումի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալից ստացված գրությամբ հայտնվել է, որ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի վարչության վարույթում քննվող «Բերդի հիվանդանոց» ՓԲԸ-ի բուժական անձնակազմի կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, հիվանդանոցի գինեկոլգիական բաժանմունքում բուժվող հիվանդ Կ.Ա.-ի նկատմամբ անփույթ և անբարեխիղ վերաբերմունք դրսեորելու հետևանքով հիվանդի մահվան փաստով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում քննիչի որոշմամբ կալանք է դրվել գործով վկա Ա.Հ.-ի գույքի վրա: Քրեական գործի ուսումնասիրության արդյունքում նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 25.02.2008թ. ցուցում է տրվել անհապաղ վերացնել նշված ապօրինի որոշումը և այդ մասին հայտնել Ա.Հ.-ին, ինչը և կատարվել է:

### **1.3. Իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն**

Պաշտպանի գործունեության մեջ կարևոր տեղ է գրադեցնում իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունը: ՀՀ նախագահի «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» 2007թ. հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 42-րդ կետը ամրագրում է, որ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի:

Սրանով պայմանավորված՝ 2008թ. ընթացքում կարծիք ներկայացնելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բազմաթիվ օրենքի նախագծեր են ուղարկվել, որոնք Պաշտպանի աշխատակազմում մանրակրկիտ վերլուծության են ենթարկվել և դրանց կապակցությամբ նախաձեռնողների հետ քննարկումներ են կազմակերպվել, որոշ դեպքերում Պաշտպանի կողմից ներկայացվել են կարծիքներ: Անհրաժեշտ է նաև նշել, որ փորձաքննության նպատակով գերատեսչություններից ստացված ոչ բոլոր իրավական ակտերի նախագծերն են վերաբերել մարդու իրավունքներին և ազատություններին:

Ստորև ներկայացվում է մի շարք օրենքների նախագծերի վերաբերյալ Պաշտպանի կողմից ներկայացված կարծիքները:

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Պաշտպանին է ներկայացվել «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Նախագծի վերաբերյալ կատարվել են մի շարք հայեցակարգային առաջարկություններ և դիտողություններ: Մասնավորապես, նախագծում օգտագործվում են «պատերազմ է հայտարարում» կամ «պատերազմ հայտարարելու դեպքում» արտահայտությունները, որոնք ել ենթադրում են որոշակի ոլորտներում (այդ թվում նաև՝ մարդու իրավունքների) սահմանափակումներ: Այս հարցի կապակցությամբ Պաշտպանի կողմից առաջարկվել է օրենքի նախագծում հստակ տալ «պատերազմ» հասկացության սահմանումը՝ իհմք ընդունելով միջազգային իրավունքի աղբյուրներում օգտագործվող մեկնաբանությունները: Բացի այդ, Պաշտպանի կողմից առաջարկներ են ներկայացվել նախագծի առանձին հոդվածների վերաբերյալ:

2. ՀՀ արդարադատության նախարարի կողմից Պաշտպանին է հասցեազրվել «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցից՝

2.1. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կամ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Պաշտպանն առաջարկել է օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասում «Հրազենի գործադրման բոլոր դեպքերի մասին ոստիկանության ծառայողը պարտավոր է դա գործադրելուց հետո անմիջապես գեկուցել վերադասության կարգով» բառերից հետո լրացնել «ապա 24 ժամկանը ընթացքում՝ դատախազին» բառերը:

Միաժամանակ, Պաշտպանը, իհմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածը և առաջնորդվելով ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացրած օրենքների ընդունման վերաբերյալ իիմնավորման տրամաբանությամբ՝ առաջարկել է համապատասխան փոփոխություն կատարել նաև «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքում: Պաշտպանն առաջարկել է այդ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ կետը՝

«Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և գենքի կիրառման (գործադրման) հետևանքով մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին հարկային մարմնի դեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին», շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների կիրառման (գործադրման) դեպքում անմիջապես զեկուցում է վերադասության կարգով: Մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին հարկային մարմնի դեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին:

Զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին հարկային ծառայողը զեկուցում է վերադասության կարգով և դատախազին»:

3. «ՀՀ Պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումը հանգել է նրան, որ նախագծում առկա են մի շարք անորոշություններ և բացքողումներ, ինչի կապակցությամբ առաջարկվել է նախագծում կատարել որոշակի փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես, դրանք վերաբերվել են ոգելից խմիչքները, խաղաթղթերը և այլ արգելված առարկաներն ու իրերը ոչնչացնելուն, անհատական օգտագործման նպատակով ձերբակալվածին կամ կալանավորվածին քննելու տեղ տրամադրելուն, ձերբակալվածի կամ կալանավորվածի ծխելու համար հատկացվող ժամանակին և վայրերին և այլն:

Պաշտպանն առաջարկներ է ներկայացրել նախագծում տեղ գտած մի շարք այլ վիճելի հարցերի և թերությունների վերացման ուղղությամբ և նշել, որ նախագիծը հետագա լրամշակման և խմբագրման կարիք ունի:

4. «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ Պաշտպանն առաջարկել է հետևյալը. «Նախագծի փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն այնպես, որպեսզի հետախուզման մեջ գտնվող ավտոմեքենաները, ինչպես նաև շարժիչի կամ նույնացման համարի կամ փոխանցման տուփի վերադաշված կամ ջնջված համարներով կամ հափշտակության այլ հատկանիշների առկայությամբ ՀՀ փոխադրամիջոց ներմուծած անձը շարունակի տիրապետել, օգտագործել և տնօրինել այդ փոխադրամիջոցը, ընդհուպ մինչև օտարելը, սակայն այն պայմանով, որ օտարման դեպքում համապատասխան փաստաթղթերում կատարվի այդ մասին գրառում»:

5. ՀՀ ոստիկանության կողմից Պաշտպանին է ներկայացվել «Ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության

որոշման նախագիծը, որի ուսումնասիրության արդյունքում արված նկատառումները հանգել են նրան, որ նախագծում տեղ գտած որոշ դրույթներ շարադրված են ոչ հստակ և խմբագրման կարիք ունեն, ինչպես նաև նախագծում պահպանված չէ դրույթների տրամաբանական շարադրանքը: Մասնավորապես, նշվել է, որ պարզ չէ, թե ուղեկցող ստորաբաժանումներն անորոշ, թե՞ որոշակի ժամկետով են ստեղծվում: Միևնույն ժամանակ ընդգծվել է, որ որոշակիացման կարիք ունի նաև ուղեկցման կազմակերպման նկատմամբ ուղեկցող ստորաբաժանման փաստաթղթերի հսկողությունն իրականացնող և տեղում ուղեկցող պահակախմբի ծառայությունը ստուգող իրավասու մարմնի հարցը: Նախագծի վերաբերյալ ներկայացվել են նաև մի շարք այլ դիտողություններ և առկա թերությունները վերացնելու ուղղությամբ արվել են առաջարկություններ:

6. ՀՀ առողջապահության նախարարության կողմից Պաշտպանին է ներկայացվել «Հոգերուժական օգնության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծում տեղ են գտել որոշ թերացումներ և բացթողումներ, որոնց վերացմանն ուղղված Պաշտպանի կողմից արվել են մի շարք առաջարկություններ և դիտողություններ: Բացի այդ, իր գնահատականներում Պաշտպանը նշել է, որ առաջարկված նախագիծը հակասություններ է պարունակում նաև այլ օրենքների հետ: Միևնույն ժամանակ, ներկայացվել է, որ նախագծում տեղ գտած որոշ դրույթներ հստակ շարադրված չեն և խմբագրման կարիք ունեն:

7. ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի կողմից Պաշտպանին է ներկայացվել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Քարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որոնց վերաբերյալ, ընդհանուր առմամբ, սկզբունքային առարկություններ և դիտողություններ չեն ներկայացվել:

Միևնույն ժամանակ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Պաշտպանը կարծիք է հայտնել, որ նախագծի ընդունումն էականորեն վատթարացնում է անձանց որոշակի շրջանակի իրավական կարգավիճակը, ինչի վերաբերյալ ներկայացվել են մի շարք առարկություններ և դիտողություններ: Մասնավորապես, առաջարկվել է օրենքի նախագիծը վերախմբագրել այնպես, որպեսզի չսահմանափակվի մինչև 2009թ. հունվարի 1-ը երկաստիճան կրթական համակարգում ուսման տարկետում ստացած քաղաքացիների մագիստրատուրայում ուսման համար պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստանալու իրավունքը և օրենքի հետադարձ ուժով չվատթարանա վերը նշված անձանց իրավական կարգավիճակը:

8. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին», «Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը Պաշտպանի աշխատակազմում քննարկվել են և ուսումնասիրության արդյունքում արված նկատառումները հանգել են նրան, որ ներկայացված օրենսդրական նախագծերը նպատակ են հետապնդում որոշակի խումբ անձանց զրկել անձեռնմխելիությունից, միևնույն ժամանակ, վերացնում են դատախազի և հատուկ քննչական ծառայության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու իրավունքը միայն ՀՀ գլխավոր դատախազին վերապահված լինելու պահանջը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի որոշ հոդվածների ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ Պաշտպանը հայտնել է այն կարծիքը, որ նպատակահարմար չէ ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին զրկել անձեռնմխելիությունից, քանի որ նախագծի ընդունումը կարող է հնարավորություն ստեղծել անցանկալի թեկնածուների նկատմամբ ճնշումներ գործադրելուն: Բացի այդ, Պաշտպանը հայտնել է նաև, որ նախագծերը մշակելիս պատշաճ կերպով հաշվի չեն առնվել անձեռնմխելիությունից զրկվող բոլոր անձանց կարգավիճակի առանձնահատկությունները, առավել ևս կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից:

Այնուհանդերձ, հաշվի առնելով նախագծերի հասարակական մեծ նշանակությունը, Պաշտպանը նպատակահարմար չի համարել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը՝ նշելով նաև, որ այն փորձաքննության է ուղարկվելու Վենետիկի հանձնաժողով: 2008թ. հոկտեմբերի 17-18-ին ԵԽ Վենետիկի հանձնաժողովի լիազումար նիստում հաստատվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ԵԽ Վենետիկի հանձնաժողովի կարծիքը, համաձայն որի.

«Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության անձեռնմխելիության սկզբունքը՝ ներառյալ նրա աշխատակազմը, այս հաստատության գործունեության անկախության գլխավոր երաշխիքներից է, որը նրան հնարավորություն է ընձեռնում իրականացնել իր առանձնահատուկ դերը օրենքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական հասարակություններում: Եթե տվյալ հասարակությունում կա մի որևէ հաստատություն, որն օժտված է անձեռնմխելիության սկզբունքով, ապա Օմբուդսմանի

հաստատությունը անկասկած պետք է լինի դրանցից մեկը: Քանի որ, Օմբուդսմանի առջև դրված խնդիրներից մեկը հանդիսանում է հատուկ տեսակի քննություն անցկացնելը, որը հաճախ հանգեցնում է իշխանությունների սուր քննադատության՝ ՄԻՊ հաստատությունը դառնում է քաղաքական և այլ շահերից բխող հարձակումների հավանական թիրախը»:

9. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մանրամասն ուսումնափրության է արժանացել նաև ՀՀ ընտրական օրենսդրության բարելավման վերաբերյալ առաջարկությունների փաթեթը: Պաշտպանի կողմից կատարվել են մի շարք առաջարկություններ, մասնավորոպես, Պաշտպանն առաջարկել է փոփոխություն կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասում՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը ստանալու պահանջը հստակ սահմանելու նպատակով: Առաջարկությունների շարքում նշվել է նաև, որ վերանայման կարիք ունի ՀՀ ընտրական օրենսդրության դրույթների խախտման համար նախատեսված պատասխանատվությանն առնչվող հարցերը: Բացի այդ, Պաշտպանի կողմից առաջարկություններ են ներկայացվել առանձին հոդվածների վերաբերյալ:

ՀՀ ընտրական օրենսդրության բարելավման վերաբերյալ առաջարկությունների փաթեթը Պաշտպանը ներկայացրել է ՀՀ վարչապետին և ՀՀ Ազգային ժողովի պետական հանձնաժողովի նախագահին:

10. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումը հանգել է նրան, որ նախագիծը գուրկ է որևէ հիմնավորվածությունից: Բացի այդ, Պաշտպանը կարծիք է հայտնել, որ անհասկանալի է ՀՀ քրեական օրենսգրքով նոր հանցակազմ նախատեսելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ օրենսգրքի 235-րդ հոդվածն արդեն իսկ նախատեսում է նույն հոդվածում թվարկված նյութերի կամ առարկաների ձեռք բերման, իրացման, պահման, փոխադրման կամ կրման համար պատասխանատվություն: Ուստի, Պաշտպանն առաջարկել է նախատեսվող նոր հանցակազմի բովանդակությունն ու նպատակահարմարության հարցը ևս մեկ անգամ լուրջ քննարկուների առարկա դարձնել:

11. ՀՀ արդարադատության նախարարության կողմից Պաշտպանին է ներկայացվել «Իրավական ակտերի փորձաքննության պետական ծառայության մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնց վերաբերյալ Պաշտպանը հայտնել է հետևյալ կարծիքը.

11.1. «Իրավական ակտերի փորձաքննության պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ արտահայտված կարծիքում Պաշտպանը անհասկանալի է համարել այն, որ ՀՀ կառավարությանը վերապահվել է միայն Ծառայության ծառայողների վերապատրաստման կարգն ու պայմանները սահմանելու իրավասությունը: Բացի այդ, Պաշտպանը նշել է, որ նախագծի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից պարզ չէ, թե ինչպիսի հիվանդության առկայության դեպքում ծառայողը կարող է տեղափոխվել ավելի ցածր պաշտոնի, իսկ 16-րդ հոդվածում «մարմնում» բառն առաջարկել է փոխարինել «Ծառայությունում» բառով:

Նախագծում տեղ գտած մի շարք այլ թերությունների և բացքողումների վերաբերյալ Պաշտպանն առաջարկել է ներկայացրել և նշել, որ նախագիծը հետագա լրամշակման կարիք ունի, և ներկայացվել էին համապատասխան առաջարկություններ:

11.2. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Պաշտպանը կարծիք է հայտնել, որ նախագիծը հետագա լրամշակման կարիք ունի, և ներկայացվել էին համապատասխան առաջարկություններ:

11.3. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածը նախատեսում է խմբագրել «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածը, ինչի կապակցությամբ Պաշտպանը նշել է, որ օրենքի և նախագծով խմբագրված հոդվածների բովանդակությունները միմյանցից էականորեն տարբերվում են: Ուստի, Պաշտպանը կարծիք է հայտնել, որ առաջարկվող տեքստով կարող էր խմբագրվել «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը:

12. ՀՀ արդարադատության նախարարության կողմից Պաշտպանին է ներկայացվել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և նախագծի ընդունման հիմնավորումը, ինչի կապակցությամբ Պաշտպանը կարծիք է հայտնել, որ ներկայացված հիմնավորումն անհրաժեշտ փաստարկներ չի պարունակում, որպեսզի նշված նախագծում փոփոխություններ և լրացում կատարվի: Բացի այդ, Պաշտպանը նշել է, որ հիմնավորման մեջ պետք է վերլուծվի կոնկրետ ՀՀ-ում առկա իրավիճակը և դրա հիման վրա բերվեն փաստարկներ, որոնք կարող են արդեն իսկ համոզիչ լինել նմանօրինակ փոփոխությունների և լրացման անհրաժեշտության համար:

13. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ արտահայտված կարծիքում Պաշտպանն ընդգծել էր, որ ներկայացված նախագիծը սահմանափակում է հիմնադիրների իրավունքները, որը թույլ չի տալիս պետությանը նպաստել

այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնց պարագայում անձը կարողանա հանդես գալ որպես հասարակության լիարժեք անդամ իր բոլոր սահմանադրական իրավունքներով հանդերձ: Բացի այդ, *Պաշտպանը* նշել էր նաև, որ առաջարկված նախագծում նման սահմանափակում նախատեսելը կարող է հակասել ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներին:

Այնուամենայնիվ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիքորոշումը «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ հանգում է նրան, որ նշված հոդվածում առկա է դրույթ, որը մարդու իրավունքների պաշտպանության տեսակետից կարող է իրավունքների ուժնահարման տեղիք տալ:

14. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է նաև «Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացման պետական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այս նախագծի հետ կապված *Պաշտպանը* նշել է, որ լրացուցիչ քննարկման են արժանի ծառայությունում պաշտոն գրադեցնելու համար ստեղծվող հանձնաժողովի ձևավորման և մրցութային հանձնաժողովի որոշումների բողոքարկման կարգերը: Միևնույն ժամանակ, նախագծում տեղ գտած այլ թերությունների վերացման ուղղությամբ *Պաշտպանն* արել է առաջարկություններ:

#### 1.4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտ

Դեռևս նախորդ տարեկան գեկույցներում բազմիցս անդրադարձել ենք ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և հասարակայնության հետ կապերի, այդ թվում նաև ԶԼՄ-ների հետ հաղորդակցվելու կարևորությանը՝ նշելով, որ հասարակայնության հետ կապերի գարգացումը նպաստում է ոչ միայն *Պաշտպանի* գործունեության իրապարակայնությանը և քափանցիկությանը, այլև բարձրացնում է երկրում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների և մարդու իրավունքների պաշտպանվածության վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը:

Հասարակայնության հետ կապերի գարգացման և տեղեկատվության տարածման միջոցները բազմազան են, և այդ գործունեության արդյունավետ իրականացումը մեծապես պայմանավորված է տվյալ հաստատության տեխնիկական, մարդկային, ֆինանսական և այլ ռեսուրսների առկայությամբ: Չնայած այն հանգամանքին, որ 2008 թվականի ընթացքում նշված ռեսուրսների ավելացման առումով *Պաշտպանի* աշխատակազմում փոփոխություններ չեն կատարվել, դժվար է գերազնահատել այս երեք տարիների ընթացքում ձևավորված, որոշ վերապահումներով՝ բարենպատ, կայացած համագործակցությունը *Պաշտպանի* և ԶԼՄ-ների միջև: Որպես ասվածի ապացույց, կարելի է վկայակոչել այն հանգամանքը, որ

Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ոլորտում տեղի ունեցող գրեթե բոլոր իրադարձությունները զուգորդվում են Պաշտպանի տեսակետի և նրա կողմից իրականացրած գործողությունների լուսաբանմամբ տեղական և արտերկրյա ԶԼՄ-ներում:

Ցավով պետք է նշել, որ Պաշտպանի կողմից ներկայացված տեսակետները կամ կարծիքները միշտ չեն, որ արժանանում են ցանկալի արձագանքների կամ վերաբերմունքի:

Նշված երևույթի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների շարքում կարելի է առանձնացնել այն հանգամանքը, որ Հայաստանի պետական կառավարման համակարգում, ցավոք, դեռևս չի ձևավորվել այն մշակույթը, համաձայն որի, մարդու իրավունքների պաշտպանությունը հանդիսանում է բարձրագույն արժեք, որի նկատմամբ անձնական, գերատեսչական և քաղաքական շահերը երկրորդական են: Այս գիտակցումը հասարակայնության մեջ սերմանելու գործում էական նշանակություն ունի պետական կառավարման համակարգի և ԶԼՄ-ների համագործակցությունը: Չնայած վերջին շրջանում հաճախակի դարձած հանդուրժողականության կոչերին և ԶԼՄ-ների դաշտի առողջացմանը վերաբերող բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններին, դեռևս շատ գործնական անելիքներ կան այդ ոլորտում:

Հայաստանյան ԶԼՄ-ների դաշտում բազմակարծությունն ապահովվում է տպագիր մամուլի և համացանցի միջոցով, մինչդեռ հեռուստալսնկերությունների լսարանը անհամեմատ գերազանցում է տպագիր և համացանցային մամուլ՝ միասին վերցված:

Հայաստանի Հանրային հեռուստատեսության կապակցությամբ պետք է արձանագրել մի իրողություն, ինչի մասին, ի թիվս այլ միջազգային և տեղական կառույցների, խոսում են նաև բարձրաստիճան պաշտոնյաները, սակայն խնդիրն ըստ էության չի լուծվում: Խոսքը վերաբերում է Հանրային հեռուստալսնկերության կողմից տեղեկատվության միակողմանի լուսաբանմանը: Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ Պաշտպանի հաստատությանը վերաբերող լուսաբանման մեկ օրինակի:

2008թ-ի ապրիլի 25-ին լույս տեսավ Պաշտպանի արտահերթ հրապարակային գեկույցը՝ մարտի 1-2-ի իրադարձությունների վերաբերյալ: ՀՀ գլխավոր դատախազությունը և ՀՀ արդարադատության նախարարությունը մոտ մեկ ամիս անց հրապարակեցին նույն՝ «Առարկություններ» անվամբ փաստաթղթեր, որտեղ բազմապիսի մեղադրանքներով զուգորդված, փորձ էր արվել վարկարեկել Պաշտպանի հաստատությունը: Հանրային հեռուստալսնկերությունը Պաշտպանի գեկույցի հրապարակման և դրան հաջորդող մեկ ամսվա ընթացքում որևէ անգամ չի լուսաբանել, նույնիսկ չի հիշատակվել Պաշտպանի գեկույցը, իսկ ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ արդարադատության նախարարության վերը նշված փաստաթղթերը, որոնք անմիջականորեն վերաբերում էր Պաշտպանի գեկույցին,

լուսաբանվեց մի քանի անգամ, ընդ որում, նշված գերատեսչությունների բազմապիսի պաշտոնյաների մեկնարանություններով:

Հանրային հեռուստատեսության միակողմանի լուսաբանման, քաղաքական գերակշռության, անհանդրուժողականության և նույնիսկ հակասեմիտիզմի առանձին դրսերումների և այլ արատավորված երևոյթների մասին խոսվում է մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների գեկույցներում։ Որպես ամենաքարոզ օրինակ, նշենք վերջերս մամուլում տպագրված BBC համաշխարհային ծառայության կողմից պատրաստված գեկույցի արդյունքները։

«ԵԱՀԿ երևանյան գրասենյակի պատվերով BBC համաշխարհային ծառայությունն իրականացրած հնգօրյա ուսումնասիրությունների հիման վրա պատրաստել է գեկույց Հայաստանի Հանրային հեռուստաընկերության վերաբերյալ։ Ներկայացնելով գեկույցը՝ BBC Եվրոպայի և ԱՊՀ երկրների ծրագրերի դեկավար Մայքլ Ուանդալը նշել է, որ Հանրային հեռուստաընկերության աշխատանքից է կախված նաև ԵԽԽՎ առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման լիարժեքությունը։ Նա ասել է, թե մեծ ներուժ կա հանրային հեռուստաընկերության՝ իր ոլորտում առաջատարը դառնալու համար, միաժամանակ ավելացնելով, որ դա մեծապես կախված է քաղաքական կամքից և իշխանությունների մակարդակով վերաբերմունքի փոփոխություններից։

Չեկույցում BBC մասնագետները Հանրայինի եթերում շափականց շատ են համարում իշխանությունների պատվերով կամ պետական գերատեսչությունների մասին պատմող հաղորդումները, որոնք, ըստ Ուանդալի, կարող են փոխարինվել այլ ծրագրերով, որոնց իրականացման համար իր ներկայացրած կառույցը պատրաստ է աջակցել։ BBC մասնագետները նշել են նաև, որ 2008թ. առաջին կեսին Հանրային հեռուստաընկերության լսարանը զգալիորեն նվազել է։»

Lragir.am 18/10/2008

Ինչ վերաբերում է հայաստանյան մասնավոր հեռուստաընկերություններին, ապա նրանց գործունեությունը դուրս է Պաշտպանի իրավասության շրջանակներից։ Սիևնույն ժամանակ պետք է արձանագրենք, որ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը պարտավոր է հետևել իր կողմից տրամադրված հեռարձակման բույլտվությամբ և օրենքով սահմանված դրույթների կատարմանը։ Մինչեռ, իրականում ՀՌԱՀ-ը չկատարեց իր հիմնական գործառույթներից մեկը և չկանխեց ոչ միայն ՀՀ-ի, այլև մասնավոր հեռարձակումների կողմից օրենքի դրույթների խախտումները։ Արդյունքում, բազմակարծության չապահովման պայմաններում էլ ավելի խորացավ հասարակության շրջանում առկա լարվածությունը և անհանդուժողականության մթնոլորտը։

Հայաստանյան իրականության մեջ ԶԼՄ-ների դաշտը հեռու է կայացած կամ չեղոր լինելուց, այնուամենայնիվ, նրանց ազդեցությունը ցանկացած հաստատության

գործունեության արդյունավետության բարձրացման ոլորտում հասարակական կարծիքի ձևավորման գործում վճռորոշ է: Իսկ հասարակական կարծիքի ազդեցությունը ցանկացած հաստատության գործունեության վրա էական է: Քանի որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ռեսուրսները դեռևս չեն բավարարում այս ոլորտում մասնագիտացված հետազոտություններ իրականացնելու համար, ներկայացնում ենք «Հայաստանի Զրուցակից» բերքի կողմից իրականացված այս ոլորտում միակ՝ 2007 և 2008 թվականների հարցման արդյունքները:

2007թ.-ի օգոստոսի 3-ի համարում տպագրված հարցմանը մասնակցել են 1053 պատահական քաղաքացիներ և պատասխանել են հետևյալ հարցին.

«Ու՞մ և ի՞նչ կազմակերպության կրիմեք, եթե ոտնահարվեն Զեր քաղաքացիական իրավունքները»: Հարցվածների պատասխանները հետևյալն են.

1.	Ոչ ոքի	27%
2.	<b>Մարդու իրավունքների պաշտպանին</b>	<b>16,2%</b>
3.	Հանցագործ աշխարհի հեղինակություններին	15,3%
4.	Դատարան	10,2%
5.	Թերթերին	8,3%
6.	Իրավապաշտպաններին	5,9%
7.	Հեռուստատեսությանը	3,7%
8.	Ոստիկանություն	3,4%
9.	Դատախազություն	2,5%
10.	ԱԺ պատգամավորին	1,7%
11.	ՀՀ Նախագահին	1,4%
12.	Ընդդիմադիր կուսակցությանը	1,4%
13.	ՍԴ	1,4%
14.	ՀՀ կառավարություն	1,1%

2008թ.-ի հունիսի 20-ի համարում տպագրված հարցմանը մասնակցել են 944 պատահական քաղաքացիներ և նույն հարցին տվել են հետևյալ պատասխանը.

1. Մարդու իրավունքների պաշտպանին	32%
2. Ոչ ոքի	24%
3. Հանցագործ «հեղինակություններին»	16%
4. Թերթերին	15%
5. Իրավապահներին	6%

6. Հեռուստատեսությանը	3.5%
7. ԱԺ պատգամավորներին	3.5%

Ինչպես երևում է բերված հարցման արդյունքներից, 2007 և 2008 թվականների ընթացքում մեր բնակչության վատահությունը Պաշտպանի հաստատության նկատմամբ էապես աճել է: Եթե 2007թ.-ին հարցվածների 27%-ը /առաջին տեղում/ չէին վատահում որևէ մարմնի, իսկ 16,2%-ը /երկրորդ տեղում/ պատրաստակամություն էին հայտնել դիմել Պաշտպանին, ապա 2008թ.-ի ընթացքում հարցվածների 32% /առաջին տեղում/ պատրաստ են դիմել Պաշտպանին: Մենք առիթ ունեցել ենք ներկայացնել այն բոլոր օբյեկտիվ պատճառները, որոնց արդյունքում Պաշտպանի հաստատությունը 2008թ.-ի ընթացքում արժանացել է հասարակական առավել մեծ ուշադրության:

Սակայն, հարկ ենք համարում անդրադառնալ վերը բերված հարցման որոշ քանակական տվյալների, որոնք մեր կարծիքով պարունակում են վտանգավոր միտում: Խոսքը վերաբերում է այն հանգամանքին, որ ըստ բերքի ձևակերպման՝ հարցվածների մի գգալի տոկոս /երրորդ տեղում/ նախընտրում է վատահել իր իրավունքների պաշտպանությունը հանցագործ աշխարհի հեղինակություններին, այլ ոչ թե ազգային իրավապահ մարմիններին: Նշված արատավոր երևույթին բազմիցս են անդրադառների ազգային ԶԼՄ-ները: Ավելին, վերջին շրջանում այս երևույթի մասին մեր պատգամավորների կողմից խոսվեց նաև Ազգային ժողովի ամբիոնից, մասնավորապես հնչեց քննադատություն որոշ հեռուստաընկերությունների հասցեին՝ հանցագործ աշխարհի ներկայացուցիչներին դրական լույսի ներքո ներկայացրած հեռուստասերիալներ ստեղծելու և եթեր հեռարձակելու համար:

Իհարկե, ողջունելի է մեր պատգամավորների մտահոգությունը հեռուստաեթերի որակի բարձրացման առումով, սակայն, մեր կարծիքով, նրանց մղումները կարող են ավելի արդյունավետ լինել, եթե պատշաճ ուշադրություն դարձնեն նաև երկրի իրավապահ համակարգի հեղինակությանը, կամ մեր բնակչության վերաբերմունքին այդ համակարգի նկատմամբ: Եթե մեր իրավապահ համակարգը փորձի հետևել իր նկատմամբ ձևավորվող հասարակական կարծիքի փոփոխություններին, ապա համապատասխանաբար կփոխվեն նաև նշված հեռուստասերյալների բովանդակությունը և «գլխավոր հերոսները»:

Պաշտպանի հաստատառության գործունեության նկատմամբ հասարակայնության հետաքրքրության ակտիվության մեկ այլ ապացույց կարող են հանդիսանալ Պաշտպանի պաշտոնական կայքեջի այցելուների քանակի վիճակագրական տվյալները, համաձայն որոնց՝ 2008թ.-ի այցելուների թիվը 2007թ.-ի համեմատությամբ ավելացել է ավելի քան 30 տոկոսով և կազմել է 98376 այցելու՝ 2007թ.-ի 75211-ի դիմաց: Կայքեջի այցելությունների թիվը առավել շատ է եղել մարտ ամսին՝ կապված մարտի 1-ի հայտնի իրադարձությունների հետ:

2008թ. ընթացքում Պաշտպանը շարունակել է հասարակայնության հետ կապերի գարզացմանն ուղղված գործունեության իրականացումը հետևյալ ուղղություններով՝

## **1. Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութերի ամենօրյա պատրաստում և տարածում.**

2008թ.-ի ընթացքում շարունակվել է Պաշտպանի գործունեության առավել ակտիվ և հետևողական լուսաբանումը, ինչի արդյունքում 2007թ.-ի համեմատությամբ գրեթե կրկնապատկվել են ԶԼՄ-ներում Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութերի հրապարակումները և հեռուստատեսային հաղորդումները։ Պետք է նշել, որ Պաշտպանի գործունեությանը վերաբերող տեղեկատվական նյութերի հրապարակումները և հեռուստատեսային հաղորդումների զգական աճը մեծամասամբ պայմանավորված էր 2008թ-ի նախընտրական և հետընտրական գործընթացներով, որոնք անմիջականորեն վերաբերում էին մարդու իրավունքների պաշտպանությանը և Պաշտպանի հաստատությանը։

Առանձնակի կարևորություն կամ հասարակական հնչեղություն ունեցող գործերի և միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական նյութեր տարածելու նպատակով 2008թ-ի ընթացքում Պաշտպանի կայքէջի «Գործ համար» բաժնում տեղադրվել է մոտ 60, «Նորություններ» բաժնում՝ մոտ 80 տեղեկատվություն, տարածվել է 80-ից ավելի մամուլի հաղորդագրություն, ինչպես նաև բազմաթիվ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, նյութեր են տրամադրվել լրագրողներին։

2008թ. ընթացքում լրագրողների նկատմամբ շարունակվող ոտնագությունների վերաբերյալ Պաշտպանի հանձնարարությամբ տարածվել են հայտարարություններ, որոնցում Պաշտպանը խստորեն դատապարտել է կատարված դեպքերը և կոչ է արել իրավապահ մարմիններին միջոցներ ձեռնարկել մեղավորներին բացահայտելու ուղղությամբ, քանի որ նման դեպքերը վտանգում են երկրում խոսքի ազատության և բազմակարծության կայացմանը։ Հարկ է նշել, որ չնայած բազմաթիվ հայտարարությունների և պաշտոնական նամակների առկայությանը, իրավապահ մարմինների կողմից դեռևս չեն բացահայտվել ոտնագություններ կատարողները կամ դրանց պատվիրատունները։

Նշված և մի շարք այլ հիմնախնդիրներին վերաբերող մամուլի հաղորդագրությունների ու հայտարարությունների զգական մասը հեռարձակվել է հեռուստատեսության և ռադիոյի տարբեր /հիմնականում լրատվական/ հաղորդաշարերով, ինչպես նաև տպագրվել է տպագիր մամուլում։ Այս առումով հարկ է նշել, որ համացանցային լրատվական գործակալությունները և թերթերի մեծ մասը, ի տարբերություն հեռուստարևներությունների, շարունակում են առավել մեծ ուշադրություն դարձնել Պաշտպանի գործունեության լուսաբանմանը։

## **2. Հայաստանյան և արտերկրյա ԶԼՄ-ներում տեղ գտած մարդու իրավունքներին վերաբերող նյութերի ամենօրյա մոնիթորինգ.**

2008թ. ընթացքում տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի գարգացմանն ուղղված գործունեության նպատակներից մեկը շարունակվել է մնալ հայաստանյան և արտերկրյա մամուլում ու տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների գեկույցներում տեղ գտած տեղեկատվության ուսումնասիրությունը, դրա հավաստիության ստուգումը և վերլուծությունը: Այս նպատակի իրագործմանն ուղղված գործունեությունը Պաշտպանին և նրա աշխատակազմին հնարավորություն է տալիս մշտապես իրազեկված լինել ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրյա մամուլում իրապարակված նորություններին, նշանակալից իրադարձություններին և այլ երկրների Օմբուդսմանների և միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների հայտարարություններին:

Հայաստանյան տպագիր մամուլը, հանդիսանալով արդյունավետ տեղեկատվության աղյուր, հնարավորություն է ընձեռում նաև արագ արձագանքել և գործողություններ ձեռնարկել Պաշտպանի միջամտության կարիք ունեցող, մարդու իրավունքներին վերաբերող խնդիրների լուծման ուղղությամբ: 2008թ.-ի ընթացքում մամուլում տեղ գտած իրապարակումների հիման վրա մեկ տասնյակից ավելի դեպքերում Պաշտպանի նախաձեռնությամբ գործեր են ընդունվել վարույթ, ինչպես նաև իրականացվել են այցելություններ և տարաբնույթ ուսումնասիրություններ:

Լրատվամիջոցների հրապարակումների ամենօրյա մոնիթորինգի արդյունքում շարունակվել է մարդու իրավունքներին վերաբերող նյութերի արխիվի վարումը, որը դասակարգված է ըստ ոլորտների: Ամրապնդելով դեռևս 2006թ.-ին նախանշված հարաբերությունները միջազգային իրավապաշտպան և լրագրողական մի շարք առաջատար կազմակերպությունների հետ, 2008թ.-ի ընթացքում Պաշտպանի գործունեության վերաբերյալ լույս են տեսել բազմաթիվ հրապարակումներ նաև միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների կողմից տպագրվող լրատվական պարբերականներում, ամսագրերում և կայքերում:

### ***3. Մամուլի ասուլիսների, Պաշտպանի և նրա աշխատակազմի հետ հարցազրույցների կազմակերպում.***

Ինչպես արդեն նշել ենք, Պաշտպանի և նրա հաստատության գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու լավագույն միջոցներից է մամուլի ասուլիսների կազմակերպումը, որտեղ լրագրողներին լրացուցիչ հնարավորություն է տրվում իրենց հետաքրքրող հարցերը Պաշտպանին ուղեկլու համար, ինչպես նաև ներկայացվում է մարդու իրավունքներին առնչվող հասարակական հնչեղություն ունեցող խնդիրների և դեպքերի վերաբերյալ Պաշտպանի կատարած գործողությունների և դիրքորոշման մասին տեղեկատվություն: 2008թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հրավիրել է մի շարք մամուլի ասուլիսներ, որոնց ակտիվ մասնակցություն են ունեցել գրեթե

բոլոր լրատվամիջոցները: Ասուլիսների ընթացքում լրագրողներին տրամադրվել են հաշվետու ժամանակահատվածի վիճակագրական տվյալներ, արտահերթ հրապարակային գեկույցին վերաբերող և այլ տեղեկատվական նյութեր:

#### **4. Մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ուղղված գործունեություն.**

Մարդու իրավունքների հանրային իրազեկման և բնակչության իրավագիտակցության բարձրացման անհրաժեշտությունը պայմանավորված է մեր հասարակության գերակշիռ զանգվածի՝ իրենց իրավունքների ու հիմնարար ազատությունների շիմացությամբ և հանրային մարմինների առջև իրենց իրավունքների՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանության ցանկության բացակայությամբ: Այս երևույթը շարունակում է հանգեցնել կոռուպցիոն դրսերումների՝ լրացուցիչ հնարավորություն տալով հանրային մարմնի ներկայացուցչին խախտել քաղաքացիների այն իրավունքները, որոնց ապահովման երաշխավորը հաճախ հանդիսանում է հենց նույն հանրային մարմնը կամ նրա ներկայացուցիչը: Մեր հասարակության այն զանգվածը, որն իր իրավունքների շիմացության պատճառով կամ դիտավորությամբ նախընտրում է անօրինական ճանապարհներով ապահովել իր իրավունքների պաշտպանությունը, զգալի վճառ է պատճառում և՛ երկրի ժողովրդավարացմանը, և՛ որպես իրավական պետություն կայացմանը: Այս իմաստով Պաշտպանի կարևոր գործառույթներից է հասարակության հնարավորինս մեծ զանգվածների իրազեկումը մարդու իրավունքներին ու հիմնարար ազատություններին:

Առավել ազդեցիկ և մեծ լսարան ունեցող հասարակական կարծիքի ձևավորման և քարոզության համար անհրաժեշտ լրատվամիջոցը շարունակում է հանդիսանալ հեռուստատեսությունը: 2008թ.-ի ընթացքում ԱԱՀԳ ծրագրի աջակցությամբ տպագրվել է «Պաշտպանի գործունեությանը և մարդու իրավունքներին վերաբերող եռամսյա տեղեկագիր», որը հնարավորինս տարածվել է հասարակայնության շրջանում:

Երկլեզու թարգմանությամբ տպագրվել և տարածվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը: Ըստ այս օրենքի կազմում է արդիական մնալ նշված, ինչպես նաև այլ օրենքների տպագրությունը համապատասխան լսարանների համար մատչելի մեկնաբանություններով:

#### **5. Պաշտպանի կայքեզի վարում.**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքի վարումը շարունակում է մնալ հասարակայնության հետ կապերի զարգացմանն ուղղված գործունեության կարևոր բաղադրիչը: Հաշվի առնելով այն, որ էլեկտրոնային համացանցը 2008թ.-ի ընթացքում զգալի ազդեցություն ձեռք բերեց Հայաստանում՝ խիստ կարևորվել է Պաշտպանի հաստատության գործունեության վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը կայրում և տարածումը

Էլեկտրոնային տարբերակով: 2008թ.-ի ընթացքում կայքի «Նորություններ» էջում տեղադրվող նյութերի քանակը 2007թ.-ի համեմատությամբ կրկնապատկել է:

«Հաճախ տրվող հարցեր» էջում ընթերցողին հնարավորություն է ընձեռված ստանալ Պաշտպանի լիազորությունների, Պաշտպանին դիմելու կարգի և նման այլ հարցերով ամբողջական ու մատչելի տեղեկատվություն: Պաշտպանի վարույթում գտնվող գործերը կայքում տեղադրելը /ապահովելով դիմումատունների գաղտնիությունը/ տեղեկատվության կարևոր աղբյուր է հանդիսանում ոլորտը լուսաբանող լրագրողների համար: Գործերով հետաքրքրվող լրագրողներին տրամադրվել է նաև լրացուցիչ տեղեկատվություն:

### 1.5. Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտապես իր պատրաստակամությունն է հայտնել արդյունավետ համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ: Կարևորելով հասարակական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական կարգերի ամրապնդման գործում՝ 2008թ.-ի ընթացքում Պաշտպանը շարունակել է սերտորեն համագործակցել մշակութային, քարեգործական, հայրենակցական, ազգային փոքրամասնությունների, քնապահպանական, իրավապաշտպան, երեխաների, կանանց, փախստականների, հաշմանդամների և այլ հարցերով գրադարձող քաղմարդիկ ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

Թեև ՀՀ-ում ամենատարբեր ոլորտներում գործում են ավելի քան չորս հազար հասարակական կազմակերպություններ, այնուամենայնիվ, դրանց դերակատարությունը քաղաքացիական հասարակության ձևավորման գործում, մի շարք պատճառներով, դեռևս չի հասել ցանկալի մակարդակի: Միաժամանակ պետք է նշել, որ Հայաստանում գործող մի շարք հասարակական կազմակերպություններ գիտակցում են իրենց սոցիալական պատասխանատվությունը հասարակության առջև և քարեխաղորեն իրականացնում են իրենց առջև դրված խնդիրները:

Հասարակական կազմակերպությունների հետ Պաշտպանի համագործակցությունը կարևորվում է նաև մարզերում առկա հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու առումով: Պատահական չէ, որ հանրապետության բոլոր մարզեր իրականացված այցելությունների ընթացքում Պաշտպանը նախ հաղիպում է տեղի հասարակական կազմակերպությունների հետ, ծանոթանում նրանց կողմից բարձրացված խնդիրներին, ապա հանդիպումներ է ունենում մարզային իշխանությունների հետ՝ ներկայացնելով այդ խնդիրները և ստանում դրանց վերաբերյալ պարզաբանումներ: Ավանդույթի համաձայն Պաշտպանն այցելության վերջում հանդիպում է լրագրողական հանրությանը՝ հաճախ

լուսաբանելով այն խնդիրները, որոնց լուծման վերաբերյալ տեղի իշխանությունների կողմից տրված պարզաբանումները համոզիչ չեն թվում **Պաշտպանին:**

### **1.6. Միջազգային համագործակցություն**

2008թ. լներացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվել է նախորդ տարիներին որդեգրած հետևողական գործունեությունը միջազգային համագործակցության բնագավառում: Գրեթե անփոփոխ թողնելով ընտրված հիմնական գերակայությունները՝ լներացիկ տարում շեշտը դրվել է հատկապես միջազգային կազմակերպությունների և նրանց հայաստանյան ներկայացչությունների (ինչպիսիք են Եվրոպայի խորհուրդը, Եվրոմիությունը, ԵԱՀԿ-ն, ՍՍԾԾ-ն, ԱՄՆ ՄԶԳ-ն և այլն) հետ համագործակցության վրա: Չի անտեսվել նաև այլ պետություններում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ներգրավված կառույցների հետ համագործակցությունը և նորանոր գործընկերների ձեռքբերումը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և **Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները** մասնակցել են մի շարք կոնֆերանսների, սեմինար-քննարկումների և այլ բնույթի միջազգային հանդիպումների, որոնց ընթացքում ձեռք են բերվել բազում համաձայնություններ փորձի փոխանակման, միջազգային իրավապաշտպան կառույցներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դերի բարձրացման, ինչպես նաև համագործակցության այլ ձևերի վերաբերյալ:

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մասնակցությունը միջազգային մի շարք կոնֆերանսների, խորհրդաժողովների և քննարկումների.**

Ինչպես նախորդ տարիներին, 2008 թվականին նույնպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ակտիվորեն մասնակցել է միջազգային մի շարք խորհրդաժողովների, կոնֆերանսների և քննարկումների, այդ թվում՝ **Փարիզում տեղի ունեցած «Եվրոպայում ազատազրկման վայրերում խոշտանգումների կանխարգելումը»** խորագրով խորհրդաժողովին, **Ստրասբուրգում Ղեկավար հանձնաժողովի հանդիպմանը** ԵՄ և ԵԽ համագործակցության համատեղ ծրագրի շրջանակներում կազմակերպված «Մարդու իրավունքների մշակույթի խթանումը Ուկրաինայում և Հարավային Կովկասում» սեմինար-քննարկմանը, **Նյու-Յորքում Հայ իրավաբանական միության 19-րդ ամենամյա հանդիպմանը՝** որպես Հայաստանի մասով հատուկ խոսնակ, **Դուբլինում տեղի ունեցած «Մարդու իրավունքների պաշտպանությունը տեղական մակարդակով և անկախ ազգային հաստատությունների հզորացումը»** խորագրով խորհրդաժողովին, որի շրջանակներում

Պաշտպանը հանդիպել է նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գլխավոր հանձնակատար Թոմաս Համմարերգին:

Որպես Վենետիկի հանձնաժողովի և Օմբուդսմանի հաստատության միջև արդյունավետ համագործակցության արդյունք՝ հիշարժան է Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար Զիաննի Բուրիքիոյի իրավերով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մասնակցությունը Վենետիկի հանձնաժողովի 76-րդ պլենար նիստին, որտեղ քննարկվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները:

2008թ. Շվեյչայի կառավարության իրավերով Պաշտպանը մասնակցել է նաև Ստոկհոլմում կազմակերպված «Հետևողական աշխատանքներ մարդու իրավունքների կիրառման ուղղությամբ» խորագրով համաժողովին, որը միավորում է ԵԽ անդամ և ոչ անդամ երկրների կառավարությունների, օմբուդսմանների և հասարակական կազմակերպությունների ավելի քան 120 ներկայացուցիչների:

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների մասնակցությունը մի շաբթ սեմինարների, քննարկումների և վերապատրաստման դասընթացների.**

2008թ. ընթացքում Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները մասնակցել են բազմաթիվ խորհրդաժողովների, փորձի փոխանակման և վերապատրաստման դասընթացների՝ ՀՀ-ում և արտերկրում: Այդ կապակցությամբ հիշարժան է ԵԽ և ԵՄ «Մարդու իրավունքների մշակույթի խթանումը Հարավային Կովկասում» համատեղ ծրագրի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի երկու աշխատակիցների ճանաչողական այցը Իսպանիայի օմբուդսմանի հաստատություն, Պաշտպանի աշխատակազմի երկու աշխատակիցների մասնակցությունը հոկտեմբերի 8-10-ը Սանկտ-Պետերբուրգում կայացած «Հաղորդակցությունների ռազմավարական պլանավորում և ծրագրի մշակում Օմբուդսմանների և մարդու իրավունքների հարցերով այլ ինստիտուտների համար» խորագրով կոնֆերանսին, մայիսին Զիշենում տեղի ունեցած «Խոսքի ազատություն» խորագրով սեմինարին, ԵԱՀԿ-ի և Բրիստոլի համալսարանի OPCAT-ի հետազոտական խմբի հրավերով «OPCAT –ը ԵԱՀԿ տարածաշրջանում. կարևորությունը և գործունեությունը» խորագրով Պրահայում կայացած սեմինարին, ԵԽ մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի նախաձեռնությամբ Ստրասբուրգում տեղի ունեցած «ԵԽ ինտերնետային

կայքերը՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության միջոց» քննարկմանը, փորձի փոխանակման նպատակով Լիտվայի Հանրապետության երեխաների օմբուդսմանի իրավերով Պաշտպանի աշխատազմի երկու աշխատակիցների պատասխան ճանաչողական և փորձի փոխանակման այցը Լիտվայի՝ Երեխաների օմբուդսմանի հաստատություն, վերապատրաստման դասընթացները Ռաուլ Վոլենքերգի՝ Մարդու իրավունքների և հումանիտար իրավունքի համալսարանում, ինչպես նաև ԵԽ և Եվրոմիության համատեղ «Հավասարը հավասարի հետ» ծրագրի շրջանակներում Պաշտպանի հաստատության 4 աշխատակիցների կրթական այցերը Իտալիա և այլն:

### **Համագործակցությունը արտասահմանյան և միջազգային կառույցների հետ:**

Որպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և Եվրոպայի խորհրդի միջև ակտիվ համագործակցության օրինակ կարելի է մատնանշել ԵԽ-ի և Եվրոմիության կողմից համատեղ իրականացվող «Peer to Peer» ծրագիրը, որի նպատակն է Մարդու իրավունքների անկախ ազգային հաստատությունների կարողությունների հզորացումը իրենց երկրներում մարդու իրավունքների մասին հասարակության իրազեկության բարձրացման, ինչպես նաև պոտենցիալ կամ արդեն գոյություն ունեցող մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների բացահայտման միջոցով: Այս ծրագրի շրջանակներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության 4 աշխատակիցներ կրթական այցեր են ունեցել ԵԽ անդամ երկրներ:

2008թ. դեկտեմբերի 8-9-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը ԵԽ հետ համագործակցության շրջանակներում Երևանում կազմակերպել է սեմինար-քննարկում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի շուրջ, որին մասնակցել են Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները, ինչպես նաև մասնագետներ՝ ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ սահմանադրական դատարանից և ՀՀ վճռաբեկ դատարանից: Սեմինարի ընթացքում քննարկվել են արդար դատարքներությանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ դատական բարեփոխումների լույսի ներք:

### **Թվինինգ**

Նախորդ տարվա զեկույցում նշված համագործակցության ռազմավարության մշակման և մի շարք այլ ոլորտներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեության կատարելագործման համար պայմանավորվածություններ են ձեռք բերվել «Թվինինգ» ծրագրի շրջանակներում: Եվրոմիության Հարևանության

ծրագրով ՀՀ-ում կազմակերպվում եմ «ԹՎԻՆԻՆԳ» և «ԹԱԵՔՍ» ծրագրերը: Դրանց նպատակն է կազմակերպչական և ֆունկցիոնալ առումներով բարձրացնել տարաքնույթ պետական մարմինների գործունեության որակը՝ համապատասխանացնելով եվրոպական չափանիշներին: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած հայտը համապատասխանել է «ԹՎԻՆԻՆԳ» ծրագրի նպատակներին, և 2008թ.-ից աշխատակազմը սկսել է նախապատրաստական աշխատանքներն այդ ուղղությամբ: Անցած ամիսների ընթացքում հայ և եվրոպական փորձագետների հետ համատեղ պատրաստվել է «ԹՎԻՆԻՆԳ» ծրագրի տիպային նկարագիրը, որը ներկայացվել է Եվրոպական հանձնաժողով: Նախորդ փուլերում այդ նկարագրի շրջանակներում առաջարկներ են ստացվել Եվրոպական անդամ երկրներից, և հաջորդ 1,5 տարիների ընթացքում Պաշտպանը համագործակցելու է 1 կամ 2 Եվրոպական անդամ երկրների համապատասխան կազմակերպությունների հետ:

## OPCAT

2008թ. ապրիլի 8-ին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացման համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի» Կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 6.1. հոդված): Օրենքում լրացումներ կատարելուց հետո Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ձեռնամուխ է եղել հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության դաշտ ձևավորելուն: Տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և սեմինարներ՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ: Զննարկվել են համագործակցության ձևաչափերը և մատնանշվել հետագա անելիքները:

## ՄԱԶԾ

Ինչպես նախորդ տարիների, այնպես էլ 2008 թվականի ընթացքում շարունակվել է ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների հետ արդյունավետ համագործակցությունը և դրանց կողմից իրականացվող ծրագրերում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ակտիվ ներգրավումը: Համագործակցությունը ներառում է մի շարք միջոցառումների իրականացում, այդ թվում՝ կրթական, հետազոտական և ծրագրային աջակցության հարցերում: Վերջինի կապակցությամբ պետք է նշել, որ հաջողությամբ շարունակվում է ՄԱԶԾ աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի

աշխատակազմի կարողությունների հզորացման եռամյա ծրագիրը, որն իրականացվում է Ռազմի Վոլենքերգի՝ Մարդու իրավունքների և հումանիտար իրավունքի համալարանի ֆինանսական աջակցությամբ և սերտ համագործակցությամբ: Դրա շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ներքին վարչարարության հզորացումը և 2009-2012 թվականների համար հաստատության ռազմավարական պլանի մշակումը, ինչպես նաև կատարվել են աշխատանքներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության փաստաթղթային կենտրոնի հզորացման և մարդու իրավունքների մասին հասարակության իրազեկության բարձրացման ուղղությամբ:

ՍԱԶԾ հայաստանյան գրասենյակի համագործակցությամբ իրականացվել է հաստատության ընդհանուր գործունեության խթանում, որն իր մեջ ներառում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի և աշխատանքային իրավունքի վերաբերյալ գեկույցների պատրաստումը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությունը նկարագրող գրքույկների և պաստառների, 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրությունների և հետընտրական զարգացումների վերաբերյալ Արտահերթ իրավարակային գեկույցի, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2007թ. տարեկան գեկույցի տպագրությունը և այլն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետագա արդյունավետ գործունեությունը և շարունակականությունը ապահովելու նպատակով աշխատակազմի ներկայացուցիչը ներգրավվել է Հայաստանի համար 2009-2013թթ.-ի ՍԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի (ՍԱԿԶԱԾ) մշակման գործընթացում: Այս աշխատանքներին մասնակցելու արդյունքում ՍԱԿԶԱԾ-ի շրջանակներում ձևակերպված Մարդու իրավունքների և Ժողովրդավարական կառավարման հատվածների առաջնայնությունների թվում ընդգրկվել են մասնակցային գործընթացները, կոռուպցիայի դեմ պայքարը, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հզորացումը: Վերջինիս արդյունքում նախատեսվում է ընդլայնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ մարդու իրավունքներն արդյունավետ կերպով պաշտպանելու և խթանելու կարողությունները:

## ԵԱՀԿ

Շարունակվել է փոխադարձ վստահության վրա հիմնված բազմակողմանի համագործակցությունը Եվրոպայում անվտանգության և համագործակցության

կազմակերպության երևանյան գրասենյակի հետ: 2008թ. հոկտեմբերի 6-ին Երևանում ԵԱՀԿ գրասենյակի ղեկավարի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստորագրվել է պայմանագիր, որը նպատակ ունի բարձրացնել զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողությունը: Պայմանագրի շրջանակներում Պաշտպանի գրասենյակին կից կստեղծվի փորձագետների համատեղ աշխատանքային խումբ, որը կվերլուծի բանակում կարգապահական պատժամիջոցների վերաբերյալ գործող օրենսդրությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխանության տեսանկյունից, կմատնանշի առկա բացերը՝ մարդու իրավունքների տեսանկյունից: Ստացված արդյունքների հիման վրա կպատրաստվի գեկույց՝ կառավարությանն ուղղված առաջարկություններով:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության և ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի համագործակցության առումով անհրաժեշտ է նշել նաև վերջինիս օժանդակությունը Պաշտպանի 2007թ. տարեկան գեկույցի թարգմանության և տպագրության հարցում:

## ՆԱՏՕ

2008թ. փետրվար ամսին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընդունել է ՆԱՏՕ-ի անհատական գործընկերության գործողությունների ծրագրի /ԱԳԳԾ/ և պլանավորման ու վերանայման գործընթացի /ՊՎԳ/ գնահատման խմբին: Հանդիպման ընթացքում քննարկումներ են ծավալվել համագործակցության ու փորձի փոխանակման նպատակով ՆԱՏՕ-ի համապատասխան ստորաբաժանումների հետ հարաբերությունների հաստատման կառուցողական մոտեցումների շուրջ: Անդրադարձ է կատարվել նաև ՀՀ գինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին:

Հաշվետու տարում Պաշտպանն ընդունել է նաև ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնի գլխավորած պատվիրակություն:

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մորիլիզացման ծրագրի (ՀԳՄԾ) շրջանակներում Պաշտպանի աշխատակազմում կազմակերպվել են սեմինար-քննարկումներ՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ:

2008թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մի շարք հանդիպումներ է ունեցել նաև միջազգային այլ կառույցների պատվիրակությունների և ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ: Այսպես, Պաշտպանն ընդունել է ԵԱՀԿ պատվիրակությունները, այդ թվում՝ ԵԱՀԿ գործող

նախագահ, դեսպան Իլկա Կաներվային, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տնօրեն Սերգեյ Կապինոսին, Սինսկի խմբի համանախագահ Անջեյ Կասպերչիկին և ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Գորան Լենմարկերին: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստանում նախագահական ընտրություններին և հետընտրական գործընթացներին, ինչպես նաև երկրում մարդու իրավունքների պաշտպանվածության նակարդակին վերաբերող հարցեր:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մեկ այլ հանդիպում է ունեցել ՀՀ-ում մի շարք օտարերկրյա դեսպանատների և միջազգային կազմակերպությունների դեկավար աշխատակիցների հետ, որի ընթացքում քննարկվել են 2008թ. ապրիլի 25-ին հրապարակված Պաշտպանի արտահերթ հրապարակային գեկույցին առնչվող հարցեր:

Մարտի 1-2-ի դեպքերի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընդունել է ԵԽԽՎ նախագահ Լուիս Մարի դե Պուիշիին: Հանդիպման ընթացքում քննարկվել են մարտի 1-2-ի դեպքերով հարուցված քրեական գործի շրջանակներում կալանավորված անձանց խնդիրները, ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի գործունեության հետ կապված հարցերը, ինչպես նաև ԵԽԽՎ 1620 և 1609 հայտնի բանաձևերի կատարման ընթացքը: Իր հերթին Պաշտպանը ներկայացրել է մի քանի ամիսների ընթացքում իր կողմից ստացված բողոքների և կալանավորված պատգամավորների հետ հանդիպումների վերաբերյալ նյութերը:

2008թ. սեպտեմբերի 29-ին Երևանում Սանկտ-Պետերբուրգ քաղաքի և Հայաստանի օմբուդսմանների միջև ստորագրվել է 5-ամյա համագործակցության Համաձայնագիր, որով Կողմերը իրենց իրավասության սահմաններում պարտավորվել են աջակցել ժողովրդավարական և իրավական պետության սահմանադրական հիմքերի ամրապնդմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվության և զիտելիքների տարածմանը, մարդու իրավունքների ապահովմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու դրանց իրականացմանը:

Օգոստոսի 11-18-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ընդունել է Լիտվայի Հանրապետության երեխայի իրավունքներով օմբուդսմանին: Վերջինի Հայաստան այցի նպատակն էր տեղում ծանոթանալ երեխայի իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրներին: Հանդիպման արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Լիտվայի երեխայի իրավունքներով օմբուդսմանի հաստատության միջև համագործակցություն ծավալել՝ ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանությունը խթանելու նպատակով: Փորձի փոխանակման

շրջանակներում և մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով 2008թ. հոկտեմբերի 12-18-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակիցները փոխադարձ այցելություն են կատարել Լիտվայի Հանրապետություն, ծանոթացել Երեխաների օմբուդսմանի գրասենյակի և գործընկեր կազմակերպությունների գործունեությանը:

## 1.7. Փորձագիտական խորհուրդ

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով կարող է ստեղծել փորձագիտական խորհուրդ՝ կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից: Պաշտպանի կողմից ստեղծված փորձագետների խորհրդի անդամների գերակշիռ մասը հանդիսանում են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Փորձագիտական խորհրդի անդամները ներգրավված են կամավորական հիմունքներով և իրենց գործունեությունը իրականացնում են հասարակական կարգով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խորհրդի անդամների գործունեությունը վերաբերում է մարդու իրավունքների պաշտպանության տարբեր ոլորտերին՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2008թ.-ի ընթացքում կազմակերպել է մեկ տասնյակից ավելի հանդիպումներ՝ ըստ համապատասխան ոլորտներն ապահովող խորհրդի անդամների:

Հանդիպումների ընթացքում, մասնավորապես, քննարկվել են՝

- տեղեկատվության ազատությանը և ԶԼՄ-ների դաշտում տիրող իրավիճակին առնչվող և օրենսդրական փոփոխություններին վերաբերող հիմնահարցեր: Երևանի մամուլի ակումբի ղեկավար Բորիս Նավասարդյանի և «Նոյյան տապան» գործակալության տնօրենի հետ քննարկվել են լրագրողների մասնագիտական գործունեությանը և խոսքի ազատությանն առնչվող հարցեր:
- Պաշտպանի նախաձեռնությամբ կազմակերպվել է մեկ տասնյակից ավելի հասարակական կազմակերպությունների հետ հանդիպում՝ 2008թ.-ի նախագահական ընտրությունների քվեարկության օրվա հնարավոր միջադեպերին համատեղ արձագանքելու նպատակով: Հանդիպման արդյունքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հնարավոր միջադեպերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման և Պաշտպանի հաստատության ռեսուրսների համատեղ արդյունավետ օգտագործման վերաբերյալ, ինչի արդյունքում քվեարկության օրվա միջադեպերի բազմաթիվ օրինակներ նկարագրված են Պաշտպանի արտահերտ հրապարակային գեկույցում:
- քննապահանական խնդիրների և Թեղուտի հանքավայրի շահագործման վերաբերյալ խնդիրները, որոնք քննարկվել են «Հանուն մարդկային կայուն զարգացման» ասոցիացիայի

նախագահ Կարինե Դանիելյանի և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում Պաշտպանը պատրաստակամություն է հայտնել իր լիազորությունների շրջանակում աջակցել բնապահպանների կողմից բարձրացված բոլոր խնդիրներին:

- Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ /OPCAT/ սահմանված ազգային մեխանիզմի ձևավորման խնդիրները: Պաշտպանի հաստատությունը 2008թ.-ին ճանաչվել է Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ /OPCAT/ սահմանված ազգային մեխանիզմ: Կազմակերպվել են մոտ մեկ տասնյակ հանդիպումներ՝ նշված ոլորտում առավել ակտիվ գործունեություն ծավալած հասարակական կազմակերպությունների հետ: Վերջիններիս թվից ընտրվել են հասարակական կազմակերպություններ, որոնք մշտական հիմունքներով ներգրավվելու են այդ կառույցի գործունեությանը:
- 2008թ. մարտի 1-ի դեպքերի հետ կապված դատավարություններին վերաբերող հիմնահարցերը: Պաշտպանը բազմիցս հանդիպել է մարտի 1-ի դեպքերի հետ կապված կալանավորված, ձերբակալված կամ դատապարտված անձանց դատապաշտպաններին, որոնցից շատերը Պաշտպանի փորձագիտական խորհրդի անդամներ են: Հանդիպումների ընթացքում Պաշտպանին են ներկայացվել քրեադատավարական իրավունքներին առնչվող խնդիրները, որոնց Պաշտպանը հիմնականում արձագանքել է համապատասխան մարմինների հետ նամակագրության կամ մամուլի ասուլիսների միջոցով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշտապես պատրաստակամություն է հայտնվել կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ և իր իրավասության շրջանակներում իրականացնել համապատասխան գործողություններ՝ խորհրդի անդամների կողմից բարձրացված ցանկացած խնդրի լուծման առնչությամբ:

Ավարտելով «Պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները» վերտառությամբ սույն բաժնի նյութի շարադրանքը՝ մի քանի նախադասությամբ նաև նշենք, որ Պաշտպանը 2009թ. փետրվարի 6-ին, բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով, ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 2008թ. ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունները:

## ԲԱԺԻՆ 2.

### ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՊԱՏճԱՌՆԵՐԸ

Մարդու իրավունքների ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկը հանդիսանում է օրենսդրությունը, իհարկե, եթե այն հավատարիմ է իրավական որոշակիության ու արդարության սկզբունքներին և հաշվի է առնում հասարակության գարգացման պահանջները: Խոսքը որակյալ օրենսդրության մասին է: Հակառակ դեպքում, օրենսդրական նորմերի ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալումը, օրենսդրական տարբեր նորմերի հակասությունները, օրենսդրական բացերը և թերությունները անխուսափելի են դարձնում մարդու իրավունքների խախտումները:

Ստորև ներկայացվում են մարդու իրավունքների օրենսդրական պատճառներն՝ ըստ իրավունքի առանձին խմբերի: Ընդ որում, զինվորական ծառայության հետ կապված իրավունքներին առնչվող օրենսդրության դրույթները, որոնք նույնպես հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մարդու իրավունքների խախտումներին, նպատակահարմար ենք գտել զետեղել «Հատուկ և խոցելի խմբերի իրավունքներ» վերնագրով սույն գեկույցի 4-րդ գլխում՝ նպատակ ունենալով զինվորական ծառայությանը և դրան հարակից հարցերին առնչվող նյութը շարադրել ամբողջությամբ՝ իրավակիրառ պրակտիկայի համատեքստում, առավել լիարժեք ու համակարգված տեսք տալու նպատակով:

#### 2.1. Քաղաքացիական և քաղաքական իրավունքներ

##### 2.1.1. Խոշտանգումների արգելում

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովման երաշխիքների շարքում իր ուրույն տեղն է զրադեցնում խոշտանգումների արգելման սկզբունքը: Այն իր ամրագրումն է ստացել 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի 5-րդ հոդվածում, 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածում, 1950թ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածում, որում մասնավորապես սահմանվում է. «Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Զերբարկալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք»: Այս նորմի նպատակն է ապահովել յուրաքանչյուրի արժանապատվությունն ու ֆիզիկական անձեռնմխելիությունը: Ինչպես արդեն նշվել էր

նախորդ գեկույցներում, 2006թ. հունիսի 22-ին ուժի մեջ է մտել ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացված Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի Կամընտիր Արձանագրությունը: Դրանով իսկ Հայաստանը դարձավ Կոնվենցիայի արձանագրությանը մասնակից պետություն, որով և պարտավորվեց այն վավերացնելուց հետո մեկ տարվա ընթացքում ստեղծել կամ հաստատել կանխարգելման ազգային մեխանիզմ՝ ներպետական մակարդակով խոշտանգումների կանխարգելման նպատակով: Կամընտիր Արձանագրության 18-րդ հոդվածի 4-րդ մասում հատկապես շեշտվում է ազգային մեխանիզմ ստեղծելիս մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային հաստատությունների կարգավիճակին վերաբերող սկզբունքները՝ Փարիզյան սկզբունքները, պատշաճ կերպով հաշվի առնելու անհրաժեշտությունը: Նկատի ունենալով այն, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը համապատասխանում է Արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի հիմնական չափանիշներին և կարող է ստանձնել նրա գործառույթները Հայաստանի Հանրապետությունում՝ 2007թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով Պաշտպանը ճանաչվել է Խոշտանգումների դեմ կոնվենցիայի Կամընտիր Արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ: 2008թ. ապրիլի 8-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով այդ օրենքը լրացվեց «Պաշտպանը միջազգային իրավունքի բնագավառում» վերտառությամբ 6.1-րդ հոդվածով, համաձայն որի՝ Պաշտպանը հանդիսանում է Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի Կամընտիր Արձանագրությամբ սահմանված կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ: ՍԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի Կամընտիր Արձանագրությունը խոշտանգումների արդյունավետ կանխարգելման կարևորագույն իրողությունն է, ընդ որում՝ համաշխարհային մակարդակով:

Ընդհանուր առմամբ, խոշտանգումների կանխարգելման սկզբունքն իր պատշաճ ամրագրումն է ստացել ՀՀ տարբեր օրենսդրական ակտերում, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներում, ՀՀ քրեական օրենսգրքում, սակայն Պաշտպանի կողմից ստացվող բողոքները վկայում են այն մասին, որ օրենքների պահանջները միշտ չեն, որ լիարժեք կերպով կյանքի են կոչվում քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից: Այս կապակցությամբ Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից 2007թ. դեկտեմբերին հրապարակված

գեկույցով ևս ուշադրություն է դարձվել իրավակիրառ պրակտիկայի՝ սույն սկզբունքին համապատասխանեցման վրա և ՀՀ իշխանություններին առաջարկվել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ և արդյունավետ միջոցները՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց իրավունքներն առավելագույնս ապահովելու համար:

Պաշտպանին է ներկայացվել «Ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի կապակցությամբ կատարվել են դիտարկումներ և առաջարկներ՝ կապված որոշման մեջ օգտագործվող եզրույթների, ուղեկցող ստորաբաժանման կարգավիճակի, ուղեկցման կազմակերպման նկատմամբ հսկողության, գործունեության կարգի հստակեցման և առանձին դրույթների խմբագրման հետ:

Դեռևս 2007թ. ՀՀ Ազգային ժողով էին ներկայացվել նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք նպատակ ունեն ապահովել Պաշտպանի կողմից քրեակատարողական հիմնարկներ, ԶՊՎ-ներ անարգել այցելությունների իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքերը: Սակայն, մինչև օրս վերոնշյալ օրենքներում որևէ փոփոխություններ չեն կատարվել:

## 2.1.2. Արդար դատաքննության իրավունք

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է արդար դատաքննության իրավունքը, որն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում և օրենսդրական այլ ակտերում: Քաղաքացիական և քրեական գործերով արդարացի դատաքննության իրավունքը, զբաղեցնելով առանցքային տեղ մարդու իրավունքների և ազատությունների համակարգում, միաժամանակ հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանության և ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկը, իրավունքի և օրենքի գերակայության սկզբունքի կարևորագույն տարրերից մեկը:

Պաշտպանը բազմից նշել է, որ ՀՀ-ում արդար դատաքննության իրավունքի ապահովումը գտնվում է անբավարար վիճակում: Դեռևս 2006 և 2007թթ. տարեկան գեկույցներում անդրադարձ էր կատարվել ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում 07.07.2006թ. կատարված փոփոխություններին՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանների սահմանման կապակցությամբ, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված փաստաբանական գործունեության վճարովիությանը և ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտին: Մասնավորապես,

2007թ. տարեկան գեկույցում շեշտվել էր, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմանները չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին՝ պարարտ հող ստեղծելով դատարանների կողմից դրանց կիրառման կամայականության համար, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների ինստիտուտի առկայությունը գործող օրենսդրական կարգավորմամբ չի նախատեսում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրում, ուստի, և, ըստ, էության սահմանափակում է ՀՀ Սահմանդրությամբ և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված մարդու՝ արդարադատության մատչելիության հիմնարար իրավունքը: Մինչդեռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան թեև չի պարտադրում ստեղծել վերաբննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե այդպիսիք ստեղծվել են, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից: Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել էր նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի N-79Ս հրամանին, որով ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների հավատարմագրերի գործողության ժամկետը երկարաձգվել էր մինչև 2009թ. հունվարի 10-ը: Վերոհիշյալ հրամանի օրինականությունը վիճարկվել է ՀՀ վարչական դատարանում, որը 07.04.2008թ. իր վճռով մերժել է նշված հրամանն առոչինչ ճանաչելու վերաբերյալ պահանջը՝ պատճառաբանելով, որ փաստաբաններին հավատարմագիր տրամադրելը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունն է, և հավատարմագրերի տրամադրումը որոշակի ժամկետով չի բացառում դրա գործողության ժամկետի երկարաձգումը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի կողմից: Սակայն, հարկ է նկատել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի՝ փաստաբաններին հավատարմագրեր տրամադրելու լիազորության մեկնաբանումը որպես հայեցողական լիազորության, ինչպես իրավացիորեն գտնում է նաև ՀՀ սահմանադրական դատարանը, խախտում է փաստաբանի ինստիտուտի գործունեության հիմքում ընկած փաստաբանի անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքները, ինչը, անշուշտ, չի կարող անուղղակիորեն չանդրադառնալ մարդու իրավունքների պաշտպանության վրա: Ուստի, 2008թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ սահմանադրական դատարանը ընդունեց որոշում (2008թ. հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴ-765 որոշումը), որով ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի, ինչպես նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները հավատարմագրված փաստաբանի ինստիտուտի մասով ճանաչել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր: Եվ նկատի ունենալով, որ

սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացնամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանը որոշեց ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2008թ. դեկտեմբերի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հմարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համապատասխանեցնելու այդ որոշման պահանջներին:

Արդար դատաքննության իրավունքի հետ առնչվում է նաև դատական իշխանության գործունեության կարևոր սկզբունքներից մեկը, այն է՝ դատավորների անփոփոխելիությունը: ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ դատավորն անփոփոխելի է: Իսկ նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսվում է դատավորների գործուղման ինստիտուտը, որն իրավունք է տալս ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին իր որոշմամբ գործուղել դատավորին մինչև 6 ամիս ժամկետով նույն կամ վերադաս ատյանի դատարան: Սույն իրավանորմը ոչ միայն անմիջականորեն առնչվում է դատական իշխանության գործունեությանը, այլև անմիջականորեն կապված է մարդու իրավունքների ապահովման հետ, արդար դատաքննության իրավունքի հետ: 2008թ. նոյեմբերի 21-ին Պաշտպանը դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի համապատասխանության հարցը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ դատավորին նույն ատյանի կամ վերադաս ատյանի դատարան գործուղելու արդյունքում ստեղծված դատարանը չի կարող համարվել դատական մարմին, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանդրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանների լիազորությունները, կազմակերպման և գործունեության կարգը սահմանվում են Սահմանդրությամբ և օրենքներով: Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի որոշման արդյունքում ձևավորված դատարանը չի համապատասխանում օրենքի հիման վրա ստեղծված դատարան հասկացությանը: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը չեն համապատասխանում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, եթք որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաշառ

դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք՝ կրկին «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» նասով:

Հարկ է նշել, որ Պաշտպանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան 2008թ. նոյեմբերի 21-ին, երբ դեռևս ՀՀ սահմանադրական դատարանը չէր ընդունել որոշում քաղաքացի Ա. Զալյանի դիմումի հիման վրա ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ և 5-րդ մասերի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է ընդունել 02.12.2008թ. (ՍԴՈ-782) և վերոնշյալ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը ճանաչել է ՀՀ Սահմանադրության պահանջներին հակասող ու անվավեր: Ուստիև, ՀՀ սահմանադրական դատարանը քննության է ընդունել Պաշտպանի դիմումը ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը որոշելու մասով, իսկ ՀՀ դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի սահմանադրականության հարցը վիճարկելու մասով մերժել է: Պաշտպանի դիմումի հիման վրա գործի քննության արդյունքներով ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է ընդունել 23.12.2008թ. (ՍԴՈ-786):

### 2.1.3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք

Մարդու անօտարելի և ամենահիմնարար իրավունքներից է անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, որը կոչված է պաշտպանելու անձի ազատությունը պետության կամայական ուժնագություններից: Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված բողոքների շարքում զգալի թիվ են կազմում անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի ուժնահարմանը վերաբերող բողոքները: Ընդ որում, վիճակագրությունը ցույց է տալիս, որ նախորդ տարիների համեմատ արձանագրվել է խնդրո առարկա բողոքների աճ, ինչը չի կարող շմտահոգել: Հայտնի իրողություն է, որ քրեական դատավարության խնդիրների իրականացումը հաճախ ենթադրում է նաև մարդու իրավունքների սահմանափակման անհրաժեշտություն: Կարևորելով հանցագործությունների դեմ տարվող պայքարը և հանցագործությունների բացահայտմանն ուղղված գործունեությունը, այնուամենայնիվ, չի կարելի անտեսել և ուժնահարել մարդու իրավունքներն ու ազատությունները: Եվ քանի որ, մասնավորապես, դատավարական հարկադրանքի կիրառումն անխուսափելիորեն կապված է անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ, ուստի, օրենսդրությամբ անհրաժեշտ է ամենայն մանրամասնությամբ սահմանել այդ միջոցների կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող երաշխիքները: Բացի այդ, յուրաքանչյուր կոնկրետ գործով առաջնային նշանակություն է ստանում այն հարցը, թե

որքանով է կոնկրետ դեպքում դատավարական հարկադրանքի միջոցի կիրառումը պայմանավորված անձի իրավունքների սահմանափակման իրական անհրաժեշտությամբ: Հիմնական և գլխավոր չափանիշը այն է, որ քրեադատավարական նպատակները պետք է նվաճվեն մարդու իրավունքների և ազատությունների նվազագույն սահմանափակման պայմաններում: Այս չափանիշը նաև իր ամրագրումն է ստացել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայում. «Նկատի ունենալով այն նշանակությունը, որն ունի արդարադատության արդար իրականացման իրավունքը ժողովրդավարական հասարակությունում պաշտպանության կողմի իրավունքները սահմանափակող ցանկացած միջոցառում պետք է թելադրված լինի խիստ անհրաժեշտությամբ» (տե՛ս Վաճ Մեխելենը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների գործը, գանգատներ թիվ 21363/93, 21364/93, 21427/93, [1997], ՄԻԵԴ 22 (1997թ. ապրիլի 23), §58): Պաշտպանը բազմից նշել է, որ դատախազությունը և դատարանները պետք է ավելի մանրակրկիտ և անկողմնակալ ուսումնասիրեն քրեական գործերը, առավել ևս, եթք լուծվում է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության հարցը, քանզի պետական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից օրենսդրությամբ նախատեսված դրույթների և երաշխիքների պահպանումն էական նախապայման է ոչ միայն մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, այլև հանցագործությունների բացահայտման, քրեական գործերի արագ, լրիվ ու օբյեկտիվ քննության ապահովման համար: Հարկ է նշել, որ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման հետ կապված 2007թ. տարեկան գեկույցում քննարկվել են սույն իրավունքի խախտմանը հանգեցնող մի շարք օրենսդրական պատճառները, սակայն մինչ օրս որևէ օրենսդրական փոփոխություն չի կատարվել: Խոսքը մասնավորապես վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի՝ հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ընթացքում գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, բացատրություններ, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի գննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն: Այսինքն, բերման և անձնական խուզարկության ենթարկելու կիրառումը համարվում է իրավաչափ նաև քրեական գործ հարուցելու նպատակով նյութեր նախապատրաստելու ընթացքում, ինչը կարող է հանգեցնել մարդու ազատության անհարկի սահմանափակմանը և տեղիք տալ մարդու իրավունքների չարաշահմանը: Ընդ որում, օրենսդրությամբ սահմանված չեն որևէ երաշխիքներ նշված գործողությունների անհիմն լինելու դեպքերից խուսափելու համար: Ավելին, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 17 հոդվածի 2-րդ կետն իր հերթին անորոշ

ձևակերպմամբ, այն է՝ ոստիկանությունն օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է պահել քերման ենթարկված, ձերքակալված, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև կալանավորված անձանց, ոստիկանությանն ուղղակի իրավունք է վերապահում պահել քերման ենթարկված անձանց:

#### **2.1.4. Տեղեկատվության ազատության իրավունքը**

Տեղեկատվության ազատության իրավունքը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության հենասյուներից մեկը, նրա առաջընթացի հիմնարար նախապայմանը: Այն խոսքի ազատության իրավունքի հետ միասին նպաստում է քազմակարծության, հանդուժողականության և լիբերալիզմի պահանջների կյանքի կոչմանը, առանց որոնց քաղաքացիական հասարակությունը գոյություն ունենալ չի կարող:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քազմից նշվել է, որ ՀՀ-ում տեղեկատվության ազատության տեսանկյունից լուրջ խնդիրներ գոյություն ունեն: Մինչդեռ, դժվար է գերազանահատել այս իրավունքի դերը երկրի ժողովրդավարացման գործընթացների տեսանկյունից: Ըստ էության, հեռուստատեսությունում բացակայում է քազմակարծությունը, այնինչ, տպագիր մամուլում քազմակարծությունը հաճախ վեր է ածվում վիրավորանքների, որը սերմանում է մեր հասարակության համար ոչ հարիր, անընդունելի մշակույթ:

23.08.2006թ. ՀՀ վարչապետին հասցեագրած թիվ 2-0240 գրությամբ Պաշտպանի կողմից ուշադրություն է հրավիրվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման ոլորտում առաջացած և հրատապ լուծում պահանջող որոշ խնդիրների վրա, որոնք լուրջ խոչընդոտներ են ստեղծում քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքների իրականացման գործընթացում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է տեղեկատվության տրամադրման կարգի, ինչպես նաև այդ ոլորտում ՀՀ կառավարության լիազոր մարմնի բացակայությանը, ինչի մասին նշվել է նաև Պաշտպանի 2007թ. տարեկան գեկույցում: Ընդ որում, Պաշտպանի կողմից 2006թ.-ից մինչև օրս 3 նամակ է հասցեագրվել ՀՀ կառավարությանը՝ հնարավորինս սեղմ ժամկետներում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու խնդրանքով:

Այսպես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով: Մինչդեռ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից հետո մինչև օրս կառավարության կողմից նման կարգ չի սահմանվել, ինչի արդյունքում որոշ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ իրաժարվում են ըստ պահանջի

տեղեկատվություն տրամադրել՝ պատճառաբանելով նշված կարգի բացակայությունը: Բացի այդ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան, սակայն մինչև օրս ՀՀ կառավարության կողմից սահմանված չէ լիազորված պետական կառավարման մարմինը:

Ի պատասխան Պաշտպանի նամակի՝ ՀՀ արդարադատության նախարարությունից ստացվել է թիվ Ե-4629 գրությունը, որով տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախկինում մշակված և շրջանառության մեջ դրված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հավանության չարժանանալու պատճառով, ՀՀ կառավարության առաջարկով հետ է վերցվել նախարարության կողմից:

13.09.2008թ. ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի կողմից Պաշտպանին հասցեազրված 02/136/2549-08 գրությամբ տեղեկացվել է, որ 2008թ. օգոստոսի 7-ին կայացած նախարարական պետական կոմիտեի նիստի ընթացքում հանձնարարվել է ՀՀ արդարադատության նախարարին մինչև 2008թ. հոկտեմբերի 1-ը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

17.09.2008թ. թիվ Ե-3986 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարի կողմից ներկայացվել է «Տեղեկություն ստանալու ազատության մասին» ՀՀ օրենքի նախագիծ: Ներկայացված նախագծին ի պատասխան՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 21.10.2008թ. հ.2-0298 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարին են ներկայացվել նախագծի վերաբերյալ Պաշտպանի դիտողություններն ու առաջարկությունները:

Հարկ է նշել, որ 23.10.2008թ. ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտառուսումնական կենտրոնում քննարկվեց «Տեղեկություն ստանալու ազատության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Քննարկման արդյունքում մասնակիցները հանգեցին այն եզրակացության, որ «Տեղեկատվության ազատության իրավունքի մասին» ՀՀ գործող օրենքն ընդիանուր առնամբ համապատասխանում է միջազգային համապատասխան նորմերին, և կարիք կա ոչ թե նոր օրենք ընդունելու, այլ նոր ձևաչափով քննարկումներ կազմակերպելու և գործող օրենքում համապատասխան բացերը լրացնելու: Հարցը մինչև օրս բաց է մնում:

Անձի տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքի իրականացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովումը: Այս առումով 2005թ. սահմանադրական փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը լրացվեց 83.2 հոդվածով, որը սահմանեց, որ հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին,

որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Սահմանադրության անցումային դրույթներով (հոդված 117-րդ, կետ 11-րդ) ամրագրվեց, որ այդ անկախ մարմնի գործող անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց լիազորությունների ժամկետի ավարտը, իսկ նրանց պաշտոնավարության ժամկետը լրանալու կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքերում թափուր տեղերը լրացվում են հաջորդաբար Ազգային ժողովի և Հանրապետության Նախագահի կողմից: Գործող օրենսդրությունը Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով 2007 թվականի փետրվարի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեցին «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովի կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնցով Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 9 անդամանց կազմը փոխարինվեց 8 անդամանց կազմով և, ի տարբերություն նախկինի, երբ հանձնաժողովի անդամներին միանձնյա նշանակում էր Հանրապետության Նախագահը, սահմանվեց, որ հանձնաժողովի չորս անդամներ ընտրվում են Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս չորսին նշանակում է Հանրապետության Նախագահը: Թեպետ կատարված փոփոխություններն անշափ կարևոր են զանգվածային լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման տեսանկյունից, քանի որ ապահովում են Ազգային ժողովի մասնակցությունը հանձնաժողովի կազմավորմանը, սակայն չի կարելի չնշել այն փաստը, որ օրենսդրական փոփոխությունները հնարավորություն չեն տալիս համեմատաբար կարճ ժամկետներում իրականացնել հանձնաժողովի կազմավորմանը Ազգային ժողովի՝ Հանրապետության Նախագահին հավասար մասնակցությունը: 2008թ. դեկտեմբերի 1-3-ը ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովում Եվրախորհրդի անկախ փորձագետի, ինչպես նաև Հայաստանում ԵԽ գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի մասնակցությամբ տեղի են ունեցել քննարկումներ, այդ թվում՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ: Պաշտպանը բազմիցս նաև ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի վերջին փոփոխությունը, որով հեռուստառադիոհեռարձակման լիցենզավորման մրցույթները հետաձգվեցին մինչև 2010թ., ըստ էության, հետընթաց է և ուղղակիրեն հակասում է «Ա1+»-ի գործով Եվրոպական դատարանում կայացված վճիբ:

Ինչպես արդեն նշվել էր Պաշտպանի 2008թ. արտահերթ իրապարակային գեկույցում մարտի 1-ի հայտնի դեպքերից հետո, ի թիվս այլ հարցերի, տարակուսանքի տեղիք էր առաջացնում որոշ ԶԼՄ-ների՝ ատելության մթնոլորտի շիկացմանն ուղղված գործունեությունը, վիրավորող, հաճախ ազրեսիվ արտահայտությունների իրապարակումը, դեպքերի լուսաբանման միակողմանիությունը: Նման անընդունելի լուսաբանման ամենացայտուն օրինակը տալիս էր ՀՀ հանրային հեռուստաընկերության առաջին ալիքը (Հ1), որը ոչ միայն անտեսում էր արտակարգ դրություն մտցնելու մասին Նախագահի հրամանագիրը, այլև խախտում էր «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջները, այն է՝ հանրային հեռուստաընկերություններում հեռարձակվող հաղորդումներում քաղաքական դիրքորոշման գերակշռությունը արգելվում է: Այս առումով կարևորվում է օրենսդրության պահանջների կատարումը, ինչպես նաև Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) դերակատարությունը, որն ըստ օրենքի՝ անկախ կարգավորող մարմին է և կոչված է վերահսկելու հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը, այնինչ, վերջինս նույնպես չկատարեց իր հիմնական գործառույթներից մեկը և չկանխեց ոչ միայն Հ1-ի, այլև մասնավոր հեռարձակումների կողմից օրենքի դրույթների խախտումները: Արտակարգ դրության պայմաններում տեղեկատվական ոլորտում անօրինական դրսւորումներն անմիջականորեն առնչվում էին ընտրություններին, ինչն, անշուշտ, չնպաստեց վստահության մթնոլորտի ձևավորմանն ու քաղակարծության ապահովմանը՝ բերելով հասարակության ապակողմնորոշմանն ու բնեուացմանը:

Չի կարելի չարձանագրել նաև այն փաստը, որ 2008թ. վերջին 5-6 ամիսների ընթացքում ՀՀ հանրային հեռուստաընկերության առաջին ալիքի գործունեության մեջ նկատվել են որոշակի դրական տեղաշարժեր, դեպքերի լուսաբանման համակողմանիության տարրեր:

Երկրում խոսքի ազատության և քաղակարծության ապահովման տեսանկյունից մտորելու տեղիք են տալիս 2008թ. նախագահական ընտրությունների նախընտրական և հետընտրական ժամանակահատվածում Գյումրիի անկախ լրատվական ալիք (Գալա) հեռուստաընկերության շուրջ ծագած խնդիրները, որոնք զուգորդվեցին նախ՝ հարկային մարմինների կողմից Գալա հեռուստաընկերությունում հարկային ստուգումներ անցկացնելով և հեռուստաընկերության կողմից հարկերը չարամտորեն թաքցնելու փաստի բացահայտմամբ, ապա նաև հեռուստաընկերության սարքավորումները Գյումրու քաղաքապետարանին պատկանող հեռուստաշտարակի տարածքից հանելու վերաբերյալ Գյումրու քաղաքապետի պահանջով:

Խորամուխ չինելով Գալա հեռուստաընկերության կողմից հանրային մարմինների բացահայտած խախտման փաստերի հիմնավորվածության և հավաստիության հարցերի

մեջ, հնարավոր է, որ Գալա հեռուստաընկերության կողմից խսկապես թույլ են տրվել օրենսդրության դրույթների խախտումներ: Մեզ հաճար տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ այդ խախտումների բացահայտումները և մյուս խնդիրները ի հայտ եկան այն բանից հետո միայն, եթե Գալա հեռուստաընկերությունը քննադատական կեցվածքով հանդես եկավ իշխանությունների հանդեպ, ըստ մամուլի հրապարակումների՝ եթե եթերում լուսաբանեց Ազատության հրապարակում ընդրիմության հանրահավաքները: Այս հանգամանքը լուրջ մտորելու տեղիք է տալիս յուրաքանչյուրիս՝ խոսքի ազատության և բազմակարծության ապահովման տեսանկյունից:

Վերը նշված օրինակները շարադրելով սույն բաժնում՝ նպատակ ենք ունեցել ցույց տալ մարդու իրավունքների օրենսդրական պատճառների և իրավակիրառ պրակտիկայում դրանց առաջացրած հետևանքների միջև անմիջական կապը:

Ցավալի է, բայց փաստ է, որ 2008թ. ընթացքում, ինչպես և նախորդ տարիներին, արձանագրվել են լրագրողների նկատմամբ բռնության դեպքեր նրանց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու նպատակով, ինչը սպառնում է Հայաստանում խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքների լիարժեք ապահովմանը:

Այս առումով արժե հիշատակել «Չորրորդ իշխանություն» օրաթերթի լրագրող Գոհար Վեզիրյանի նկատմամբ կիրառված բռնությունը ՀՀ ոստիկանության փոխգնդապետ Արայիկ Պետրոսյանի կողմից, որը հարվածելով վայր էր զցել լրագրողին, մեկ որիշ ոստիկան էլ արցունքաբեր գազ էր փչել նրա աչքերին: Ընդ որում, այս դեպքը նկարահանվել էր, և բոլորս էլ հեռուստատեսությամբ ականատես եղանք դրան:

Նման դեպքերը դատապարտելի են ոչ միայն ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից ոչ իրավաչափ գործողություններ կատարելու տեսակետից, այլև նրանով, որ ինչպես այս, այնպես էլ նման շատ դեպքերում որևէ մեկը պատասխանատվության մինչև օրս չի ննթարկվել:

Պաշտպանը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով ու կոչ արել իրավապահ մարմիններին՝ լինել առավել հետևողական լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու ցանկացած դեպքի բացահայտման և մեղավորներին օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու հարցում:

Լրագրողների նկատմամբ 2008թ. շարունակվող բռնությունների մասին Պաշտպանի հայրատարություններից մի քանիսը ներառված են սույն գեկույցի հավելված 1-ում :

## 2.1.5. Ընտրելու և ընտրվելու իրավունք

Ստորև ներկայացվում են ՀՀ ընտրական օրենսդրությանն առնչվող որոշ խնդիրներ:

1. Ընտրական գործընթացի պատշաճ վարչարարության ապահովման կարևորագույն նախապայմաններից է անկախ և անկողմնակալ ընտրական հանձնաժողովների առկայությունը: Այս առումով պետք է նշենք, որ թեև ՀՀ ընտրական օրենսգրքի՝ ընտրական հանձնաժողովների ձևավորմանը վերաբերող դրույթները արժանացել են միջազգային կառույցների դրական գնահատականին, այնպես էլ 2008թ. նախագահական ընտրությունների դիտարկման արդյունքները վկայում են այդ դրույթների հետագա քննարկման և վերանայման անհրաժեշտության մասին:

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքում ընդգծվում է, որ միայն քափանցիկությունը, անկողմնակալությունն ու քաղաքականորեն պատճառաբանված մանխառույթացիաներից անկախությունը կապահովեն ընտրական գործընթացի ճշտ վարչարարություն՝ նախընտրական փուլից մինչև արդյունքների ստացումը: Այս առումով, կանոնագրքի բացատրական գեկույցում նախատեսվում է, որ այն պետություններում, որտեղ վարչական իշխանություններն ունեն քաղաքական իշխանություններից անկախ լինելու երկարատև ավանդույթ, ընտրությունները կարող են կազմակերպվել վարչական իշխանությունների կողմից և վերահսկվել Ներքին գործերի նախարարության կողմից: Սակայն այն պետություններում, որոնք բազմակարծ ընտրությունների կազմակերպման քիչ փորձ ունեն, ընտրական հանձնաժողովները պետք է ձևավորվեն հիմնականում խորհրդարանում արդեն ներկայացված կուսակցությունների կողմից:

Պետք է նկատել, որ հենց այս մոտեցումն է արտահայտված ՀՀ ընտրական օրենսգրքում: Այնուամենայնիվ, փորձը ցույց տվեց, որ ընտրական հանձնաժողովների ձևավորման քաղաքական սկզբունքն ի գորու չէ ապահովելու ընտրական գործընթացի պատշաճ վարչարարություն:

Ստեղծված իրավիճակից ելքը, թերևս, ընտրական հանձնաժողովների ձևավորման վերոնշյալ երկու մոդելների համադրման մեջ է: Այսպես, վարչական մարմինները կարող են իրականացնել ընտրական վարչարարություն, իսկ խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների ներկայացուցիչներից կամ նախագահական ընտրություններում առաջադրված թեկնածուների ներկայացուցիչներից ձևավորված դիտորդական հանձնաժողովները՝ վերահսկողություն համապատասխան մարմինների գործունեության նկատմամբ:

2. ՀՀ ընտրական օրենսգրքի 40.2 հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում դադարեցվում են քվեարկության օրվանից հինգ օր հետո՝ ժամը 14:00-ին։ Փաստորեն, առանձին դեպքերում նշված ժամկետային սահմանափակման առկայության պատճառով քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջի ոչ բոլոր դիմումները կարող են բավարարվել։

Ընտրական օրենսգրքի 40.2 հոդվածի 8-րդ կետն ամրագրում է, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների վերահաշվարկներն իրականացնում է ըստ վերահաշվարկի պահանջի մասին դիմումների մուտքագրման հաջորդականության։ Գործնականում այս նորմի հետ կապված առաջանում են որոշակի խնդիրներ։ Թերևս, հարցն այդքան վիճահարույց չէր լինի, եթե ընտրական օրենսգրքն ամրագրեր, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները վերահաշվարկն իրականացնում են ոչ թե ըստ դիմումների մուտքագրման հաջորդականության, այլ բավարարում են վերահաշվարկի պահանջ ներկայացրած բոլոր թեկնածուների դիմումները՝ որոշակի համանանությամբ, կամ էլ սահմանվեր, որ առաջնահերթ քննարկվում են առավել շատ ձայներ հավաքած թեկնածուների վերահաշվարկի պահանջի մասին դիմումները։ Կարող են քննարկվել նաև այլ տարրերակներ։

3. Մինչև 2007թ. փետրվարին ՀՀ ընտրական օրենսգրքում համապատասխան փոփոխությունների կատարումը արտասահմանում բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ապահովում էին ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները՝ Ընտրական օրենսգրքով և կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով։

Սակայն ՀՀ ընտրական օրենսգրքի բոլոր դրույթները, որոնք վերաբերում էին արտասահմանում քվեարկության անցկացման կարգին, 2007թ. փետրվարին կատարված փոփոխությունների արդյունքում օրենսգրքից հանվեցին։

ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների համաձայն՝ ընտրությունների անցկացումը սահմանափակվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքով և բացառվում է դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում քվեարկելու հնարավորությունը։

Արտասահմանում բնակվող քաղաքացիների քվեարկելու իրավունքի նման սահմանափակումը համահունչ է Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածի պահանջներին։

ԵԽ Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված՝ Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի բացատրական գեկույցում ընդգծվել է, որ միայն

մի քանի պետություններ են շնորհում արտասահմանում բնակվող իրենց քաղաքացիներին քվեարկելու և նույնիսկ ընտրվելու իրավունք:

Այլ խոսքով, Կանոնագրքով չի սահմանվում արտասահմանում քվեարկությունն ապահովելու ուղղությամբ որևէ պահանջ, այլ այն ներկայացվում է որպես տարրերակ, որը կարող է քննարկվել:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր ունեցող, բայց քվեարկության օրը արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այդ թվում՝ նրանց, ովքեր արտասահմանում են գտնվում իրենց ծառայողական պարտականությունների կատարման բերումով, արտագնա աշխատողներում ներգրավված լինելու հետևանքով) ընտրելու իրավունքի իրականացմանը, ապա, մեր համոզմամբ, նրանց ընտրելու իրավունքի նման սահմանափակումը չի կարող արդարացված համարվել: Խոսքը հատկապես վերաբերում է տասնյակ հազարավոր արտագնա աշխատողներին, որոնց ընտանիքների անդամները բնակվում են ՀՀ-ում: Վերջին հանգամանքը պայմանավորում է այն, որ հիշատակված արտագնա աշխատողների կենսական շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունն է և, հետևաբար, նրանք պետք է հնարավորություն ունենան քվեարկելու երկրի տարածքից դուրս:

4. Զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզության իրականացման ընթացակարգերի կարգավորմանն է նվիրված ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածը, որով սահմանվում է նախընտրական քարոզարշավի լուսաբանման ընթացքում զանգվածային լրատվության միջոցների կողմից արդարության, հավասարակշռության և անկողմնակալության սկզբունքների պահպանման պարտականությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով 2007թ. խորհրդարանական և 2008թ. նախագահական ընտրությունների համատեքստում հեռուստատեսությամբ և ռադիոյով նախընտրական քարոզության լուսաբանման պրակտիկան, գտնում ենք, որ անհրաժեշտություն կա առավել մանրամասն կանոնակարգելու լրատվական հաղորդումներում նախընտրական քարոզարշավի լուսաբանման գործընթացը՝ սահմանելով հստակ չափորոշիչներ:

Նշենք նաև, որ «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում տուգանքներ են նախատեսված հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզության սահմանված կարգի խախտումների համար: Մասնավորապես, օրենքում ամրագրվում է.

«Հոդված 79. Ընտրությունների և հանրաքենների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քարոզության համար արգելված ժամանակահատվածում քարոզական բնույթի հաղորդում հեռարձակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիմքիարյուրապատիկի չափով:

Հոդված 80. Հանրարվեների և ընտրությունների ժամանակաշրջանում հեռուստատեսությամբ առանց Էկրանի վրա պարտադիր անընդմեջ «քաղաքական գովազդ» կամ «նախընտրական քարոզական հաղորդում» լուսագրի քաղաքական կամ այլ քարոզական հաղորդումներ սփռելը, իսկ ուղիությունը դեպքում՝ յուրաքանչյուր հաղորդման ընթացքում ոչ պակաս, քան երեք անգամ դրա մասին չիշեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով»:

Նույն օրենքի 91-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստաընկերության կամ ուղիություններության լիցենզիայի գործողությունը այլ հիմքերի հետ մեկտեղ կարող է կասեցվել նաև մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ վարչական տույժի ենթարկվելուց հետո կրկին խախտում կատարելու դեպքում:

Նման պարագայում, հաշվի առնելով զանգվածային լրատվամիջոցներով նախընտրական քարոզության նշանակությունն ու դրա հետևանքները և կարևորելով նախընտրական քարոզության սահմանված կարգի պահպանումը, գտնում ենք, որ անհրաժեշտ է հեռուստառադիություններին լիցենզիայից զրկել ոչ միայն մեկ տարվա ընթացքում երկու անգամ վարչական տույժի ենթարկվելուց հետո խախտում կատարելու դեպքում, այլև տարվա ընթացքում մեկ անգամ վարչական տույժի ենթարկվելուց հետո կրկին անգամ խախտում կատարելու դեպքում, եթե դրանք, կամ դրանցից որևէ մեկը նախընտրական քարոզության սահմանված կարգի խախտում է:

Բացի այդ, գործնականում հնարավոր է, որ Հեռուստատեսության և ուղիոյի ազգային հանձնաժողովը հեռուստառադիությունների կողմից նախընտրական քարոզության սահմանված կարգի խախտումների դեպքում անգործություն ցուցաբերի և պատասխանատվության չենթարկի իրավախախտներին: Նման պարագայում թեկնածուների մոտ իրավունք է ծագում դիմել ՀՀ վարչական դատարան՝ բողոքարկելու հանձնաժողովի անգործությունը: Սակայն այս դեպքում կարող է ծագել մեկ այլ խնդիր: Մասնավորապես, Վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատական քննությունը, որպես կանոն, պետք է ավարտվի մեկ դատական ճիստով, առանց հետաձգումների:

2. Գործի դատաքննության նախապատրաստությունը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն **ողջամիտ** ժամկետներում, քացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործերի քննության և լուծման համար սույն օրենսգրքով սահմանված են ժամկետներ»:

Հաշվի առնելով, որ Վարչական դատարանում դատաքննության նախապատրաստման և գործի բուն քննության «ռողաճիտ» ժամկետները կարող են գործնականում բազմաթիվ խնդիրներ առաջացնել՝ թեկնածուներին զրկելով հեռուստառադիտորներություններով նախընտրական քարոզության հավասար պայմաններից՝ առաջարկում ենք ընտրությունների և հանրաքվեների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քարոզության համար արգելված ժամանակահատվածում քարոզական բնույթի հաղորդում հեռարձակել, ինչպես նաև՝ նախընտրական քարոզության մեկնարկից հետո հեռուստառադիտորների կողմից օրենսդրության պահանջների խախտման և դրանց արդյունքում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից ցուցաբերած անգործության դեպքերում Վարչական դատավարության օրենսգրքով սեղմ ժամկետներ նախատեսվեն նմանատիպ գործերի քննության և լուծման համար (օրինակ, հայցադիմումը ստանալուց հետո 7 օրվա ընթացքում):

5. ՀՀ ընտրական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընտրությունների ժամանակահատվածում Ազգային ժողովի՝ համամասնական և մեծամասնական ընտրակարգերով առաջադրված թեկնածուները կարող են կալանավորվել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ:

Ակնհայտ է, որ նման դրույթի սահմանումը օրենսդրի կողմից նպատակ է հետապնդել թեկնածուին զերծ պահելու ընտրությունների ժամանակահատվածում քաղաքական շարժառիթներով նրա գործունեությանը պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց միջամտությունից:

Գործնականում այս դրույթը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տվել, մասնավորապես, մեկնաբանվել է այնպես, որ այն չի տարածվում այն դեպքերի վրա, երբ դատարանի կողմից քննչական մարմնի միջնորդությամբ երկարաձգվում է կալանքի տակ պահելու ժամկետը: Արձանագրվել է դեպք, երբ մինչև պատգամավորության թեկնածու գրանցվելը կալանավորված անձի կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգվել է առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության: Գտնում ենք, որ նման մեկնաբանությունը համահունչ չէ նշված դրույթի սահմանման նպատակի հետ:

Անհրաժեշտ ենք համարում ՀՀ ընտրական օրենսգրքում համապատասխան փոփոխության կատարումը՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը ստանալու պահանջը հստակ սահմանելու նպատակով (խոսքն այն դեպքերի մասին է, երբ անձը կալանավորվել է մինչև որպես թեկնածու գրանցվելը):

6. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13<sup>1</sup> հոդվածով տրվել է երկարագության սահմանումը, ըստ այդ՝ երկարագության է համարվում այն անձը, որն ունի մեկից ավելի պետությունների քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության երկարագության է համարվում այն անձը, որը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության քաղաքացիություն:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության երկարագությունը ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օրենքով նախատեսված դեպքերի:

Դրան համապատասխան, ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանել է երկարագությունների ընտրական իրավունքների իրականացման կարգը: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության և միաժամանակ այլ պետության քաղաքացի հանդիսացող և Հայաստանի Հանրապետությունում հաշվառում ունեցող քաղաքացիները ընտրությունների ժամանակ քվեարկություններին մասնակցում են օրենսգրքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության և միաժամանակ այլ պետության քաղաքացի հանդիսացող ու Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող քաղաքացիներն ընտրությունների ժամանակ քվեարկություններին չեն մասնակցում:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության երկարագությունների պասիվ ընտրական իրավունքի իրականացմանը, ապա այդ կապակցությամբ ՀՀ ընտրական օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ Հանրապետության Նախագահի թեկնածու չեն կարող առաջադրվել և Հանրապետության Նախագահի թեկնածու չեն կարող գրանցվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն:

Միաժամանակ, ՀՀ ընտրական օրենսգրքի 97-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու չեն կարող առաջադրվել և պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն այլ պետության քաղաքացիություն:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար ՀՀ ընտրական օրենսդրությամբ նման բացառություն նախատեսված չեն:

ՀՀ ընտրական օրենսդրությամբ երկարագություն ունեցող անձինք ունեն ակտիվ ընտրական իրավունքներ (հաշվառված լինելու պայմանով), բայց համապետական

ընտրություններում ընտրվելու իրավունք չունեն: Նման իրավական կարգավորումը հակասում է ԵԽ Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքին<sup>3</sup>:

Հարկ է նշել նաև, որ ԵԽ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԴ-ի համատեղ կարծիքով հատկապես շեշտվել է այն հանգամանքը, որ եթե պետությունը ընդունում է երկրադարձացիության իրավունքը, ապա երկրադարձացիություն ունեցող անձինք չպետք է ունենան ավելի քիչ իրավունքներ, քան մյուս քաղաքացիները: Նման սահմանափակումները տարածում չունեն:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ այլ պետության քաղաքացիություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքների ապահովման իրավական կարգավորման հարցերը լրացնից վերանայման կարիք ունեն:

7. ՀՀ ընտրական օրենսդրությունը սահմանում է նախընտրական քարոզության իրականացման ձևերը և տեսակները: Այնուամենայնիվ ,«նախընտրական քարոզություն» հասկացության սահմանման քացակայությունը, ինչպես նաև նախընտրական քարոզության կարգի խախտմանը վերաբերող ՀՀ ընտրական օրենսգրքի դրույթների ոչ հստակ ձևակերպումները իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնարանությունների տեղիք են տալիս: Օրինակ, քայ է մնում ընտրական իրավունքի սուբյեկտների կողմից այս կամ այն թեկնածուի կամ կուսակցության օգտին քարոզության իրականացման կարգի խախտման համար պատասխանատվության հարցը:

Ընտրությունների և հանրաքենների անցկացման ժամանակ նախընտրական քարոզությունը կարող է անցկացվել հետևյալ եղանակներով՝ զանգվածային լրատվության միջոցներով, հրապարակային նախընտրական միջոցառումների ձևով (նախընտրական ժողովներ և հանդիպումներ ընտրողների հետ, հրապարակային նախընտրական քննարկումներ, բանավեճեր, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կազմակերպելու միջոցով), տպագիր նյութեր հրապարակելու, ձայնագրված և նկարահանված նյութեր տարածելու միջոցով<sup>4</sup>:

Պետք է նշել, սակայն, որ թեև ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ մասը նախընտրական քարոզության իրականացման ձևերի սպառից ցանկ է նախատեսում, նույն հոդվածի 2-րդ մասից բխում է, որ նախընտրական քարոզությունը կարող է անցկացվել նաև այլ՝ օրենքով շարգելված եղանակներով:

Սահմանելով ՀՀ քաղաքացիների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզություն կատարելու իրավունքը ցանկացած թեկնածուի կամ կուսակցության օգտին կամ նրա դեմ՝ ՀՀ ընտրական օրենսգրքը սահմանում է նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնց արգելվում է քարոզություն իրականացնել:

<sup>3</sup> ՀՀ ընտրական օրենսգրքի 2007թ. վետրվարի 26-ի փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԴ-ի համատեղ կարծիքը:

<sup>4</sup> ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ կետ

Օրինակ, արգելվում է նախընտրական քարոզություն կատարել և ցանկացած բնույթի քարոզական նյութ տարածել՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև դրանց աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս, սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության, դատախազության մարմինների աշխատակիցներին, զինծառայողներին, քարեզործական և կրոնական կազմակերպություններին, օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, ընտրական հանձնաժողովների անդամներին:

Ընտրական օրենսգրքի մի շարք հոդվածներով (76-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ ենթակետեր, 103-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ ենթակետեր, 125-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ ենթակետեր) նախատեսվում է, որ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի կամ դրանում ներառված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե նշված սուբյեկտները խախտել են նախընտրական քարոզության սահմանված կարգը կամ նախընտրական քարոզության համար, քացի նախընտրական հիմնադրամի միջոցներից, օգտագործում են նաև այլ միջոցներ:

Այս համատեքստում հարց է ծագում, թե ո՞վ պետք է պատասխանատվություն կրի որևէ սուբյեկտի կողմից այս կամ այն թեկնածուի, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի օգտին քարոզություն իրականացնելու համար, երբ այդ քարոզությունն իրականացվում է ընտրական օրենսդրությամբ նախընտրական քարոզության սահմանված կարգի խախտմամբ և առանց թեկնածուի, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի իմացության: Նման պարագայում, կարծում ենք, արդարացված չի լինի թեկնածուին, կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին պատասխանատվության ենթարկել: Այդ իսկ պատճառով, վիճահարույց հարցերից խուսափելու նպատակով, առաջարկում ենք սահմանել նախընտրական քարոզության մի կարգ, համաձայն որի՝ քարոզություն կատարելու իրավունք ունենան միայն այն սուբյեկտները (ՀՀ քաղաքացիներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ), ովքեր նման գործունեություն իրականացնելու համար լիազորված կինեն ընտրություններին մասնակցող թեկնածուի, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի կողմից: Լիազորված սուբյեկտների շրջանակից դուրս իրականացվող քարոզության համար թեկնածուն, կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը պատասխանատվություն չեն կրի:

Գննարկման է արժանի նաև ոչ թույլատրելի եղանակներով նախընտրական քարոզության իրականացման հարցը: ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ նախընտրական քարոզության ժամանակ թեկնածուներին (կուսակցություններին) արգելվում է անձամբ կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ

պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեքղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ (հոդվ. 18, 7-րդ մաս):

Միանշանակ արդարացված ենք համարում օրենքում նման գործունեության իրականացման արգելքի ամրագրումը: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ թեկնածուները օրենքի նշված նորմը շրջանցում են և արգելված գործողությունները կատարում են ոչ թե որպես ընտրություններին առաջարրված թեկնածուներ, այլ պարզապես «Հաղաքացիներ, որոնք զբաղվում են բարեգործությամբ: Ծիշտ է, «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում ամրագրվում է, որ բարեգործությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նույն օրենքի 2-րդ հոդվածի նպատակների իրականացման համար ֆիզիկական անձանց և ոչ առևտրային կազմակերպություններին կամավոր, անշահախնդիր, օրենքով չարգելված (անհատույց կամ արտոնյալ պայմաններով) նյութական և հոգևոր օգնության տրամադրումն է: Փաստորեն, «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը որպես բարեգործություն նշում է օրենքով չարգելված (անհատույց կամ արտոնյալ պայմաններով) նյութական և հոգևոր օգնության տրամադրումը, ՀՀ ընտրական օրենսգիրքն ուղղակի արգելում է նախընտրական քարոզության ժամանակ թեկնածուներին (կուսակցություններին) անձանք կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեքղթեր, ապրանքներ տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը): Այսինքն, իրականում անտեսվում է «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի դրույթը, և թեկնածուները (կուսակցությունները) իրենց գործունեությունը մեկնաբանում են որպես բարեգործություն: Հետևաբար, նման իրավիճակներից խուսափելու համար առաջարկում ենք ընտրական օրենսգրքում դրույթ ամրագրել այն մասին, որ թեկնածուները և կուսակցությունները գրանցվելուց հետո մինչև ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումը իրավունք չունեն զբաղվելու բարեգործությամբ:

Բացի այդ, գտնում ենք, որ օրենսդրական կարգավորում պետք է ստանա նաև նախընտրական քարոզության ժամանակ թեկնածուներին/կուսակցություններին օժանդակելու նպատակով նրանց անհատույց կամ արտոնյալ պայմաններով ծառայություններ տրամադրելու, աշխատանքներ կատարելու արգելման հարցը:

Անհրաժեշտություն կա նաև հստակ սահմանելու նախընտրական քարոզության ժամանակ ընտրությունների հետ որևէ առնչություն ունեցող վիճակախաղերի և ռիսկի վրա հիմնված այլ խաղերի անցկացման արգելքը:

8. ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանում է քարոզական պաստառների կամ այլ նյութերի օգտագործման կարգը:

Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը, ոչ ուշ, քան նախընտրական քարոզությունը սկսվելուց հինգ օր հետո,

համայնքի տարածքում առանձնացնում է հատուկ տեղեր քարոզական պաստառներ փակցնելու համար: Այդ տեղերը պետք է հարմար լինեն ընտրողների այցելության համար:

Նկատենք, որ ՀՀ ընտրական օրենսգիրքը չի սահմանում այն վայրերը, որտեղ արգելվում է քարոզական պաստառներ փակցնել: Կարծում ենք, որ նպատակահարմար կլիներ օրենքով արձանների, պատմական, մշակութային կամ ճարտարապետական նշանակություն ունեցող շենքերի վրա քարոզական պաստառներ փակցնելու արգելվ նախատեսել:

Բացի այդ, գործնականում բազում վեճերի տեղիք է տվել այն հարցը, թե արդյո՞ք օրինական է այդպիսի պաստառների փակցնումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի վրա: Այս հարցին պատասխանելու համար նախ անդրադառնանք ընտրական օրենսգրքի այն դրույթին, համաձայն որի՝ արգելվում է նախընտրական քարոզություն կատարել և ցանկացած բնույթի քարոզական նյութ տարածել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև դրանց աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս (հոդված 18, 4-րդ մաս): Հետևաբար, օրենսգրքի նշված դրույթի տրամաբանությունը շարունակելով՝ կարծում ենք, որ արդարացված կլինի, եթե պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի վրա ևս քարոզական պաստառներ փակցնելու համար օրենսգրքում արգելվ նախատեսվի: Ինչ վերաբերում է մասնավոր անձանց պատկանող շենքերի վրա քարոզական պաստառներ փակցնելուն, ապա կարծում ենք, որ համայնքի ղեկավարը կարող է թույլատրել նման շենքերի վրա պաստառներ փակցնելը միայն սեփականատիրոջ համաձայնությամբ:

ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանում է նաև, որ քարոզական պաստառներ փակցնելու համար նախատեսված տեղերը յուրաքանչյուր տեղամասում պետք է լինեն մեկից ոչ պակաս (հոդվ. 21, 2-րդ մաս): Տրված ձևակերպումը, անշուշտ, փոփոխության կարիք ունի, քանի որ 1-ը նվազագույն թիվն է և դրանից պակաս այդ տեղերը չեն կարող լինել, հետևաբար, ճիշտ կլիներ, եթե հոդվածի դրույթը ձևակերպված լիներ հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր տեղամասում պետք է լինի առնվազն այդպիսի մեկ տեղ»:

Ի վերջո, ուշադրության է արժանի նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումն այն մասին, որ համայնքի ղեկավարը, ոչ ուշ, քան նախընտրական քարոզությունը սկսվելուց հինգ օր հետո, համայնքի տարածքում առանձնացնում է հատուկ տեղեր քարոզական պաստառներ փակցնելու համար: Հարց է ծագում՝ ինչո՞ւ ոչ ուշ, քան հինգ օր հետո, այն դեպքում, եթե գործնականում այդ պաստառները փակցվում են նախընտրական քարոզությունը սկսվելուց անմիջապես հետո, այն էլ այդպիսիք փակցնելու համար չնախատեսված տեղերում: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ, եթե օրենքով ամրագրվեր, որ համայնքի ղեկավարը այդ տեղերը հատկացներ, ոչ թե ոչ ուշ, քան նախընտրական

քարոզությունն սկսվելուց հինգ օր հետո, այլ ճիշտ հակառակը՝ ոչ ուշ քան նախընտրական քարոզությունն սկսվելուց հինգ օր առաջ: Սրա հետ կապված ավելացնենք հետևյալը. քանի որ գործնականում քարոզական պաստառները փակցվում են ամենուր, այլ ոչ թե դրանց համար հատուկ առանձնացված տեղերում, ինչը նախընտրական քարոզության սահմանված կարգի խախտում է, սակայն այն որևէ հետևանք չի ունենում քարոզությանը մասնակցող սուբյեկտների համար, հետևաբար, նշված նորմի հոչակագրային բնույթը վերացնելու համար առաջարկում ենք քարոզական պաստառներ փակցնելու լիազորությունը տալ տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք ել հավասար մակերեսով (ինչպես օրենքն է պահանջում) կփակցնեն այդ պաստառները, իսկ հատուկ տեղերից դուրս փակցված պաստառների առկայության դեպքում օժտված կիմեն դրանք հանելու իրավունքով:

ՀՀ ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 7-րդ մասն ամրագրում է. «Արգելվում է անանուն քարոզական տպագիր նյութեր տարածելը: Անանուն կամ կեղծ քարոզական տպագիր նյութեր հայտնաբերելու դեպքում իրազեկ ընտրական հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում այդ գործունեությունը դադարեցնելու ուղղությամբ և դիմում է իրավասու մարմիններին՝ ապօրինի գործողությունները դադարեցնելու համար»: Նկատենք, որ եթե անանուն կամ կեղծ քարոզական տպագիր նյութեր հայտնաբերելու դեպքում իրազեկ ընտրական հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում այդ գործունեությունը դադարեցնելու ուղղությամբ, ապա ի՞նչ իմաստ ունի նաև դիմել իրավասու մարմիններին՝ ապօրինի գործողությունները դադարեցնելու համար: Ինչիցեւ, սա չէ էականը: Կարևորն այն է, որ անանուն և կեղծ քարոզական պաստառների տարածումից և դրա հետևանքով առաջացող քաշը ուկներից խուսափելու համար առաջարկում ենք նախքան քարոզական պաստառները տպագրելը թեկնածուները, կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները դրանց մեկ օրինակը ներկայացնեն իրենց գրանցած ընտրական հանձնաժողովին՝ պաստառների՝ օրենքին համապատասխանությունը հաստատելու նպատակով, որից հետո տպագրեն դրանք:

9. ՀՀ ընտրական օրենսգրքի 22<sup>1</sup> հոդվածն ամրագրում է. «Զադաքական, հայեցողական պաշտոններ գրադեցնող, պետական ծառայող հանդիսացող թեկնածուները նախընտրական քարոզությունը իրականացնում են ընդհանուր իմունքներով, սույն հոդվածով սահմանված սահմանափակումների հաշվառմամբ.

1) արգելվում է նախընտրական քարոզության իրականացումը պաշտոնական պարտականությունները կատարելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար....»:

Իսկ օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գրանցման պահից Հանրապետության Նախագահի այն թեկնածուները, ովքեր գտնվում են պետական ծառայության մեջ կամ աշխատում են տեղական ինքնակառավարման մարմիններում,

ընտրությունների ընթացքում ազատվում են իրենց աշխատանքային պարտականությունները կատարելու և իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոննեական դիրքի առավելությունը: Հանրապետության Նախագահը կամ Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության Նախագահի պաշտոնակատարը՝ Ազգային ժողովի նախագահը կամ վարչապետը, Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրվելու դեպքում շարունակում են իրենց լիազորությունների կատարումը, սակայն չպետք է օգտագործեն իրենց պաշտոննեական դիրքի առավելությունը»:

Ինչպես ցույց տվեցին ամցած նախագահական ընտրությունները, քաղաքական պաշտոն զբաղեցնող թեկնածուների քարոզությունն ընտրական գործընթացի ամենավիճելի և ամենաշատ քննարկվող հարցերից մեկն էր: Հետևաբար, առաջարկում ենք հստակեցնել օրենսդրական ձևակերպումները՝ հետագայում նման իրավիճակներից խուսափելու նպատակով:

10. Ընտրական գործընթացներում բավական սուր քննադատվում է նաև նախընտրական շտաբերի գործունեությունը: Բանն այն է, որ ընտրական օրենսդրությունն ընդհանրապես չի կարգավորում նախընտրական շտաբերի գործունեությունը, ինչը ևս բազմաթիվ վեճերի տեղիք է տալիս: Մասնավորապես, բաց են մնում այն հարցերը, թե ինչ միջոցներով են գործում այդ շտաբերը, որն է նրանց գործունեության բովանդակությունը, երբ կարող են ձևավորվել և մինչև երբ կարող են գործել դրանք և այլն: Այս նկատառումներից ելնելով և հետագա վեճերից խուսափելու նպատակով՝ կարծում ենք, որ օրենսդիրը այս հարցին նույնապես պետք է շուտափույթ լուծում տա:

11. ՀՀ ընտրական օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նախընտրական հիմնադրամներում կատարվող մուծումների առավելագույն չափերը սահմանվում են ընտրական օրենսգրքով: Սահմանված չափը գերազանցող մուծումները, ինչպես նաև ... փոխանցվում են պետական բյուջե: Տրված ձևակերպումից հստակ չի երևում, թե սահմանված չափը գերազանցող գումա՞րն է ամբողջությամբ փոխանցվում պետական բյուջե, թե՞ մուծման՝ առավելագույն չափը գերազանցող մասը:

12. Վերանայման կարիք ունեն նաև ՀՀ ընտրական օրենսդրության դրույթների խախտման համար նախատեսված պատասխանատվությանն առնչվող հարցերը:

Կարելի է առանձնացնել ընտրությունների մասին օրենդրության խախտման համար սահմանվող իրավական պատասխանատվության երեք տեսակ՝ Ընտրական օրենսգրքով սահմանվող, վարչական և քրեական պատասխանատվություն:

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին կոնվենցիայի համաձայն՝ թեկնածուների, քաղաքական

կուսակցությունների (դաշինքների) կողմից քարոզության անցկացման պայմանների և կարգի, ինչպես նաև ընտրարշավի լուսաբանմանը զանգվածային լրատվության միջոցների կողմից խախտումների ցանկը, որոնք հիմք կհանդիսանան պատասխանատվության առաջացման համար, սահմանվում են օրենքներով:

ՀՀ ընտրական օրենսգրքի 139-րդ հոդվածը կարգավորում է օրենսգրքի դրույթները խախտելու համար պատասխանատվության հարցերը: Նշված հոդվածը սահմանում է ընտրական օրենսդրության 31 խախտումներ:

Այնուամենայնիվ, հոդվածի մի շարք դրույթներ շատ անորոշ են ձևակերպված, օրինակ՝ ընտրողների կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը, ընտրական գործառնություններին խոչընդոտելը, ընտրական հանձնաժողովների անդամների կամ պետական ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների կողմից ընտրությունների բնականոն ընթացքին խոչընդոտելը, նախընտրական քարոզության բնականոն ընթացքին խոչընդոտելը<sup>5</sup>:

Նման անորոշ ձևակերպումները կարող են անհարկի խոչընդոտներ ստեղծել այդ դրույթների գործնական կիրառման ընթացքում: Բացի այդ, դրանք իրավասու մարմիններին լայն հնարավորություն են ընձեռում ենթադրյալ իրավախախտում թույլ տված անձանց պատասխանատվության հարցը լուծելիս սուբյեկտիվ և հայեցողական վերաբերմունք դրսերելու համար:

13. Ընտրական օրենսգրքի որոշ դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ հակասություն կա օրենսգրքի 23 հոդվածի 2-րդ մասի և 57 հոդվածի 5-րդ մասի միջև: Մասնավորապես, ընտրական օրենսգրքի 23 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է մինչև քվեարկության ավարտվելը հրապարակել ընտրողների հարցման արդյունքներն այն մասին, թե ում օգտին են քվեարկել: Փաստորեն, հոդվածով հնարավորություն է տրվում քվեարկության օրը ընտրողների շրջանում հարցում կազմակերպել այն մասին, թե նրանք ում օգտին են քվեարկել, բայց մինչև 20:00-ն հարցման արդյունքները չհրապարակելու պայմանով (Exit poll): Ինչ վերաբերում է 57 հոդվածի 5-րդ մասին, ապա այն նշում է, որ արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկել, այսինքն բացառվում է հարցումների անցկացման հնարավորությունը:

14. Ընտրական իրավունքի իրականացման գործընթացում վեճերից խուսափելու և ՀՀ ընտրական օրենսգրքի հակասությունները վերացնելու նպատակով անհրաժեշտ է վերանայել նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ և 60-րդ հոդվածները: Մասնավորապես, 46-րդ հոդվածի առաջին մասը նշում է, որ ժամը 20:00-ին քվեարկության **սենյակում** գտնվող, բայց դեռևս չքվեարկած քաղաքացիները քվեարկելու իրավունք ունեն: Իսկ 60-րդ հոդվածն

<sup>5</sup>Հայաստանում ընտրական օրենքի և ընտրական վարչարարության վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՄՀԳ-ի համատեղ առաջարկություններ, դեկտեմբեր 2003թ.

ամրագրում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ժամը 20:00-ին արգելում է ընտրողների մուտքը տեղամասային կենտրոն, **տեղամասային կենտրոնում** գտնվող ընտրողներին քվեարկելու իրավունք է տալիս, որից հետո ...:

Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածն ամրագրում է «Ընտրական տեղամասում կազմավորվում է տեղամասային կենտրոն»:

Տեղամասային կենտրոն չի կարող կազմավորվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական ուսումնական հաստատությունների, գրամիավորումների, առողջապահության հիմնարկների գրադեցրած շենքերում: Տեղամասային կենտրոններ կարող են կազմավորվել կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատություններում:

Տեղամասային կենտրոնը պետք է հնարավորին չափ մոտ լինի ընտրական տեղամասում գտնվող բնակելի շենքերին և տներին»:

Իսկ օրենսգրքի 47-րդ հոդվածն ամրագրում է, որ քվեարկությունը կատարվում է կահավորված սենյակում՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասում՝ մեկ սենյակ հաշվարկով:

Քվեարկության սենյակը պետք է լինի հնարավորին չափ ընդարձակ շինություն և բավարարի մի շարք պահանջների, այդ թվում՝ հնարավորություն ընձեռի քվեարկության ողջ ընթացքում ապահովել տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների և քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքը և այլն:

Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է քվեարկությունը սկսվելուց առնվազն 24 ժամ առաջ:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ տեղամասային կենտրոնն այն շենքն է, շինությունը, որում պետք է կազմակերպվի քվեարկությունը, իսկ քվեարկության սենյակը այդ շինության այն կոնկրետ հատվածն է, որում անմիջականորեն անցկացվում է քվեարկությունը: Եվ այն հանգամանքը, որ օրենսգրքի մի հոդվածը ժամը 20:00-ից հետո քվեարկելու իրավունք է վերապահում **տեղամասային կենտրոնում** գտնվող դեռևս չքվեարկած քաղաքացիներին, իսկ մյուս հոդվածը՝ **քվեարկության սենյակում** գտնվող ընտրողներին, գործնականում կարող է վեճերի առիթ դառնալ: Հետևաբար, առաջարկում ենք օրենսգրքում վերացնել առկա հակասությունը և ի վերջո հստակեցնել, թե ժամը 20:00-ից հետո ովքեր իրավունք կունենան քվեարկելու՝ տեղամասային կենտրոնում, թե քվեարկության սենյակում գտնվող և դեռևս չքվեարկած քաղաքացիները:

15. ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում հանրաքեների, Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը (հոդված 83.5, 7-րդ մաս): Դեռ

ավելին, ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը նշում է, որ քաղաքացիների ընտրական իրավունքը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով: Սակայն, ընտրական իրավունքի իրացմանն ուղղված մի շարք գործընթացների անցկացման կարգերը սահմանվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով:

Հիշատակելով ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը՝ համաձայն որի քաղաքացիների ընտրական իրավունքը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով, տեղին կլիներ նշել նաև, որ, մասնավորապես, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված որոշ հարաբերություններ կարգավորվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

Միևնույն ժամանակ նկատենք, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի այն նորմերը, որոնք կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ծագող որոշ հարաբերություններ, հակասում են ՀՀ ընտրական օրենսգրքի՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թեկնածուներին ներկայացվող պահանջները կարգավորող նորմերին: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը նշում է, որ համայնքի դեկավար և ավագանու անդամներ կարող են ընտրվել առնվազն **մեկ** տարի տվյալ համայնքի բնակիչ համարվող քաղաքացիները: Իսկ նույն օրենքի 24-րդ հոդվածն ամրագրում է. «Համայնքի դեկավար կարող է ընտրվել 25 տարին լրացած, առնվազն **մեկ** տարի տվյալ համայնքի բնակիչ համարվող Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի:»

Համայնքի դեկավարը պետք է ունենա միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն կրթություն»:

Այն դեպքում, եթե ՀՀ ընտրական օրենսգրքի 122-րդ հոդվածը նշում է.

«1. Համայնքի դեկավար կարող է ընտրվել 25 տարին լրացած, տվյալ համայնքում, Երևան քաղաքի թաղային համայնքներում՝ Երևան քաղաքում առնվազն վերջին **երկու** տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի, ինչպես նաև սույն օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված անձինք:»

2. Ավագանու անդամ կարող է ընտրվել 21 տարին լրացած, տվյալ համայնքում, Երևան քաղաքի թաղային համայնքներում՝ Երևան քաղաքում առնվազն վերջին **երկու** տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի, ինչպես նաև սույն օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված անձինք:»

Ինչպես տեսանք, նախ, ՀՀ ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները տվյալ համայնքում *առմվազն վերջին երկու տարվա հաշվառում պետք է ուժենան*, այն դեպքում, երբ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը բավարարվում է մեկ տարի տվյալ համայնքի բնակիչ լինելու հանգամանքով, այն էլ ոչ վերջին մեկ տարին:

Երկրորդ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նշում է, որ համայնքի ղեկավար և ավագանու անդամներ կարող են ընտրվել ... տվյալ համայնքի բնակիչ համարվող *քաղաքացիները* (հոդված 7), համայնքի ղեկավար կարող է ընտրվել ... համայնքի բնակիչ համարվող *Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի* (հոդված 24), իսկ ՀՀ ընտրական օրենսգիրքը (հոդված 122) ՀՀ քաղաքացիների հետ մեկտեղ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ընտրվելու իրավունք է վերապահում նաև ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածում նախատեսված անձանց (համապատասխան համայնքում հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուրին):<sup>6</sup>:

Երրորդ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նշում է, որ համայնքի ղեկավարը պետք է ունենա միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն կրթություն (հոդված 24), իսկ ՀՀ ընտրական օրենսգրքում համայնքի ղեկավարի թեկնածուներին նման պահանջ չի ներկայացվում:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը նշում է, որ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին: Այստ է, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը նշում է նաև, թե իրավական ակտերի միջև հակասություն առաջանալու դեպքում որ իրավական ակտն է կիրառվում, այնուամենայնիվ, նման օրենսդրական հակասություններն անընդունելի են և անհրաժեշտ է շուտափույթ վերացնել վերը նշված իրավական ակտերի միջև առկա հակասությունները: Կարծում ենք՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի նշված հոդվածն ընդամենը ժամանակավոր միջոց պետք է ծառայի օրենսդրության մեջ առկա հակասական կարգավորումներից ելքեր փնտրելու համար, այլ ոչ թե հիմք հանդիսանա առկա, այն էլ սկզբունքային հակասություններին ուշադրություն շղարձնելու և դրանք չվերացնելու համար:

16. ՀՀ ընտրական օրենսգրքի 33-րդ հոդվածի 7-րդ մասն ամրագրում է, որ վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները՝ համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, իրավունք ունեն խորհրդակցական ձայնի իրավունքով

<sup>6</sup> Նման մոտեցումն արդարացված է, քանի որ ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածը նշում է. «Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է ... լուծելու տեղական նշանակության հարցերը», իսկ 104.1 հոդվածը նշում է, որ համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակչության հանրություն է: Այդ հանրության մեջ կարող են լինեն ինչպես ՀՀ քաղաքացիներ, այնպես էլ օտարերկրացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք:

մասնակցել ստորադաս ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության օրը ներկա գտնվել տեղամասային կենտրոնում: Անդրադառնանք նշված հոդվածի որոշ հակասական ձևակերպումների: Նախ, հոդվածում նշվում է «**հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ» արտահայտությունը, ինչը ենթադրում է վերադասի կողմից (հանձնաժողովի նախագահի) տրված որոշակի հրահանգների պարտադիր կատարում: Սակայն, հոդվածի հետագա շարադրանքում օրենսդիրը նշում է, որ հանձնաժողովի անդամն իրավունք ունի խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել ստորադաս ընտրական հանձնաժողովի նիստերին: Նման պարագայում հարց է ծագում՝ ինչպես կարող է իրավահարաբերության սուբյեկտի իրավունքի իրականացումը սահմանափակված լինել կամ նախապայմանավորված լինել մեկ այլ սուբյեկտի կամահայտնությամբ (հանձնարարությամբ): Ի վերջո հարցը բաց է մնում՝ վերադաս հանձնաժողովի անդամն իրավունք ունի, թե հանձնաժողովի նախագահի *հանձնարարությամբ* պարտավոր է մասնակցել ստորադաս հանձնաժողովի նիստերին: Եվ երկրորդ, հոդվածի շարադրանքից պարզ չէ, թե քվեարկության օրը տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու հանձնաժողովի անդամի իրավունքի իրականացումը ևս կախված է հանձնաժողովի նախագահի «հանձնարարությունից»:**

17. ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով Հանրապետությունում կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տեղամասային ընտրական հանձնաժողով: Այս համատեքստում անհասկանալի է ՀՀ ընտրական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատություններում ընտրությունները սույն օրենսգրքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով նախապատրաստում, կազմակերպում և անցկացնում են այդ հաստատությունների դեկավարները, ինչն արդարացված չէ գուտ այն պատճառով, որ անհասկանալի է մնում, թե այդ դեպքում կալանավորվածներին պահելու լիազորություն ունեցող հիմնարկներում ձևավորված տեղամասային ընտրական հանձնաժողովն ինչ պետք է անի, եթե այդ հաստատություններում ընտրությունները «նախապատրաստում, կազմակերպում և անցկացնում են» այդ հաստատությունների դեկավարները: Միևնույն ժամանակ, նման հաստատությունների դեկավարներին ընտրական գործընթացներում օրենսգիրքը լիազորում է կազմել կալանքի տակ գտնվող ընտրողների ցուցաները՝ այն էլ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ:

Չուգահեռ նշենք, որ ո՞չ Ընտրական օրենսգրքով, ո՞չ էլ «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի

Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ որևէ պահանջ չկա կալանավորվածներին իրենց հաշվառման վայրի ընտրական ցուցակից հանելու մասին, ինչը, կարծում ենք, արդարացված չէ, քանի որ ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում և միայն մեկ անգամ: Առաջարկում ենք կալանավորվածների ցուցակները կազմել քվեարկության օրը ընտրական տեղամասեր գործուղման մեջ գտնվող ոստիկանության ծառայողների ցուցակների կազմման համանանությամբ: Մասնավորապես, ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ պարբերություններում նշվում է «Հանրապետության ոստիկանությունը քվեարկության օրվանից առնվազն 4 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն, լիազոր մարմնի կամ նրա համապատասխան տարածքային ստորաբաժանման դեկավարին է ներկայացնում քվեարկության օրը ընտրական տեղամասեր գործուղման մեջ գտնվող ոստիկանության ծառայողների ցուցակը՝ դրանում նշելով քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը (հայրանունը, եթե անձնագրում առկա է), ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և հաշվառման վայրի հասցեն:

Լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման դեկավարը՝ ըստ ներկայացված ցուցակների, ոստիկանության ծառայողներին հանում է իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից, սույն օրենսգրքի 11 հոդվածով՝ ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջներին համապատասխան կազմում է տեղամասում քվեարկող ոստիկանության ծառայողների լրացուցիչ ցուցակ՝ ստորագրելով և կմքելով այդ ցուցակի յուրաքանչյուր էջը, և քվեարկության օրվանից 2 օր առաջ ընտրողների վերջնական ցուցակի հետ միասին տրամադրում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին»:

Նույն կերպ, կալանավորվածներին պահելու լիազորություն ունեցող հիմնարկի դեկավարները քվեարկության օրվանից 4 օր առաջ իրենց մոտ պահվող կալանավորների տվյալները ներկայացնում են լիազոր մարմնին, որն էլ կալանավորվածներին հանում է իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակներից, կազմում առանձին ցուցակներ և քվեարկությունից առնվազն 2 օր առաջ դրանք հանձնում կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հիմնարկներում ստեղծված տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին:

18. Նշված օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ ենթակետում նշվում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցում է Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրող կուսակցություններին և նախաձեռնող խմբերին, այնինչ, հանձնաժողովը պետք է գրանցի ոչ թե Հանրապետության Նախագահի թեկնածու առաջադրող կուսակցությանը, այլ կուսակցության կողմից առաջադրված թեկնածուին: Ինչ

վերաբերում է նախաձեռնող խմբերին, ապա Ընտրական օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունների արդյունքում նախաձեռնող խմբերն այլևս իրավունք չունեն Նախագահի թեկնածու առաջադրել: Հետևաբար, նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի ուժով վերը նշված հոդվածի դրույթն անհրաժեշտ է ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «գրանցում է Հանրապետության Նախագահի՝ կուսակցությունների կողմից առաջադրված և իմքնառաջադրված թեկնածուներին»:

19. Ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի՝ եթե թեկնածուն կամ կուսակցությունը նախընտրական քարոզության համար, բացի նախընտրական հիմնադրամի միջոցներից, օգտագործում է նաև այլ միջոցներ, ապա **կենտրոնական ընտրական հանձնաժողովի** դիմումի հիման վրա դատարանը կարող է ուժը կորցրած ճանաչել թեկնածուի կամ կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը: Նման պարագայում անհասկանալի է մնում, թե ինչու **կենտրոնական ընտրական հանձնաժողովի** դիմումի հիման վրա, եթե Ազգային ժողովի մեծամասնական կարգով պատգամավորության թեկնածուներին, ինչպես նաև համայնքի դեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին գրանցում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Հետևաբար, վերջիններիս կողմից նախընտրական քարոզության համար, բացի նախընտրական հիմնադրամի միջոցներից նաև այլ միջոցներ օգտագործելու դեպքում նրանց գրանցումն ուժը կորցրած ճանաչելու միջնորդությամբ դատարան պետք է դիմի նրանց գրանցած **ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը**:

20. Ընտրական օրենսգրքում կենտրոնական ընտրական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների լիազորությունները թվարկելիս չի նշվում, մասնավորապես, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրություններում առաջադրված կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների լիազոր ներկայացուցիչներին տալիս է վստահված անձանց՝ օրենքով սահմանված քանակությամբ վկայականներ, իսկ Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրություններում մեծամասնական կարգով առաջադրված թեկնածուին կամ նրա լիազոր ներկայացուցիչն տալիս է վստահված անձանց՝ օրենքով սահմանված քանակությամբ վկայականներ, այն դեպքում, եթե ԿԸՀ-ն Հանրապետության Նախագահ առաջադրված թեկնածուին կամ նրա ներկայացուցիչն տալիս է անհրաժեշտ քանակի վկայականներ՝ Հանրապետության Նախագահ առաջադրված թեկնածուի վստահված անձանց համար (հոդվ. 41, 1-ին մաս, 16-րդ կետ), իսկ ԸԸՀ-ն համայնքի դեկավար և ավագանու անդամ առաջադրված թեկնածուների ներկայացուցիչներին տալիս է վստահված անձանց՝ օրենքով սահմանված քանակությամբ վկայականներ (հոդվ. 42, 14-րդ կետ):

21. Արված առաջարկությունների հետ մեկտեղ ներկայացնում ենք նաև ընտրական օրենսգրքում առկա մի շարք տեխնիկական թերությունների վերացմանն ուղղված առաջարկություններ՝

- 7-րդ հոդվածի 6-րդ մասի երրորդ նախադասության մեջ «ընտրություններին» բառը փոխարինել «քվեարկությանը» բառով:
- 9-րդ հոդվածի 6-րդ մասում «հուլիս և հունվար» բառերի տեղերը փոխել:
- 10-րդ հոդվածի 5-րդ մասում «տեղական ինքնակառավարման» բառերից հետո ավելացնել «մարմինների» բառերը:
- 13-րդ հոդվածի 1-ին մասում «կալանքի տակ պահելու» բառերից հետո ավելացնել «լիազորություն ունեցող» բառերը:
- 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունում փոխել «Վերստուգիչ-վերահսկիչ» բառերի տեղերը: Նույն նախադասությունում «դաշինքների» բառից առաջ ավելացնել «կուսակցությունների» բառը:
- 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ նախադասությունում «առաջին ատյանի դատարան» բառերը փոխել «ընդհանուր իրավասության դատարան» բառերով:
- 37-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունում «տեղամասային ընտրական հանձնաժողովներում աշխատելու համար վկայական ունեցող» բառերից հանել «տեղամասային» բառը:
- 38-րդ հոդվածի 3.1. մասի 4-րդ ենթակետում «ընտրատարածքային» բառից հետո ավելացնել «ընտրական» բառը:
- 41-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ ենթակետում «Ազգային ժողովի» բառերից հետո հանել «» կետադրական նշանը:
- 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ ենթակետերում «(տեղամասի կենտրոն)» բառերը փոխարինել «(տեղամասային կենտրոն)» բառերով: Նույն հոդվածի 14-րդ ենթակետի 3-րդ նախադասությունը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ. «Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին կամ նրանց ներկայացուցիչներին տալիս է վստահված անձանց՝ օրենքով սահմանված քանակությամբ վկայականներ»: Նույն հոդվածի 1-ին մասի համարակալունը հանել, որովհետև հոդվածը երկրորդ մաս չունի:
- 53-րդ հոդվածի 2-րդ մասում «Չոջիկ արկողի միջոցով քվեարկություն անցկացնող հանձնաժողովի անդամին» բառերից հետո ավելացնել «(Եթե ընտրական տեղամասում կա ստացիոնար բուժում իրականացնող հաստատություն)» բառերը:
- 56-րդ հոդվածի 1-ին մասում «քվեարկության մեկ քվեարերիկ» բառերից հանել «քվեարկության» բառը:

- 18-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները (այսուհետ՝ կուսակցություն) իրավունք ունեն...», սակայն օրենսգրքի հետագա շարադրանքում օգտագործվում է ինչպես «կուսակցություններ» տերմինը, այնպես էլ «կուսակցություններ» և «կուսակցությունների դաշինքներ» տերմինները՝ չափահովելով վերը նշված տերմինի միատեսակ կիրառումը:

- 40-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասության մեջ նշվում է. «Սույն կետի պահանջը չի տարածվում Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավոր, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար կամ ավագանու անդամ ընտրվելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների վրա»: Նշենք որ, ՀՀ օրենսդրությունը «տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար» հասկացություն չի պարունակում, հետևաբար, վերը նշված հոդվածի շարադրանքում «տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար» բառերն անհրաժեշտ է փոխարինել «համայնքի ղեկավար» բառերով:

#### **2.1.6. Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք**

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածն ամրագրում է, որ մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված մի շարք հիմնական իրավունքներ և ազատություններ, այդ թվում նաև խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը, կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

Սահմանադրական այս իրավունքի իրացումն ապահովելու նպատակով 2004թ. ապրիլի 28-ին ընդունվել է «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքը, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է ինչպես սահմանադրական, այնպես էլ միջազգային իրավական նորմերին: Սակայն, 2008թ. մարտի 17-ին օրենքում կատարվեցին մի շարք վիճահարույց փոփոխություններ:

Օրենքում կատարված փոփոխություններից մեկը նախատեսում էր, որ իրապարակային միջոցառումների անցկացումը լիազոր մարմնի կողմից կարող էր արգելվել, «եթե ըստ հավաստի տվյալների, դրանք ուղղված են սահմանադրական կարգը բռնի տապալելուն, ազգային, ուսաւյական, կրոնական ատելություն բորբոքելուն, բռնություն կամ

պատերազմ քարոզելուն, կամ կարող են հանգեցնել զանգվածային անկարգությունների և հանցագործությունների, պետական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարոյականության խաթարմանը, այլոց սահմանադրական իրավունքների ու ազատությունների ուժնահարմանը» (9-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետ) <sup>7</sup>:

Հատկանշական է, որ սահմանափակման նման նորմեր են ամրագրված Եվրոպական մի շարք պետությունների, այդ թվում՝ *Ֆրանսիայի, Գերմանիայի, Ռումինիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Հունգարիայի* օրենսդրություններով, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայով և այլ միջազգային փաստաթղթերով: Սակայն, միևնույն ժամանակ, ինչպես իրավացիորեն նշվում է ԵԱՀԿ ԺՀՄԴՀ Հավաքների ազատության հարցերով փորձագետների խորհրդի կարծիքում, նման հիմքերով իրավունքի սահմանափակումը բույլատրելի է միայն բռնության անխուսափելի սպառնալիքի առկայության դեպքում:

Խնդրո առարկա սահմանափակումներին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը՝ նշելով, որ խաղաղ հավաքներ անցկացնելու ազատության արդյունավետ ապահովումը չի կարող հանգել միայն դրանց միջամտելուն ձեռնպահ մնալու պետության պարտականության: Պետության գուտ նեգատիվ դերի հայեցակարգը հակասում է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի առարկային և նպատակին: Այդպիսով, այդ նորմով երաշխավորված իրավունքի պահպանումը երբեմն պահանջում է պետության կողմից պողիտիվ միջոցների կիրառում: Ինչ վերաբերում է իրապարակային միջոցառումներին, ապա Կոնվենցիան պարտավորեցնում է պետությանը նախատեսել որոշակի պաշտպանություն, որպեսզի միջոցառումները խաղաղ անցկացվեն: Ակնհայտ է, որ չնայած Կոնվենցիայի անդամ-պետությունների պարտականությունների մեջ մտնում է օրենքով բույլատրված միջոցառումների խաղաղ քնույթը ապահովելու համար բանական և անհրաժեշտ միջոցների կիրառումը, այնուամենայնիվ, այս իմաստով դրանք չեն կարող բացարձակ երաշխիքներ հանդիսանալ: Միշտ հնարավոր են հակընդդեմ միջոցառումներ: Ժողովրդավարական հասարակությունում հակընդդեմ միջոցառումների անցկացման իրավունքը չի կարող հավաքներ անցկացնելու իրավունքի սահմանափակման քնույթ ստանալ: Խոսելով միջոցների, այլ ոչ թե արդյունքների նկատմամբ պարտականության մասին՝ ակնհայտ է, որ իշխանությունները պետք է լայն հնարավորություն ունենան այդ միջոցների ընտրության հարցում (Ezelin, 37; Vogt, 64; Platform “Artze fur das Leben” 32 գործերով):

Հավաքների ազատության սահմանափակման վերոնշյալ հիմքերից մի քանիսն ամրագրված են նաև ԵԱՀԿ ԺՀՄԴՀ Հավաքների ազատության հարցերով փորձագետների խորհրդի կողմից պատրաստված «Խաղաղ հավաքների դեկավար սկզբունքներում», որտեղ,

<sup>7</sup> 2008 թվականի հունիսի 11-ին ընդունված օրենքով այս դրույթը վերախմբագրվեց:

որպես հավաքների սահմանափակման հիմք, նախատեսված են **հասարակական կարգի, առողջության և բարոյականության**, այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, **հասարակական և ազգային անվտանգության** ապահովումը: Միևնույն ժամանակ, Փորձագիտական խորհուրդը նշում է, որ մասնավորապես «հասարակական կարգ» տերմինին ներհատուկ անորոշությունը չի կարող արդարացում լինել խաղաղ հավաքների արգելման կամ հարկադիր դադարեցման համար: Ոչ հասարակական անկարգությունների հիպոբետիկ ռիսկը, ոչ էլ թշնամաբար տրամադրված հանրության առկայությունը չեն կարող խաղաղ հավաքի արգելման համար օրինական հիմք հանդիսանալ: Հավաքների անցկացման նախնական սահմանափակումները, որոնք կիրառվում են հնարավոր ոչ էական բռնության դեպքերի համար, ավելի շուտ պետք է ճանաչել ոչ համարժեք միջոց, իսկ ցանկացած բռնության առանձին դեպքերի դրսնորումների դեմ անհրաժեշտ է պայքարել ըստ իրավախախտման փաստի՝ կալանքի և դատական կարգով պատասխանատվության ենթարկելու միջոցով, այլ ոչ թե կանխարգելիչ միջոցների ճանապարհով (Ստանկովը և «Իլինդեն» միացյալ մակեդոնական կազմակերպությունն ընդդեմ Բուլղարիայի (2001թ.) կետ 94):

Այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության կապակցությամբ Փորձագիտական խորհուրդը նշում է. «Կարգավորող մարմինը պետք է հստակ հավասարություն գտնի հավաքների ազատության կարևորագույն իրավունքի պահպանման և դրա հետ հակասության մեջ մտած՝ հավաքների անցկացման տարածքում ապրող, աշխատող, գնումներ կատարող, առևտուր անող կամ ձեռնարկատիրությամբ գրադադար այլ անձանց իրավունքների միջև: Այդպիսով, հավաքը դադարեցնելու հասարակ փաստը կամ նույնիսկ դրան հակազդեցությունները չեն կարող այդ հավաքի վրա նախնական սահմանափակումներ դնելու պատճառ դառնալ: Հաշվի առնելով հանդուրժողկանության կարևորությունը ցանկացած ժողովրդավարական հասարակության համար՝ անհրաժեշտ է սահմանել քույլատրելիության բարձր սահման, որը անցնելու դեպքում միայն կարող է սահմանվել, որ այս կամ այն հանրային հավաքը զուգորդվում է այլ անձանց իրավունքների և ազատությունների անհիմն ոտնահարման հետ»:

Պետք է նշել նաև, որ ցանկացած սահմանափակում, որը դրվում է հավաքների ազատության վրա, չպետք է խախտի հենց այդ իրավունքի էռությունը: Որոշակի քաղաքական գաղափարախոսությանը կամ կրոնական համոզմունքներին հակվածությունը չի կարող հավաքների ազատության նկատմամբ կանխարգելիչ կամ պատժիչ սանկցիաների արդարացում լինել:

Հետևաբար, մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև դրանց սահմանափակման քույլատրելիության տեսանկյունից անընդունելի էր «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում կատարված

փոփոխություններից մեկով նախատեսված սահմանափակումը, համաձայն որի. «Այն դեպքերում, երբ զանգվածային հրապարակային միջոցառումները վերածվել են զանգվածային անկարգությունների, որոնք հանգեցրել են մարդկային զոհերի, նոր հանցագործությունների կանխման նպատակով լիազոր մարմինը կարող է ժամանակավորապես արգելել զանգվածային հրապարակային միջոցառումների անցկացումը մինչև հանցագործությունների հանգամանքների և հանցանք կատարած անձանց բացահայտումը» (հոդված 13, 6-րդ մաս): Այսպիսով, եթե ինչ-որ մեկը նման սահմանափակման կիրառման առիթ կարող էր դառնալ, ապա մյուսները ինքնարերաբար կզրկվեին խաղաղ հավաքներ անցկացնելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորությունից, ինչը, կարծում ենք, անթույլատրելի է և չի համապատասխանում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ոգուն և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին: Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Դեմոնստրացիաների ընթացքում այլ անձանց կողմից կատարված բռնության առանձին դրսևորումների կամ այլ պատճենի արարքների արդյունքում մարդու չի զրկվում խաղաղ հավաքների ազատության իրավունքից, եթե տվյալ անձը պահպանում է խաղաղ մտադրությունը կամ վարքագիծը» (տե՛ս Էզելենն ընդդեմ Ֆրանսիայի (1991թ.), Զիլիբերբերգն ընդդեմ Մոլդովայի (2004թ.)):

Բացի այդ, օրենսդրական նշված ձևակերպումը չէր բխում նաև պատժի անհատականացման սկզբունքի տրամարանությունից, քանի որ նման պարագայում սանկցիան կիրառվում է ոչ միայն իրավախսախտի, այլ նաև նրանց նկատմամբ, ովքեր ցանկանում են օգտվել իրենց սահմանադրական իրավունքից՝ անցկացնել խաղաղ, առանց գենքի հավաքներ:

Ավելին, յուրաքանչյուր դեպքում իրավունքների նման սահմանափակում նախատեսելիս հարցն անհրաժեշտ է դիտել նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի տեսանկյունից, համաձայն որի. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Քննարկվող հարցի հետ կապված ՀՀ Սահմանադրությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների (այդ թվում՝ խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքի) սահմանափակման երկու մեխանիզմ է նախատեսում: Մեկը սովորական պայմաններում, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման,

հանցագործությունների կանխարգելման, հանրության առողջության և բարքերի, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի հանրավի պաշտպանության համար (հոդված 43): Մյուսը՝ ուազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Մասնավորապես, Սահմանադրության 44-րդ հոդվածում ամրագրվում է, որ մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատություններ, ....արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում կարող են օրենքով սահմանված կարգով՝ իրավիճակին համարժեք չափով, ժամանակավորապես սահմանափակվել ուազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Սահմանադրության 43-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները: Այս առումով հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերը նշված նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներով ուրվագծվել են հավաքների ընթացքում բռնության դրսերումների դեմ պայքարի և հավաքների ազատության սահմանափակման բույլատրելիության մեխանիզմները:

Միևնույն ժամանակ, կարծում ենք՝ ճիշտ կլիներ անդրադառնալ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների, որոնցով Ոստիկանությանը լիազորություններ են վերապահվում հրապարակային միջոցառումների անցկացման ժամանակ: Մասնավորապես, Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ Ոստիկանությունը պարտավոր է ապահովել զանգվածային հրապարակային միջոցառման ընթացքում օրինականությունը եւ հասարակական կարգի պահպանումը, պարտավոր է զանգվածային հրապարակային միջոցառման անցկացման վայրից հարկադրաբար դուրս բերել այն անձանց, ովքեր կատարում են հակաօրինական արարք կամ խախտում են հասարակական կարգը: Այսինքն, խաղաղ, առանց զենքի հրապարակային միջոցառումների անցկացման ընթացքում հակաօրինական արարքների կամ հասարակական կարգի խախտման դեպքերում Ոստիկանության վրա պարտականություն է դրված հեռացնել խախտում կատարած անձանց՝ միջոցառման խաղաղ բնույթը պահպանելու և հնարավոր զանգվածային անկարգություններից խուսափելու համար:

Դեռ ավելին, նույն օրենքով Ոստիկանությանը իրավունք է վերապահված օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշում ընդունել՝ դադարեցնելու Օրենքի պահանջների խախտմամբ անցկացվող հրապարակային միջոցառումը կամ այլ միջոցառումը եւ պահանջել կազմակերպչից դադարեցնելու հրապարակային միջոցառումը: Կազմակերպչի

կողմից հրապարակային միջոցառումը չդադարեցվելու դեպքում Ոստիկանությունը կարող է օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով հարկադիր դադարեցնել հրապարակային կամ այլ միջոցառումը:

Այսինքն, օրենսդրական բոլոր հիմքերը և հնարավորությունները կան հրապարակային միջոցառումների ժամանակ օրինականության և հասարակական կարգի պահպանման համար, իսկ խախտումների առանձին դրսերումների դեպքում՝ օրինականությունը վերականգնելու կամ հրապարակային միջոցառումը դադարեցնելու համար՝ քառսային իրավիճակներում չհայտնվելու նպատակով:

Հավանաբար, հենց այս դիրքերից ելնելով էլ՝ 2008 թվականի հունիսի 11-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված սահմանափակումը վերացվեց:

## **2.2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ**

### **2.2.1. Աշխատանքի ընտրության ազատություն**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2006, 2007թ.-ի տարեկան գեկույցներում մանրամասն անդրադարձ է կատարվել աշխատանքի ընտրության ազատության խախտման պատճառ հանդիսացող օրենսդրական ակտերի դրույթներին, ինչպես նաև այս քննագավառում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ընթացքին:

Հիշատակված գեկույցներում մասնավորապես առաջարկվել է վերանայել ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված՝ առանց ծանուցման աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքերը, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու պայմանները՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով: Այդ կապակցությամբ, սակայն, 2008թ.-ի ընթացքում ՀՀ աշխատանքային օրենսգրքում համապատասխան փոփոխություն չի կատարվել:

### **2.2.2. Սոցիալական ապահովության իրավունք**

#### **Կենսաքոշակի իրավունքի խախտումների վերաբերյալ.**

«Պետական կենսաքոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը նախատեսում էր, որ աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերի բացակայության դեպքում

աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը, լստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի, դատական կարգով չեր կարող հաստատվել: Դատական կարգով կարող էր հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավել (47-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր):

Ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի՝ մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում էր կենսաթոշակի գործում առկա փաստաթղթերով հաշվարկված ստաժին համապատասխան՝ հաշվի առնելով օրենքի 17-19 հոդվածներին համապատասխան սահմանված հիմնական կենսաթոշակի չափը, ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը և կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր էր մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Լրցուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում էր Օրենքով սահմանված կարգով և համարվում նոր նշանակում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ խնդիրը կրում էր մասսայական բնույթ և վերաբերում էր քաղաքացիների՝ սահմանադրորեն երաշխավորված սոցիալական ապահովության իրավունքի պաշտպանությանը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2007թ. հոկտեմբերին դիմում էր ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության հարցի քննարկման նպատակով: Մեկ այլ դիմումով առաջարկվել էր քննարկել նույն օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին համապատասխանության հարցը:

2008թ. հունվարի 15-ի ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-723 որոշմամբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին, իսկ 29.01.2008թ. ՍԴՈ-731 որոշմամբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը՝ ՀՀ Սահմանադրության 18 և 37-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

**Աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վճասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ.**

Պաշտպանը շարունակում է բազմաթիվ բողոքներ ստանալ աշխատանքային խեղման արդյունքում ԲՍՓՀ-ի կողմից սահմանված հաշմանդամության ժամկետում տրամադրման ենթակա, սակայն կազմակերպության գործունեության դադարման արդյունքում չտրամադրվող խեղման նպաստի վերաբերյալ: Հարկ է նշել, որ հարցն արտացոլվել էր նաև Պաշտպանի 2006թ. և 2007թ. տարեկան գեկույցներում:

Դեռևս 31.07.2006թ. թիվ 1-0651 գրությամբ ՀՀ վարչապետի ուշադրությունն էր հրավիրվել ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշման 16-րդ կետով նախատեսված կարգավորմանը, համաձայն որի՝ կազմակերպության լուծարման կամ վերակազմավորման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վճար փոխհատուցում է նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: 1999թ. ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086 հոդվածը նույն հարցի կապակցությամբ սահմանում է, որ կյանքին կամ առողջությանը պատճառված վճարի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար: Սակայն ո՛չ օրենքով, ո՛չ կառավարության որոշմամբ մինչ օրս նման կարգ չի սահմանվել: Փոխարենը ՀՀ կառավարությունը 2004թ. նոյեմբերի 11-ին ընդունել է որոշում, որով ուժը կորցրած է ճանաչել ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշման 16 կետը: Արդյունքում բազմաթիվ քաղաքացիներ գրկվել են իրենց հասանելիք փոխհատուցումը ստանալու իրավունքից: ՀՀ վարչապետին հասցեագրված գրությունը վերահասցեավորվել էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ հարցի լուծման պատշաճ ընթացքն ապահովելու համար: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն ի պատասխան Պաշտպանի գրությանը, դեռևս 2007թ. հայտնել էր, որ հաշվի առնելով հարցի արդիականությունը՝ «Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացումը առաջարկվել է ներառել ՀՀ կառավարության 2007թ. գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում՝ կատարման ժամկետ նախատեսելով հունիսի 3-րդ տասնօրյակը: Պատասխան գրությամբ նաև հայտնվել է, որ նախագիծը գտնվում է մշակման փուլում և ավարտից հետո, ի թիվս այլ շահագրգիռ մարմինների, կներկայացվի նաև Պաշտպանին՝ քննարկման և համաձայնեցման համար:

Պաշտպանի մեկ այլ գրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կրկին առաջարկվել է տեղեկացնել հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին:

Նամակին ի պատասխան՝ 01.08.2007թ. թիվ 1/11-1816 գրությամբ հայտնվել է, որ «Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Պաշտպանի կողմից բարձրացված հարցին լուծում տալու նպատակով ՀՀ վարչապետի հանձնարարականով 2008 թվականին քննարկում է կազմակերպվել ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի մասնակցությամբ, որի արդյունքում փոխհամաձայնություն է ձեռք բերվել Պաշտպանի կողմից բարձրացված՝ 2004-2008թ. տուժած և փոխհատուցում չստացած անձանց հատուցման և «Աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման խնդիրները տարանջատել միմյանցից և քննարկել տարբեր հարթություններում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում կազմակերպված մեկ այլ քննարկման արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել միջանկյալ իրավաբանական լուծում տալ 2004թ. օգոստոսի 1-ից հետո քաղաքացիներին պատճառված վնասի հատուցման իրավունքի՝ նրանց կողմից իրացման հարցի վերաբերյալ: Ընդ որում, առաջարկվել է մշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծ կամ կատարել փոփոխություններ ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշման մեջ, որը հնարավորություն կտա քաղաքացիներին իրենց հասանելիք միջոցները ստանալ պետական բյուջեի միջոցների հաշվին: Քննարկման ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել նաև առանձին մշակել կազմակերպության ֆինանսական միջոցների կապիտալացման կարգ: Մեկ այլ առանցքային խնդրի շուրջ ձեռք բերված համաձայնության արդյունքում նախատեսվում է նաև ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել նախ՝ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության ներդրումն ապահովող հայեցակարգ, այնուհետև՝ օրենքի նախագիծ:

Խնդրի կարգավորումը մնում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուղաղրության կենտրոնում:

### **2.2.3. Սեփականության իրավունք**

2008թ.-ին սկսել են նոր թափ առնել բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքների սեփականատերերին շուկայական արժեքից ցածր փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ բողոքները: Այս խնդիրներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտապես անդրադարձել է տարեկան գեկույցներում: Թեև «Հասարակության և

պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն օտարվող սեփականության սեփականատերը կամ օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներն իրավունք ունեն պատշաճ ձևով գրավոր առարկություններ կամ առաջարկություններ ներկայացնել օտարման պայմանագրի նախագծի վերաբերյալ, իսկ ձեռքբերողն իրավունք ունի պայմանագիրը կնքելու նպատակով բանակցություններ վարել օտարվող սեփականության սեփականատիրոջ և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողների հետ, սակայն ձեռքբերողները, ըստ դիմումատունների, իրենց ներկայացրած առարկությունները չեն ընդունում և հրաժարվում են բանակցություններ վարել փոխհատուցման գնի շուրջ՝ պատճառաբանելով, որ իրենք միայն կառուցապատողներ են:

Այդ առումով, դեռևս 2006թ.՝ նախքան «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի ընդունումը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից տրվել է կարծիք, որ հասարակության և պետության կարիքի կրողը պետք է լինի պետությունը, այլ ոչ թե համայնքը կամ կազմակերպությունը: Պետությունը կարող է այդ նպատակի իրականացումը հանձնարարել կազմակերպությանը և նույնիսկ ֆիզիկական անձին, որոնք, սակայն, չեն կարող լինել սեփականության օտարման գործընթացի մասնակիցներ: Օտարվող գույքի սեփականատիրոջ և այլ գույքային իրավունք ունեցողների իրավունքները չեն կարող լիարժեք պաշտպանված լինել, եթե օտարման պայմանագրի կողմը պետությունը չէ: Պաշտպանի այս առաջարկը չի ընդունվել, մինչդեռ, փորձը ցույց է տալիս, որ բողոքների մեծ մասը վերաբերում է իրենց փոխհատուցման խնդիրներին:

Պաշտպանի կարծիքը «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներառված է 2006թ. տարեկան գեկույցում /հավելված 7/:

### **Ինքնակամ կառույցների օրինականացման վերաբերյալ.**

ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ հաստատվել է ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը (այսուհետ՝ Կարգ):

Կարգի 2-րդ բաժնով կարգավորվում է քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը, այդ թվում՝ քաղաքացիների դիմումը ստանալու օրվանից 30 կամ 60-օրյա ժամկետում իրավասու մարմնի կողմից որոշում ընդունելու մասին պարտավորությունը:

Կարգի 4-րդ բաժնով սահմանվել է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված /պետական կամ համայնքային

սեփականության ճանաչումից հետո/ ինքնակամ կառույցների տնօրինման պայմանները, այդ թվում՝ 30 կամ 60-օրյա ժամկետում օրինականացման կամ մերժման մասին որոշում ընդունելու մասին պահանջը:

ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատվել է պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը:

Կարգի 2-րդ կետով սահմանվել է, որ համայնքների ղեկավարները (Երևանում՝ Երևանի քաղաքապետը), համայնքների վարչական տարածքներից դուրս՝ համապատասխան մարզպետները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդունում են պետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող՝ պետության կամ համայնքի սեփականությունը հանդիսացող ինքնակամ կառույցների մասին որոշում, որով ինքնակամ կառույցները համարվում են պետական կամ համայնքային սեփականություն: Նշված որոշմանը կցվում է հողամասի հատակագիծը՝ ինքնակամ կառույցի կառուցապատման մակերեսի չափերով:

Կարգի 3-րդ կետով սահմանվել է իրավունքների պետական գրանցում կատարելու կարգը:

Ո՞չ ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն և 731-Ն որոշումներով, ո՞չ էլ դրանցով հաստատված կարգերով լիազոր մարմիններին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինությունների նկատմամբ պետական կամ համայնքային սեփականություն ճանաչելու մասին որոշում կայացնելու և որոշումը պետական գրանցման ներկայացնելու ժամկետներ չեն սահմանվել:

Քաղաքացիներն իրենց դժգոհությունն են արտահայտում այն մասին, որ ինքնակամ շինությունների օրինականացման խնդրանքով դիմում են իրավասու մարմիններին, վերջիններս այցելում են իրենց զբաղեցրած տարածքները, կատարում չափագրման աշխատանքներ, սակայն անցնում են ամիսներ և գույքն օրինականացնելու կամ օրինականացումը մերժելու մասին որևէ որոշում չի կայացվում: Իրենց դիմումներին պատասխանում են, որ դեռևս գույքի նկատմամբ չի ճանաչվել պետության կամ համայնքի սեփականության իրավունքը, հետևաբար, դրանք օտարել հնարավոր չեն:

11.02.2008թ. ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին հասցեագրված թիվ 1-0370 գրությամբ առաջարկվել է ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումներում և դրանցով հաստատված կարգերում կատարել լրացումներ այն մասին, որ երբ քաղաքացիները կամ իրավաբանական անձինք պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում իրենց կողմից կառուցված ինքնակամ կառույցների օրինականացման նպատակով դիմում են իրավասու մարմիններին՝

դրանց նկատմամբ պետության կամ համայնքի սեփականությունը ճանաչելու և պետական գրանցման ենթարկելու, սահմանվի հստակ ժամկետ: Սակայն այս խնդրին 2008թ. ընթացքում լուծում չի տրվել:

### **Իրացվող տարածքներում գտնվող ինքնակամ շինությունների վերաբերյալ**

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գույքային իրավունքներ ունեցող անձանց կողմից տասնյակ տարիներ օգտագործվող շենք-շինությունների օրինականացման հարցը լուծելու նպատակով ՀՀ կառավարությունը 2007 թվականի դեկտեմբերի 20-ին ընդունել է N 1529-Ա որոշումը, որով բույլատրել է Երևանի քաղաքապետին սահմանված կարգով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ենթակա տարածքներում սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող անհատական բնակելի տներին կից, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը զավթված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը և (կամ) զավթված հողամասերի վրա ինքնակամ կառույցներն օտարել այդ քաղաքացիներին:

Որոշման ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այն թերի է, քանի որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ենթակա տարածքներում առկա են նաև բազմաբնակարան շենքեր, որոնցում բնակվող բնակիչները բնակարանային պայմանները բարելավելու նպատակով տարիների ընթացքում բնակարաններին կից նույնպես ինքնակամ կառուցել են պատշգամբներ, խոհանոցներ և այլ շինություններ:

Վերոգրյալից ելնելով՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջարկվել է քննարկել հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ենթակա տարածքներում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչներին նույն հնարավորությունն ընձեռելու հարցը և ՀՀ կառավարության 20.12.2007 թվականի N 1529-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն, հակառակ դեպքում, դա կարող է դիտվել որպես խտրական մոտեցում՝ միանման կարգավիճակում գտնվող բնակիչների նկատմամբ:

Երևանի քաղաքապետը 04.09.2008թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած նամակով հայտնել է, որ շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1529-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվել է ՀՀ կառավարության 20.12.2007թ. թիվ 1529-Ա որոշման 1-ին կետում կատարել համապատասխան փոփոխություններ:

Ներկայացվել է նաև որոշման նախագիծը, որտեղ ավելացված 1-ին կետի «ք» ենթակետով թույլատրվել է Երևանի քաղաքապետին սահմանված կարգով մինչև 2001 թվականի մայիսի 15-ը բազմաբնակարան շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների սեփականատերերի կողմից բազմաբնակարան շենքի ծավալից դրւու, շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի սահմաններում բնակարանին, ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ կառույցներն օտարել բնակարանի, ոչ բնակելի տարածքի սեփականատիրոջը:

Երևանի քաղաքապետը մեկ այլ՝ 28.10.2008թ. Պաշտպանին հասցեազրած նամակով հայտնել է, որ շահագրգիռ նախարարություններից «ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1529-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ստացվել են դիտողություններ, իսկ ՀՀ արդարադատության նախարարության 25.09.2008թ. Ե4124 գրությամբ տրված պետական փորձագիտական եզրակացության համաձայն հարցը կարգավորվում է «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ, ուստի, որոշման ընդունման անհրաժեշտություն չկա:

Վերը նշված դիտողությունները հաշվի առնելով, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, ՀՀ կառավարության աշխատակազմի դեկավարի 17.10.2008թ. հ. 02/13.2/3370-08 գրության համաձայն՝ որոշման նախագիծը հանվել է շրջանառությունից:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով քաղաքացիներին իրավունք է տրվում օրինականացնել այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը:

Նույն օրենքի 2-րդ հոդվածը կարգավորում է քաղաքացիներին պատկանող բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300 քառակուսի մետր սահմանազատված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի և (կամ) դրանց վրա կառուցված բնակելի տների և (կամ) բնակելի նշանակության օժանդակ շինությունների օրինականացման հետ կապված հարաբերությունները:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթորերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով չի կարգավորվում բազմաբնակարան շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների սեփականատերերի կողմից բազմաբնակարան շենքի ծավալից դրւու, շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի սահմաններում բնակարանին, ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ կառույցների օտարման հետ կապված հարաբերությունները:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Հնաբնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմանը, ապա հարկ է նշել, որ նշված որոշման 25-րդ կետով նախատեսված կառույցների օրինականացման համար նախատեսված են վճարներ, մինչդեռ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1529-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետին թույլատրվել է այդպիսի կառույցները նվիրատվությամբ օտարել քաղաքացիներին:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ նմանատիպ կարգավիճակում գտնվող բնակիչների նկատմամբ տարրերակված մոտեցում ցուցաբերելը կարող է դիտվել խտրական մոտեցում, և անհրաժեշտ է ևս մեկ անգամ ուսումնասիրել հարցն ու ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1529-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

### **Քաղաքաշինության ոլորտի օրենսդրության վերաբերյալ.**

Հարկ է նշել, որ դեռևս բաց են մնում քաղաքաշինության ոլորտին վերաբերող օրենսդրական խնդիրները: Շատ դեպքերում դժվար է լինում տարանջատել Երևանի քաղաքապետարանների և քաղաքապետարանի պատասխանատվությունն այս կամ այն իրավախախտման կանխման համար, հատկապես այն դեպքերում, երբ բողոքները վերաբերում են ինքնակամ կառույցների կանխարգելմանը, քանդմանը և դրանց հետևանքների վերացմանը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան գեկույցներում բազմիցս նշվել են քաղաքաշինության բնագավառին վերաբերող օրենսդրական խնդիրները, դրանց կանոնակարգման ոչ հստակ մեխանիզմները: Ստորև ներկայացվող նյութը դրա վկայությունն է:

ՀՀ Նախագահի 06.05.1997թ. «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» հ. ՆՀ-727 հրամանագրի 1.13-րդ կետի թ/ ենթակետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառներում իր

իրավասության սահմաններում «....միջոցներ է ձեռնարկում ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ»:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Երևան քաղաքում քաղաքաշինական գործունեության հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26.1. հոդվածի համաձայն՝ Երևանի քաղային համայնքի տարածքում համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը՝ կիրառելով վարչական պատասխանատվության միջոցներ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասի 5.1. կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում «կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը»:

Նշված իրավական ակտերի հակասության արդյունքում պաշտոնատար անձինք միանման փաստական հանգամանքների նկատմամբ դրսեղորում են տարբերակված և կամայական մոտեցումներ:

Օրինակ՝ ինքնակամ շինության հետևանքները չվերացնելու վերաբերյալ Երևան քաղաքի Ազատության պող. թիվ 16 շենքի մի խումբ բնակիչների դիմում-բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանի կողմից 27.06.2008թ. կայացվել է որոշում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան աշխատակցի անգործության հետևանքով մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու մասին և առաջարկվել է Երևանի քաղաքապետին լուծել պաշտոնատար անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Որոշմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը, ի թիվս այլ տեղեկությունների, հայտնել է, որ համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26.1. հոդվածի 3-րդ մասի ու «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի 1-ին մասի 5<sup>1</sup> կետի պահանջների՝ ինքնակամ կառույցների կանխումը, կասեցումը և հետևանքների վերացումը պետք է իրականացվեն քաղային համայնքների կողմից:

Չնայած Պաշտպանի աշխատակազմում քննարկվող դիմում-բողոքների արդյունքում ձեռք բերված տվյալները վկայում են, որ ինքնակամ շինարարություն իրականացնելու համար անձինք վարչական պատասխանատվության են ենթարկվում հիմնականում քաղաքապետարանի կողմից, որն էլ հետագայում դիմում է դատարան դրանց հետևանքները վերացնելու համար, սակայն ներքոհիշատակված փաստը, որն արձանագրվել է Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից, արտառոց է հետևյալ պատճառարանությամբ.

Երևանի քաղաքապետը, դեկավարվելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 11 և 26.1. հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով ու 85-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Նախագահի 06.05.1997թ. «Երևան քաղաքում պետական կառավարման մասին» հ. 727-ՆՀ հրամանագրի 1.13 և 1.15 կետերով և ՀՀ կառավարության 12.10.1998թ. հ. 624 որոշման պահանջներով, 21.08.2008թ. հ. 3762-Ա որոշմամբ հանձնարարել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչությանը քանդել Երևանի Նոր Նորք համայնքի Մոլովական փողոցի հ. 2/3 շենքի դիմաց և հ. 259 մանկապարտեզի ու հ. 164 դպրոցի հարևանությամբ ինքնակամ կառուցված թվով 16 ավտոտնակները:

Սակայն հարկ է նշել, որ քաղաքացիների կողմից կատարված արարքը համարվում է վարչական իրավախախոտում /վարչական իրավախախոտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդված/, հետևաբար, մինչ նման որոշում կայացնելը պետք է ՀՀ վարչական իրավախախոտումների վերաբերյալ օրենսգրքի դրույթներին համապատասխան կազմվեր վարչական իրավախախոտման վերաբերյալ արձանագրություն /հոդված 254/, համապատասխան հանձնաժողովում իրավախախոտում կատարած անձանց մասնակցությամբ քննարկվեր հարցը /հոդված 278/, հնարավորություն տրվեր նրանց իրացնելու իրենց իրավունքները /հոդված 267/, որի արդյունքում կայացվեր որոշում /հոդված 281/: Որոշմամբ պետք է հնարավորություն ընձեռվի իրավախախոտում թույլ տված անձանց սահմանված ժամկետում իրենց միջոցներով վերացնել դրանց հետևանքները, իսկ մինչ ժամկետի լրանալը՝ բողոքարկել որոշումը:

Նոր Նորք համայնքի դեկավարի օգնականի ներկայացրած բանավոր պարզաբանման համաձայն՝ վարչական իրավախախոտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված իրավախախոտում թույլ տալու համար թաղապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից կազմվել է արձանագրություն և այն քննարկվել հանձնաժողովի 19.08.2008թ. կայացած նիստում, որի ժամանակ քնակիչները խնդրել են հետաձգել նիստը՝ մինչ իրենց կողմից համապատասխան փաստաթղթեր և հիմնավորումներ ներկայացնելը: Հանձնաժողովը, ընդառաջելով քնակիչների խնդրանքին, նիստը հետաձգել է մինչև 26.08.2008թ.:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ առանց վարչական իրավախախոտման վերաբերյալ գործ քննելու Երևանի քաղաքապետը 21.08.2008թ. կայացրել է վարչական իրավախախոտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքից չբխող որոշում և նույն օրը, քանդելով թվով 16 ավտոտնակներ, դրանց կառուցողներին հնարավորություն չի տվել նույնիսկ բողոքարկելու որոշումը, որի արդյունքում քաղաքացիներին պատճառվել է էական վնաս:

Հատկանշական է այն հանգամանքը, որ նշված 16 ավտոտնակները չեն կարող կառուցվել մեկ կամ նույնիսկ 10 օրում, հետևաբար, դրանք թաղապետարանի ու

քաղաքապետարանի համապատասխան աշխատակիցների անգործության արդյունքում են կառուցվել, քանի որ, լսու բնակիչների, մի քանի անգամ շինհրապարակ այցելելու ընթացքում վերջիններիս կողմից քանդելու պահանջ իրենց չի ներկայացվել:

#### **2.2.4. Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունք**

Անդրադառնալով մարդու իրավունքների խախտումներին հանգեցնող օրենսդրական պատճառներին՝ չի կարելի անտեսել Սևանա լճի հետ առնչվող հարցը: Սևանա լճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են, մասնավորապես, ՀՀ Սահմանադրությամբ, 2001թ. մայիսի 15-ին ընդունված «Սևանա լճի մասին» (ՀՕ-190), 2001թ. դեկտեմբերի 14-ին ընդունված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» (ՀՕ-276) ՀՀ օրենքներով և այլն: Դժվար է գերազնահատել Սևանա լճի ռազմավարական նշանակությունը մեր հանրապետության էկոհամակարգի բնականու գարգացման, բնական պաշարների վերարտադրման գործում:

2008 թվականի ընթացքում քավական մեծ աղուկ քարձրացավ՝ կապված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու առաջարկի հետ:

Սևանա լճի հետ կապված առկա հիմնախնդիրներին տեղում ծանոթանալու և դրանք քննարկելու նպատակով 2008թ. նոյեմբերի 13-ին՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ, Պաշտպանի աշխատակազմի համապատասխան աշխատակիցներն այցելել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաք, հանդիպել Սևանի քաղաքապետի և քաղաքապետարանի իրավաբանի հետ:

Քննարկման ընթացքում պարզվել է, որ արդիական է մնում Սևանա լճի ափամերձ հողատարածքների օտարման հարցը:

Ըստ Սևանի քաղաքապետի և քաղաքապետարանի իրավաբանի՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված Սևան համայնքի գլխավոր հատակագծով Սևանա լճի ափամերձ տարածքներն ընդգրկված են համայնքի վարչական սահմաններում: Այդ տարածքների նկատմամբ քաղաքապետարանը ձեռք է բերել սեփականության /օգտագործման/ իրավունք և այն ենթարկել պետական գրանցման: Սակայն, հետագայում ՀՀ կառավարության մեկ այլ որոշմամբ Սևանա լճի ափամերձ տարածքները հատկացվել են «Սևան ազգային պարկ» ՊՈԱ կազմակերպությանը և նշվել է, որ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որը մինչ օրս չի կատարվել: Չնայած, ինչպես նշվեց վերևում, այդ տարածքները սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականով արդեն իսկ

պատկանում են Սևան համայնքին, սակայն Սևանա լճի ափամերձ տարածքները կառուցապատման իրավունքով վարձակալության է տրամադրում «Սևան ազգային պարկ» ՊՈԱ կազմակերպությունը, որից ժագող իրավունքները կաղաստրի համապատասխան ստորաբաժանումը ենթարկում է պետական գրանցման, ինչը չի բխում օրենսդրության պահանջներից: Այսինքն՝ առանց իր իրավունքները գրանցելու, ՊՈԱԿ-ը իրավունքներ է փոխանցում այլ անձանց: Վարձավճարներից ստացվող գումարների մի մասը ՊՈԱԿ-ը վճարում է պետքութե, իսկ մնացած մասն ինքն է տնօրինում:

Բացի դրանից, ՀՀ կառավարության 13.05.2004թ. թիվ 766-Ն որոշմամբ (ուժը կորցրել է՝ բացառությամբ 6-րդ կետի 2-րդ մասի և 7-րդ կետի՝ ՀՀ կառավարության 31.07.08 թիվ 812-Ն որոշում) սահմանվել է, որ «Սևան» ազգային պարկի 1908.0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքներում կառուցապատումն իրականացնել միմիայն ոչ հիմնական շինություններով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» N 896 որոշման պահանջներին համապատասխան՝ նախագծային փաստաթղթերի կազմում պարտադիր կարգով ներառելով նաև տարածքի կազմակերպման լանդշաֆտային և քաղաքաշինական հատակագծերը:

Սակայն «Սևան ազգային պարկ» ՊՈԱ կազմակերպության կողմից հայտարարված կառուցապատման իրավունքի մրցույթի հաղթողներն, առանց քաղաքապետարանի հետ նախագծային փաստաթղթեր համաձայնեցնելու, ճարտարապետահատակագծային առաջադրանք և շինարարության թույլտվություն ստանալու, 1908.0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքներում կառուցում են հիմնական շինություններ, որը հետագայում բազմաթիվ խոչընդոտներ է առաջացնում: Եղել են դեպքեր, երբ քաղաքապետարանի աշխատակիցները կառուցապատողներին պարտադրել են դադարեցնել ինքնակամ շինարարությունը, սակայն վերջիններս ցույց են տվել Գեղարքունիքի մարզպետարանի կողմից տրված շինարարության թույլտվություն, որը, սակայն, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետք է տրամադրի համայնքի ղեկավարը, քանի որ այն գտնվում է համայնքի տարածքում: Սևանա լճի ափամերձ տարածքում կան մոտ 400 ինքնակամ կառույցներ, որոնց հետագա ճակատագրի որոշման կապակցությամբ քաղաքապետարանը բազմիցս դիմել է ՀՀ կառավարությանը, սակայն, միջոցներ չեն ձեռնարկվել:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, փորձելով պաշտպանել Սևան համայնքի սահմանադրական իրավունքը, 2002 թվականի մայիսի 30-ին կայացրել է N 927-Ն որոշումը, որի 33-րդ կետի համաձայն՝ «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է կազմակերպության կանոնադրական նպատակներին համապատասխան, իսկ կազմակերպության տնօրինմանը հանձնված՝ Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզի համայնքների վարչական տարածքներում ընդգրկված հողամասերի վարձակալության պայմանագրերով նախատեսված վարձավճարների տարեկան գումարի 30 տոկոսը մինչև յուրաքանչյուր բյուջետային տարփա ավարտը համամասնորեն փոխանցվում է այն համայնքների բյուջեներ, որոնց վարչական տարածքներում ընդգրկված են վարձակալության տրփած՝ նշված հողամասերը: Սակայն, ըստ համայնքի դեկավարի, մինչ օրս այդ գումարները չեն փոխանցվել համայնքի բյուջե:

Անդրադասնալով Սևանա լճի խնդիրներին՝ առանցքային է այն հարցը, թե ինչպիսի՝ նպատակ ենք մենք հետապնդում ազգային ծրագրով: Սևանա լիճն իր մեծությամբ աշխարհի երկրորդ բարձրադիր անուշահամ լիճն է: Հայաստանի Հանրապետությունում այն հանդիսանում է էժան ձկան, էներգիայի և քաղցրահամ ջրի միակ աղբյուրը: Նկատի ունենալով մեր հանրապետության աշխարհագրական դիրքը և տարածաշրջանում ընթացող իրադարձությունները՝ անհրաժեշտ է լինել հեռատես և սթափ գնահատել իրավիճակը, որ տնտեսական շրջափակման մշտական վտանգի առկայության պայմաններում վերջինիս իրականություն դառնալու դեպքում հավանական է վերոնշյալ ոլորտների մասնավոր ձեռնարկությունների գործունեության դադարումը և հետևապես՝ ապավինումը սեփական ուժերին, պաշարներին: Մինչդեռ, Սևանա լճի փաստացի դիտարկումը գուտ որպես տուրիզմի զարգացման միջոց և տուրիստական բիզնեսի մաս, չի բխում մեր հանրապետության շահերից և էկոլոգիական խնդիրներից: Ուստի, անհրաժեշտ է լինել առավելագույնս խստապահանջ Սևանա լճի վերաբերյալ օրենսդրության պահպանման տեսանկյունից՝ ելնելով Սևանա լճի բացառիկ տնտեսական և էկոլոգիական նշանակությունից:

Մտահոգիչ են նաև Երևան քաղաքին՝ որպես քաղաքաշինության հատուկ օբյեկտին վերաբերող հիմնախնդիրները: Խնդիրն առավել արդիական է, քանզի ՀՀ Ազգային ժողովում է գտնվում «Երևան քաղաք» մասին ՀՀ օրենքի նախագիծը և դրա հետ կապված մի շարք հայեցակարգեր: Մասնավորապես, խոսքը վերաբերում է վերջին տարիների քաղաքաշինության բուռն զարգացմանը, այդ «ձեռքբերումների» որակին և դրանց հասնելու ճանապարհին մարդու իրավունքների ուսնահարումներին: Բազմաթիվ են օրինակները, երբ կոպիտ կերպով խախտվում են քաղաքաշինական և էկոլոգիական գործող նորմերը, մարդու իրավունքները, հաճախ օրենքները և համապատասխան մարմինների որոշումները մնում են լոկ թղթի վրա, և նման պայմաններում առանձին քաղաքացիների իրավունքների պաշտպանության մասին խոսելն ավելորդ է դառնում: Դեռևս 2007թ. ընդունված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությամբ որպես ժողովրդի համար հիմնարար արժեք նշվում է ապրող և ապագա սերունդների կյանքի համար բարենպաստ շրջակա միջավայրի ձևավորումը: Մինչդեռ, ի՞նչ է տեղի ունենում իրականում: Որոշ փորձագետների կարծիքով խիստ շինարարության հետևանքով քաղաքը (հատկապես կենտրոնը) վեր է ածվել էկոլոգիական աղետի գոտու: Վերջին մի քանի տարիների ընթացքում Երևանը զրկվել է

ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների երկու երրորդից, ինչի արդյունքում քաղաքի օդային ավազանը կորցրել է ինքնամաքրման կարողությունը: Քաղաքն արագ քայլերով անապատանում է: Օգնի մակարդակը գետնամերձ հատվածում 2,2 անգամ գերազանցում է թույլատրելի նորման: Այս գնահատականը, որը տրվել է 38 էկոլոգիական կազմակերպությունների կողմից, իր արտացոլումն է ստացել նաև շրջակա միջավայրի պահպանության ծրագրի շրջանակներում հրապարակված ՍԱԿ-ի 2007թ. գեկույցում: Կենտրոնի տարերային կառուցումը բերել է տրանսպորտային հոսքերի կտրուկ աճին և կենտրոնի լրիվ անկմանը: Բացի այդ, Երևանում մեծացել են նաև սեյսմիկ ռիսկերը, որոնք փորձագետների կարծիքով պայմանավորված են ոչ միայն քաղաքի՝ սեյսմիկ ակտիվ գոտում գտնվելու հանգամանքով, այլև նրանով, որ շինարարությունը իրականացվում է սեյսմիկ նորմերի խախտմամբ, առանց ժամանակակից ինժեներակրաբանական քարտեզների: Սա հաստատել է նաև իր ելույթում ԳԱՍ Երկրաբանության ինստիտուտի երկրաէկոլոգիայի լաբորատորիայի վարիչ Ռոբերտ Յաղոյանը: Վերջինիս տվյալներով սեյսմիկ քարտեզները նախապատրաստելիս, որոնք պահանջվում են յուրաքանչյուր շենքի կառուցման ժամանակ, հաճախ որպես հիմք են ընդունվում 30 տարվա վաղեմության տվյալները կամ Էլ՝ հարեան շենքերի տվյալները: Իսկ եթե հաշվի առնենք, որ Երևան քաղաքի կենտրոնի տակ տեղակայված են քաղմաքիլ դատարկ տարածություններ, ապա կառուցողների անփությունը կարող է շատ քանի նստել այդ շենքերում ապրողների վրա: Այս մտավախությունները հիմնավորում է «Ռոսսիա» առևտրային կենտրոնի մոտ գտնվող տրանսպորտային հանգույցի շինարարության ընթացքում վերջերս տեղի ունեցած վլուգումը, որի արդյունքում անհրաժեշտություն եղավ փոխել նախագիծը: Ընդ որում, ՀՀ Ազգային ժողովում կայացած սեյսմիկ անվտանգության խնդիրների քննարկման ժամանակ այդպես էլ հնարավոր չդարձավ պարզել, թե որտե՞ղ են անհետանում այդ սեյսմիկ քարտեզները, քանի որ Սեյսմիկ անվտանգության ազգային ծառայության ներկայացուցիչ Ռաֆայել Քաղբասարյանը հայտարարեց, որ իրենց այդ քարտեզները չեն հասնում: Ինչպես իրավացիորեն նշեց այդ նույն քննարկման մասնակիցներից մեկը, մենք ապրում ենք վառողի տակառի վրա: Տեղին է հիշել 1988թ. աղետալի երկրաշարժը և դրա ողբալի հետևանքները հայ ժողովրդի և հանրապետության համար: Յոթերորդ տարին է, ինչ սեյսմիկ անվտանգության խնդիրները գտնվում են պետական մարմինների ուշադրության կենտրոնում, սակայն գործնականում դրական տեղաշարժեր չեն կատարվում. մի՞քև երկրաշարժի տիսուր և ցավալի հետևանքները դաս չեղան մեզ համար:

## ԲԱԺԻՆ 3.

### ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՆՐԱՅԻՆ ՍԱՐՍԻՆՆԵՐԻ

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2008 թվականին առավել առաջնային են մնում իրավապահպան մարմինների՝ ուստիկանության, դատախազության, դատարանների, ինչպես նաև արդարադատության նախարարության համակարգի մարմինների, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկների դեմ ուղղված բողոքները: Ավելին, մարտի 1-2-ն ընկած ժամանակահատվածում վերը նշված մարմինների դեմ ուղած բողոքների թիվն ավելացել է:

Հարկ է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում նկատվել է ոչ ցանկալի մի երևոյթ: Խոսքը որոշ անձանց աշխատանքից ազատելու դեպքերի մասին է, որոնք թեև իրականացվել են իրավական համապատասխան հիմնավորումներով, սակայն, քաղաքացիների համոզմամբ՝ այլ քաղաքական հայացքներ ունենալու շարժադրություն:

Մտահոգիչ է, որ նման դեպքեր արձանագրվել են ոչ միայն պետական մարմիններում, այլև մասնավոր հատվածում աշխատող անձանց շրջանում:

Գուցե օրենքի տարի տեսակետից վերը նշված ազատումները հիմնավոր են, ինչը վերջնականապես կարող է որոշվել դատարանի որոշումներով, սակայն մեզ համար մտահոգիչ է այն իրողությունը, որ օրենքը տարբերակված է գործում:

#### **Օրինակ 1**

Քաղաքացի Ա.Շ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքում հայտնել է հետևյալը.

2004թ. մայիսին մրցույթի արդյունքներով ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի Տարածքային քաղաքականության վերլուծության վարչության տեղական ինքնակառավարման բաժին՝ որպես գլխավոր մասնագետ: Ամուսնու հերթական դիվանագիտական երկարատև գործուղման պատճառով, իր դիմումի համաձայն, Ազգային ժողովի աշխատակազմի դեկավար Հ. Քոթանյանի հրամանով ազատվել է իր զբաղեցրած պաշտոնից մինչև երեք տարի ժամկետով՝ հետագայում համարժեք աշխատանքի վերականգնվելու պայմանով՝ համաձայն «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետի:

Հայաստան վերադառնալուց հետո 2008թ. հունիսին, գրավոր դիմել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի դեկավար Հ. Քոթանյանին՝ համարժեք աշխատանքի վերականգնելու խնդրանքով: Ի պատասխան իր դիմումների՝ Հ. Քոթանյանը և Ազգային

ժողովի կաղըերի կառավարման վարչության պետ Վ. Խաչատրյանը հորդորում են իրեն սպասել իրաժարվելով գրավոր պատասխանել իր դիմումին: Քաղաքացի Ա.Ը.-ն գտնում է, որ վերոնշյալ պաշտոնատար անձանց նման պահվածքը իհմք է տալիս կարծելու, որ իր դիմումը չի բավարարվելու. ինչը ըստ դիմումատուի, կապված է իր ամուսնու՝ Ռ.Խ.-ի անձի հետ, որը ուներ այլ քաղաքական հայացքներ:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

## Օրինակ 2

Ժամանակ Երևան թերթի լրագրող, «Գլածոր» համալսարանի նախկին աշխատակից Կարինե Հարությունյանի խնդրանքով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը ներկա է գտնվել դատարանում նրա հայցի քննարկմանը, որով նա վիճարկում է իրեն աշխատանքից ազատելու Համալսարանի ուկտոր Ժորա Զհանգիրյանի հրամանը, որով, ըստ իրեն, խախտվել են ՀՀ աշխատանքային և ՀՀ քաղաքացիական օրենսգրքերի մի շարք հոդվածներ: Կարինե Հարությունյանն իրեն աշխատանքից ազատելը կապում է իր քաղաքական հայացքների հետ:

Թե ի՞նչ վճիռ կկայացնի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանը, շուտով հայտնի կդառնա, սակայն անհանգստացնող է ստեղծված մքնողորտը, փաստ է, որ աշխատանքից ազատման նման դեպքերի թիվը աճում է ոչ միայն պետական մարմիններում և կազմակերպություններում, այլև մասնավոր և այլ ոչ պետական կազմակերպություններում:

Հարկ է անդրադառնալ նաև ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի շուրջ դեռևս 2007թ. նոյեմբերից սկիզբ առած գործընթացներին: Խնդիրն այն է, որ 2008թ. հոկտեմբերի 10-ին Վարչական դատարանը վճիռ է կայացրել ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ից ավելի քան 4 միլիարդ ՀՀ դրամ բռնագանձելու մասին: Նույն ամսին Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը Ընկերությունում գույքագրում է կատարել, և գույքը կալանքի տակ առել: Հոկտեմբերի 23-ին գործարանը փակվել է, դադարեցվել է արտադրությունը, քանի որ անհնար է համարվել նրա հետագա գործունեությունը:

Մեզ համար անընդունելի է միևնույն պայմաններով և միևնույն գործունեությամբ գրադարձ տնտեսվարողների նկատմամբ հանրային մարմինների կողմից ցուցաբերվող տարբերակված մոտեցումը: Գուցե ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ում խսկապես խախտումներ կան (ինչը չի բացառվում և մենք խորամուխ չենք լինում այդ հարցի մեջ), սակայն ցանկալի կլիներ, որ օրենքն իր ամբողջ խստությամբ տարածվեր հավասարապես բոլոր տնտեսվարողների նկատմամբ:

««Քջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի աշխատակիցների բողոքի և դրա կապակցությամբ Պաշտպանի ձեռնարկած միջոցառումների մասին ներկայացված է սույն գեկույցի՝ «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն» ենթագլխում:

### 3.1. ՀՀ ոստիկանություն

Ոստիկանության համակարգի դեմ 2008 թվականին ստացվել է 187 դիմում-բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 137
- ներկայացվել են դիմողին իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 15
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 10
- չեն ընդունվել քննարկման՝ 25
- չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝ 0
- ուսումնասիրման ընթացքում են՝ 0

Ոստիկանության դեմ ուղղված բողոքները հիմնականում վերաբերել են քաղաքացիներին ՀՀ ոստիկանության տարբեր բաժիններ անհիմն բերման ենթարկելուն, հանցագործությունների մասին հաղորդումներին քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգով ընթացք չտալուն, որպես մեղադրյալ ներգրավված անձանցից բռնությամբ և սպառնալիքի ազդեցությամբ ցուցմունքներ կորզելուն, քաղաքացու օրինական պահանջով անձնագիր չտրամադրելուն և նման այլ հանգամանքներին:

Նախորդ տարիների համեմատ նկատվել է ՀՀ ոստիկանության համակարգի դեմ ուղղված դիմում-բողոքների թվի զգալի աճ: Ընդ որում, ստացված բողոքները եղել են ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևով: Ոստիկանության դեմ ուղղված բանավոր դիմումների մեծամասնությունը պայմանավորված է քաղաքացիների մոտ ձևավորված վախի մթնոլորտով: Շատ քաղաքացիներ, ներկայացնելով Ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց նկատմամբ կիրառված բռնության և խոշտանգումների փաստեր, խուսափել են դրանք ներկայացնել գրավոր ձևով, իսկ երեմն էլ՝ հրաժարվել տալ իրենց անուն-ազգանունները՝ պատճառաբանելով, որ դա կարող է ավելի վատքարացնել իրենց վիճակը: Ասվածը հասարակության մեջ գոյություն ունեցող անառողջ մթնոլորտի առկայության վկայությունն է, որն առաջանում է Ոստիկանության աշխատակիցների՝ շատ դեպքերում ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով:

Ստացված բողոքների քննարկմամբ ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնապես արձանագրվել են դեպքեր, երբ հանցագործության վերաբերյալ տրված հաղորդումներով Ոստիկանությունում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ

հողվածով սահմանված կարգով որոշում ընդունելու, որոշման պատճեն դիմումատուին տրամադրելու, տվյալ որոշումը բողոքարկելու իրավունքը պարզաբանելու փոխարեն, նյութերի վերջնական ընթացքը լուծվել է տեղեկանքի կամ գեկուցագրի կազմումով, որի մասին դիմումատուին հաճախ չի էլ հայտնվել: Այդ մասին նշվել էր նաև Պաշտպանի նախորդ տարիների գեկույցներում: Չնայած տեղեկանքով նյութերի ընթացքը լուծելու պրակտիկան հիմնականում վերացվել է, այնուամենայնիվ, նման դեպքերի վերաբերյալ դիմում-բողոքները ստացվել են նաև 2008թ. ընթացքում: Նման դիմումների քննարկման ընթացքում Պաշտպանի գրություններին ի պատասխան՝ ՀՀ ոստիկանության բաժինների դեկավարների կողմից հղում է կատարվել ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/354 հրամանին, ըստ որի՝ որոշ հաղորդումներ, պատահարներ գեկուցվում են բաժանմունքի պետին, այնուհետև գրանցվում հերթապահ մասի թիվ 2-րդ ստուգված տեղեկությունների հաշվառման մատյանում:

Նշենք, որ ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի վերը նշված հրամանը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներից: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Պաշտպանն առաջարկել է ՀՀ ոստիկանապետին՝ քննարկել ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/354 հրամանի գործողությունը դադարեցնելու նպատակահարմարության հարցը: Ի պատասխան ստացվել է հետևյալ գրությունը.

«Երևան քաղաքի վարչությանը, մարզային վարչություններին և նրանց ենթակա բաժիններին ցուցում է տրվել հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ընթացքում դեկավարվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի պահանջներով: Սկզբունքորեն ընդունելով համատեղ հրամանի գործողությունը դադարեցնելու Պաշտպանի առաջարկությունը՝ միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ կառավարության 29.11.2007թ. «ՀՀ կառավարության 2008թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 1440-Ն որոշման 187-րդ կետով նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումից հետո երկամյա ժամկետում ընդունել «Հանցագործությունների և այլ իրավախախտումների, պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և ընթացք տալու և հանցագործությունների միասնական հաշվառման կարգ»:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2008 թվականի ընթացքում Պաշտպանին են հասցեագրվել նաև այնպիսի դիմում-բողոքներ, որոնք վերաբերում են անձանց Ոստիկանության բաժիններում անհիմն պահելուն, այդ ընթացքում Ոստիկանության աշխատակիցների կողմից դրսնորված դաժան, անմարդկային վերաբերմունքին ու խոշտանգումներին:

Պաշտպանի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է նաև, որ Ոստիկանության աշխատակիցները կատարել են գործողություններ, որոնք խախտում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ձերբակալվածներին պահելու վայրերում, բացի այն դեպքերից, երբ ձերբակալվածներին պահելու վայրից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով։ Մինչդեռ, ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի, ինչպես նաև ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձորի բաժնի՝ բերման Ենթարկվածների և ձերբակալված անձանց հաշվառման մատյանների ուսումնասիրությունից պարզվել է, որ բազմաթիվ են դեպքերը, երբ կալանավորված անձինք պահվել են ձերբակալվածներին պահելու վայրերում՝ օրենքով նախատեսված ժամկետների խախտումներով՝ ընդհուպ մինչև 9 օր։

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ ոստիկանության փոխհարաբերությունների դրական տեղաշարժ կարելի է դիտարկել այն հանգամանքը, որ 2008թ. երկրորդ կիսամյակում Պաշտպանի կողմից ՀՀ ոստիկանության պետին հասցեազրված գրությունների հիման վրա կատարվել են ծառայողական քննություններ, ինչը չի փաստվել նախորդ տարիներին։ Ըստ որում, կատարված ծառայողական քննության արդյունքներով եզրակացության պատճենն ուղարկվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին։ Նման գրությունների թիվն արդեն հասնում է մոտ մեկ տասնյակի։

Ստորև ներկայացվում են ՀՀ ոստիկանության համակարգի դեմ Պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքներից առավել ուշագրավները։

## Օրինակ 1

Քաղաքացի Ս.Ա.-ն Պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 2007թ. մարտի 7-ին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության աշխատակիցների կողմից ձերբակալվել է իր քրոջ որդին՝ Հ.Ի.-ն, որն այդ պահին գտնվել է սեփականության իրավունքով դիմումատուին պատկանող «BMW-X5» մակնիշի ավտոմեքենայի մեջ։ Հ.Ի.-ին կալանավորելուց հետո նշված ավտոմեքենան վարույթն իրականացնող մարմնի կողմից առգրավվել է և ի պահ հանձնվել ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությանը։ Ըստ դիմումատուի՝ շուրջ վեց ամիս կատարված նախաքննությունից հետո պարզվել է, որ Շ.Հ.-ի

սպանության փաստով Հ.Ի.-ին առաջադրված մեղադրանքը չի հիմնավորվել և նրա նկատմամբ քրեական գործի վարույթը կարճվել է, իսկ քրեական հետապնդումը՝ դադարեցվել:

Ս.Ա.-ի պնդմամբ, ինքը բազմիցս դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն, այդ թվում՝ նախարձնությունն իրականացնող ՀԿԳ քննիչ Հ.Մարդարյանին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող մեքենան ետ վերադարձնելու խնդրանքով, քանի որ, այն քրեական գործի շրջանակներում իրեղեն ապացույց չի ճանաչվել, իսկ հետագայում էլ նշված քրեական գործի վարույթը Հ.Ի.-ի նկատմամբ կարճվել է, սակայն որևէ մեկից հստակ պատասխան չի ստացել, և մեքենան իրեն չի վերադարձվել:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը 14.02.2008թ. գրությամբ հայտնել էր, որ ուսումնասիրվել է քրեական գործը և համապատասխան բովանդակությամբ գրություն է ուղարկվել քաղաքացի Ս.Ա.-ին ավտոմեքենան վերադարձնելու մասին:

Ծուրջ 1,5 ամիս անց քաղաքացի Ս.Ա.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրել է լրացուցիչ դիմում և հայտնել, որ մինչև օրս, չնայած ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան գրության առկայությանը, այնուամենայնիվ, ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունը խոչընդոտներ է ստեղծում և մեքենան իրեն չի վերադարձնում: Ավելին, ըստ դիմումատուի, քացի գլխավոր դատախազության գրությունից, նույնարովանդակ գրություն է ուղարկվել նաև ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության կողմից, քանի որ Շ.Հ.-ի սպանության փաստի առթիվ հարուցված քրեական գործը հետագա նախարձնությունն իրականացնելու համար ուղարկվել է ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչություն:

Դիմումում ներկայացված փաստերի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունները հիմք են տալիս հիմնավորելու, որ ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության աշխատակիցների գործողությունների (անգործության) հետևանքով խախտվել են քաղաքացի Ս.Ա.-ի իրավունքները: Ավելին, նշված գործողությունները, ըստ էության, կարող են որակվել որպես քրեորեն հետապնդելի արարք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 183 հոդվածի համաձայն, ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալն առանց հափշտակելու նպատակի:

Նկատի ունենալով, որ ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության աշխատակցի կամայական վերաբերմունքի հետևանքով միտումնավոր կերպով չեն կատարվել ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության օրինական պահանջները՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է հանձնարարել անհապաղ կերպով քաղաքացուն վերադարձնել սեփականության իրավունքով նրան պատկանող ավտոմեքենան, ձեռնարկել միջոցներ

իրավախախտ պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Արդյունքում քաղաքացուն վերադարձվել է ավտոմեքենան, իսկ պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ Ոստիկանությունը բավարարվել է ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր պետի աշխատանքից ազատվելու հանգամանքով:

## Օրինակ 2

Քաղաքացի Ա.Գ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 2008թ. փետրվարի 28-ին ժամը 10-ի սահմաններում Երևան քաղաքի Սայաթ-Նովա փողոցում, ՀՀ ճանապարհային ոստիկանության աշխատակիցներն իր մեքենան կանգնեցնելուց հետո այն տարել են տուգանային իրապարակ:

Դիմումատուի պնդմամբ ավտոմեքենան տուգանային իրապարակ են տարել առանց վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրություն կազմելու: Ընդ որում, ավտոմեքենայի մեջ եղել է իր դրամապանակը, որտեղ առկա է եղել գումար: Դիմումի կապակցությամբ ՀՀ ճանապարհային ոստիկանության առաջին գումարտակի իրամանատարին հասցեազրած ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ հայտնվել է, որ քաղաքացի Ա.Գ.-ի կողմից վարած, Ա.Գ.-ի անվամբ հաշվառված ավտոմեքենան բերման է ենթարկվել արգելված վայրում կայանելու և Ոստիկանության կողմից նախազգուշացնելուց հետո իրավախախտումը չդադարեցնելու պատճառով: Ինչ վերաբերում է Ա.Գ.-ի դրամապանակը ավտոմեքենայում թողնելուն, ապա այդ կապակցությամբ կատարվում է ծառայողական քննություն:

Նույն գրությամբ հայտնվել է նաև, որ ավտոմեքենան պահպանվող հատուկ տարածքից բաց կրողնվի դրա նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:

Մեկ այլ դիմումով Ա.Գ.-ն հայտնել է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ ՀՀ ճանապարհային ոստիկանության աշխատակիցների կողմից 15.04.2008թ. վերադարձվել է իր ավտոմեքենան:

Բողոքներ են ուղղված եղել նաև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության, ինչպես նաև անձնագրային բաժինների ու դրանց աշխատակիցների գործողությունների (անգործության) դեմ: Դրանց մի մասը Պաշտպանի միջամտությամբ դրական լուծում են ստացել:

## **Օրինակ 1**

Երևան քաղաքի 16 թաղ. 172. բնակիչ Է.Մ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակարանի հասցեում հաշվառելու խնդրով դիմել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի անձնագրային բաժին, սակայն մերժում է ստացել:

Պաշտպանի գրություններից հետո բողոքում նշված հարցերի կապակցությամբ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի պետը թիվ 42-899 գրությամբ հայտնել է, որ Երևան քաղաքի 16 թաղ. 172.-ի բնակիչ Է.Մ.-ն հաշվառվել է նշված հասցեում:

## **Օրինակ 2**

Գեղարքունիքի մարզի բնակիչ Գ.Հ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 2008թ.-ի փետրվարի 15-ին իր դուստրը ստացել է ՀՀ քաղաքացու անձնագիր: Սակայն Սևանի անձնագրային բաժանմունքում և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում հրաժարվում են ելքի բույլտվություն տրամադրել՝ պատճառաբանելով, որ պահանջվում է իր ամուսնու համաձայնությունը, ով, սակայն, գտնվում է առողջական ծանր վիճակում և նոտարական կարգով համաձայնություն տալու հնարավորություն չունի:

Պաշտպանի միջամտության արդյունքում 23.09.2008թ. դիմումատուի դուստրը հրավիրվել է ՀՀ ոստիկանության ԱՎ վարչություն՝ ՀՀ քաղաքացու անձնագրում օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշում կատարելու համար:

Պաշտպանի ուշադրության ներքո գտնվող 2008թ. հասարակական հնչեղություն ունեցող գործերից է նաև «Օղմոկլասնիկի» սրճարանում տեղի ունեցած ծեծկոտուքը, որի հետևանքով սեպտեմբերի 23-ին Ա.Բ.-ին անգիտակից վիճակով տեղափոխել են հիվանդանոց, որտեղ նա, գիտակցության չգալով՝ սեպտեմբերի 29-ին մահացել է:

Սեպտեմբերի 23-ին ՀՀ ոստիկանության բաժին մեղայականով ներկայացած քաղաքացին հայտնել է, որ Ա. Բ.-ին ծեծի է ենթարկել ինքը, որի պատճառով էլ նա մահացել է: Չնայած այս հանգամանքին, այնուամենայնիվ, հասարակության մեջ կան կարծիքներ, որ նման միջադեպի պատվիրատուններն այլ անձինք են՝ երբեմն նշելով կոնկրետ անուններ:

Հասարակության մեջ գոյություն ունեցող նման կասկածները փարատելու համար անհրաժեշտ է հանգամանալից նախաքննության իրականացման միջոցով պարզել և հայտնաբերել պատվիրատուին(ներին), իսկ այդպիսիք գոյություն չունենալու դեպքում՝ ներկայացնել դրանց առկայության վերաբերյալ կարծիքները հերքող համոզիչ ու հիմնավոր փաստարկներ:

Առավել մտահոգիչ ենք համարում 2008թ. մարտի 1-2-ը տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից դրսևրած ոչ իրավաչափ վարքագիծը, որը զուգորդվել է բռնություններով, խոշտանգումներով, գանգվածային ձերբակալումներով և այլն:

Այդ մասին **Պաշտպանը** հանդես է եկել Արտահերթ իրավարակային գեկույցով, որում արձարձվել են նաև մի շարք սկզբունքային հարցեր, որոնց պատասխանները ակնկալվել է ստանալ պատկան մարմիններից:

**Մարտի 1-2-ին Երևանում տեղի ունեցած դեպքերի առնչությամբ քաղաքացիների դիմում-բողոքների վերաբերյալ.**

2008թ. մարտի 1-2-ը Երևանում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ Պաշտպանը ստացել է բազմաթիվ դիմում-բողոքներ, որոնք վերաբերվել են քաղաքական հետապնդումներին, անհիմ մեղադրանքներ առաջադրելուն, անձանց ՀՀ ոստիկանության բաժիններ բերման ենթարկելուն, գանգվածային ձերբակալումներին և պաշտպան չտրամադրելուն:

Մարտի 1-ից հետո ընդդիմության ակտիվիստները կազմակերպել են ոչ գանգվածային միջոցառումներ, որոնք շուրջ 6 ամիս անցկացվել են Հյուսիսային պողոտայում: Կազմակերպվող միջոցառումներին ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից խոչընդոտելու փաստերի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ստացվել են դիմում-բողոքներ, բացի այդ, Պաշտպանի ներկայացուցիչների արագ արձագանքման արդյունքում կազմվել են համապատասխան տեղեկանքներ: Բազմիցս ՀՀ ոստիկանության ծառայողների և ընդդիմության ակտիվիստների միջև առաջացած վեճն ավարտվել է անցանկալի հետևանքներով՝ ծեծ, քաշքանչ, փոխադարձ հայհոյանքներ և վիրավորանքներ, անձանց Ոստիկանության բաժիններ բերման ենթարկել և այլն: Նման դեպքերի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներին կցվել են նաև տեսասկավառակներ, որոնք փաստում են Ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների մասին:

Այդ դեպքերով տարածված պրակտիկա է դարձել «քաղաքական զբոսանք» կազմակերպած անձանց Ոստիկանության բաժին բերման ենթարկելու «փաստաթղթավորումը» (խոսքը վերաբերում է անձանց ինքնությունը պարզելուն, ինչը Ոստիկանության աշխատակիցները կոչում են փաստաթղթավորում):

Մեզ համար անհասկանալի է ՀՀ ոստիկանության այն գործելառմը, որ ընդդիմության ակտիվիստի ինքնությունը պարզելուց զատ վերցնում են մատնահետքեր, ստիպում են գրել բացատրություններ և մի քանի ժամ պահելուց հետո միայն՝ ազատ արձակում: Առավել

ուշագրավ է, որ նման գործողություններ կատարելու ընթացքում անձանց որևէ կարգավիճակ չի տրվում:

Վերը շարադրված ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ Պաշտպանը հանդես է եկել հայտարարություններով:

Մարտի 1-ի իրադարձությունների կապակցությամբ հարուցված քրեական գործերով քրեադատավարական օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ են ներկայացվել նաև մի շարք մեղադրյալների փաստաբանների կողմից, որոնք հայտնել են, որ իրենց պաշտպանյալներին առաջադրված մեղադրանքների հիմքում դրված են բացառապես Ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները, որոնց մի մասը հանդես են եկել որպես վկա կամ տուժող: Պաշտպանի աշխատակազմում իրականացվող մոնիթորինգի արդյունքները նույնպես փաստում են այդ հանգամանքը, մինչդեռ, չպետք է մոռանալ, որ քրեական գործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության իրականացման համար անհրաժեշտ էր մեղադրանքի հիմքում դնել նաև ականատես վկանների և այլ անձանց բացատրություններն ու ցուցմունքները, այն պարզ պատճառով, որ տվյալ պարագայում հասարակությունը և Ոստիկանության աշխատակիցները հանդիսանում են առանձին կողմեր, հետևաբար, պարտադիր պայման է արժանահավատ ապացույց դիտարկել ինչպես Ոստիկանության, այնպես էլ հասարակության մյուս անդամների կողմից ներկայացված փաստերն ու ապացույցները:

Հաջորդ նկատառումը վերաբերում է հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումներին: Բանն այն է, որ դեռևս 2008 թվականի սեպտեմբեր ամսից մասովի մի շարք իրապարակումներում ներկայացվել են ընդդիմության որոշ ներկայացուցիչների հեռախոսային խոսակցությունների վերծանումները (օրենքով սահմանված կարգով ձեռք են բերվել դատարանի որշմամբ) այն դեպքում, երբ նախաքննությունը դեռևս չէր ավարտվել և քրեական գործը դատարան չէր ուղարկվել: Նմանատիպ դեպքի օրինակ կարող են հանդիսանալ նախկին արտգործնախարար, L. Տեր-Պետրոսյանի նախընտրական շտարի դեկանը Ալեքսանդր Արզումանյանի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումները:

Վերոշարադրյալի հաշվառմամբ վարույթն իրականացնող մարմինը պետք է կարողանա պարզել, թե ու՞մ կողմից, ի՞նչ միջոցներով ու եղանակներով հասարակության մեծ գանգվածի համար հասանելի են դարձել գաղտնիք պարունակող այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումները:

Ստորև ներկայացվում են մարտի 1-2-ի դեպքերի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքներից առավել ուշագրավները.

## **Օրինակ 1**

Քաղաքացի Ս.Ե.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղած դիմումով հայտնել է, որ իր եղայլը՝ Ս.Ե.-ն, 2008թ. մարտի 1-ին՝ ժամը 10-ին, ձերբակալվել է Հյուսիսային պողոտայի տարածքում և անմիջապես տեղափոխվել Երևան քաղաքի Կենտրոն համայնքի ոստիկանության բաժին: Այնուհետև, նույն օրը տեղափոխվել է Երևան քաղաքի Մալաթիա-Մերաստիա համայնքի ոստիկանության բաժին, որտեղ ապօրինաբար պահվել է մինչև մարտի 5-ը: Նրա նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316.2 և 225 հոդվածների հատկանիշներով, և կայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշում:

Ս.Ե-ի դիմումի կապակցությամբ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետը գրությամբ Պաշտպանին հայտնել է, որ 01.03.2008թ. Երևան քաղաքի Ազատության հրապարակում Ոստիկանության աշխատակիցներին դիմադրություն ցույց տալու համար Ոստիկանության կենտրոնական բաժնից ոստիկանության Մալաթիայի բաժին ժամը 11.00-ին բերման է ենթարկվել քաղաքացի Ս.Ե.-ն, ով նախապատրաստված նյութերի հետ միասին նույն օրը ժամը 13.00-ի սահմաններում տարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որտեղ վերջինս հարցաքննվել է և բաց թողնվել:

Նույն գրությամբ հայտնել է նաև, որ 02.03.2008թ. քաղաքացի Ս.Ե.-ն ձերբակալվել է ՀՀ քրեական օրենսգրքի 225<sup>1</sup> հոդվածի 2-րդ մասի և 316 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով արարք կատարելու համար, իսկ 05.03.2008թ. նրա խափանման միջոց է ընտրվել կալանքը: 11.04.2008թ. Ս.Ե.-ի գործը 316 հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքով ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան:

Վերջին հանգամանքը հաշվի առնելով՝ բողոքի քննարկումը դադարեցվել է:

## **Օրինակ 2**

Քաղաքացի Ա.Օ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումով հայտնել է, որ 2008թ.-ի մարտի 1-ին Երևան քաղաքի Աբովյան փողոցի վրա գտնվող «Սիլ Պլազա» շենքի շրջակայքից բերման է ենթարկվել Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքների ոստիկանության բաժին:

Դիմումատուն նշել է, որ Քանաքեռ-Զեյթուն ոստիկանության բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ Ա. Աբրահամյանը Ոստիկանության բաժնում հայինել է իրեն, թույլ չի տվել զանգահարել ծնողներին, ինչպես նաև գրկել փաստաբան ունենալու հնարավորությունից: Ա.Օ.-ն հայտնել է նաև, որ նույն ժամին բերման ենթարկված

քաղաքացիների «քերման ենթարկելու մասին» արձանագրությունները Ա. Աբրահամյանի անմիջական հրահանգով կազմվել են օրվա տարբեր ժամերին:

Ըստ դիմումատուի՝ ոստիկանության քրեական հետախուզության բաժանմունքի պետն իր բաժնի աշխատակիցներին ստիպել է, որ «քերման ենթարկելու մասին» արձանագրություններում «ոստիկանությանը դիմադրելու կասկածանքով» արտահայտության փոխարեն գրառեն «ոստիկանությանը դիմադրելու համար» արտահայտությունը:

Ա.Օ.-ի դիմումի կապակցությամբ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետը գրությամբ հայտնել է, որ 01.03.2008թ. Երևան քաղաքի Ազատության հրապարակում ոստիկանության աշխատակիցներին դիմադրություն ցույց տալու համար ժամը 08.50-ի սահմաններում ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին քերման է ենթարկվել քաղաքացի Ա.Օ.-ն: Այդ փաստով նախապատրաստվել են նյութեր, որից հետո նա ժամը 11.30-ին տարվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որտեղ էլ հարցաքննվել և բաց է քողնվել:

Ինչ վերաբերում է Ա.Օ.-ի նկատմամբ ոստիկանության Քանաքեռ-Զեյթուն բաժնում, իբր, թույլ տրված գործողություններին, ապա նույն գրությամբ տեղեկացվել է, որ այդ հանգամանքը չի հիմնավորվել:

### Օրինակ 3

Քաղաքացի Ն.Չ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումով հայտնել է, որ մարտի 2-ին ժամը 14-ի սահմաններում Երկարուղային կայարանի մոտակայքում մոտեցել են 4 ոստիկաններ և հարվածելով ոտքերին՝ նստեցրել ոստիկանության մեքենան և տեղափոխել Երևան քաղաքի Կենտրոն համայնքի ոստիկանության բաժանմունք:

Ն.Չ.-ի դիմումի կապակցությամբ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետը գրությամբ հայտնել է, որ 02.03.2008թ. ոստիկանության Կենտրոնական բաժին կամ այլ բաժին քերման ենթարկված անձանց մատյաններում քաղաքացի Ն.Չ.-ն գրանցված չէ:

### Օրինակ 4

Քաղաքացի Թ.Մ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումով հայտնել է, որ 2008թ.-ի մարտի 26-ին՝ ժամը 18:15-ի սահմաններում, Հյուսիսային պողոտայում գրոսնելու ժամանակ իրեն են մոտեցել ոստիկանության աշխատակիցներ և նստեցրել «Ուազ» մակնիշի ոստիկանական մեքենա և տեղափոխել Երևան քաղաքի ոստիկանության Կենտրոնի բաժին, ապա մոտ երեք ժամ պահելուց հետո տեղափոխել են ոստիկանության Նոր Նորքի բաժին և ազատ արձակել 27.03.2008թ. ժամը 01:50-ին:

Թ.Մ.-ի դիմումի կապակցությամբ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետը գրությամբ հայտնել է, որ վերջինս 26.03.2008թ. ժամը 18:30-ին Երևանի Հյուսիսային պողոտայից հրավիրվել է ոստիկանության Կենտրոնական բաժին, այնուհետև, քաղաքացու կողմից բանավոր հայտնած բնակության վայրը հաշվի առնելով, նրան տեղափոխել են ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժին, որտեղ անցկացվել է զրույց՝ պարզելու նրա անձը և ունեցած դժգոհության կամ բողոքի պատճառը, առաջարկվել է ցանկության դեպքում ներկայացնել համապատասխան դիմում: Գրությամբ հայտնվել է նաև, որ նույն օրը, ժամը 20:15-ի սահմաններում Թ. Մ. հեռացել է ոստիկանության Նոր Նորքի բաժնից:

Թ.Մ.-ի նկատմամբ որևէ վարչական վարույթ կազմված չէ, անհրաժեշտություն չի եղել նաև այլ փաստաբղեր ձևակերպել, ինչպես նաև վերջինիս կողմից որևէ դիմում կամ հաղորդում ոստիկանության մարմիններ չի ներկայացվել:

Բողոքի քննարկումը դադարեցվել է:

### Օրինակ 5

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Զարուիի Փոստանջյանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումով հայտնել է, որ 2008թ. օգոստոսի 25-ին՝ առավոտյան ժամը 10:30-ից 12:00-ի միջակայքում, Երևան քաղաքի Հյուսիսային պողոտայում խաղաղ նստացույցի մասնակիցների վրա են հարձակվել մոտ 100 հոգի, մեկ խումբը քաղաքացիական հագուստով, իսկ մյուսը՝ ոստիկանության համագեստով: Նրանք պոկել և պատռել են բողոքի ակցիայի մասնակիցներին պատկանող բոլոր ստենդները, պաստառները՝ իրենց հետ տանելով փչացրած ստենդների և պաստառների մնացորդները: Վերը նշյալ անձինք նաև իրենց հետ են տարել Հյուսիսային պողոտայում իրականացվող ստորագրահավաքի թղթերը և սպառնացել են ստորագրահավաքի պատասխանատու Ռ.Կ.-ին: Դիմումատուն հայտնել է նաև, որ Հյուսիսային պողոտայում գտնվող ոստիկանները ո՛չ իրեն, ո՛չ էլ նստացույցի մասնակիցներին չեն տրամադրել իրենց կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ որևէ իրավական հիմք: Խաղաղ նստացույցի մասնակիցները իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից իրենց և իրենց պատկանող գույքի նկատմամբ իրականացվող վարչական կամ քրեադատավարական գործառույթների իրականացման մասին չեն նախազգուշացվել և չեն իրազեկվել: Այդպիսով, ըստ դիմումատուի՝ խախտվել են ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական Կոնվենցիայով նախատեսված՝ խաղաղ ցույցերին մասնակցելու, տեղեկատվություն ստանալու և տարածելու մարդու իրավունքը:

Այս կապակցությամբ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան, ՀՀ ոստիկանության 10/3-2-2434 գրությամբ հայտնվել է, որ Հյուսիսային պողոտայում՝ 25.08.2008թ. առավոտյան, Ոստիկանության ծառայողների կողմից

քաղաքացիների դիմումների հիման վրա իրականացվել է հասարակական կարգի պահպանությանն ուղղված միջոցառում: Հյուսիսային պողոտայի 6-րդ շենքի բնակիչները և նույն հասցեում գործող ընկերությունների տնօրենները համատեղ դիմումներ են հասցեագրել ՀՀ Նախագահին, վարչապետին, գլխավոր դատախազին, ոստիկանության պետին և մարդու իրավունքների պաշտպանին՝ բողոքելով շենքի դիմաց պարբերաբար, այդ թվում՝ գիշերային ժամերին կազմակերպվող նստացույցերի և հանրահավաքների պատճառով առկա մշտական աղմուկից և հակասանիտարական վիճակից: Ոստիկանները վերականգնել են հասարակական կարգը և նշված հատվածում հաստատել կարգ ու կանոն:

Նշվել է նաև, որ քաղաքացիներին ծեծի ենթարկելու մասին տեղեկությունը ստուգմամբ չի հիմնավորվել:

## Օրինակ 6

Քաղաքացի Լևոն Չուրաբյանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 2008թ. հոկտեմբերի 2-ին՝ ժամը 20:30-ին, մի շաբթ քաղաքացիներ Հյուսիսային պողոտայում ենթարկվել են ծեծի: Նրանց հայհոյել են և խփելով ու հրելով փորձել հեռացնել տարածքից, որի արդյունքում մի շաբթ քաղաքացիներ ստացել են մարմնական վնասվածքներ: Դիմումատուն հայտնել է նաև, որ ոստիկաններից շատերը հարբած էին:

Նշվածի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետը գրությամբ հայտնել է, որ 2008թ. հոկտեմբերի 2-ին՝ ժամը 17:00-22:30 ընկած ժամանակահատվածում, ՊՊԾ ոստիկանության գնդի վերակարգերը ներգրավվել են ծառայության՝ մայրաքաղաքի Ազատության հրապարակի շրջակայքում հասարակական կարգի պահպանման և անվտանգության պահովման նպատակով: Մի շաբթ քաղաքացիներ, այդ թվում նաև գրոսաշրջիկներ, պարբերաբար մոտեցել են ոստիկաններին և պահանջել, որպեսզի ապահովի իրենց ազատ տեղաշարժը պողոտայով:

Գրությամբ հայտնվել է նաև, որ ոստիկանները մոտեցել են հավաքվածներին և ներկայացրել օրինական պահանջներ, սակայն վերջիններն անվայել և անպատիվ խոսքեր են ուղղել Ոստիկանության և այլ մարմինների բարձաստիճան պաշտոնատար անձանց հասցեին, որոշներն անգամ ցեխաջրով լի շշեր են նետել Ոստիկանության ծառայողների ուղղությամբ՝ տալով հայհոյանքներ, ստեղծելով խառնաշփոթ և անկառավարելի իրավիճակ: Ոստիկանության ծառայողները, չենթարկվելով սաղրանքներին, կարողացել են համախմբված, առանց ուժ գործադրելու, ապահովել հասարակական կարգը և քաղաքացիների երթևեկությունը պողոտայով:

Դիմումում նշված այն փաստի վերաբերյալ, որ ոստիկաններն ուժ կիրառելով ժողովրդին իջեցրել են դեպի Ազատության հրապարակ, գրությամբ հայտնվել է, որ նշված հրապարակը գտնվում է Հյուսիսային պողոտայի վերնամասի դիմացի հատվածում և շինարարական աշխատանքների կապակցությամբ ամբողջությամբ ցանկապատված է եղել: Իսկ այն հանգամանքը, որ ոստիկանության ծառայողներն իբրև հարբած վիճակում են եղել և անօրինական գործողություններ ծավալել, այդ թվում՝ բռնություն և ուժ են գործադրել քաղաքացիների նկատմամբ, գրությամբ հայտնվել է, որ իրականությանը չի համապատասխանում:

**Հատկանշական է, որ վերը նկարագրված բողոքների հիմնական մասը, ինչպես տեսնում ենք, վերաբերում է ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումներին: Սակայն հետագայում գրեթե անհնար է դառնում Պաշտպանի կողմից խախտման փաստի առկայության հիմնավորումը կամ ապացուցումը, քանի որ պետական իրավասու պաշտոնատար անձը հերքում է այդ հանգամանքը:**

### 3.2. ՀՀ դատախազություն

ՀՀ դատախազության (ներառյալ տարածքային և զինվորական) աշխատակիցների գործողությունների (անգործության) և որոշումների դեմ հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է 42 դիմում-բողոք, որոնց ուսումնասիրության արդյունքում կայացվել են հետևյալ որոշումները՝

- ընդունվել են քննարկման՝ 26
- ներկայացվել են դիմողին իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 4
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 3
- չեն ընդունվել քննարկման՝ 9
- չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝ 0
- ուսումնասիրման ընթացքում են՝ 0

Այս ոլորտին վերաբերող ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների քննարկումը վկայում է, որ դրանց որոշ մասը վերաբերում է դատախազության աշխատակիցների կողմից քրեական գործերի քննության ընթացքում հսկողություն իրականացնելու իրենց սահմանադրական գործառույթը թերի կատարելու, նախարարներյան մարմինների կողմից թույլ տրված խախտումները չվերացնելու հետևանքով մարդու իրավունքների խախտումներին: Քիչ չեն դեպերը, երբ քաղաքացիները Պաշտպանից խնդրում

Են հսկողություն իրականացնել քրեական գործի նախաքննության կամ դատական քննության օրինականության նկատմամբ, ինչպես նաև անձամբ իրականացնել տարրեր դատավարական գործողություններ, մինչդեռ նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնելը դատախազի բացառիկ իրավասությունն է:

## Օրինակ 1

Ա.Տ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ իր տղամ՝ Ա.-ն /ծնվ. 1980թ. հոկտեմբերի 15-ին/, 20.02.1995թ. ստացել է Ո.Դ. քաղաքացիություն և նրա կողմից ժամկետային զինվորական ծառայության 2004թ. աշնանային զորակոչից խուսափելու վաստով ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 49200205 քրեական գործը:

Մեր կողմից կատարված ուսումնասիրության ընթացքում ՀՀ ԱՎ վարչության պետը գրությամբ հայտնել է, որ Ա.-ն հանդիսանում է Ո.Դ., այլ ոչ ՀՀ քաղաքացի, որին հետևեց այն, որ 15.10.1980թ ծնված Ա.-ի կողմից ժամկետային զինվորական ծառայության 2004թ. աշնանային զորակոչից խուսափելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության ԶԳՎ Կոտայքի մարզի քննչական բաժնում թիվ 49200205 քր. գործով 16.08.08թ. որոշում կայացվեց քրեական գործով վարույթը կարճելու և Ա.-ի նկատմամբ հարուցած քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության պատճառով:

Վերոգրյալից ակնհայտ է ՀՀ դատախազության և ոստիկանության համակարգի որոշ պաշտոնատար անձանց կողմից իրենց գործառույթների ոչ պատշաճ իրականացման հանգամանքը: ՀՀ ոստիկանության ԶԳՎ Կոտայքի մարզի քննչական բաժնում թիվ 49200205 քրեական գործով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, ինչպես նաև նրա վերադասները, դեռևս 2004թ. հարուցված քրեական գործով, 4 տարի անց և Պաշտպանի գրություններից հետո միայն (առ այն, որ 1980թ. հոկտեմբերի 15-ին ծնված Ա.-ն հանդիսանում է Ո.Դ. քաղաքացի) քրեական գործի վերջնական ընթացքը լուծելու համար նախաքննության մարմնին հանձնարարում են ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ճշտել Ա.-ի և նրա ծնողների՝ ՀՀ քաղաքացիներ հանդիսանալու հանգամանքը, ինչպես նաև ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան հյուպատոսական բաժնի միջոցով պարզել, թե նա կոնկրետ ե՞րբ և ի՞նչ հիմքով է ստացել Ո.Դ. քաղաքացիություն: Հետազայում, պարզելով, որ նա հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացի՝ որոշում է կայացվում քրեական գործով վարույթը կարճելու և Ա.-ի նկատմամբ հարուցած քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության պատճառով:

Հարկ է նշել, որ Դատախազության կողմից Պաշտպանի հարցումներին պատասխանելու սահմանված ժամկետների խախտման դեպքեր, ըստ էության, չկան, սակայն մեկ գործով Դատախազությունը շուրջ 7 ամիս է որևէ պարզաբանում չի ներկայացրել:

## Օրինակ 2

Հանրային պաշտպանի գրասենյակի պաշտպան Ի.Պ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած դիմումով հայտնել է, որ 02.03.2008թ.-ին Հանրային պաշտպանի գրասենյակի դեկանարի որոշման համաձայն ստանձնել է Ա.Մ.-ի պաշտպանությունը: Նույն օրը ժամանակավոր պահման մեկուսարանում առանձին տեսակցել է Ա.Մ.-ին, որը հայտնել է, որ 01.03.2008թ իրեն առավոտյան ժամը 7:30-8:00-ի սահմաններում Երևանի Արշակունյաց պողոտայից ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել ոստիկանության Կենտրոն բաժին, որից հետո տեղափոխել են ոստիկանության Մաշտոցի բաժին, այնուհետև՝ ձերբակալված անձանց պահման մեկուսարան:

Դիմումատուն նշել է նաև, որ Ա.Մ.-ի ձերբակալման արձանագրությունը կազմվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 գլուխ պահանջների խախտմամբ՝ 02.03.2008թ. ժամը 00:50-ին: 04.03.2008թ. 16:00-ից հետո վարույթն իրականացնող քննիչ Ա.Բ.-ն Ա.Մ.-ին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 225 հոդվածի 1-ին և 316 հոդվածի 2-րդ մասերով: Նշված որոշումը՝ Վ. Հարությունյանի ստորագրությամբ, ներկայացվել է Ա.Մ.-ին, որը հրաժարվել է ստորագրել: Հանրային պաշտպանը հայտնել է նաև, որ ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ անցել է Ա.Մ.-ին անազատության մեջ պահելու 72 ժամը և միջնորդել անհապաղ ազատ արձակել նրան: Ըստ Ի.Պ.-ի՝ նշված խախտումներով հանդերձ, քննիչ Ա.Բ.-ն որոշում է կայացրել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն հարուցել դատարան, որը ստորագրել է անձանք քննիչը՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 195 հոդվածի 2-րդ մասով նախատեսված նորմը: 04.03.2008թ. ժամը 20:00-ի սահմաններում դատարանը բավարարել է միջնորդությունը: Նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաբննիչ դատարան:

Դիմումատուն միաժամանակ հայտնել է, որ 12.03. 2008թ.-ին տեղի է ունեցել իր պաշտպանյալի առերեսումը վկա Ա.Ա.-ի հետ: Ըստ դիմումատուի՝ Ա.Ա.-ի ցուցմունքները քննիչ Գ.Մ.-ի կողմից չեն արձանագրվել: Առերեսման ընթացքում քննիչը դուրս է եկել աշխատասենյակից, ինչը նույնպես չի արձանագրվել: 15-20 րոպե հետո աշխատասենյակ է ներխուժել քննիչ Ա.Բ.-ն և սկսել բարձրաձայն գոռալ ու ճնշումներ գործադրել վկայի վրա՝ պարտադրելով ցուցմունք տալ այն մասին, որ իբր տեսել է, թե ինչպես է Ա.Ա.-ն իրեն մեղսագրվող արարքը կատարել:

Վերոգրյալի կապակցությամբ դեռևս 25.03.2008թ. ՀՀ գլխավոր դատախազին առաջարկվել էր հանձնարարել ստուգել բողոքում նշված տեղեկությունների հավաստիությունը և այդ կապակցությամբ պարզաբանումներ տալ: ՀՀ գլխավոր դատախազի կողմից որևէ պատասխան չի ստացվել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը երկու անգամ պաշտոնական գրությամբ հիշեցում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազին, այնուամենայնիվ առ այսօր պատասխան չի ստացել:

Դատախազության դեմ ուղղված դիմում-բողոքների մի մասն էլ չի քննարկվել Պաշտպանի կողմից, կամ էլ դիմումատուին ներկայացվել են իր իրավունքների պաշտպանության օրենքով նախատեսված հնարավորությունները՝ ներկայացնելով դրանց իրականացման կարգը: Դրանք հիմնականում վերաբերել են ապացույցների գնահատմանը, առաջադրված մեղադրանքի անհիմն կամ հիմնավոր լինելուն և այլն:

Բացի այդ, դիմումների մի ստվար զանգված էլ վերաբերել է քաղաքացիների՝ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրած դիմումներին պատշաճ պատասխան չտրվելու, իսկ երբեմն՝ ընդհանրապես ընթացք չտալու դեպքերին, որով, ըստ Էության, չի պահպանվում ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածի պահանջը: Վերադասության կարգով բողոքարկելու ինստիտուտը կրում է ձևական բնույթ, քանզի փորձը ցույց է տալիս, որ այն դիմում-բողոքները, որոնցով դժգոհում են ՀՀ դատախազության տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների գործողություններից, արդյունքում այդ դիմումներն ուղարկվում են վերջիններիս, այսինքն՝ նրանց, որոնցից քաղաքացին դժգոհում է, և այդ պայմաններում արդյունավետ իրավական պաշտպանվածության մասին խոսելը դառնում է անհմաստ: Դրանով կրճատվում է նաև քաղաքացիների վստահությունը այդ կառույցի նկատմամբ, և մարդիկ փորձում են իրենց հուզող խնդիրները լուծել այլ եղանակներով:

Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ 2008թ. ժամանակահատվածում, ի տարբերություն ՀՀ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության և մի շարք այլ մարմինների, ոչ բավարար մակարդակում է գտնվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ՀՀ դատախազության և ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակիցների աշխատանքային փոխհարաբերությունները: Իսկ անբավարարությունը պայմանավորված է ոչ թե Պաշտպանի այս կամ այն գրությանը չպատասխանելուն, այլ՝ դրանցում շարադրված փաստերի ուսումնասիրմանն ու պատշաճ կարգով ընթացք չտալուն, քանի որ այդ մարմինների կողմից ստացված գրագրությունները պետք է հիմնված լինեն ոչ թե ձևական, այլ բովանդակային կողմի վրա: Ի վերջո, բոլոր պետական մարմինների խնդիրը և պարտականությունը անձի և հասարակության շահերից բխող գործողությունների կատարումն է: Իսկ անձի արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը հանդիսանում է նրա

կարեռագույն սահմանադրական իրավունքներից մեկը, ինչին պետք է հետամուտ լինի յուրաքանչյուր պետական պաշտոնյա:

### 3.3. Հատուկ քննչական ծառայություն

2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունվեց «Հատուկ քննչական ծառայության» մասին ՀՀ օրենքը, որով ստեղծվեց Հատուկ քննչական ծառայությունը: Նշված օրենքով հատուկ քննչական ծառայությանը վերապահվեց իրականացնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների դեկավար աշխատողների, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների, ինչպես նաև ընտրական գործընթացների հետ կապված քրեական գործերով նախարնեություն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2008թ.-ի ընթացքում Հատուկ քննչական ծառայության դեմ ստացել է 18 դիմում-բողոքներ, որոնց ուսումնասիրության արդյունքում կայացվել են հետևյալ որոշումները՝

- |   |    |
|---|----|
| • ընդունվել են քննարկման՝   | 11 |
| • ներկայացվել են դիմողին իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ | 3  |
| • փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝                                       | 0  |
| • չեն ընդունվել քննարկման՝  | 4  |
| • չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝                                      | 0  |
| • ուսումնասիրման ընթացքում են՝  | 0  |

Հարկ է նշել, որ հատուկ քննչական ծառայության դեմ ուղղված դիմում-բողոքների շարքում նույնապես գերակշռում են բանավոր բողոքները: Դա, ինչպես արդեն նշել ենք, այլ հանրային մարմինների, մասնավորապես՝ ՀՀ ոստիկանության պարագայում, պայմանավորված է քաղաքացիների մոտ ձևավորված վախի մթնոլորտով, այն հանգամանքի գիտակցմամբ, որ գրավոր դիմում ներկայացնելը կարող է բացասաբար անդրադառնալ իրենց վրա:

Այս մարմնի դեմ ուղղված բողոքները հիմնականում վերաբերել են հատուկ քննչական ծառայությունում ծեծի և սպառնալիքների միջոցով քաղաքացիներից ցուցմունքներ կորզելուն, ինչպես նաև իրականությանը չհամապատասխանող ցուցմունքները թելադրանքով և հարկադրանքի միջոցով գրել տալուն, քննչական գործողությունները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան չկատարելուն:

Նշված դիմումների ուսումնասիրության ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրություններին ի պատասխան՝ պետական իրավասու պաշտոնատար անձը մշտապես հերքել է քաղաքացիների կողմից դիմումով ներկայացված բոլոր փաստերը, իսկ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն նմանատիպ դեպքերում իրականությունը պարզելու հնարավորություն ընձեռող ռեալ մեխանիզմներ:

Հատուկ քննչական ծառայության դեմ եղել են նաև այնպիսի դիմում-բողոքներ, որոնցով դիմումատունները հայտնել են, որ իրենց առաջադրել են մեղադրանք, խափանման միջոցը ընտրել են կալանք և նախաքննության ընթացքում ստիպել են տալ իրականությանը շհամապատասխանող ցուցմունքներ՝ այլ անձանց վերաբերյալ:

## Օրինակ 1

Քաղաքացի Գ.Ա.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ Հատուկ քննչական ծառայության և ոստիկանության աշխատակիցները ֆիզիկական և հոգեկան ճնշում գործադրելով՝ իրենից կորզել են կեղծ ցուցմունքներ Մ.Ա.-ի և այլ քաղաքացիների վերաբերյալ: Ըստ դիմումատուի՝ ծեծի արդյունքում ստացել է լուրջ վնասվածքներ: Հայտնել է նաև, որ ցուցմունքները գրել են թելադրանքով և հարկադրանքի միջոցով ու դրանք դատարանում չպետք է դիտվեն որպես հիմնավոր ապացույցներ:

Տարակուսանք է առաջացնում այն փաստը, որ հատուկ քննչական ծառայության դեմ ուղղված բոլոր դիմում-բողոքների վերաբերյալ Պաշտպանի կատարած հարցումներին տրվում են ոչ թե պարզաբանումներ, այլ բավարարվում են միայն կարճ պատասխանով՝ քաղաքացու կողմից ներկայացված փաստերը իրականությանը չեն համապատասխանում, ինչը ոչ համոզիչ է և մտահոգիչ:

## Օրինակ 2

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպան Ի.Պ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրված դիմումով հայտնել է, որ նախաքննության ընթացքում իր պաշտպանյալ Ա.Ա.-ն ներկայացվել է ճանաչման ձեռնաշղթան ձեռքից կախված վիճակում, մինչդեռ, պետք է նշել, որ ճանաչման ենթակա անձին ձեռնաշղթայով ճանաչման ներկայացնելը հակասում է ՀՀ քրեական դատավարության 221-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին և հանդիսանում է քննչական գործողության կատարման էական խախտում, քանի որ, նույն հոդվածի համաձայն. «Ճանաչման ենթակա անձը ներկայացվում է ճանաչողին նույն սեռի և արտաքինով ու հազուստով ճանաչվողին հնարավորին չափ նման առնվազն երեք այլ անձանց հետ»:

Վերոգրյալի կապակցությամբ մեր գրությանն ի պատասխան՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության պետը հայտնել է, որ մեղադրյալ Ա.Ա.-ն վկա Տ.Խ.-ին ճանաչման է

ներկայացվել առանց ձեռնաշղթաների, սակայն երբ նա ճանաչման ներկայացված անձանցից ճանաչել է մեղադրյալին՝ որպես 2008թ. մարտի 1-ին տեղի ունեցած զանգվածային անկարգությունների ժամանակ Երևանի Մաշտոցի պողոտայի, Գրիգոր Լուսավորիչ և Պարոնյան փողոցների խաչմերուկում ծառայություն կատարող ուսիկանների նկատմամբ հայինյանքներ տվող և նրանց ուղղությամբ քարեր, փայտեր և այլ առարկաներ նետող անձանցից մեկի, վերջինս ցուցադրաբար պարզել է ձախ ձեռքը և միայն այդ ժամանակ է տեսանելի դարձել երկարաբն վերնաշապիկի թեքի տակ նրա կողմից միտումնավոր բացված ձեռնաշղթան, որի մասին համապատասխան նշում է կատարվել ճանաչման արձանագրության մեջ:

Հատկանշական են նաև հետևյալ գրությունները.

2008 թվականի հուլիսի 1-ին և 2-ին մամուլում տեղեկություններ էին հրապարակվել Արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական, Հատուկ քննչական ծառայության պետ Անդրանիկ Սիրոյանի մարտի 5-ի քննչական հանձնարարության վերաբերյալ, ապա տարածվել էր նաև քննչական հանձնարարության բուն տեքստը:

Այսպես, 2008թ. մարտի 5-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի կարգով ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Ա.Գ. Սիրոյանը քննչական հանձնարարությամբ դիմել է ՀՀ Վայոց Ձորի մարզի դատախազ Հ.Ս. Պալյանին, ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազ Վ.Տ. Մարգարյանին, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի դատախազ Հ.Հ. Զարոյանին՝ խնդրելով 2008թ. մարտի 1-ից սկսած Երևանի քաղաքապետարանի շրջակայքում և կենտրոնական փողոցներում կազմակերպված զանգվածային անկարգությունների կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 62202608 քրեական գործերի քննության շրջանակներում հանձնարարել, որպեսզի իրականացվեն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և հարցաքննություններ:

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի համապատասխան գրությունը վերնագրված է «Քննչական հանձնարարություն ՀՀ քր. դատ. օր-ի 191-րդ հոդվածի կարգով»: Ենթադրվում է, որ խոսքը վերաբերում է հոդված 191-ի 3-րդ մասին, համաձայն որի՝ այլ վայրում քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում քննիչն իրավունք ունի այդ գործողությունները կատարել անձամբ կամ դրանց կատարումը հանձնարարել տվյալ վայրի քննիչին կամ հետաքննության մարմնին:

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի լիազորությունները սահմանված են «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում, բացի այդ, ելնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 26-րդ մասի և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի տրամաբանությունից՝ նա օգտվում է նաև ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածով քննչական բաժնի պետի լիազորություններից: Հետևաբար, դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հատուկ քննչական ծառայության պետն իրավունք ուներ նման հանձնարարություն տալ, սակայն ոչ թե Վայոց Ձորի մարզի դատախազին, այլ՝ տվյալ վայրի քննիչին կամ հետաքննության մարմնին: Եվ չնայած գրության 2-րդ պարբերությունում օգտագործվում է «խնդրում եմ» արտահայտությունը, այն որևէ կերպ չի կարող դիտարկվել, օրինակ՝ որպես օժանդակության խնդրանք դատախազին, ինչի մասին ակնհայտ վկայում են գրության վերնագիրը և վերջին նախադասությունը: Առավել ևս, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում նման խնդրանքով դատախազին դիմելու հնարավորություն: Իսկ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Ինչ վերաբերում է բուն քննչական հանձնարարության բովանդակությանը, ապա այն նույնպես միանշանակ չի ընկալվում: Անհասկանալի է, թե ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ մասով և 235-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված քրեական գործերի քննության համար ի՞նչ նշանակություն կարող է ունենալ այնպիսի հանգամանքների պարզաբանումը, ինչպիսիք են հանրահավաքի մասնակիցների կողմից անկայուն իրավիճակի՝ այլ պետություններին ձեռնտու լինելու հանգամանքի գիտակցումը, Հայաստանից Ռուսաստանի ներկայությունը հանելու մասին խոսելը, հանրահավաքներին մասնակցած անձանց և Լ. Տեր-Պետրոսյանի շտաբերի պետերի ունեցած գույքի և ընտանիքի անդամների մասին տեղեկատվությունը, հանրահավաքի մասնակիցներին տեղափոխած ավտոմեքենաների և երթուղային տաքսիների վարորդների վերաբեյալ տեղեկատվությունը:

Զարմանալի և տարօրինակ է նաև թիվ 62202608 քրեական գործում գտնվող փաստաթղթերից մեկը, որտեղ ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևորագույն գործերով քննիչ Կ.Թ.-ն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աշտարակի տարածքային ստորաբաժանման դեկավարին հասցեագրել է գրություն հետևյալ բովանդակությամբ.

«Ուղարկում եմ ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում գտնվող թիվ 62215908 քրեական գործով մեղադրյալ Մ.Մ.-ին փաստացի պատկանող՝ Աշտարակի Էջմիածնի խճուղու հարևանությամբ գտնվող և քաղաքացի Է.Ը.-ի անվամբ գրանցված անասնապահական համալիրի վրա կալանք դնելու մասին որոշումը»:

Գրության բովանդակությունից երևում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից անտեսվել են ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ: Մասնավորապես, անհասկանալի է այն, թե ինչպե՞ս կարող է

քրեական գործի շրջանակներում արգելանք դրվել գործի հետ որևէ առնչություն չունեցող անձին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա՝ պատճառաբանելով, որ այն փաստացի հանդիսանում է գործով անցնող մեղադրյալ անձի գույքը:

### 3.4. Դատարաններ

Դատարանների դեմ 2008 թվականի ընթացքում ստացվել են 16 բողոքներ: Դրանք դժգոհություններ են դատարանների վճիռներից, դատավճիռներից և որոշումներից:

- |   |    |
|---|----|
| • ընդունվել են քննարկման՝   | 0  |
| • փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝                                   | 2  |
| • ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ | 3  |
| • չեն ընդունվել քննարկման՝  | 11 |

#### 3.4.1. Դատական նիստերի և դատական պրակտիկայի մոնիթորինգ (դիտարկում)

Դատական նիստերի դիտարկումները նպատակ են հետապնդել վեր հանել դատավարական խախտումները կամ մատնանշել դատավարական այն բացքողումները, որոնք կարող են նպաստել մարդու իրավունքների խախտմանը:

Դատաքննության ընթացքում դատավորի վարքագիծը որևէ կերպ չպետք է կասկած հարուցի նրա անաշառության վերաբերյալ:

Դատավորի և պետական մեղադրողի՝ միևնույն դռնից մուտք ու ելքը դատական նիստերի դահլիճ, կարող է ողջամիտ դիտորդի մոտ տարակուանք և կասկած առաջացնել իրականացվող արդարադատության հանդեպ (Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան, դատավոր Ռ. Ավինյան):

Դատական մեկ այլ նիստի դիտարկման (Երևանի քրեական դատարան, դատավոր Ս. Մնացականյան) ընթացքում պաշտպանն իր միջնորդություններում դատաքննության ողջ ընթացքում, ինչպես նաև իր պաշտպանական ճառում նշեց, որ նախաքննության ընթացքում իր պաշտպանյալը ներկայացվել է ճանաչման ձեռնաշղթան ձեռքից կախված վիճակում, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 221 հոդվածի 3-րդ մասի խախտում է, համաձայն որի. «ճանաչման ենթակա անձը ներկայացվում է ճանաչողին նույն սեռի և արտաքինով ու հազուատով ճանաչվողին հնարավորին չափ նման առնվազն երեք այլ անձանց հետ»: Դատաքննության ընթացքում պաշտպանը նաև նշել է, որ իր պաշտպանյալը՝ ոտքից հրազենային վնասվածք ունենալով, հինգ օր շարունակ չի ստացել բժշկական

օգնություն: Այս փաստի հաստատման դեպքում կարելի է եզրահանգել ամբաստանյալի՝ բժշկական օգնություն ստանալու իրավունքի խախտման մասին:

Ուշադրության արժանի է 2008թ. մարտի 1-2-ի դեպքերի կապակցությամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումները Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի չափորոշիչների համատեքստում<sup>8</sup> Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունը.

Այսպես, ուսումնասիրելով ՀՀ հասուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 62202608 քրեական գործով ներզրավված մի շարք մեղադրյալների նկատմամբ ընտրված խափանման միջոցի վերաբերյալ դատարանների որոշումները՝ հանգում ենք հետևյալին.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ գլխում սահմանված են այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են օրինականությունը, հավասարություն օրենքի և դատարանի առջև, մրցակցությունը քրեական դատավարությունում և այլն: Այս տեսանկյունից մեր կողմից ուսումնասիրված որոշումներում, ըստ էության, տեսանելի չեն ՀՀ դատարանների այն պատճառաբանություններն ու հիմնավորումները, որոնք վերաբերում են ինչպես մեղադրական, այնպես էլ պաշտպանական կողմի միջնորդություններին: Ավելին, որոշումների մեծ մասում հիմք ընդունելով միջնորդություն ներկայացնող նախարարնության մարմնի փաստարկումները, առանց մյուս կողմի միջնորդությունները քննարկելու՝ դատարանն այդ միջնորդությունը դիտարկում է հիմնավորված: Մինչդեռ, դատավարությունը պետք է բնույթով լինի մրցակցային և մշտապես ապահովի «զենքերի» հավասարություն կողմերի (այսինքն ie the prosecutor/police etc and the detained person) միջև: Կալանավորվածը պետք է իրավասու լինի ներկա գտնվել և հայտնել իր փաստարկները, եթե անհրաժեշտ է, օրինական ներկայացնուցի հետ:

Գարսիա Ալվան ընդդեմ Գերմանիայի գործով հայցվորին թույլ չեր տվել ծանոթանալու դատախազության գործին, որը պարունակում էր ոստիկանության իրազեկիչի ցուցմունքներ: Եվրոպական Դատարանը վճռեց, որ 5(4) հոդվածի համաձայն, դատավարությունը պետք է սկզբունքորեն բավարարեր 6-րդ հոդվածի պահանջները քրեական գործով արդար դատաքննության և այլ առումներով: Մասնավորապես, կալանավորվածը պետք է կարողանար ծանոթանալ դատախազության դիտարկումներին և իսկական հնարավորություն ունենար՝ դրանց մասին ներկայացնելու իր դիտողությունները: Եվրոպական Դատարանը վճռել է, որ չնայած հնարավոր է, որ անհրաժեշտ է որոշ ապացույցներ գաղտնի պահել քրեական գործի քննության ընթացքում, որպեսզի կասկածյալները չխոչընդոտեն արդարադատության իրականացմանը, այս օրինական

<sup>8</sup> 2008թ. հուլիսի 11-ի մամլո ասուլիսի ժամանակ հակիրճ ներկայացվել է Պաշտպանի կողմից:

նպատակը չի կարող հետապնդվել պաշտպանյալի իրավունքների լուրջ սահմանափակումների հաշվին: Կալանքի օրինականությունը պարզելու համար անհրաժեշտ տեղեկությունները պետք է համապատասխան կարգով տրամադրվեն պաշտպանող փաստաբանին:

2. Ուսումնասիրվող որոշումների մեջ զգալի թիվ են կազմել այնպիսիք, որոնցում կրկնվում է նախարձնական մարմնի միջնորդությունը, դրանք նույնաբռվանդակ են և իրենցից ներկայացնում են դեպքերի ուղղակի նկարագրություն: Դրանցում, մասնավորապես, նշվում է, որ մեղադրյալը «ներգրավվելով 2008 թվականի փետրվարի 19-ին կայացած Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրություններում Նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի պարտություն կրելուց հետո երկրում ներքաղաքական իրավիճակն ապակայունացնելու նպատակով վերջինիս մի խումբ համախոհների կողմից օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված հրապարակային միջոցառմանը, նրանց ուղղորդմամբ և հրահրմամբ անմիջական մասնակցություն է ունեցել 2008 թվականի մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած, լայնածավալ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վճարումով, քացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայքուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրմամբ, սպանություններով զուգորդված զանգվածային անկարգություններին»: Դատարանը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումներում հիմնականում անդրադարձել է այդ միջնորդության պատճառաբանություններին, մինչդեռ պաշտպանական կողմի միջնորդության պատճառաբանությանը անդրադարձել է հազվադեպ դեպքերում: Դատարանների կողմից կայացված որոշումների հիմքում էլ դրվել է վերը նշված ընդհանրական ձևակերպումը՝ առանց անհատականացնելու կոնկրետ մեղադրյալի կողմից կատարված կոնկրետ գործողությունը: Իսկ երբ մեղադրյալը կամ նրա պաշտպանը առարկել են ներկայացված միջնորդության դեմ, հայտնելով, որ ներկայացված միջնորդությունը և առաջադրված մեղադրանքն անհիմն են, մեղադրյալը չի մասնակցել հրկիզումներին, այլ միայն Ոստիկանության ավտոմեքենայից դուրս է նետել համազգեստը, դատարանի կողմից անդրադարձ չի կատարվել այդ փաստարկումներին (օրինակ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 12.03.2008թ. Ա.Կ.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը):

Հարկ է նշել, որ որոշումներում հաճախ կարելի է հանդիպել «լսելով մեղադրյալին» արտահայտությունը, սակայն մեղադրյալի որևէ խոսք մեջքերված չէ որոշման մեջ (տես նաև՝ Արքուր Մանվելի Մարգարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում

կիրառելու մասին և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին 07.03.2008թ. և 30.04.2008թ. որոշումները, Հովհաննես Աշոտի Մխոյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին 15.03.2008թ. որոշումը):

Սակայն կան որոշումներ, որտեղ ընդիանրապես բացակայում է նույնիսկ այդ բառակապակցությունը (տես նաև՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդիանուր իրավասության դատարանի 10.03.2008թ. Արթուր Լյովիկի Պետրոսյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը):

Որոշումներում առավել հաճախ կարելի է հանդիպել հետևյալ եզրահանգմանը. մեղադրյալը կարող է քաքնվել վարույթն իրականացնող մարմնից, ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, կատարել քրեական օրենքով արգելված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց: Այս եզրահանգման համար, այնուամենայնիվ, դատարանը մեծամասամբ չի անդրադարձել պաշտպանական կողմի փաստարկներին և չի անդրադարձել յուրաքանչյուր հիմնավորմանը: Ավելին, որոշումներում նշված նույնաբովանդակ պարբերությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից պարզ մեջքերում է առանց պատճառաբանությունների և կրկնվում է բոլոր որոշումներում:

Նկատի ունենալով, որ դատարանի կողմից հիմնավորված են համարվել միայն մեղադրող կողմի փաստարկումները՝ ստացվում է, որ մրցակցության սկզբունքն իր նպատակներին չի ծառայել:

Պացուրիան ընդդեմ Վրաստանի գործով Եվրոպական Դատարանը վճռել է, որ ազգային դատարանը փոխարեն իրականացնելու իր պարտավորությունը՝ նշելու կալանավորման երկարացումը արդարացնող համոզիչ հիմքեր, հիմնվել է նախատպված և արստրահված (վերացական) պայմանների վրա: Դատարանը գտել է, որ ազգային դատարանի որոշումը խախտել է դիմումատուի իրավունքները՝ երաշխավորված Կոնվենցիայի 5(3) հոդվածով:

Դոլգովան ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատուի կալանքի ժամկետի երկարացման ժամկետների վերաբերյալ դատական որոշումները չունեն ճշմարիտ կազ անհատական հանգամանքների հետ: Ընդհանուր իրավասության դատարանը օգտագործել է ազատելու միջնորդությունը մերժելու միևնույն ձևի ամփոփումը և երկարացրել է 39-ր անձանց նախաքննական կալանքի ժամկետը՝ չնայած պաշտպանի խնդրանքին, որ յուրաքանչյուր կալանվածի իրավիճակը պետք է քննարկվի անհատապես: (տես կետ 49) Դատարանը նկատել է, որ այս մոտեցումը անհամատեղելի է Կոնվենցիայի 5(3) հոդվածով երաշխավորված իրավունքների հետ:

Պաշտպանական կողմի բողոքից մեջքերումներ հանդիպում են ՀՀ վերաբննիչ քրեական դատարանի որոշումներում: Սակայն այստեղ էլ, օրինակ, Վերաքննիչ դատարանը

հաշվի է առել «վերագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը՝ այն, որ նրան վերագրվում է ծանր հանցագործություն, որի համար օրենքով նախատեսվում է միայն ազատազրկման ձևով պատիճ՝ 5-ից 10 տարի ժամկետով, որը բարձրացնում է մեղադրյալի կողմից քրեական պատասխանատվությունից և պատժից խուսափելու հավանականությունը և բավարար իիմք է տալիս ենթադրելու, որ նա մնալով ազատության մեջ կարող է կատարել քրեական օրենքով չբոլորարված արարք, այսինքն՝ առկա է նոր հանցագործություններ կատարելու կանխման և հասարակական կարգի պահպանման անհրաժեշտություն» (տե՛ս, ՀՀ վերաբննիչ քրեական դատարանի 20.03.2008թ. որոշումը Ա.Բ.-ի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. մարտի 10-ի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը դատական ստուգման ենթարկելու վերաբերյալ):

Կան որոշումներ, որտեղ որպես հիմնավորում նշվում է. «առաջադրված մեղադրանքի հոդվածով նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավել է» (տես նաև՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.03.2008թ. Ա.Պ.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը, 12.03.2008թ. Ա.Կ.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը):

Իլիկովն ընդդեմ Բուլղարիայի գործով (26-ը հուլիսի, 2001թ.) կալանավորումը հիմնավորվում էր իրավախախտման ծանրությամբ: Ներպետական դատարանները կիրառում էին այն օրենքը և պրակտիկան, որոնց համաձայն կանխավարկածն այն էր, թե այնպիսի գործերով, որոնց դեպքում հնարավոր պատժաշակը գերազանցում է որոշակի սահմանը (1995թ. հունիսին գործող օրենքի համաձայն՝ 10 տարով ազատազրկումը, իսկ դրանց հետո՝ ազատազրկումը հինգ տարով), ահրաժեշտ է կիրառել նախնական կալանք: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը եզրակացրել է, որ պարտադիր կարգով նախնական կալանքի ցանկացած համակարգ իրենով անհամատեղելի է Կոնվենցիայի 5(3) հոդվածին:

Մինչդատական կալանքը հիմնավորելու համար մեջբերվող հիմքերից յուրաքանչյուրի կապակցությամբ դատարանները պետք է դատավարության ընթացքում գործադրեն առանձնակի շրջահայացություն, որպեսզի ապահովեն, որ կալանքի տակ անցկացված ժամկետը չգերազանցի ողջամիտ համարվող ժամկետը: Յուրաքանչյուր գործով ողջամտության հասկացությունը տարբերվում է. այն հնարավոր չէ արստրահված (վերացական) կերպով գնահատել: (Վ.-ն ընդդեմ Շվեյցարիայի, 26-ը նոյեմբերի, 1992թ.):

3. Հաջորդ դիտարկումն այն է, որ ՀՀ դատարաններ ներկայացրած միջնորդություններում դեպքերի նկարագրությունները եղել են բավականին մակերեսորեն: Օրինակ, «.....չի ենթարկվել նույն պահին շրջագայություն կատարող ՀՀ ոստիկանության

Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի աշխատակիցների՝ ավտոմեքենան ստուգելու օրինական պահանջման, իրաժարվել է հնարավորություն ընձեռել զննելու ավտոմեքենայի բեռնախցիկը, ստեղծել է քաշքուկ, որի ընթացքում կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել իրենց ծառայողական պարտականություններն իրականացնող իշխանության ներկայացուցիչների նկատմամբ»:

Հիշյալ պարբերությունը առաջ է բերում մի շարք հարցադրումներ, մասնավորապես, ովքե՞ր են եղել շրջագայություն կատարող ոստիկանները (անուն, ազգանուն, կոչումը և այլն), որո՞նք են եղել մեքենայի բեռնախցիկը ստուգելու հիմքերը և այլն:

Հարկ է նշել, որ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ «քննակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, ինչպես նաև՝ ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան:

Մեծամասամբ, նախաքննությունն իրականացնող մարմնի կողմից դատարան ներկայացված միջնորդություններում բացակայում են մեղադրյալի ներգրավվածությանն առնչվող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են նրան մեղսագրվող արարքի կատարման տեղը և/կամ ժամանակը, ոստիկանների ինքնությունը և այլն:

4. Հարկ է նշել, որ սկզբնական շրջանում կալանքից բացի, խափանման այլ միջոցների, այդ թվում՝ կալանքը գրավով փոխարինելու կիրառման դեպքեր չեն եղել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափորոշիչների համաձայն՝ յուրաքանչյուր անգամ, երբ մեղադրյալը ներկայանում է դատարանի կամ «օրենքով լիազորված դատական այլ պաշտոնատար անձի» առջև, 5(3) հոդվածի համաձայն, դատավորը կամ դատական պաշտոնատար անձը պարտավոր են մանրամասնորեն քննության առնել կալանքը շարունակելու համար ներկայացվող պատճառաբանումները, ինչպես նաև պաշտպանական կողմի ազատ արձակումը հիմնավորող փաստարկները։ Դատարանը վճռել է, որ կոնկրետ գործով կալանքի երկարաձգումը կարող է հիմնավորված լինել միայն այն դեպքում, երբ գոյություն ունեն «հստակ նշաններ, որոնք արտացոլում են իսկական հանրային շահի գոյությունը, որը, անկախ անմեղության կանխավարկածից, գերակայում է ազատության իրավունքի նկատմամբ» (Պունգելտն ընդդեմ Չեխիայի Հանրապետության, Պացուրիան ընդդեմ Վրաստանի): Ուստի, կալանքի երկարաձգումը հիմնավորելու համար բերվող պատճառները պետք է լինեն վերաբերելի և բավարար, որպեսզի ցույց տան, որ կալանքը ոչ ողջամիտ կերպով չի երկարաձգվել և չի հակասել 5(3) հոդվածին (Վեմհոֆն ընդդեմ Գերմանիայի): Հետևաբար, կանխավարկածը պետք է միշտ գործի հօգուտ ազատ արձակման, բացառությամբ՝ եթե առկա են կալանքի շարունակումը հիմնավորող ծանրակշիռ պատճառներ։ Այդ պատճառների գոյությունը պետք է շարունակվի մինչդատական ողջ ժամանակահատվածում։

Դատարանը Պացուրիան ընդդեմ Վրաստանի գործով վճռել է, որ ազգային դատարանը կալանքի ժամկետը երկարացնելիս պետք է ծանրակշիռ հիմքեր ունենա ոչ միայն ցույց տալու որ կան «հիմնավոր կասկածներ», այլև կան հանրային շահի այլ լուրջ տարրեր (այլոց թվում տես նաև՝ Հավենտս ընդդեմ Հատվիայի, 28.11.2002):

Եվրոպական դատարանը վճռել է, որ կալանքի ողջամտությունը պետք է յուրաքանչյուր գործի համար որոշվի՝ ըստ տվյալ գործի առանձնահատկությունների (Պունգելտն ընդդեմ Զեխիայի Հանրապետության): Դատարանը նշել է, որ նախնական փուլերում ներպետական դատարաններն իրավասու են հիմնվել այն ողջամիտ կասկածի վրա, թե մեղադրյալն է կատարել տվյալ իրավախախտումը. դա կալանքը շարունակելու օրինականության պարտադիր նախապայման է: Այնուհանդերձ, որոշակի ժամանակ անց այս հիմքն այլև բավարար չի համարվում կալանքի շարունակումը հիմնավորելու համար (Նյումայստերն ընդդեմ Ավստրիայի):

Պացուրիան ընդդեմ Վրաստանի գործով Դատարանը նշել է, որ ոչ նախնական կալանքի վերաբերյալ որոշմամբ, ոչ կալանքի երկարաձգման վերաբերյալ որոշմամբ ազգային դատարանները չեն դիտարկել արգելանքի հնարավոր այլ միջոցներ, և ազգային դատարանների կողմից այդ բացքորումը հաջորդ անուշադրության դրսերումն է Կոնվենցիայի 5(3) հոդվածի պահանջների հանդեպ (տես՝ Դոլգովան ընդդեմ Ռուսաստանի, 02.03.2006, 47,48 և 50 կետեր):

Դոլգովան ընդդեմ Ռուսաստանի գործով Դատարանն ընդգծել է, որ երբ որոշվում է արդյոք անձը պետք է ազատ արձակվի կամ կալանավորվի, պաշտոնյան պարտավոր է Կոնվենցիայի 5(3) հոդվածի համատեքստում դիտարկել դատական նիստին նրա ներկայությունն ապահովելու այլընտրանքային միջոցները (տես՝ Դոլգովան ընդդեմ Ռուսաստանի, 02.03.2006, կետ 47):

Ազատ արձակումը մերժելու համար 5(3) հոդվածի շրջանակներում ընդունելի են համարվում դատաքննությանը չներկայանալու, արդարադատության իրականացմանը կալանավորվածի միջամտելու, կալանավորվածի կողմից նոր իրավախախտում կատարվելու ռիսկերը, ինչպես նաև կալանքի անհրաժեշտությունը՝ հասարակական կարգի պահպանման տեսակետից:

Մեղադրյալ՝ դատաքննությանը չներկայանալու ռիսկը չի կարող բացառապես կախված լինել սպասվող հնարավոր պատժի խստությունից:

Պետք է հիմնավորված ռիսկ լինի, որ մեղադրյալն ազատ արձակվելու դեպքում կձեռնարկի այնպիսի քայլեր, որոնք կխոչընդոտեն արդարադատության իրականացմանը (Ստոգմյուլերն ընդդեմ Ավստրիայի): Ռիսկը չի կարող ընդհանրացված լինել, պետք է լինեն ապացույցներ, որոնք կիմնավորեն ռիսկի մասին պնդումները:

Նոր իրավախախտում կատարելու ռիսկը գնահատելիս անհրաժեշտ է ապացուցել, որ ռիսկը իրական է, հարկ է հաշվի առնել մեղադրյալի անցյալը և անձնական հատկանիշները: Հարկավոր է պարզել, թե արդյոք տվյալ դեպքում հաշվի առնվող նախկին դատապարտումները մեղադրյալն ներկայացվող մեղադրանքի բնույթով կամ ծանրության աստիճանով համեմատելի<sup>o</sup> են տվյալ դեպքի հետ:

Հասարակական կարգին սպառնացող ռիսկի գնահատման վերաբերյալ Դատարանը տարբեր գործերով կայացրել է այն որոշումը, որ այս հիմքը կարող է բացառիկ համգամանքներում հաշվի առնվել մեղադրյալի մինչդատական կալանքի հիմնավորվածությունը պարզելիս: Միայն իրավախախտման ծանրությունը հաշվի առնելը բավարար չէ: Այսուհանդերձ, այս հիմքը կարելի է օգտագործել միայն այն դեպքում, եթե դատավորը կամ կալանքի որոշում կայացնելու համար օրենքով լիազորված այլ պաշտոնատար անձն իր որոշումը հիմնում է այնպիսի փաստերի վրա, որոնց օգնությամբ կարելի է ցույց տալ, որ մեղադրյալի ազատ արձակումն իսկապես կխարարի հասարակական կարգուկանոնը (Լետելիերն ընդդեմ Ֆրանսիայի):

Կարծում ենք, որ ՀՀ դատարանները կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումները կայացնելիս պետք է անմիջականորեն կիրառեն Կոնվենցիայով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով սահմանված չափորոշիչները, այլապես՝ դրանք Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննարկման առարկա դառնալու դեպքում կարձանագրվեն որպես մարդու իրավունքների խախտումներ և կվճասեն ինչպես Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակությունը, այնպես էլ ֆինանսական դրությանը, հետևաբար՝ ազգային անվտանգությանը:

Դատարանների կողմից կալանքից բացի խափանման այլրենորանքային միջոց ընտրելու վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1609 բանաձևի 6.3 մասում ասված է. «Դատարանների ոչ բավարար չափով անկախ լինելու վկայություն է նաև այն փաստը, որ դատարանները, ըստ երևույթին հարցականի տակ չեն առնում անձանց նախնական կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը և, որպես կանոն, բավարարվում են դատախազների համապատասխան միջնորդությունները հավոր պատշաճի քննության շենթարկելով այդ առնչությամբ ներկայացվող հիմնավորումները, ինչպես պահանջվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով» :

Հարկ ենք համարում նշել, որ 2008թ. վերջին ամիսներին արդեն եղել են դեպքեր, եթե ՀՀ դատարանները խափանման միջոց կալանքի երկարացմանը և խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելուն վերաբերյալ միջնորդությունները բավարարել են:

Օրինակ ՀՀ վճռաբեկ դատարանը, 2008թ. նոյեմբերի 28-ին քննելով «Պիցցա Դի Ռոմա» ՍՊԸ գանձապահ Ա. Ղ.-ի շահերի պաշտպան, հավատարմագրված փաստարան Արա Զոհրաբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաբննիչ քրեական դատարանի 2008 թվականի հուլիսի 1-ի որոշման դեմ, որոշեց վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել ՀՀ քրեական վերաբննիչ դատարանի վերոնշյալ որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2008 թվականի հունիսի 9-ի որոշմամբ մասնակիորեն բավարարվել էր մեղադրյալ Անուշ Ղավալյանի նկատմամբ ընտրված կալանքը երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը, և Անուշ Ղավալյանին կալանքի պահելու ժամկետը երկարացվել էր 20 օրով: Միաժամանակ, մերժվել էր Ա. Ղավալյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը գրավով փոխարինելու մասին պաշտպանի միջնորդությունը: Նշված որոշման դեմ բերվել էր վերաբննիչ բողոք, որն էլ ՀՀ քրեական վերաբննիչ դատարանն իր 2008 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ բողել էր առանց քննության:

ՀՀ դատարանների կողմից 2008թ. ընթացքում կայացվել են նաև արդարացման դատավճիռներ, որոնք առնչվում էին 2008թ. մարտի 1-2-ին տեղի ունեցած իրադարձություններին: Օրինակ՝ վերջերս 03.10.2008թ. Վերաբննիչ քրեական դատարանն անփոփոխ է բողել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան ի 2008թ. հուլիսի 4-ի դատավճիռը, որով Համետ Դավիթի Աբրահամյանը ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանության ներկայացուցիչ նկատմամբ բռնություն գործադրելը) առաջադրված մեղադրանքում ճանաչվել էր անպարտ և արդարացվել: Միաժամանակ դատարանը որոշում էր կայացրել որպես խափանման միջոց ընտրված կալանքը վերացնելու և Հ.Աբրահամյանին անհապաղ դատական նիստերի դահլիճից ազատ արձակելու մասին:<sup>9</sup>

#### **Փաստաբանների պաշտպանվածության վերաբերյալ.**

Պաշտպանին են դիմում նաև փաստաբաններ՝ իրենց իրավունքների պաշտպանության և դրանց իրականացմանը խոչընդոտող հարցերի վերաբերյալ բողոքներով: Դրանց մի մասը Պաշտպանի կողմից քննարկման չի ընդունվել, քանի որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին:

Օրինակ, փաստաբանները բողոքել են դատավորի վարքագծից և գործողություններից կամ անգործությունից, որի հետևանքով, ըստ փաստաբանների, խախտվել են

<sup>9</sup> [www.court.am](http://www.court.am)

պաշտպանյալի իրավունքները: Պաշտպանը տվյալ դեպքում որոշում է կայացրել բողոքը չքննարկելու վերաբերյալ:

Կան բողոքներ, որոնք առնչվում են դատարանների կողմից փաստաթղթեր կամ տեղեկատվություն չտրամադրելուն, որոնք Պաշտպանի կողմից ընդունվել են քննարկման և կայացվել են համապատասխան որոշումներ:

Օրինակ, փաստաբանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հայտնել է, որ դիմել է Երևանի քրեական դատարան՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու և պատճենահանումներ կատարելու համար, սակայն մինչ օրս իրեն հնարավորություն չի լնձեռվում ստանալու գործի նյութերի պատճենները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը Երևանի քրեական դատարանի նախագահից պահանջել է տեղեկատվություն տրամադրել դիմումում նշված հարցերի վերաբերյալ: Նույն դատարանի դատավոր Կ.Ղազարյանը պատասխանել է, որ փաստաբանը չի ներկայանում դատարան՝ օրենքով սահմանված կարգով նշված նյութերը ստանալու համար:

Դիմումատուն էլ Պաշտպանին հայտնել է, որ քրեական գործի նյութերի պատճեններն արդեն ստացել են:

Վերոգրյալից հետևում է, որ փաստաբանի կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումում բարձրացված խնդիրը լուծվել է, և նրա իրավունքները վերականգնվել են:

2008թ. երկրորդ կեսին եղել են դեպքեր, երբ քրեական գործերով դատաքննությանը մասնակցող փաստաբանները լրել են դատական նիստերի դահլիճը՝ ի նշան բողոքի:

ՀՀ փաստաբանների պալատի պարբերականում՝ «Փաստաբան» ամսագրի սեպտեմբերյան համարում<sup>10</sup>, տպագրվել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանի «Փաստաբաններին մարտահրավեր են նետել» խմբագրականը, որտեղ ասված է, որ վերջին շրջանում գնալով ավելանում են փաստաբանների դժգոհությունները դատարաններից: ՀՀ փաստաբանների պալատի նախագահը նշում է. «Պալատի խորհրդի կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դժգոհությունները հիմնականում տեղին են և պայմանավորված են առանձին դատավորների ցուցաբերած կամայականություններով, որոնք դրսևորվում են դատավարության մասնակիցների ամենատարրական իրավունքների բացահայտ և կոպիտ խախտումներով: Արդյունքում ոչ միայն փաստաբանների վստահորդները, այլև հենց փաստաբաններն անպաշտպան են զգում ու չեն գտնում իրենց խախտված իրավունքները վերականգնելու օրինական ճանապարհներ»: Նա նշել է նաև, որ «Փաստաբանների դեմ նոր արշավ է սկսել նաև ՀՀ գլխավոր դատախազությունը, որի աշխատակիցներն իրենց իրավունք են վերապահում

<sup>10</sup> www.pastaban.am

անհարկի և ոչ տեղին դիտողություններ անել փաստաբաններին՝ դա տարածելով նաև լրատվամիջոցներով: ....Քրեական գործեր են հարուցվել փաստաբաններից երկուսի նկատմամբ, նախաքննական մարմինները շրջանցելով օրենքը հանդես են գալիս դատավորի դերում : .... Դատախազական համակարգի աշխատակիցները «մոռանում են», որ իրենք ընդամենը դատավարության մասնակից կողմերից մեկն են: Նրանք դեռևս առաջնորդվում են խորհրդային տարիների իներցիայով՝ կարծելով, որ առավելություններ ունեն փաստաբանների նկատմամբ և համակարգի անունից հանդես գալով, կարող են վերջնագրեր ներկայացնել Փաստաբանների պալատին»: Խմբագրականի վերջում ասված է. «Պալատի խորհուրդը պատրաստ է դիմակայելու այս մարտահրավերներին և իր աջակցությունն է խոստանում բոլոր այն փաստաբաններին, ովքեր համաշափ և օրենքով չարգելված քայլեր կձեռնարկեն՝ իրենց խախտված իրավունքները պաշտպանելու ուղղությամբ»:

ՀՀ վճռաբեկ դատարանի ինտերնետային կայքէջն էլ տեղեկացնում է, որ 2008թ. հոկտեմբերի 28-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան է մուտքագրվել քրեական գործ, որի համաձայն՝ փաստաբան Մուշեղ Շուշանյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասով (Դատարանի նկատմամբ անհարզալից վերաբերմունք) նախատեսված հանցանք կատարելու մեջ: Նա մեղադրվում է այն բանի համար, որ մասնակցելով Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում քրեական գործի դատաքննությանը՝ որպես ամբաստանյալի շահերի պաշտպան, նիստի ընթացքում անհարզալից վերաբերմունք է դրսեորել դատարանի նկատմամբ՝ չենթարկվելով դատավորի կարգադրությանը և առանց նախագահողի բույլտվության նիստերի դահլիճը լքելով<sup>11</sup>:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի վերը նշված մտահոգությունները և եզրահանգումները բավականին մտահոգիչ են՝ արդար դատաքննության իրավունքի ապահովման տեսանկյունից:

### **3.5. ՀՀ կառավարությանն առընթեք անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**

Կադաստրի մարմինների դեմ 2008 թվականի ընթացքում ստացվել է 26 դիմում-բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 19
- ներկայացվել են դիմողին իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 1
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 0

<sup>11</sup> [www.court.am](http://www.court.am)

• չեն ընդունվել քննարկման՝	5
• չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝	0
• ուսումնասիրման ընթացքում են՝	1

2008թ. ՀՀ կառավարությանն առընթեր անշաժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և նրա տարածքային ստորաբաժանումների գործողությունների (անգործության) դեմ ուղղված բողոքների մեծ մասը վերաբերել է տարբեր պատճառաբանություններով իրավունքների պետական գրանցման մերժումներին, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռներով ճանաչված իրավունքները չգրանցելու, իրավունքները գրանցելու նպատակով կատարվող չափագրումների ընթացքում նախկին տվյալների հետ տարբերությունների պատճառով գրանցումը մերժելու, պատշաճ տեղեկատվություն չտրամադրելու և նման այլ դեպքերին:

Ուշագրավ է այն փաստը, որ երեսն կադաստրի կողմից մերժվում են դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռներից բխող իրավունքների գրանցումները՝ պատճառաբանելով, որ դատարանի վճիռը հակասում է այս կամ այն իրավական ակտին:

## Օրինակ 1

Երևան քաղաքի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած բողոքով հայտնել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաբենիչ դատարանի 02.02.2007թ. վճռով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանումը պարտավորեցվել է կատարել իրեն պատկանող գույքի պետական գրանցում:

Այդ նպատակով բազմից դիմել է նշված մարմին, սակայն ստացել է մերժում այն պատճառաբանությամբ, որ նշված հասցեում տեղի է ունեցել հողազավթում և առկա են ինքնակամ կառույցներ, իսկ զավթած հողամասի առկայությամբ ՀՀ կառավարության 07.04.2005թ. թիվ 719-Ն որոշման համաձայն քաղաքային բնակավայրերում արգելվում է կատարել իրավունքի պետական գրանցում: Գրությամբ հայտնել են նաև, որ դատարանի վճիռը հակասում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 43-րդ հոդվածներին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածին:

Նկատի ունենալով, որ հարուցված է եղել կատարողական վարույթ՝ 04.02.2008թ.-ին գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին՝ առաջարկելով տրամադրել պարզաբանում «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ չկիրառելու վերաբերյալ: Ի պատասխան՝ Պաշտպանին տրամադրվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման դեկանը՝ 18.03.2008թ. թիվ 171

գրության պատճենը, որի համաձայն 04.02.2008թ. կատարվել է իրավունքների պետական գրանցում՝ դիմումատուի անվամբ:

## Օրինակ 2

Երևան քաղաքի բնակիչը ՀՀ նարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից մերժվել է անշարժ գույքի նկատմամբ իր իրավունքի պետական գրանցումը՝ պատճառաբանությամբ, որ չի ներկայացվել հողիատկացման գլխավոր հատակագիծը, որը իրականում գոյություն չունի:

Նշված գույքն ինքը ժառանգել է հորից, որին 670 քմ մակերեսով հողատարածքը և կիսակառույց շինությունը տրամադրվել է այգեգործների սպառողական կոռպերատիվների հայկական համրապետական միության կողմից 27.01.2008թ. տրված 2-83 տեղեկանքով: Հետևաբար, կադաստրի մերժումը համարում է ոչ իրավաչափ: Առավել ևս, որ նման կարգավիճակում գտնվող այլ քաղաքացիների վերոնշյալ տարածքում գտնվող անշարժ գույքի նկատմամբ կատարել է իրավունքների պետական գրանցում:

Քաղաքացին դիմել է նաև Երևանի քաղաքապետարան, որտեղ իրեն հայտնել են, որ Նոր-Խարբերդ տարածաշրջանի գլխավոր հատակագծերը դեռևս չկան և գլխավոր հատակագծի բացակայության դեպքում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանումը կարող է կատարել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում:

Այստեղից պարզ է դառնում, որ երկու պետական մարմինների կամայականության արդյունքում դիմումատուն չի կարողանում օրինական ճանապարհով ժառանգություն ստացած գույքի նկատմամբ գրանցել իր իրավունքները:

Վերը նշված հարցերի պարզաբանման նպատակով Պաշտպանը հարցումներ է կատարել Երևանի քաղաքապետին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման ղեկավարին:

Գործը դեռևս քննարկման փուլում է:

### 3.6. ՀՀ արդարադատության նախարարության համակարգի մարմիններ

#### 3.6.1.Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության դեմ 2008 թվականին ստացվել է 41 դիմում-բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝
- ներկայացվել են դիմողին իր իրավունքների պաշտպանության

30

հնարավորությունները՝	6
• փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝	0
• չեն ընդունվել քննարկման՝	3
• չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝	1
• ուսումնասիրման ընթացքում են՝	1
<b>ԴԱՀԿ</b> ծառայության աշխատանքների գործունեության (անգործության) գնահատման համար բնութագրական են հետևյալ բողոքները.	

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության դեմ ստացված դիմում-բողոքները, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2008թ. վերաբերել են դատական ակտերի պահանջները օրենքով սահմանված ժամկետում չկատարելուն, անհարկի ձգձգումներին, ոչ պատշաճ կատարմանը, վճռող այս կամ այն կերպ մեկնաբանելու դեպքերին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2006 և 2007 թվականների տարեկան գեկույցներում անդրադարձ է կատարվել այն հանգամանքին, որ հատկապես այն դեպքերում, երբ պարտապանները պետական մարմիններ կամ պաշտոնատար անձինք են, հարկադիր կատարողների կողմից ներգործության միջոց համարվող վարչական պատասխանատվության մեխանիզմը չի գործում:

Հաճախ են դեպքերը, երբ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն տարբեր պատճառաբանություններով մի քանի ամիս (նույնիսկ տարի) չի գրանցում դատարանի վճռից ծագող իրավունքները, իսկ հարկադիր կատարողները կոնկրետ միջոցներ ձեռնարկելու, օրինակ՝ գործը իրավապահ մարմիններին փոխանցելու փոխարեն, մի քանի ամիս շարունակ հարցումներ են կատարում կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը, թե արդյո՞ք կատարվել է վճռող, կամ ինչո՞ւ չի կատարվում օրինական ուժի մեջ մտած վճռող և այլն:

ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների գրծողությունների (անգործության) դեմ բերված բողոքներից բնութագրական են հետևյալները.

## Օրինակ 1

Երևան քաղաքի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ ՀՀ վերաբննիչ քաղաքացիական դատարանի կողմից 03.10.2008թ. կայացված վճռի համաձայն Մ.Պ.-ից հօգուտ Գ.Ե.-ի պետք է բռնագանձել 1662 ԱՍՆ դուլարին համարժեք ՀՀ դրամ: 10.10.2008թ. կատարողական թերթը հանձնել է ԴԱՀԿ ծառայություն, սակայն կատարողական թերթի պահանջները չեն կատարվում:

Միաժամանակ հայտնել է, որ պարտապան Ա.Պ.-ի 3 անձնական մեքենաները արգելանքի տակ են դրված, սակայն հարկադիր աճուրդի չեն հանվում:

Դիմումում նշված տեղեկությունների վերաբերյալ Պաշտպանի կողմից պարզաբանում է պահանջվել ՀՀ գլխավոր հարկադիր կատարողից:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

## Օրինակ 2

Դիմումատուն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած բողոքում նշել է, որ 18.04.2006թ. Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը վճռել է Ն.Դ.-ից հօգուտ իրեն բռնագանձել 2200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Քաղաքացին բողոքում է, որ դատարանի վճիռը չի կատարվում և խնդրել է Պաշտպանի աջակցությունը այդ հարցում:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի բաժնի պետը 09.01.2007թ. գրությամբ հայտնել է, որ 04.05.2006թ. Ն.Դ.-ի և նրա գույքի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը և դրամական միջոցները չեն հայտնաբերվել: Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը հայտնաբերելու դեպքում կատարողական գործողությունները կվերսկսվեն:

Մեկ այլ նամակով ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է, որ կատարողական թերթի պահանջը փաստացի կատարվել է, գումարն ամբողջությամբ բռնագանձվել և հանձնվել է պահանջատիրոջը:

Բողոքի քննարկումը դադարեցվել է:

## Օրինակ 3

Երևան քաղաքի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 22.02.2007թ. վճու հիման վրա տրվել է կատարողական թերթ, որն իր կողմից 15.03.07թ. հանձնել է ԴԱՀԿ ծառայություն, սակայն վճու կատարման ուղղությամբ որևէ գործողություն չի ձեռնարկվել:

Քաղաքացու դիմումի կապակցությամբ ԴԱՀԿ ապահովող ծառայության Երևան քաղաքի բաժնի պետը 30.08.2007թ. գրությամբ պարզաբանել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից 13.03.2007թ. տրված կատարողական թերթի համաձայն պետք է Երևանի քաղաքապետարանին պարտավորեցնել կատարելու 06.02.2004թ. կնքած անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի 1.3 կետով ստանձնած իր պարտավորությունը՝ կայացնել որոշում նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող

հատակագծին համապատասխան հողատարածքը դիմողին վարձակալությամբ՝ գնման նախապատվության իրավունքով տրամադրելու մասին:

19.03.2007թ.-ին հարուցվել է կատարողական վարույթ, 23.03.2007թ.-ին որոշում է կայացվել պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին: 12.06.2007թ.-ին գրություն է ուղարկվել Երևանի քաղաքապետարան, սակայն ոչ մի պատասխան չի ստացվել, 29.08.2007թ.-ին երկրորդ գրությունն է ուղարկվել, որին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից հայտնել են, որ Երևան քաղաքի Փոքր Կենտրոնից դրւս 10 քմ մինչև 15 քմ մակերեսով համարժեք այլ հողատարածք կառուցապատման իրավունքով Մ.Հ.-ին տրամադրելու հարցը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը քննարկել է դիմումատուի հետ, և վարչության առաջարկած տարածքները վերջինիս կողմից անընդունելի են համարվել: Այս Երևանի քաղաքապետարանը առաջարկել է դիմումատուի փոխհատուցման հարցը լուծել եռակողմ բանակցությունների միջոցով՝ կառուցապատողի համաձայնությամբ նրան տրամադրելով տարածք տեղում կառուցվող բազմահարկ շենքից կամ հակառակ դեպքում հարցը լուծել գումարային փոխհատուցման կարգով:

Սակայն, ըստ դիմումատուի, իրեն որևէ առաջարկություն չի արվել:

Փաստորեն վճռի կայացումից հետո անցել է շուրջ 14 ամիս, սակայն ԴԱՀԿ ապահովող ծառայության աշխատակիցների կողմից չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ օրենքով սահմանված ժամկետում կատարողական գործողություններ իրականացնելու համար, չեն կիրառվել ԴԱՀԿ մասին օրենքի 72-րդ և 72.1-րդ հոդվածների պահանջները:

Քաղաքացու դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ ԴԱՀԿ ծառայության Երևանի բաժնի պետը, պատշաճ կարգով չկատարելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի պահանջները, նպաստել է Երևանի քաղաքապետի կողմից դատարանի վճիռը չկատարելուն: Հարկադիր կատարողը, մասնավորապես,

- միջոցներ չի ձեռնարկել կատարողական թերթը ժամանակին, լրիվ և ճիշտ կատարման ուղղությամբ (ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդված),

- պաշտոնատար անձի՝ Երևանի քաղաքապետի կողմից ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարողի որոշումը դիտավորյալ չկատարելու համար նրա նկատմամբ չի կիրառել վարչական պատասխանատվության միջոցներ (ԴԱՀԿ մասին օրենքի 72-րդ հոդված),

- օրինական ուժի մեջ մտած վճիռը Երևանի քաղաքապետի կողմից դիտավորյալ չկատարելու դեպքում հարկադիր կատարողը միջնորդություն չի ներկայացրել իրավապահ մարմիններին՝ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Հարկադիր կատարողի կողմից օրենքով իր վրա դրված պարտականությունները չկատարելու հետևանքով խախտվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածներով նախատեսված քաղաքացու արդար դատարնության իրավունքը:

Հիմք ընդունելով քննարկման արդյունքները՝ Պաշտպանի կողմից կայացված որոշմամբ խախտում է դիտվել ԴԱՀԿ ապահովող ծառայության Երևան քաղաքի բաժնի պետի գործողություններում (անգործության մեջ):

Դրանից հետո ևս վճռի կատարման ուղղությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել, վճիռը մնացել է չկատարված:

Հաշվի առնելով քաղաքացիների արդարացի բողոքները, որոնք հիմնականում վերաբերել են այն կատարողական թերթերի պահանջների չկատարմանը, երբ պարտապանները պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն են կամ դրանց պաշտոնատար անձինք՝ Պաշտպանի կողմից գրություն է ուղարկվել արդարադատության նախարարին՝ առաջարկելով հանձնարարել մանրամասն ուսումնասիրել գրությամբ ներկայացված շուրջ 9 բողոքները, թույլ տրված խախտումների վերացման կապակցությամբ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ և դրանց մասին սահմանված կարգով իրազեկել Պաշտպանին:

04.06.2008թ. գրությամբ ՀՀ արդարադատության նախարարը հայտնել է, որ հունիսի 3-ի թիվ 1972 հանձնարարականով նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքների մասին կտեղեկացվի լրացուցիչ:

13.09.2008թ. գրությամբ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է, որ դատական ակտերի չկատարման վերաբերյալ Պաշտպանի գրությամբ ներկայացված 9 բողոքներից երկուսը լուծում են ստացել, մասնավորապես, ՀՀ քաղաքացիական գործերով վերաբնիչ դատարանի կողմից տրված թիվ ՔԳԴՎ թիվ 03-176 կատարողական թերթի համաձայն Վ.Ա.-ն ՀՀ ոստիկանության պետի 28.08.08թ. թիվ 1954-Ա հրամանով վերականգնվել է ՀՀ ոստիկանության Գորիսի հաշվառման քննական խմբի տեսուչի պաշտոնում, ինչպես նաև ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից կատարվել է վճռից ծագող իրավունքների պետական գրանցում և 15.08.08թ. Լ.Ղ.-ի անվամբ տրվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական:

Հայտնել է նաև, որ մնացած 7 բողոքներով դատական ակտերի կատարման ընթացքի մասին լրացուցիչ կտեղեկացվի:

## Օրինակ 4

««Բջնի» հանքային ջրերի գործարան» փակ բաժնետիրական ընկերության թվով 483 աշխատակիցներ և ընկերության փաստաբանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքով գանգատվել են ԴԱՀԿ ծառայության պաշտոնատար անձանց գործողություններից: Մասնավորապես՝ նրանից, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ԴԱՀԿ ներկայացրած համապատասխան կատարողական թերթի հիման վրա ԴԱՀԿ ծառայության հարկադիր կատարողը, չունենալով հարկադիր կատարողների խումբ ստեղծելու մասին համապատասխան որոշում, 23.10.2008թ. բազմաթիվ հարկադիր կատարողների և սև, առանց տարբերանշանի համազգեստներով դիմակավորված անձանց հետ ներխուժել են ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲ ընկերության Երևանում գտնվող պահեստ և Զարենցավանում գտնվող գործարան, կապարակներ տարածքներն ու առօդավել Ընկերության տրանսպորտային միջոցները: Արդյունքում իրենք հարկադիր պարապուրդի են մատնվել:

Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է.

«ՀՀ վարչական դատարանի կողմից 14.10.08թ. տրված թիվ ՎԴ/0551/08 կատարողական թերթի համաձայն պետք է «Բջնի հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ից հօգուտ պետքյուջեի բռնագանձել 4.067.201.600 ՀՀ դրամ և 81.344.032 ՀՀ դրամ պետտուրք: ԴԱՀԿ ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնում 20.10.08թ. հարուցվել է թիվ 07-807/08 կատարողական վարույթը: ԴԱՀԿ ապահովող ծառայությունը կատարողական գործողություններն իրականացնելիս դեկավարվում է ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքով, մասնավորապես սույն օրենքի 4-րդ հոդվածով և հարկադիր կատարումն ապահովող այլ իրավական ակտերով: ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 43 և 44 հոդվածները կարգավորում են հարկադիր կատարողների գործողությունները, որով վերջիններս իրավունք ունեն կատարողական գործողությունների կատարման նպատակով /բռնագանձում, վտարում, բնակեցում և այլն/ անարգել մուտք գործելու պարտապանին սեփականության իրավունքով պատկանող շինություն: Դեկավարվելով «ԴԱՀԿ ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի 3-րդ մասով՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի 23.10.08թ. թիվ 899 հրամանով ստեղծվել է հարկադիր կատարողների աշխատանքային խումբը, դեկավարվելով վերը նշված հոդվածներով, Երևան և Զարենցավան քաղաքներում կատարել են գույքագրման աշխատանքներ և արգելանք դրել պարտապանին պատկանող գույքի վրա, ուստի, նշված տարածքներում հարկադիր կատարողների կողմից ներխուժում կատարելու մասին պարտապանի բողոքն անհիմն է: Ինչ վերաբերում է ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից ընկերության աշխատանքները դադարեցնելու վերաբերյալ դիմումում բարձրացված հարցին, ապա հայտնում եմ, որ

աշխատանքները դադարեցվել են ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի տնօրենի 22.10.08թ. թիվ 149 հրամանի համաձայն»:

Հայտնվել է նաև, որ հարկադիր կատարողի 20.10.2008թ. պարտապանի գույքի արգելանք դնելու մասին որոշմամբ, բացի գույքի օտարումն արգելելուց, այլ սահմանափակում չի կիրառվել և միայն ՓԲԸ-ի տնօրենի վերը նշված հրամանից հետո են առգրավվել ընկերության ավտոմեքենաները և պատրաստի արտադրանքի մի մասը: Ներկայումս կատարողական գործողությունները շարունակվում են»:

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին ուղղված մեկ այլ գրությամբ Պաշտպանը հայտնել է.

«Զեր 20.11.2008թ. թիվ ԵՎ 2555 գրությամբ չեք անդրադարձել այն հարցին, թե ովքե՞՞ր են եղել դիմակավորված անձինք: «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հարկադիր կատարողը ծառայողական պարտականությունները կատարելիս կրում է համազգեստ, որն ունի տարբերանշաններ և խորհրդանշան, որոնց նկարագրերը, ինչպես նաև դրանք կրելու և հատկացնելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը»: Զեր կողմից պարզաբանվել է նաև, որ ԴԱՀԿ աշխատակիցները դեկավարվել են «ԴԱՀԿ ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի 3-րդ մասով ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի կողմից ընդունված 23.10.08թ. թիվ 899 հրամանով, որի համաձայն ստեղծվել է հարկադիր կատարողների աշխատանքային խումբ: Այս կապակցությամբ, կարծում եմ, որ պետք է դեկավարվել «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն. «Բարդ և ծավալուն կատարողական գործողությունները պահանջող վարույթների ընթացքը արդյունավետ լուծելու համար հարկադիր կատարման ծառայության մարզային (Երևանի քաղաքային) բաժնի պետի որոշմամբ կարող է ստեղծվել հարկադիր կատարողների խումբ: Հարկադիր կատարողների խմբի դեկավարին նշանակում է հարկադիր կատարման ծառայության մարզային (Երևանի քաղաքային) բաժնի պետը»: «ԴԱՀԿ ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն. «Գլխավոր հարկադիր կատարողը՝ ընդունում է հարկադիր կատարման ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ, տալիս է ցուցումներ»: Զանի որ «ԴԱՀԿ մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը կոնկրետ անդրադառնում է բարդ և ծավալուն կատարողական գործողությունները պահանջող վարույթների ընթացքը արդյունավետ լուծելու համար հարկադիր կատարողների խումբ ստեղծելուն, ապա գտնում եմ, որ «ԴԱՀԿ ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն այս դեպքում կիրառելի չէ»: ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին առաջարկվել է պարզաբանել վերոնշյալ հարցերը, միևնույն ժամանակ ուղարկել 23.10.2008թ. թիվ 899 հրամանի պատճենը:

Բողոքը քննարկման փուլում է:

Կարևոր է անդրադառնալ Հայաստանի Իրավական Տեղեկատվության Համակարգի հետ կապված որոշ հարցերի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարին հասցեազրած Պաշտպանի գրությանը:

Գրությամբ նախարարին հայտնվել է, որ Պաշտպանի կողմից 02.10.2007թ. դիմում է ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան «Պետական կենսաքոչակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Պահանջվող (25 տարի) ապահովագրական ստաժի առկայության դեպքում ստաժը դատական կարգով չի հաստատվում» և 3-րդ մասի՝ «Դատական կարգով կարող է հաստատվել պահանջվող ստաժի պակասող մասը, սակայն տասը տարվա ստաժից ոչ ավելի» Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 և 37 հոդվածներին հակասող և անվավեր ճանաչելու խնդրանքով:

ՀՀ սահմանադրական դատարանի 29.01.2008թ. թիվ ՍԴՈ-731 որոշմամբ վերոնշյալ դրույթները ճանաչվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 և 37 հոդվածներին հակասող և անվավեր:

Սակայն Հայաստանի Իրավական Տեղեկատվության Համակարգում որպես հակասահմանադրական դրույթ ընդգծված է «Պետական կենսաքոչակների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը. «Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթրերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով»:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Իրավական Տեղեկատվության Համակարգի շահագործումը իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ն՝ առաջարկվել է հանձնարարել այդ կապակցությամբ կատարելու համապատասխան ճշտում:

Գրությանն ի պատասխան՝ 03.06.2008թ. նախարարը հայտնել է, որ ««Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն իրականացնում է օրենսդրական, գերատեսչական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիան: Նույն հոդվածի համաձայն ինկորպորացիան իրավական ակտում կատարված փոփոխությունների և լրացումների ներառումն է համապատասխան իրավական ակտում: ՀՀ սահմանադրական դատարանի որոշումն իրավական ակտում փոփոխություն կամ լրացում նախատեսող ակտ չէ, և որևէ օրենքով նախատեսված չէ, որ ՀՀ սահմանադրական դատարանի կամ այլ դատարանի կողմից իրավական ակտի կամ դրա մասի անվավեր ճանաչվելու որոշման մասին պետք է հղում նախատեսվի վերահրատարակվող իրավական ակտում: Եվ եթե ՀՀ

արդարադատության նախարարության կողմից իրավական ակտի պաշտոնական վերահրատարակումն իրականացվեր նշված պահանջների խախտմամբ, ապա այն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն կհամարվեր անվավեր: Նույնը վերաբերում է նաև ինտերնետային կայրում տեղադրված «Առլիս» իրավական տեղեկատվական համակարգին, որը նույնպես իրավական ակտերի պաշտոնական վերահրատարակում է»:

Չհամաձայնվելով նախարարի դիրքորոշման հետ՝ 28.06.2008թ. կրկին գրություն է ուղարկվել, որով նշվել է, որ ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի համաձայն. «Սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում իրապարակման պահից»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն ընդունում է միայն նորմատիվ, անհատական կամ աշխատակարգային որոշումներ»:

Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «**Նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության ժողովոյի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը»:**

Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուղ մեկ իրավական նորմ:

**Նորմատիվ իրավական ակտ** է համարվում նաև նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի գործողությունը դադարեցնող իրավական ակտը, նույնիսկ այդ փոփոխությունների կամ լրացումների իրավական նորմ չպարունակելու դեպքում»:

Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն. «Իրավական ակտի գործողությունը դադարում է՝ իրավական ակտն անվավեր ճանաչվելու դեպքում», իսկ 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն. «Իրավական ակտն անվավեր է ճանաչվում՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից իրավական ակտը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչվելու դեպքում»:

Օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն. «Իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով»:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ անվավեր է ճանաչվում իրավական ակտը՝ դրանով իսկ դադարեցնելով նրա գործողությունը: Սիաժամանակ իրավական ակտի փոփոխության հասկացությունը ներառում է նաև իրավական ակտի հոդվածների գործողությունը դադարեցնելը: Հետևաբար, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը պետք է իրականացնի իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիան, և փոփոխությունը չի կարող հանդիսանալ ՀՀ արդարադատության նախարարության կողմից օրենքի և իրավական այլ ակտերի պահանջների խախտմամբ հրատարակված իրավական ակտ՝ այն չի առաջացնի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված հետևանքները:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկվել է հանձնարարել Հայաստանի Իրավական Տեղեկատվության Համակարգում կատարել համապատասխան ճշգրտում, սակայն որևէ պատասխան չի ստացվել:

ՀՀ արդարադատության նախարարության մեկ այլ գործակալության դեմ էլ ուղղված է «Ազգային վերածնունդ» կուսակցության քողոքը: Խոսքը Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության մասին է:

Այսպես, «Ազգային վերածնունդ» կուսակցության քաղ. խորհրդի անդամ Սիմոն Գրիգորյանը և դիմումը ստորագրած մյուս անձինք ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հայտնել են, որ «Ազգային վերածնունդ» կուսակցության՝ 2007թ. դեկտեմբերի 5-ի համագումարի արդյունքում ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը կատարել է կուսակցության վերակազմակերպման գրանցում: Արդյունքում «Ազգային վերածնունդ» կուսակցությունը վերակազմակերպման միջոցով միացել է ՀՌԱԿ-ին: Ըստ քաղաքացիների՝ կուսակցության քաղաքական խորհրդի նիստին ներկա են եղել անդամներից ընդամենը 5-ը, մինչդեռ, համաձայն Կանոնադրության 8.5 կետի խորհրդի նիստն իրավագոր է, եթե նրան մասնակցում են անդամների 2/3-ը, այսինքն տվյալ պարագայում 6 անդամ: Դիմումատուների պնդմամբ խախտվել են «Կուսացությունների մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ:

Դիմումում հիշատակված հարցերի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից գրություն է հասցեագրվել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց ռեգիստրի գրանցման գործակալությանը՝ առաջարկելով դիմումում նշված տեղեկությունների վերաբերյալ ներկայացնել պարզաբանումներ, ինչպես նաև տրամադրել «Ազգային վերածնունդ» կուսակցության քաղաքական խորհրդի անդամների կազմը և վերակազմակերպման համար ներկայացված փաստաթղթերի

պատճեները: Ի պատասխան՝ հարցման 05.08.2008թ. գրությամբ տեղեկացվել է, որ կուսակցության վերակազմակերպումը գրանցելու համար ներկայացվել են «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի ա/ կետով սահմանված փաստաթորթերը: Գրությամբ նաև հայտնվել է, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության ներկայացված փաստաթորթերի տվյալների իսկության համար պատասխանատվությունը կրում են փաստաթորթերը ներկայացրած անձինք: Ինչ վերաբերում է կուսակցության քաղաքական խորհրդի թվակազմին, ապա այդ կապակցությամբ տեղեկացվել է, որ Կուսակցության սկզբնական գրանցումից հետո (կուսակցության սկզբնական գրանցման համար ներկայացված 16.12.2005թ. դիմումը ստորագրված է քաղաքական խորհրդի 9 անդամների կողմից) ցանկացած ժամանակ կուսակցությունն իր կողմից հերթական կամ արտահերթ համագումարներով կարող էր փոխել իր քաղաքական խորհրդի անդամների թվակազմը և այդ մասին չտեղեկացնել գրանցող մարմնին, քանի որ գրանցման են ենթակա կուսակցության կանոնադրության, ծրագրի և ղեկավարի փոփոխությունները:

Մարդու իրավունքների պաշտպանը 29.09.2008թ. մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու և անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու առաջարկ ներկայացնելու մասին որոշմամբ առաջարկել է, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալության կողմից կատարված կուսակցության վերակազմակերպման պետական գրանցումը:

Ի պատասխան կայացված որոշման՝ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալության պետը 14.10.2008թ. գրությամբ հայտնել է, որ կուսակցության վերակազմակերպման գրանցման համար օրենքով պահանջվել էր ներկայացնել կուսակցության համագումարի արձանագրությունը վերակազմակերպման մասին և ոչ թե կուսակցության քաղաքական խորհրդի որոշումը համագումար իրավիրելու մասին, հետևաբար, օրենքով չպահանջվող փաստաթորթերի օրինականությունը ստուգելու պարտականություն ռեգիստրը չուներ:

ԱՆ ռեգիստրի գործակալության կողմից տրամադրված փաստաթորթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ռեգիստրի կողմից չեն կատարվել «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի պարտադիր պահանջները: Մասնավորապես, համաձայն հիշատակված հոդվածի 1-ին կետի՝ պետական ռեգիստրը փաստաթորթերի ներկայացման օրը սահմանված կարգով նշում է կատարում դիմումի վրա՝ փաստաթորթերն ընդունած անձի ստորագրությամբ, և գրառում նաև փաստաթորթերի ընդունման մատյանում: ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալության

կողմից 05.08.2008թ. գրությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղարկված փաստաթղթերում օրենքի հիշատակված պահանջը չի պահպանվել:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում նաև պարզվել է, որ չի պահպանվել հիշատակված օրենքի պարտադիր պահանջներից մեկը, մասնավորապես, համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի թ/ Ենթակետի՝ փաստաթղթերում պետք է նշված լինեն դրանք կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը: Մինչդեռ, «Ազգային վերածնունդ» կուսակցության 2-րդ համագումարի արձանգրության մեջ հիշատակված պահանջը չի պահպանվել:

Համաձայն «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի՝ նշված պահանջների չբավարարող փաստաթղթերը պետական ռեգիստրը վերադարձնում է առանց քննարկման: Հոդվածում նշված պահանջները չբավարարող փաստաթղթի առկայությունը հիմք է պետական գրանցումը մերժելու համար: Կուսակցության 2-րդ համագումարի անցկացման վերաբերյալ մամուլում տրված հայտարարության մեջ, որը ներկայացվել է պետական ռեգիստրի գործակալության կողմից, որպես համագումարի անցկացման վայր հիշատակվել է «ք. Երևան, Սելիք-Աղամյան 2, Կառավարության նիստերի դահլիճ» հասցեն, սակայն նույն համագումարի անցկացման մասին արձանագրության մեջ, որպես արձանագրության կազմման, վայր հիշատակվել է «ք. Երևան, Ծխախոտագործների փողոց, 58 տուն»:

Կուսակցությունների միացման պայմանագիրը կազմվել է 20.11.2007թ. և ստորագրվել նաև «Ազգային վերածնունդ» կուսակցության նախագահի կողմից՝ առանց կուսակցության համագումարով հաստատման:

«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական ռեգիստրին ներկայացված տվյալների իսկության համար պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը ներկայացրած անձինք: Համաձայն նույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի՝ պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումում ստուգվում են իրավաբանական անձի կազմավորման կարգը, ներկայացված փաստաթղթերի ամողականությունն ու համապատասխանությունը օրենքների պահանջներին: Սակայն ռեգիստրի կողմից վերը հիշատակված գործառույթը չի կատարվել, ինչի արդյունքում իրականացվել է կուսակցության վերակազմակերպման պետական գրանցում՝ օրենքի պահանջների խախտմամբ, ինչը, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի, հիմք է ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև՝ դատական կարգով:

Պաշտպանը, հիմք ընդունելով «Ազգային վերածնունդ» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ Սիմոն Գրիգորյանի դիմումի քննարկման արդյունքները, 11.11.2008թ. որոշմամբ առաջարկել է ՀՀ արդարադատության նախարարին վերացնել խախտումը և սահմանված կարգով անվավեր ճանաչել կուսակցության վերակազմակերպման պետական գրանցաման մասին վարչական ակտը: Սինույն ժամանակ, որոշմամբ առաջարկվել է քննարկել ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալության պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցը:

Արդարադատության նախարարը, ի պատասխան Պաշտպանի կողմից հիշատակված փաստի, որ «Ազգային վերածնունդ» կուսակցության 2-րդ համագումարի արձանագրության մեջ չի նշվել արձանագրության կազմման տարին, ամիսն ու ամսաթիվը, ինչը «Իրավաբանական անձանց պետական գրանցամ մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջ է հայտնել է, որ տվյալ պարագայում, որպես արձանագրության կազմման տարի ամիս, ամսաթիվ դիտարկվել է համագումարի անցկացման տարին, ամիսն ու ամսաթիվը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ օրենքը նման հնարավորությամբ ՀՀ ԱՆ ռեգիստրի գործակալությանը չի օժտել:

Պաշտպանի որոշման մեջ հիշատակված մեկ այլ դիտարկման կապակցությամբ, այն մասին, որ ԶԼՄ-ներում «Ազգային վերածնունդ» կուսակցության համագումարի անցկացման վայր նշվել է «Մելիք -Աղամյան 2» հասցեն, սակայն արձանագրության մեջ որպես կազմման վայր նշվել է «Ծխախտագործների փողոց 58 տուն» հասցեն ՀՀ արդարադատության նախարարը հայտնել է, որ դա հիմք չէ պետական գրանցումը մերժելու համար, քանի որ տեսականորեն հնարավոր է համարվում, որ համագումարը տեղի ունենա մեկ վայրում, սակայն ինչ-ինչ պատճառներով տեղափոխվի այլ վայր: Այստեղ կատարվել է Պաշտպանի կողմից ներկայացված փաստարկների խեղաթյուրում: Մասնավորապես, Պաշտպանը չի նշել, թե համագումարը գումարվել է մեկ վայրում, իսկ ավարտվել մեկ այլ վայրում: Որոշմամբ ընդգծվել է հասցեների տարբերակման խնդիրը, այսինքն՝ այն պետք է անցկացվել մի հասցեում, սակայն, ըստ արձանագրության մեջ կատարված գրառման, անցկացվել է մեկ այլ վայրում, ոչ թե սկսվել է նշված հասցեում, իսկ ավարտվել ուրիշ հասցեում:

Պաշտպանը որոշմամբ նշել է, որ կուսակցության ներկայացրած փաստաթղթերի վրա պետք է սահմանված կարգով նշված լինեին դրանք ընդունող անձի ստրագրությունը և դիմումի ստացման ամսաթիվը, որը բացակայել է: Այս կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից պատասխանել են, որ դիմումին կցվել է մակարման թերթիկ, որում կատարվել են համապատասխան նշումներ: Ընդ որում, ըստ պատասխանի՝ այն հանդիսանում է փաստաթղթերի անբաժանելի մաս, որի պատճենը, սակայն, Պաշտպանին չի տրամադրվել, քանի որ պահանջվել են միայն «Ազգային վերածնունդ» կուսակցության կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

Այստեղ հարց է առաջանում՝ եթե մակագրման թերթիկը հանդիսանում է փաստաթղթերի փաթեթի անբաժանելի մասը, ապա ի՞նչ հիմնավորմամբ կամ պատճառաբանությամբ այն կարող էր չներկայացվել Պաշտպանին։ Այսինքն, փաստաթղթերն իրենց անբաժանելի մաս հանդիսացող և կարևոր տեղեկատվություն պարունակող մակագրման թերթիկից առանձնացել են առանց համապատասխան պատճառաբանված հիմնավորման։

Պաշտպանը որոշմամբ ընդգծել էր նաև այն հանգամանքը, որ կուսակցության կողմից միացման պայմանագիրը կազմվել էր 20.11.2007թ. և ստորագրվել «Ազգային վերածնունդ» կուսակցության նախագահի կողմից՝ առանց համագումարով հաստատման։ Որպես պատճառաբանություն՝ ՀՀ արդարադատության նախարարությունից պատասխան գրությամբ նշել են, որ «Ազգային վերածնունդ», «Դաշինք» և «ՀՌԱԿ» կազմած միացման պայմանագիրը ստորագրվել է կուսակցությունների ղեկավարների կողմից 2007թ. նոյեմբեր 20-ին։ «Ազգային վերածնունդ» կուսակցության կողմից այն հաստատվել է դեկտեմբերի 5-ի համագումարով։ Այս կապակցությամբ անհրաժեշտ է անդրադառնալ այն փաստին, որ տեղի է ունեցել կուսակցության Կանոնադրության 7-րդ բաժնի 7.7 կետի ը/ ենթակետի պահանջի խախտում։

Թույլ տրված խախտումները վերացնելու առաջարկով Պաշտպանը 11.02.2009թ. թիվ 1-0671 գրությամբ դիմել է ՀՀ վարչապետին։ Պատասխան դեռևս չի ստացվել։

Գործը գտնվում է քննարկման փուլում։

### 3.6.2. Քրեակատարողական հիմնարկներ

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների դեմ 2008թ. ընթացքում ստացվել է 18 բողոք, որից՝

- |   |   |
|---|---|
| • ընդունվել են քննարկման՝   | 6 |
| • ներկայացվել են դիմողին իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ | 7 |
| • փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝                                       | 1 |
| • չեն ընդունվել քննարկման՝  | 4 |
| • չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝                                      | 0 |
| • ուսումնասիրման ընթացքում են՝  | 0 |

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական և կարևոր ոլորտներից է քրեակատարողական հիմնարկներում նախնական կալանք կրող կամ ազատազրկման դատապարտված անձանց իրավունքների պաշտպանությունը՝ կարևորելով

նրանց՝ կեցության համար անհրաժեշտ և բավարար կենսապայմաններով ապահովված լինելը, նրանց նկատմամբ բռնությունների և անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող գործողությունների կիրառման բացառումը, արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու իրավունքի իրականցման ապահովումը, բժշկական օգնությունը ժամանակին և բավարար կերպով տրամադրելը, անազատության պայմաններում պահպող անձանց համար օրենքով նախատեսված այլ իրավունքների լիարժեք իրականացումը երաշխավորված լինելը:

Կատարված ուսումնասիրությունների տվյալներով կարելի է պնդել, որ ներկայիս գործող քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանները դեռևս չեն կարող նման հաստատությունների համար նախատեսված միջազգային չափանիշներին լիովին համապատասխանող համարվել՝ ասնիտարական պայմանների, ջերմային անհրաժեշտ ռեժիմի ապահովման, խոնավության տոկոսայնության, բուժսպասարկման հնարավորությունների և նման այլ պայմանների առումով: Այդ մասին նշվել է նաև Պաշտպանի 2006-2007թ. տարեկան գեկույցներում, ինչը խթան է հանդիսացել այդ ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկելու համար, մասնավորապես, մասնակի վերանորոգվել է «Սևան» քԿՀ-ն, հիմնովին վերանորոգվել է «Արովյան» քԿՀ-ի մասնաշենքը:

Պաշտպանի ներկայացուցիչները պարբերաբար կատարվող այցելությունների ժամանակ գտնվել են ինչպես դատապարտյալների, այնպես էլ կալանավորների խցերում: Մի շարք դեպքերում արձանագրվել է, որ մեկ խցում պահպող անձանց առավելագույն թիվը գերազանցում է բույլատրելի քանակը: Փաստվել է նաև, որ կալանավորների համար նախատեսված խցերը գտնվում են ավելի անմիտար վիճակում: Չնայած դրան, բոլոր խցերում և միջանցքներում փակցված են եղել դատապարտյալի իրավունքներն ու պարտականությունները ամրագրող իրավական ակտերը:

«Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը, ներառված լինելով ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքային համակարգում, շարունակում է մնալ ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում: Այստեղ պահպում են ինչպես նախնական կալանք կրող, այնպես էլ ազատազրկման դատապարտված անձինք: Թեև այստեղ պահպող անձանցից պահման պայմանների վերաբերյալ գանգատներ չեն ստացվել, այնուամենայնիվ, նրանց համար առկա է ՀՀ ազգային անվտանգության ծառայության ազդեցության ռիսկը:

Քրեակատարողական հիմնարկներում պահպող անձանցից 2008 թվականին հազվադեպ են ստացվել բողոքներ, որոնցով նրանք գանգատվում են պահման պայմաններից, վարչակազմի կողմից իրենց իրավունքների խախտումներից: Սակայն ասվածը չի նշանակում, որ քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց կողմից ներկայացված բոլոր դիմումները նույնարնույթ են: Ավելին, հաշվետու ժամանակահատվածում Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներով հայտնվել են, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական

վարչության համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները խցերում արգելված իրեր դրու բերելու նպատակով իրականացված խուզարկության ընթացքում քրեակատարողական հիմնարկում պահպող անձանց հաճախ ենթարկում են դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: Սակայն դիմումատուները երբեմն հրաժարվում են իրենց անուն-ազգանունները հրապարակայնացնել այն հիմնավորմամբ, որ դրանով իսկ վատրարանում է խցակիցների վիճակը: Ընդ որում այդ երևույթը դարձել է արատավոր պրակտիկա, ինչի հետևանքով այդպիսի վերաբերմունքի արժանացած անձինք հրաժարվում են հայտնելու պատկան մարմիններին:

Բացի դրանից, կալանավորների և դատապարտյալների շրջանում վարչակազմի նկատմամբ ձևավորված անվատահության հաջորդ պատճառը այն է, որ վերադասության կարգով բողոքարկումը անարդյունավետ է, ինչը չի բխում ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի պահանջներից, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Ստորև ներկայացված են այն դիմում-բողոքների օրինակները, որոնք վկայում են քրեակատարողական հիմնարկի վարչակազմի աշխատակիցների կողմից իրենց լիազորությունների ոչ պատշաճ իրականացման մասին:

## Օրինակ 1

2008թ. օգոստոսին Ա.Բ.-ի խնդրանքով «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ են այցելել Պաշտպանի աշխատակիցները: Ա. Բ.-ը հայտնել է, որ վարչակազմի կողմից անհիմն ենթարկվել է տույժի: Պաշտպանը պաշտոնական գրություն է ուղարկել ՀՀ ԱՆ ՔԿՀ վարչության պետին և պահանջել տալ համապատասխան պարզաբանումներ: Վերջինս հայտնել է, որ Ա.Բ.-ի հիվանդասենյակից հայտնաբերվել և առգրավվել են արգելված իրեր՝ 6 հատ պատառաքաղ, «Նոկիա» բջջային հեռախոսի 1 լիցքավորման սարք, «Նոկիա» բջջային հեռախոսի ականջակալներ և ապակյա տարաներ:

Ա.Բ.-ի բացատրության համաձայն՝ այդ իրերը քրեակատարողական հիմնարկ են բերվել իր հետ բուժվող դատապարտյալներից մեկի միջոցով և եղել են համատեղ օգտագործման համար՝ բացառությամբ բջջային հեռախոսի լիցքավորման սարքի և ականջակալների: Նշված խախտումների համար Ա.Բ.-ի և մյուս դատապարտյալների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր:

Այս կապակցությամբ Պաշտպանն առաջարկել է հիմնարկի տնօրինությանը անցկացնել ծառայողական քննություն և օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկել այն պաշտոնատար անձանց, որոնց թողտվությամբ վերը նշված արգելված իրերը հայտնվել են հիվանդասենյակում:

Ի պատասխան տեղեկացվել է, որ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քԿՀ-ում արգելված իրերի ներքափանցման ուղին և դրան աջակցած անձանց պարզելու նպատակով կատարվում են ուսումնասիրություններ և ստուգումներ, անհրաժեշտության դեպքում կիրականացվի նաև ծառայողական քննություն:

Կարծում ենք, որ եթե քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները պատշաճ կերպով կատարեին իրենց պարտականությունները, ապա կկանխվեր այլ դատապարտյալի կողմից արգելված իրերը հիվանդասենյակ տեղափոխելու հնարավորությունը, իսկ Ա. Բաբաջանյանը և մյուսները չեն ենթարկվի կարգապահական տույժի:

## Օրինակ 2

Քաղաքացի Մ.Գ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ իր որդին՝ Ս.Գ.-ն՝ ծնվ.1978թ., 2008թ. օգոստոսի 6-ին մահացել է: Հայտնել է, որ իր որդին պատիժը կրելիս է եղել ՀՀ ԱՆ «Կոշ» քԿՀ-ում և որևէ կարգապահական խախտում բույլ չի տվել: 2008թ. օգոստոսի 1-ին նա ունեցել է սուր ցավեր՝ կույր աղիքի շրջանում, որի կապակցությամբ դիմել է ադմինիստրացիային, սակայն չի ստացել պատշաճ բուժօգնություն: Կույր աղիքի ցավերը շարունակվել են մինչև օգոստոսի 5-ը: Օգոստոսի 5-ին Ս.Գ.-ին տեղափոխել են ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քԿՀ, կատարել վիրահատություն, որի ընթացքում ծագել են բարդություններ: Այնուհետև, դիմումատուի որդուն տեղափոխել են Նոր Նորքի հիվանդանոց, որտեղ նա մահացել է:

Բողոքում նշված հարցերի կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Ա. Թամազյանը N2/16-08 գրությամբ հայտնել է, որ ՀՀ գլխավոր դատախազության կողմից նախապատրաստված նյութերը ուղարկվել է ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչության Երևան քաղաքի քննչական վարչություն՝ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու և վերջնական ընթացքը լուծելու համար: Նյութերի նախապատրաստման ընթացքը վերցվել է ՀՀ գլավոր դատախազության հսկողության տակ:

## Օրինակ 3

26.12.2008թ. Պաշտպանի աշխատակիցներն այցելել են «Դատապարտյալների հիվանդանոց» քԿՀ, որտեղ հանդիպել ՀՀ ԱՆ «Նորարաշեն» քրեակատարողական հիմնարկից այնտեղ տեղափոխված կալանավոր Գ.Գ.-ին: Նրա դեմքին առկա են եղել վնասվածքներ՝ քերծվածքներ և կապտուկներ:

Պաշտպանի ներկայացուցիչների հարցին, թե ինչի՞ արդյունքում են առաջացել այդ վնասվածքները, Գ.Գ.-ն հայտնել է, որ դրանք ստացել է վայր ընկնելու հետևանքով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ կալանավորների նկատմամբ կիրառվել են բոնություններ, սակայն նրանց մի մասը հրաժարվում է

բարձրաձայնել այդ մասին՝ վախենալով դրա հետևանքներից: Ընդ որում, խոսքը ոչ միայն մարտյան դեպքերի կապակցությամբ անազատության մեջ գտնվող անձանց մասին է, այլև նրանց, ովքեր կալանավորված են կամ պատիժ են կրում այլ արարքների կատարման համար: Նման երևոյթի գոյությունը վկայում է ՔԿՀ-ում ստեղծված անառողջ մքնուրսի և այն մասին, որ խնդիրը, այնուամենայնիվ, համակարգային է:

#### Օրինակ 4

ՀՀ ԱՆ «Նուրբարաշեն» ՔԿ հիմնարկի կալանավոր Գրիգոր Ռոկոսով Ռուսականի շահերի պաշտպան՝ փաստաբան Ստեփան Ռուսականը, 23.12.2008թ. գաճգվածային լրատվության միջոցներով հայտարարել է, որ իր պաշտպանյալը քրեակատարողական հիմնարկում ծեծի է ենթարկվել:

Նույն օրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ահազանգել ՀՀ ԱՆ «Նուրբարաշեն» ՔԿՀ գտնվող կալանավոր Գևորգ Մանուկյանի շահերի պաշտպան՝ փաստաբան Ինեսա Պետրոսյանը և հայտնել, որ իր պաշտպանյալը քրեակատարողական հիմնարկում ծեծի է ենթարկվել և իրեն չեն քողնում տեսակցել վերջինիս հետ:

Պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի աշխատակիցներն այցելել են ՀՀ ԱՆ «Նուրբարաշեն» ՔԿՀ, հանդիպել նախնական կալանքի տակ գտնվող Գրիգոր Ռուսականին և Գևորգ Մանուկյանին: Պաշտպանի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Գրիգոր Ռուսականը հայտնել է, որ 23.12.2008թ. ժամը 10:00-ին կալանախուց են մտել հարկի հերթապահ Թարուլ Հակոբյանը և իրեն անձանոք այլ անձինք՝ կալանախում խուզարկություն կատարելու համար: Իրեն որպես տարիքով ավագի, քողել են կալանախում, իսկ մյուս կալանավորներին հանել են խցից:

Խուզարկության ժամանակ խուզարկություն կատարողներից մեկը, տեղեկանալով, թե ինքը ՀՀ քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածով է մեղադրվում, ուժգին ապտակել է իրեն, որից հետո ևս մեկ հարված է ստացել աջ ոտքին: Ստացած հարվածների հետևանքով իր ինքնազգացողությունը խիստ վատացել է, որի պատճառով էլ իրեն նշանակված ժամից ուշ են ներկայացրել դատարան:

Մյուս կալանավոր Գևորգ Մանուկյանը Պաշտպանի ներկայացուցիչներին հայտնել է, որ արդեն հանդիպել է իր փաստաբանի հետ, իսկ ինչ վերաբերում է իրեն ծեծի ենթարկելուն, ապա հրաժարվում է այդ առումով որևէ հայտարարություն անել, քանի դեռ չի խորհրդակցել փաստաբանի հետ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դատապարտում է նման բռնության երևոյթը՝ համարելով այն որպես ճնշում և ակնհայտ խոշտանգման դրսերում ամբաստանյալների վրա, ուստի, Գրիգոր Ռուսականի հայտնած տեղեկությունների վերաբերյալ դիմել է ՀՀ

արդարադատության նախարարին՝ առաջարկելով անցկացնել ծառայողական քննություն և պատժել մեղավոր անձանց:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ արդարադատության նախարարությունը սկզբում կտրականապես հերքում էր Գ. Ռուբենյանին ծեծելու վերաբերյալ տեղեկությունը և հայտարարում, որ դա իրականությանը չի համապատասխանում, առանց համապատասխան ծառայողական քննություն անցկացնելու և իրավիճակը լիարժեք ուսումնասիրելու: Մինչդեռ, երկրում մարդու իրավունքների պաշտպանվածության վերաբերյալ ՀՀ Նախագահի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջև նույն օրը տեղի ունեցած քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ՔԿՀ-ում քոնությունների կիրառման դեպքերին: Հարցի կարևորությունը հաշվի առնելով՝ ՀՀ Նախագահը հանձնարարական է տվել ՀՀ արդարադատության նախարարին և Նախագահի իրավական հարցերով օգնականին՝ անցկացնել ծառայողական քննություն՝ ՔԿՀ-ում քոնությունների կիրառման ահազանգերի ուսումնասիրման համար, որին մասնակցելու համաձայնություն է հայտնել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը:

Փաստորեն, իրավասու գերատեսչությունը մինչև անմիջական հանձնարարություն չստացավ ՀՀ Նախագահից, սեփական նախաձեռնությամբ քայլ չձեռնարկեց իր գործառույթների լիարժեք իրականացման ուղղությամբ: Սրանով ևս մեկ անգամ փաստվում է, որ խնդիրը համակարգային է:

Մտահոգիչ է, որ Պաշտպանի աշխատակազմ ահազանգեր են ստացվում մարտի 1-ի դեպքերի կապակցությամբ հարուցված քրեական գործերով անցնող նաև այլ կալանավորներից, այդ թվում՝ Արմեն Խուրշույյանից, Գևորգ Մանուկյանից և ուրիշներից: Այդ հանգամանքը, անշուշտ, վկայում է քրեակատարողական հիմնարկներում ստեղծված անառողջ մթնոլորտի մասին, մինչդեռ, իրավասու գերատեսչությունն այս հարցում, ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության, մշտապես հերքում է նման փաստերի առկայությունը, իսկ ՀՀ դատախազության մարմինների միջոցով այդ խախտումների առկայության փաստերի հիմնավորումը կամ ապացուցումը գրեթե դառնում է անհնար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ դեպքերում էլ ՔԿՀ-ի աշխատակիցները կալանավորված անձանց սպառնում են, որ եթե նրանք իրենց ծեծելու և խոշտանգումների վերաբերյալ հայտարարություններ անեն, ապա դրա հետևանքով «վատ է լինելու» նրանց հետ միևնույն խցում բնակվող մյուս կալանավորների համար: Թե ի՞նչ է նշանակում «վատ է լինելու» և ինչպես կարող է այն դրսերվել, դժվարանում ենք կոսահել, սակայն փաստ է, որ վախի սինդրոմը շատ դեպքերում քույլ չի տալիս, որ մյուս կալանավորները նույնպես հայտարարություն անեն իրենց նկատմամբ քոնություն կիրառվելու մասին:

Ահա այս է պատկերը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական իիմնարկներում տիրող իրավիճակի, ինչը, գոնե մեզ համար, ավելի քան մտահոգիչ է և դատապարտելի:

### 3.7. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության դեմ ստացվել է 6 բողոք, որից 4-ը լընդունվել է քննարկման, սակայն քննարկումը հետագայում դադարեցվել է խախտում շրացահայտելու հիմքով, իսկ 2 բողոք փոխանցվել է այլ մարմնի քննարկմանը:

#### Օրինակ 1

Քաղաքացի Լ.Դ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումով հայտնել է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները այցելել են իր ամուսնու՝ Վ.Մ.-ի հայրական տուն և ծնողին հորդորել, որ Վ.Մ.-ն ներկայանա ՀՀ ազգային անվտանգության ծառայություն: Վերջինս, մտածելով, որ դա պարզապես բյուրիմացություն է, մայիսի 15-ին ներկայացել է ԱԱԾ, որտեղ անմիջապես ձերբակալվել է: Դիմումատուն հայտնել է նաև, որ իր ամուսնուն առաջադրվել է անհիմ մեղադրանք և առ այսօր ապօրինի պահպում է անազատության մեջ:

Լ.Դ.-ի դիմումի կապակցությամբ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության պետը գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության վարույթում քննվող թիվ 58202508 քրեական գործը հարուցվել է 2008թ. ապրիլի 28-ին, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության օպերատիվ-տեխնիկական ծառայության պաշտոնատար անձի կողմից, անձնական շահագրգուժությունից ելնելով, իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու դեպքով, որը պետության օրինական շահերին էական վնաս է պատճառել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:

Նույն գրությամբ հայտնվել է, որ նախարարնության ընթացքում հայտնաբերվել են բավարար փաստեր, որոնք վկայում են հանցագործության կատարմանը Վ.Մ.-ի անմիջականորեն առնչությունը, ինչի հետևանքով վերջինս 2008թ. մայիսի 15-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129 հոդվածի հիմքով ձերբակալվել է, մայիսի 17-ին գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-308 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար, և նույն օրը Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը:

Բողոքի քննարկումը դադարեցվել է խախտման բացակայության հիմքով:

## **Օրինակ 2**

Քաղաքացի Գ.Կ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած դիմումով հայտնել է, որ իր որդիներ Ա.Ա.-ն և Ս.Ս.-ն իրենց քաղաքական հայացքների պատճառով հետապնդվել են իրավապահ մարմինների կողմից: Մասնավորապես Ա.Ա.-ի նկատմամբ հետապնդումը սկսվել է 2008թ.-ի փետրվար ամսից՝ ՀՀ ԱԱԾ-ի կողմից:

Դիմումատուն միաժամանակ հայտնել է, որ փետրվարի 26-ին Ա.Ա.-ի կնոջ՝ Լ.Բ.-ի բնակարանում կատարվել է անհիմն խուզարկություն: Խուզարկությամբ առգրավվել են նշված բնակարանի սեփականության իրավունքի վերաբերյալ փաստաթղթերի բնօրինակները:

Քաղաքացու դիմումով նշված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություն է ուղարկվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենին: Վերջինս գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության վարույթում քննված թիվ 58200608 քրեական գործով դատարանի որոշմամբ 26.02.2008թ. խուզարկվել է Ա.Ա.-ի փաստացի բնակարանը, որի ընթացքում հայտնաբերվել և առգրավվել են քննության համար հետաքրքրություն ներկայացնող փաստաթղթեր, սակայն դրանց թվում չեն եղել բնակարանի սեփականության իրավունքի վերաբերյալ փաստաթղթերի բնօրինակներ /խուզարկության արձանագրության պատճենը հանձնվել է Ա.Ա.-ի կնոջը՝ Լ.Բ.-ին/:

Հայտնվել է նաև, որ ՀՀ ԱԱԾ քննչական վարչության վարույթում քննվող թիվ 58202508 քրեական գործի շրջանակներում Ա.Ա.-ն 2008թ. մայիսի 6-ին ձերբակալվել է, գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, նրան մեղադրանք է առաջարկվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-308 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար և նույն օրը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանք:

Ձերբակալման պահից և քննության ողջ ընթացքում Ա.Ա.-ն ապահովված է եղել պաշտպանով, որի ներկայությամբ էլ կատարվել են մեղադրյալի մասնակցությամբ բոլոր քննչական գործողությունները, իսկ նրա կալանքի տակ պահելու ժամկետի երկարացումը պայմանավորված է քրեական գործի առանձնակի բարդությամբ, ինչպես նաև գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննության ապահովման անհրաժեշտությամբ:

Բողոքի քննարկումը դադարեցվել է:

### **3.8. ՀՀ պաշտպանության նախարարություն**

ՀՀ պաշտպանության նախարարության դեմ 2008թ. ընթացքում ստացվել է 49 բողոք, որից՝

- |   |    |
|---|----|
| • ընդունվել են քննարկման՝   | 21 |
| • ներկայացվել են դիմողին իր իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ | 2  |
| • փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝                                       | 3  |
| • չեն ընդունվել քննարկման՝  | 7  |
| • չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝                                      | 1  |
| • ուսումնասիրման ընթացքում են՝  | 15 |

Ինչպես նախորդ տարիներին, 2008թ. ստացված դիմում-բողոքները նույնապես հիմնականում վերաբերել են զինկոմիսարիատների կողմից օրենքի խախտումով գորակոչ իրականացնելուն, զինվորական հաշվառման վերցնելը կամ հաշվառումից հանելն անհիմն մերժելուն, ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից գորակոչվողի առողջության վերաբերյալ սխալ եզրակացություն կազմելուն, ժամկետային զինծառայողի նկատմամբ ոչ հոգատար վերաբերմունք ցուցաբերելուն, վատառողջ անձին գորակոչելու և նման այլ խնդիրների:

Պաշտպանության նախարարության դեմ ուղղված դիմում-բողոքների ընթացքը և դրանցում բարձրացված հարցերը ներկայացված են սույն գեկույցի ««Զինվորական ծառայության հետ կապված իրավունքներ» բաժնում:

### **3.9. ՀՀ տարածքային կառավարման նախարարություն /Ենթակառուցվածքներ/**

ՀՀ տարածքային կառավարման նախարարության /Ենթակառուցվածքների/ դեմ 2008թ.-ի ընթացքում ստացվել է 15 դիմում-բողոք, որից

- |   |   |
|---|---|
| • ընդունվել են քննարկման՝   | 9 |
| • ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ | 1 |
| • փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝                                   | 0 |
| • չեն ընդունվել քննարկման՝  | 3 |
| • չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝                                  | 0 |
| • ուսումնասիրման ընթացքում են՝  | 2 |

ՀՀ տարածքային կառավարման նախարարության դեմ ուղղված դիմում-բողոքները վերաբերել են անօրևասների բնակարանային ապահովության, ջրամատակարարում իրականացնող ընկերությունների գործունեության նկատմամբ ոչ պատշաճ հսկողություն իրականացնելու խնդիրներին:

### Օրինակ

Երևանի Մայիսյան փողոցի թիվ 10 շենքի 10-րդ բնակարանի նախկին բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 1983թ. վերոնշյալ տունը, որտեղ բնակվել են ինքը, եղբայրը և քույրը, իրացվել է բակի բարեկարգման կապակցությամբ: 1995թ. ՀՀ պատգամավորների Սպանդարյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեն որոշել է իր քրոջը հատկացնել մեկ սենյականոց բնակարան, իսկ իր և եղբոր բնակարանային հարցին անդրադառնալ համապատասխան բնակարանի առկայության ժամանակ, սակայն այդ հարցին այլևս ընթացք չի տրվել:

Նոր բնակարան հատկացնելու կամ բնակարան կառուցելու համար հողատարածք հատկացնելու պահանջով դիմել է տարբեր մարմիններ, սակայն ստացել է մերժում պատճառաբանությամբ, որ որպես անօրևան, իրեն բնակարան հատկացնելու հարցը հնարավոր կլինի քննարկել համապատասխան բնակարանի առկայության դեպքում, իսկ նոր հողամասերի տրամադրումը կատարվում է մրցութային և աճուրդային կարգով:

Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության 25.10.2000թ. «Պետական կամ հասարակական կարիքների համար հողամասը վերցնելու կապակցությամբ բնակտարածությունից զրկված քաղաքացիներին դրամական փոխհատուցում տրամադրելու կամ բնակարան հատկացնելու մասին» թիվ 683 որոշումը վերաբերում է միայն պետական կամ հասարակական կարիքների համար 1987-1991 թվականներին Երևան քաղաքում հողամասը վերցնելու կապակցությամբ բնակտարածությունից զրկված քաղաքացիների բնակարանային խնդրի լուծմանը՝ Պաշտպանի կողմից 06.10.2008թ. ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարին է ուղարկվել ՀՀ պատգամավորների Սպանդարյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 19.03.1995թ. հ. 16/142 որոշման պատճենը և առաջարկվել է քննարկել դիմումատուի բնակարանային հարցի լուծման տարբերակներ:

Գրությունը վերահասցեազրվել է Երևանի քաղաքապետարան, որտեղից, ի թիվս այլ տեղեկությունների, հայտնել են, որ ՀՀ կառավարության 13.03.1997թ. «Երևան քաղաքի քաղային սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանելու մասին» հ. 42 որոշմամբ Երևանի քաղաքային ենթակայության բնակարանային տնտեսության ձեռնարկությունների հաշվեկշիռներում հաշվեգրված բնակարանային ֆոնդը, ներառյալ բնակելի շենքերի բացվածքները և ոչ բնակելի տարածքները, որպես սեփականություն թաղային

համայնքներին են հանձնվել «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված հայեցողական լիազորություններով: Այդ որոշման համաձայն՝ պետական բնակելի ֆոնդը, բացի գերատեսչականից, հանձնվել է քաղային համայնքներին: Բնակարանների հատկացումը համայնքներում իրականացվում է բնակելի ֆոնդի առկայության դեպքում՝ ըստ հաշվառման ցուցակների հերթականության:

04.10.2005թ. «Հայաստանի Հանրապետության բնակարանային օրենսգիրքը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ բնակարանային օրենսգիրքը, և վերոհիշյալ գործընթացը դադարել է: Մինչև 1987թ. Երևան քաղաքում հողամաս վերցնելու կապակցությամբ բնակտարածությունից զրկված քաղաքացիների բնակարանի հատկացման կամ դրամական փոխհատուցման տրամադրման հայեցակարգ կամ ծրագիր մշակված չէ:

10.12.2008թ. Պաշտպանի կողմից համապատասխան գրություն է հասցեագրվել ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարին՝ առաջարկելով քննարկել դիմումատուի բնակարանային հարցի լուծումը ՀՀ կառավարության 25.10.2000թ. թիվ 683 որոշման մեջ փոփոխություն կամ լրացում կատարելու միջոցով:

### 3.9.1. Սիգրացիոն գործակալություն

Սիգրացիոն գործակալության դեմ 2008թ.-ի ընթացքում ստացվել է 12 դիմում-բողոք, որից՝

- |   |   |
|---|---|
| • ընդունվել են քննարկման՝   | 7 |
| • ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ | 1 |
| • փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝                                   | 0 |
| • չեն ընդունվել քննարկման՝  | 2 |
| • չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝                                  | 0 |
| • ընթացքում են՝   | 2 |

Սիգրացիոն գործակալության դեմ ուղղված բողոքների մեծ մասը վերաբերել են փախստականների բնակարանային խնդրանքին:

### Օրինակ

ՀՀ Կոտայքի մարզի Արգենիի թիվ 1 առողջարանի 8-րդ մասնաշենքի բնակչութին հայտնել է, որ 1989 թվականից Աղբբեջանից բռնազարթած այլ փախստական ընտանիքների հետ բնակվում է Արգենիի թիվ 1 առողջարանում: 2003թ. տնից որոշ ժամանակ բացակայելու պատճառով չի ընդգրկվել բնակարանների գնման վկայագիր ստացողների ցուցակում: Դիմել

Է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալություն, որտեղ իրեն պատասխանել են, որ կընդգրկեն հաջորդ ցուցակում:

Ի պատասխան պաշտպանի հարցմանը՝ ՀՀ Կոտայքի մարզպետը հայտնել է, որ Արգելի թիվ 1 առողջարանի բնակիչը 2003թ. փախստականների հաշվառման ընթացքում բացակայել է Հայաստանի Հանրապետությունից, որի պատճառով չի ընդգրկվել բնակարանների գնման վկայագրերի տրամադրման հերթացուցակում: Գրությամբ նաև հայտնվել է, որ որպես բնակչարիքավոր՝ քաղաքացին ընդգրկվել է վկայագրերի տրամադրման լրացուցիչ ցուցակում:

### 3.9.2. Զրային տնտեսության պետական կոմիտե

Զրային տնտեսության պետական կոմիտեի դեմ 2008թ.-ին ստացվել է 2 դիմում-բողոք, որոնք ընդունվել են քննարկման և վերաբերել են ջրամատակարարման կամ ջրահեռացման ոլորտում սպասարկում իրականացնող տարրեր կազմակերպությունների աշխատանքների նկատմամբ կոմիտեի կողմից անհրաժեշտ հսկողություն չիրականացնելուն, սպառողների իրավունքների խախտումներին: Դեռևս խորհրդային տարիներին խմելու ջրի և կոյուղու խողովակները հիմնականում մոնտաժվել են իրար կողքով և դրանց մեծ մասը մինչ օրս էլ գտնվում են այդ վիճակում: Դրանց կորողիայի կամ այլ պատճառներով խողովակների վթարման դեպքում կեղտաջրերը խառնվում են խմելու ջրին, ինչը տարրեր վարակների պատճառ է հանդիսանում հանրապետության տարրեր բնակավայրերում:

#### Օինակ 1

Քաղաքացին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 1997թ. ֆինանսական ծանր վիճակից ելնելով՝ վաճառել է Երևանում գտնվող երեք սենյականց բնակարանը և Դարբնիկ գյուղում գնել անհատական բնակելի տուն հողամասով: 2001թ. հողամասի գլխամասում գտնվող արտեզյան ջրհորի մաշվածության պատճառով ջուրը կամաց-կամաց սկսել է լցվել իրենց հողամասը:

Դիմումատուն բողոքում է, որ պետական մարմինների կողմից որևէ միջոց չի ձեռնարկվել, ինչի արդյունքում իր սեփական տունը զրկվել է բոլոր տեսակի կոմունալ հարմարություններից և գտնվում է վթարային վիճակում, արդեն 7 տարի է՝ հոսող ջուրը ամբողջ հողամասը վերածել է ճահճի:

2002 թվականից դիմել է Դարբնիկ համայնքի դեկավարին, սակայն վերջինս պատասխանել է, որ այդ հարցով պետք է դիմել ջրային տնտեսության պետական կոմիտե: 2003թ. դիմել է ՀՀ Նախագահին և ՀՀ բնապահպանության նախարարություն, որտեղից իր դիմումներն ուղարկվել են ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտե:

2004թ. ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեն հանձնարարել է Արարատի մարզի «Մասիս» ջրօգտագործող ընկերությանը կատարել շատրվանող վթարային հորի լիկվիդացման և նոր շատրվանող հորի հորատման աշխատանքներ, որին «Մասիս» ԶՕԸ-ն պատասխանել է, որ կապիտալ ներդրումները կազմում են 15 մլն ՀՀ դրամ, որի հնարավորությունը ինքը չունի:

2005թ. դիմել է Արարատի մարզական կառավարման նախարարին, վերջինս դիմումը ուղարկել է Արարատի մարզպետարան:

2008թ. դիմել է ՀՀ վարչապետին, որը դիմումն ուղղարկել է Արարատի մարզպետարան, որտեղից էլ հերթական անգամ այն փոխանցվել է գյուղապետին, սակայն վերջինս հայտնել է, որ ի վիճակի չէ հարցը լուծել:

Քաղաքացու դիմումի կապակցությամբ Պաշտպանի կողմից կատարված հարցմանն ի պատասխան՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարը հայտնել է, որ խնդրի կարգավորման նպատակով հանձնարարականներ են տրվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին, ՀՀ ֆինանսների նախարարությանը, առաջարկել է ներկայացվել «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 13.09.2008թ. գրությամբ հայտնվել է, որ Դարբնիկ համայնքի արտեզյան հորի վերանորոգման աշխատանքները նախատեսված է իրականացնել Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ-Հայաստան ծրագրի Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման բաղադրիչի շրջանակներում: Համաձայն Ժամանակացույցի՝ աշխատանքները կիրականացվեն 2009-2010 թվականների ձմռան ամիսներին:

### 3.10. ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարության դեմ 2008թ. ստացվել է 12 դիմում-բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 6
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 1
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 1
- չեն ընդունվել քննարկման՝ 1
- չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝ 2
- ուսումնասիրման ընթացքում են՝ 1

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն Հայաստանի Հանրապետության գեկույցի վերաբերյալ 2007թ. ընդունված եզրափակիչ հետևողուններում, հիմնվելով այլ աղբյուրների վրա, արձանագրել է, որ Հայաստանում կրթական համակարգը մատչելիության և արդյունավետության տեսակետից բախվում է մի շարք հիմնախնդիրների, օրինակ, դպրոց չհաճախելը, ընտանիքի տնտեսական և ֆինանսական վիճակից ելնելով դպրոցից դուրս մնալը: Կոմիտեն այլ աղբյուրներից ելնելով՝ արձանագրում է նաև, որ առկա է աճող անհավասարակշռություն քաղաքի և գյուղական վայրերի դպրոցների միջև, որի պատճառը գյուղական վայրերում ուսուցչական անձնակազմի պակասն է:

Կրթության ոլորտում կարևոր խնդիրներից է նաև բարձրագույն կրթության հասանելիության ազահովումը բնակչության անապահով խավերի համար: Դա առաջին հերթին հնարավոր է հանրակրթական դպրոցի ավարտական և ընդունելության քննությունների միասնական համակարգի արդյունավետ կիրառման, պետպատվերի շրջանակներում բուհերին հատկացվող տեղերի ավելացման, վճարովի համակարգում արտոնությունների շրջանակի ընդարձակման, անկախ ուսման ընթացքում ցուցաբերած առաջադիմությունից, սոցիալապես անապահով ուսանողներին վարձավճարից ազատելու ճանապարհով:

Քիչ չեն դեպքերը, երբ ոչ պետական հավատարմագրված բուհն ավարտած, պետական նմուշի դիպլոմ ստացած անձը չի կարողանում իր աշխատատեղը գտնել պետական համակարգում: Միաժամանակ, հարկ է նշել, որ պետության կողմից ոչ պետական հավատարմագրված բուհերի հանդեպ չի իրականացվում անհրաժեշտ վերահսկողություն, և այդ հաստատություններից մեծամասնության դրները բաց են բոլոր ցանկացողների առջև:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է կիրառել մասնավոր բուհերի հավատարմագրման ավելի խիստ պահանջներ, և ոչ պետական հավատարմագրված բուհերի ընդունելության քննությունները ներառել միասնական քննական համակարգում:

## Օրինակ 1

Քաղաքացի Ն.Ը.-ն և դիմումը ստորագրած թվով 15 պարսիկ ուսանողներ Պաշտպանին հայտնել են, որ 2005-2006թթ. և 2006-2007թթ. ընդունվել են Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: Ընդունելության ժամանակ իրենց բանավոր հայտնել են, որ պետք է սովորեն 5 տարի՝ ստանալով դիպլոմավորված մասնագետի աստիճան: Ընդ որում, դիմումատունների հետ որևէ պայմանագիր չի կնքվել:

Ուսանողները բողոքում են, որ այժմ իրենց տեղեկացրել են, որ դիպլոմավորված մասնագետի աստիճան չեն ստանալու և պետք է սովորեն երկաստիճան կրթական համակարգում: Բացի այդ, բակալավրի աստիճան ստանալու համար պետք է անցնեն 5 տարվա կրթական ծրագիր, իսկ 4 տարի սովորելու դեպքում իրենց կտրամադրվի ընդամենը տեղեկանք:

Պաշտպանի կատարած հարցմանն ի պատասխան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարը հայտնել է, որ ուսանողների հետ պայմանագիր կնքելը հանդիսանում է պարտադիր պայման բոլոր ուսումնական հաստատությունների համար: ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից 2008թ. հոկտեմբերի 3-ին հարցում է կատարվել «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, ըստ որի՝ կոնսերվատորիայի ուսանողների հետ կնքվել է պայմանագիր, որի տեքստը ընդունելության հայտարարության և բուհի լիցենզիան ներդրով նախօրոք տրամադրվել է բոլոր դիմորդներին, այդ բվում օտարերկրյա դիմորդներին /պարսիկներին/, որտեղ նշված է բակալավրի ծրագրով ուսուցման 5 տարի ժամկետի նշումով և այն ստորագրվել է ուսանողների և պրոռեկտորի կողմից: Միաժամանակ, կոնսերվատորիայի ռեկտորը հայտնել է, որ 01.09.2005թ. օտարերկրյա ուսանողների /թվով 10 պարսիկների/ հետ կնքված պայմանագրի բովանդակությունը որոշ առումով չի համապատասխանում «Քարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներին, սակայն ուսանողների համար այդ պայմանագրով չի սահմանվել բարձր ուսման վարձ և չի սահմանվել ուսումնառությունը խստացնող պահանջներ: Ռեկտորը հայտնել է նաև, որ ուսանողները կնքված պայմանագրերի վերաբերյալ որևէ բողոք կամ առաջարկություն իրեն չեն ներկայացրել, որի դեպքում ՀՀ օրենքների դրույթներին համապատասխան կձեռնարկվեն որոշակի ուղղումներ և շտկումներ նրանց հետ կնքված պայմանագրերում:

2005-2006թթ. կոնսերվատորիա ընդունված ուսանողները 17.10.2008թ. Պաշտպանին բանավոր հայտնել են, որ կոնսերվատորիայի ռեկտորատը ձեռնարկել է համապատասխան միջոցներ իրենց իրավունքների վերականգնման ուղղությամբ և այլևս որևէ բողոք չունեն:

Ինչ վերաբերում է 2006-2007թթ.-ին ընդունված ուսանողներին, ապա նրանցից երկուսի հետ միայն պայմանագիր չի կնքվել, սակայն նույնպես փոխհամաձայնություն է ձեռք բերվել հարցի լուծման կապակցությամբ:

## Օրինակ 2

Երևան քաղաքի բնակիչ, փախստական Լ.Տ.-ն Պաշտպանին հասցեագրած դիմում-բողորով հայտնել է, որ Երևանի թիվ 77 հանրակրթական դպրոցի տնօրինությունը մերժել է իր

դստերը՝ Դ.Տ.-ին, որն ազգությամբ վրացի է, ոուսաց լեզվով ուսուցմամբ առաջին դասարան ընդունելու հարցում:

13.09.1993թ. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, որի 13-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված է հետևյալը. «Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների՝ իրենց երեխաների համար, պետական իշխանության կողմից ստեղծված դպրոցներից քացի, այլ դպրոցների ընտրության ազատությունը, որոնք համապատասխանում են պետության կողմից սահմանվող կամ հաստատվող կրթական նվազագույն ստանդարտներին, ինչպես նաև իրենց երեխաների կրոնական և քարոյական դաստիարակությունը իրենց սեփական համոզմունքներին համապատասխան ապահովելու նրանց ազատությունը»:

Բացի այդ, համաձայն Մարդու իրավունքների համընհանուր հոչակագրի 26-րդ հոդվածի՝ ծնողներն ունեն իրենց երեխաների համար կրթության տեսակ ընտրելու առաջնային իրավունք:

Ելեկով վերոգրյալից՝ քաղաքացու խնդրանքը մերժելու պատճառների մասին պարզաբանում է պահանջվել Երևանի քաղաքապետից:

Ի պատասխան գրությանը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության վարչության պետը հայտնել է, որ համաձայն «ՀՀ կրթության և գիտության նախարարի 25.08.2003թ. հ. 619-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 07.01.2007թ. 1218-Ն հրամանի 2-րդ կետի՝ վերոհիշյալ դպրոցի աշակերտուիդն կարող է ուսումը շարունակել ծնողի ընտրությամբ՝ ոուսած լեզվով ուսուցմամբ 1-ին դասարանում:

### 3.11. ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ առողջապահության նախարարության դեմ 2008թ.-ին ստացվել է 13 դիմում-բողոք, որից՝

- |   |   |
|---|---|
| • ընդունվել են քննարկման՝   | 8 |
| • ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ | 2 |
| • փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝                                   | 1 |
| • չեն ընդունվել քննարկման՝  | 1 |
| • չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝                                  | 0 |
| • ուսումնասիրման ընթացքում են՝  | 1 |

Առողջապահության նախարարության դեմ ուղղված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են պետական պատվերի շրջանակներում անվճար բուժօգնություն և դեղորայք չտրամադրելու դեպքերին:

Հարկ է նշել, որ զգալի առաջընթաց է արձանագրվել պոլիկլինիկական ծառայությունների՝ հասարակության բոլոր խավերին հասանելի դարձնելու ուղղությամբ, ողջունելի է ծննդօգնությունն անվճար դարձնելու հանգամանքը, սակայն կլինիկական բուժօգնության ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ, հրատապ լուծում պահանջող խնդիրներ: Օրակարգային է մնում սոցիալապես անապահով խավերի՝ պետպատվերի շրջանակներում փաստացի անվճար բուժօգնություն ստանալու անհնարինության կամ սահմանափակման խնդիրը:

Բուժհաստատությունների կողմից պատշաճ ձևով չի կազմակերպվում գորակոչիկների բուժզննության գործընթացը, ինչի հետևանքով առաջանում են հերթեր և հաճախ այն զննությունը, որը հնարավոր է իրականացնել մեկ օրվա ընթացքում, օրերով շարունակվում է:

## Օրինակ 1

Երևան քաղաքի բնակչության հայտնել է, որ ունենալով Ռուսաստանի «Դաշնության քաղաքացու կարգավիճակ, փաստացի բնակվում է Հայաստանի Հանրապետությունում և ստանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծերության կենսաքոչակ: Դիմել է «Դիարենտ» ատամնաբուժական կենտրոն, պետական պատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու նպատակով, սակայն մերժվել է՝ պատճառաբանությամբ, որ ՀՀ կառավարության 04.03.2004թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-Ն և 09.02.2006թ. թիվ 291-Ն որոշումներով հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում այլ երկրի քաղաքացիները նախատեսված չեն, ուստի, ինքը չի կարող օգտվել սահմանված արտոնություններից՝ այդ թվում նաև անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն ստանալու իրավունքից:

Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ առողջապահության նախարարը հայտնել է, որ ՀՀ առողջապահության նախարարությունը պատրաստակամ է ՀՀ օրենսդրության շրջանակներում աջակցել քաղաքացուն անվճար ստոմատոլոգիական օգնություն ստանալու խնդրում: Նկատի ունենալով, որ ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1925-Ս հրամանի 8-րդ կետով սահմանվում է, որ «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված անձանց ստոմատոլոգիական բուժօգնությունը և ատամնապրոթեզավորումը իրականացվում է պետական պատվերի շրջանակում միայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ուղեգրի հիման վրա»՝ առաջարկվել է տրամադրել քաղաքացու տվյալները /հասցե, հեռախոսահամար/՝

նրան առողջապահության նախարարություն հրավիրելու և ուղեգրման գործընթացը կազմակերպելու համար:

## Օրինակ 2

ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի բնակիչը հայտնել է, որ իր 15 տարեկան որդին մանկուց հաշմանդամ է՝ տառապում է հոգեկան հիվանդությամբ։ Վերջերս առողջական վիճակի վատքարացման պատճառով երեխան վտանգավոր է դարձել շրջապատի համար։ Դիմել է տարրեր պետական և ոչ պետական մարմինների որևէ հոգեբուժական կլինիկայում իր որդուն՝ որպես քրոնիկ հոգեկան հիվանդի, երկարատև բուժում և խնամք տրամադրելու հարցով, սակայն հարցը լուծում չի ստացել։

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից քաղաքացուն պատասխանել են, որ հոգեբուժական խնդիրներ ունեցող երեխաներին առայժմ ոչ մի հաստատությունում հնարավոր չէ տեղափորել։ Խնդրի լուծման նպատակով նախարարությունը գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը։ Նախատեսվում է համատեղ քննարկման արդյունքում ստեղծել հոգեբուժական հաստատություն, որը հնարավորություն կտա հոգեկան խնդիր ունեցող երեխաների խնամքն ու բուժումը կազմակերպելու համապատասխան հաստատությունում։

Իսկ ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնել են, որ «Իջևանի պոլիկլինիկայի հոգեբույժի ուղեգրմամբ երեխան կարող է հոսպիտալացվել Նորքի «Հոգեբուժական բժշկական կենտրոն»»-ում։ Ինչ վերաբերում է քրոնիկ հոգեկան հիվանդների երկարատև խնամքին, ապա ՀՀ առողջապահության նախարարության համակարգում երեխաների գծով նման ծառայություն չկա։

Դիմումի պատշաճ ընթացքն ապահովելու նպատակով գրություն է հասցեագրվել ՀՀ առողջապահության նախարարին, որին ի պատասխան տեղեկացվել է, որ որպես հարցի ժամանակավոր լուծում երեխան հոսպիտալացվել է Նորքի «Հոգեբուժական բժշկական կենտրոն»»-ում։

Այս երեխայի, ինչպես նաև հոգեբուժական խնամքի կարիք ունեցող նմանատիպ երեխաների բուժօգնությունը կազմակերպելու և հարցին արմատական լուծում տալու նպատակով, համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 09.07.2008թ. թիվ 963-Ա հրամանի՝ «Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ում ստեղծվել է հոգեբուժական խնամքի 8 մահճակալանոց մանկական ստորաբաժանում, որը մոտ ապագայում կիրականացնի քրոնիկ հոգեկան խանգարումներով երեխաների երկարատև մասնագիտական բուժում ու խնամք։ Այդ գործընթացը հնարավոր կլինի սկսել բուժհաստատության՝ մանկական հոգեբուժության գծով լիցենզավորվելուց հետո, ինչի համար արդեն հայտ է ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարություն։

### **3.12. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

#### **3.12.1. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական ծառայություն**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության /նախարարության համակարգում գործող այլ կառույցների/ դեմ 2008թ.-ին ստացվել է 83 դիմում-բողոք, որից՝

• ընդունվել են քննարկման՝	50
• ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝	22
• փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝	0
• չեն ընդունվել քննարկման՝	7
• չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝	1
• ուսումնասիրման ընթացքում են՝	3

Սոցիալական ապահովության իրավունքի խնդիրների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2007թ. տարեկան զեկույցում (բաժին 3.14.), որոնց մի մասը ստացել է իրենց լուծումը, մի մասը գտնվում է քննարկման փուլում, իսկ որոշ խնդիրների լուծման կապակցությամբ դեռևս անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվում:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում մեծ թիվ են կազմում ընտանեկան նպաստների տրամադրման կարգին առնչվող բողոքները: Մասնավորապես, բազային կենսաթոշակի կամ ապահովագրական ստաժի յուրաքանչյուր տարվա համար սահմանված հավելման չափի ավելացման արդյունքում իջել է քաղաքացիների ընտանիքի անապահովության միավորը, ինչի հետևանքով նախկինում նպաստառու ընտանիքը գրկվել է նպաստ ստանալու իրավունքից: Այդ փոփոխությունները մշակելիս, փաստորեն, հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ պետական նպաստի տրամադրման նպատակը աղքատ ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելն է:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ շարունակվում են բողոքներ ստացվել սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործողությունների (անգործության) դեմ, որով քաղաքացիները դժգոհում են, որ իրենց հանել են նպաստառուների ցուցակներից՝ առանց պատշաճ իրազեկման:

Հարկ է անդրադառնալ նաև այնպիսի կարևոր խնդրի, ինչպիսին բազմազավակ ընտանիքներին պետության կողմից տրամադրվող աջակցությունն է: Համաձայն ՀՀ կառավարության 28.12.2006թ. թիվ 1896-Ն որոշման 1-ին կետի և/ ենթակետի՝ միանվագ դրամական օգնության չափերը սահմանվում են ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանօքում, երեխայի ծննդյան դեպքում՝ 35.000 ՀՀ դրամ, իսկ 2007թ. հունվարի 1-ին և

դրանից հետո ծնված երրորդ, ինչպես նաև հաջորդ երեխաների համար՝ 200.000: Նույն որոշման ը/ ենթակետի համաձայն՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ նպաստի իրավունք չունեցող ընտանիքի անապահովության 0-ից բարձր միավոր ունեցող ընտանիքին տրվող իրատապ դրամական օգնության չափ է սահմանվում 7500 դրամ, իսկ ընտանիքում երրորդ և, ինչպես նաև հաջորդ երեխաների համար՝ 200.000 դրամ:

Փաստորեն, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ նախատեսված 200.000 դրամը կարող է տրամադրվել ընտանիքին այն դեպքում, եթե նա հաշվառված է անապահովության գնահատման համակարգում: Այսինքն, եթք ընտանիքն ուղղակի ոչ պատշաճ իրազեկված լինելու պատճառով չի հաշվառվել անապահովության գնահատման համակարգում, զրկվում է երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ դրամական օգնություն ստանալու իրավունքից:

Դեռևս 2007թ. Պաշտպանը իրավասու մարմինների ուշադրությունն է իրավիրել առկա խնդրի վրա, որը տվել է ցանկալի արդյունքներ՝ ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1530-Ն որոշմամբ հանվել է այն պահանջը, ըստ որի ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար նախատեսված գումարը ընտանեկան նպաստի իրավունք չունեցող ընտանիքին կարող է վճարվել միայն այն դեպքում, եթե դիմողի ընտանիքը հաշվառված է եղել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում՝ մինչև երեխայի ծնվելու օրը:

Սակայն, ոլորտում դեռևս կան լուծում պահանջող հարցեր: Մասմավորապես, 2007թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1530-Ն որոշումը սահմանում է, որ միանվագ օգնության իրավունք են ստանում այն ընտանիքները, եթք ծնողների /որդեգրողների/ խնամքին կան երեք երեխաներ: Սակայն, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային գործակալությունները մերժում են ընտանիքներին տրամադրել երրորդ երեխայի ծննդյան կապակցությամբ հասանելիք միանվագ օգնությունը՝ դեկավարվելով որոշման 6-րդ կետով՝ պատճառաբանելով, որ ընտանիքում թեև տեղի է ունեցել երրորդ ծնունդը, սակայն փաստացի խնամքին եղել են երկու երեխաներ: Ընդ որում, մերժման հիմքում դրվում է այն հանգամանքը, որ իրավահարաբերության ծագման ժամանակ գործող որոշման համաձայն հիշատակված փաստի առկայությունը պարտադիր է համարվել:

Նշված համակարգի դեմ ստացված բողոքներից բնութագրական են հետևյալները՝

## Օրինակ 1

ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակիչը Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 61 տարեկան է, բնակվում է կոնց հետ, երկուսն էլ կենսաբոշակառու են: 1994թ.-ից

հաշվառված է եղել ընտանեկան նպաստ ստացողների ցուցակում և ստացել ընտանեկան նպաստ՝ միչև 2008թ: Սակայն նպաստի վճարումը դադարեցվել է պատճառաբանությամբ, որ կենսարոշակը ավելացել է, և ընտանիքի անապահովության սահմանային միավորը ցածր է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվածից: Քաղաքացին հայտնել է, որ չունի եկամտի այլ աղբյուր և գոյատևում է կենսարոշակի միջոցներով:

Պաշտպանի գրության հիման վրա քաղաքացու ընտանիքը ներառվել է 2008թ. երրորդ եռամսյակի հրատապ օգնության ցուցակներում:

## Օրինակ 2

Երևան քաղաքի բնակիչը **Պաշտպանին** հասցեազրած դիմումով հայտնել է, որ 2006 թվականի հոկտեմբերին իրենց ընտանիքում ծնվել է 3-րդ երեխան: Սահմանված կարգով դիմել է սոցիալական ծառայության տարածքային գործակալություն՝ կառավարության որոշմամբ սահմանված 300.000 դրամ միանվագ գումարը ստանալու համար, սակայն ստացել է մերժում՝ պատճառաբանությամբ, որ իր խնամքին կա 2 երեխա /երեխաներից մեկը զոհվել է 2006թ. Սոչիի օդային աղետի ժամանակ/:

Պաշտպանի կողմից հարցում է կատարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ առաջարկելով հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան քայլեր: Ի պատասխան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի թիվ 110-Ն որոշմամբ հաստատված՝ ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման կարգի՝ 35-րդ կետի ա/ ենթակետում ՀՀ կառավարության 28.12.2006թ. թիվ 1896-Ն որոշման 6-րդ կետում կատարված լրացման համաձայն՝ ընտանիքում ծնված երեխաների թիվը որոշվում է՝ ելնելով տվյալ ամուսնական գույգի /միայնակ կմոջ/ խնամքի տակ գտնվող /համատեղ բնակվող/ չամուսնացած զավակների, ինչպես նաև երեխաների /այդ թվում որդեգրած և /կամ/ խորթ/ թվից: Վերոնշյալ դրույթը գործում է 2007թ. հունվարի 25-ից և տարածվում 2007թ. ծագած իրավահարաբերությունների վրա: Հետևաբար, ՀՀ կառավարության 27.12.2007թ. թիվ 1530-Ն որոշմամբ սահմանված՝ երրորդ երեխայի ծննդյան կապակցությամբ 300.000 ՀՀ դրամի չափով դրամական օգնության հատկացումը մերժելը տվյալ ամուսնական գույգի փաստացի խնամքի տակ գտնվող երեխաների թիվը 3-ից պակաս լինելու հիմքով հիմնավորված է և համապատասխանում է գործող օրենսդրության պահանջներին:

Սոցիալական ապահովագրության պետական ծառայության դեմ ուղղված դիմում-բողոքների շարքում մեծ թիվ են կազմել այնպիսիք, որոնք կապված են ապահովագրական ստաժը դատական կարգով հաստատելուց հետո հիմնադրամի կողմից այդ տարիներն ապահովագրական ստաժում չհաշվառելու հետ: Այստեղ, որպես հիմնական

պատճառաբանություն, հիմնադրամի կողմից ներկայացվում են «Պետական կենսաքոչակմերի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները: Այդ մասին մանրամասն ներկայացված է սույն գեկույցի 2-րդ բաժնում:

Սոցիալական ապահովագրության պետական ծառայության դեմ Պաշտպանին հասցեազրկած դիմում-բողոքները վերաբերում են նաև ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին երկարամյա ծառայության համար մասնակի կենսաքոչակի իրավունք տվող պաշտոնների և աշխատանքային գործունեության տեսակները հաստատող ցանկին, որի 3-րդ կետի համաձայն մասնակի կենսաքոչակի իրավունք են ստանում նաև տեխնիկումներում, միջնակարգ /միջին/ մասնագիտական ուսումնական հաստատություններում, քոլեջներում, աշխատանքային ուղղվածների համակարգի ուսումնական հաստատություններում և այլ տիպի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոցներում և ուսումնարաններում /քացի բարձրագույն ուսումնական հաստատություններից/ դասավանդող ուսուցիչները:

Նշված դրույթը տարաբնույթ մեկնաբանության պատճառ է հանդիսանում, քանի որ, ինչպես նշվեց վերևում, կառավարության որոշմամբ սահմանված է, որ մասնակի կենսաքոչակի իրավունք են ստանում նաև այլ տիպի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոցներում և ուսումնարաններում աշխատած ուսուցիչները, սակայն որևէ ակտով հստակեցված չէ, թե որոնք են այլ տիպի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոցները և ուսումնարանները:

## Օրինակ 1

Երևան քաղաքի մի խումբ քնակիչներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել են, որ 1979թ.-ից մինչև 1992թ. աշխատել են Մյասնիկյանի շրջանի ժողկրթության բաժնի ենթակայության թիվ 6 ուսումնարտադրական կոմբինատում: Ըստ քաղաքացիների հայտնած տեղեկության՝ կոմբինատու իր բնույթով համարվել է դպրոցներին կից հաստատություն, որտեղ դասավանդվել են տարբեր առարկաներ: Կոմբինատու ընդունել է Մյասնիկյանի շրջանի 16 դպրոցների 8-10-րդ դասարանի աշակերտներին, որտեղ վերջիններս շաբաթական մեկ անգամ ուսումնասիրել են «Աշխատանքի ուսուցում» առարկան: Տնօրինության կողմից աշակերտների քառորդային թվանշաններն անցկացվել են թերթիկների մեջ:

Տարիքը լրանալու հիմքով դիմել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ մասնակի կենսաքոչակի նշանակման խնդրանքով, սակայն մերժվել են՝ պատճառաբանությամբ, որ ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793 որոշմամբ կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին երկարամյա ծառայության

համար մասնակի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների և աշխատանքային գործունեության տեսակների ցանկով իրենց կողմից կատարված աշխատանքները նախատեսված չեն:

Բողոքի կապակցությամբ Պաշտպանը հարցում է կատարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն այն մասին, թե ի՞նչ իրավական հիմքերով ուսումնարտադրական կոմբինատները չեն ներառվում ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 22-ի թիվ 793-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածում նշված «...այլ տիպի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոցներում և ուսումնարաններում» հասկացության մեջ և ի՞նչ հաստատություններ են ներառվում այդ ձևակերպման մեջ:

Ի պատասխան հայտնվել է, որ հիշատակված հարցերը կարգավորման են ենթարկվել ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793-Ն որոշմամբ, և Ծառայությունն այլ տեսակի պարզաբանումներ ներկայացնելու իրավասություն չունի: Պաշտպանը գրությամբ դիմել է կառավարություն՝ առաջարկելով սահմանված կարգով հանդես գալ նախաձեռնությամբ՝ ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 29-ի թիվ 793 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:

Բողոքը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

## Օրինակ 2

Գեղարքունիքի մարզի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 1941-1945թթ. ընկած ժամանակահատվածում պատերզմում կատարած աշխատանքի համար պարզևատրվել է «Քաջարի աշխատանքի համար» մեդալով, որը, ՀՀ կառավարության համապատասխան որոշման համաձայն համարվում էր աշխատանքային ստաժ: Այնուհետև, աշխատանքը շարունակել է կոլտնտեսությունում, իսկ 60 տարին լրանալուց հետո սահմանված կարգով դարձել է կենսաթոշակառու: 1942-1950թթ. ժամանակահատվածը ստաժում հաշվառելու խնդրանքով դիմել է սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին, սակայն ստացել է մերժում: Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2005թ. մայիսի 19-ի վճռով հաստատվել է քաղաքացու՝ 1942-1949թթ. Ծովագարդի կոլտնտեսությունում աշխատած տարիները որպես աշխատանքային ստաժ, սակայն Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը կրկին մերժել է այդ տարիները ստաժում հաշվարկելու խնդրանքը:

Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման հիման վրա դիմումատուի խախտված իրավունքը վերականգնվել է:

### **Օրինակ 3**

Մի խումբ կենսաթոշակառուներ Պաշտպանին հասցեազրած դիմումներով հայտնել են, որ տարրեր պատճառներով չեն կարողանում 12 (15) օրվա ընթացքում ստանալ իրենց կենսաթոշակը «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի (նախկինում՝ «Հայխնայբանկ» ՓԲԸ) մասնաճյուղերից, իսկ այդ ժամկետից հետո իրենց կենսաթոշակը տվյալ ամսվա ընթացքում այլևս չի վճարվում՝ գումարը ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ (ներկայումս՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ սոցիալական ապահովագրության պետական ծառայություն) վերադարձված լինելու պատճառաբանությամբ:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ նշված ժամկետը սահմանվել է Հիմնադրամի և նշված ընկերության միջև 28.11.2001թ. կնքված պայմանագրում 31.10.2005թ. կատարված փոփոխություններով ու լրացումներով և սահմանվել է, որ կենսաթոշակառուների կենսաթոշակի յուրաքանչյուր ամսվա վճարումը կատարվում է ֆինանսավորված գումարը ընկերության մասնաճյուղերի ընթացիկ հաշիվներին ամրագրվելուց հետո 12 (այս ժամկետները երկարացվել են դարձվել 15) օրացուցային օրվա ընթացքում, իսկ վճարումը նույն պայմանագրով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո, ավելացած գումարները վերադարձվում են Հիմնադրամին 3 քանկային օրվա ընթացքում:

Պայմանագրում նման փոփոխություն է արվել այն դեպքում, երբ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը վճարվում է հաջորդ ամսվա ընթացքում՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակառուի փաստացի բնակության վայրի: Կենսաթոշակառուն իրավունք ունի կենսաթոշակը ստանալ վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունից: «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 29.05.2003թ. թիվ 793-Ն որոշման թիվ 1 հավելվածի 21-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա կենսաթոշակը կենսաթոշակառուին վճարվում է նրա փաստացի բնակության վայրում, իսկ կենսաթոշակառուի գրավոր դիմելու դեպքում վճարող կազմակերպության գրասենյակում:

Գտնում ենք, որ Հիմնադրամի և վերոնշյալ ընկերության միջև կնքված պայմանագրում այդպիսի դրույթի ամրագրումը, որը կենսաթոշակի գումարը ստանալու համար սահմանում է 12 (15) օրացուցային օրվա ժամկետ, սահմանափակում է կենսաթոշակառուների իրավունքը՝ ստանալ իրենց հասանելիք կենսաթոշակի գումարը հաջորդ ամսվա ընթացքում, ինչպես որ դա նախատեսված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածով: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ

իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին): Անընդունելի է կենսաքոչակի վճարման ժամկետի սահմանափակումը տեխնիկական տարրեր պատճառաբանություններով:

Նշված հարցով 2008թ. ընթացքում երկու անգամ գրություն է հասցեագրվել ՀՀ կառավարություն, սակայն որևէ փոփոխություն չի կատարվել:

### **3.12.2. Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով /ԲՍՓՀ/**

Պաշտպանը շարունակում է բազմաթիվ բողոքներ ստանալ աշխատանքային խեղման արդյունքում ԲՍՓՀ-ի կողմից սահմանված հաշմանդամության ժամկետում տրամադրման ենթակա, սակայն կազմակերպության գործունեության դադարման արդյունքում չտրամադրվող խեղման նպաստի վերաբերյալ: Հարկ է նշել, որ հարցն արտացոլվել էր նաև Պաշտպանի 2006թ. և 2007թ. տարեկան գեկույցներում, ինչպես նաև սույն գեկույցի 2-րդ բաժնում:

#### **Օրինակ**

Վանաձոր քաղաքի բնակչությն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 46 տարի աշխատել է ձեռնարկությունում: Աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում ստացել է խեղում, որի համար իրեն տրվել է հաշմանդամության երկրորդ խումբ: Ստացած վճարի համար սահմանված կարգով փոխառուցման իրավունքից զրկվել է՝ կազմակերպության լուծարման պատճառով:

Պաշտպանը ստանում է նաև դիմում-բողոքներ, որոնցով քաղաքացիներն իրենց զայրույթն են արտահայտում ԲՍՓՀ-ի գործողությունների դեմ, քանի որ, թեև իրենց առողջական վիճակը ավելի է վատքարանում, սակայն հաշմանդամության խումբը փոփոխության ենթարկելու մասին դիմումն անհիմն մերժվում է:

**Օրինակ՝** Երևան քաղաքի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ 1976թ.-ից տառապում է տարբեր հիվանդություններով, ինչի կապակցությամբ պարբերաբ անցնում է ստացիոնար բուժման կուրսեր, 6 անգամ ենթարկվել է վիրահատության: 2005թ. վիրահատության արդյունքում 2006թ.-ին իրեն տրամադրել են հաշմանդամության 2-րդ խումբ, սակայն 2007թ.-ին հերթական վերափորձաքննության արդյունքում հաշմանդամության խումբը վերափոխվել է 3-րդ խմբի, չնայած իր առողջական վիճակի բարելավում տեղի չի ունեցել:

Դիմումում նշված հարցերի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանել են, որ 17.07.2007թ. հաշմանդամության սահմանված ժամկետի լրանալու կապակցությամբ քաղաքացին դիմել է Երևանի թիվ 5 ԲՍΦԳ՝ փորձաքննության ենթարկվելու նպատակով: Նշված հանձնաժողովը, դեկանավարվելով ՀՀ կառավարության 02.03.2006թ. թիվ 276-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետով, գործը ներկայացրել է գործակալության փորձաքննության բաժին՝ փորձաքննական խորհրդատվության նպատակով: 03.09.2007թ. Երևանի թիվ 5 ԲՍΦԳ-ն, ելնելով անձի օբյեկտիվ գննության տվյալներից, հաշվի առնելով փորձաքննական բաժնի խորհրդատվական եզրակացությունը և դեկանավարվելով ՀՀ կառավարության թիվ 780-Ն որոշման 285-րդ կետով, նրա նկատմամբ սահմանել է հաշմանդամության երրորդ խումբ՝ «պարբերական հիվանդություն, խառը ձև, հաճախակի նոպաներով, երիկամների ամիլոդիոն, պրոտեինուրիլ ստաղիա, խրոնիկ երիկամային անբավարարության առաջին աստիճան» ախտորոշմամբ: Փորձաքննությամբ նրա մոտ հայտնաբերվել են նաև կենսագործունեության ինքնասպասարկման ապահովման ունակության ու աշխատանքային գործունեությամբ գրադարձելու կարողության առաջին աստիճանների սահմանափակումներ: 06.11.2007թ. բողոքարկման կարգով վերափորձաքննության արդյունքում գործակալության փորձաքննական բաժինը Երևանի թիվ 5 ԲՍΦԳ-ի որոշումը քողել է անփոփոխ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված կենսագործունեության սահմանափակումները, համաձայն ՀՀ կառավարության 13.06.2003թ. թիվ 780-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի, հիմք են հանդիսանում հաշմանդամության երրորդ խմբի համար:

Նմանատիպ բողոքներն արդյունք են նաև այն բանի, որ քաղաքացիներին չի տրամադրվում մերժման վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն կամ խորհրդատվություն, ինչն էլ առիթ է հանդիսանում նրանց կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտման, դրանք վերականգնելու նպատակով դիմումներ գրելու համար:

### 3.12.3. Աշխատանքի պետական տեսչություն

ՀՀ աշխատանքի պետական տեսչության դեմ 2008թ. ստացվել են մի քանի բողոքներ, որոնք վերաբերել են ստուգումների արդյունքում անհիմն վարչական պատասխանատվության ենթարկելուն, աշխատանքից անօրինական ազատելու դեպքում տեսչության կողմից համապատասխան միջոցներ չձեռնարկելուն:

Օրինակ՝ ՍՊԸ-ի տնօրենը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 07.08.2008թ. ՀՀ աշխատանքի պետական տեսչության կողմից

01.08.2008թ. հանձնարարագրի հիման վրա ՍՊԸ-ում անց է կացվել ստուգում: Արդյունքում տեսուչներն արձանագրել են, որ թվով հիմք աշխատանքային պայմանագիր կնքվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ: Տվյալ խախտումը, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.5 հոդվածի համաձայն, առաջացնում է վարչական տույժ՝ յուրաքանչյուր պայմանագրի համար հիսուն հազար դրամի չափով: Չնայած նշված հիմք պայմանագրերից երեքը լուծվել են 21.01.2008թ., չորրորդը՝ 30.06.2008թ. և միայն մեկն է, որ այդ ստուգման ընթացքում գործել է, սակայն տեսուչները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի՝ վարչական տույժ կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետը 29.09.2008թ. գրությամբ պարզաբանել է, որ «վերադասության կարգով բեկանվել է ՀՀ աշխատանքի պետական տեսչության Երևանի տարածքային կենտրոնի պետի 2008թ. օգոստոսի 7-ի ՍՊԸ-ի տնօրենին վարչական տույժ նշանակելու մասին թիվ 628 որոշումը:

Վարչական վարույթի արդյունքում 2008թ. սեպտեմբերի 26-ին կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին որոշում, որով դիմումատուն ենթարկվել է 50.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի և միջնորդություն է ուղարկվել ՀՀ գանձապետական բաժին՝ սխալ վարչարարության հետևանքով ՍՊԸ-ի տնօրենին նախապես վճարած 250.000 ՀՀ դրամ վարչական տուգանքի 200.000 ՀՀ դրամը վերադարձնելու նպատակով»:

### **3.13. Երևանի քաղաքապետարան**

Երևանի քաղաքապետարանի դեմ 2008թ.-ին ստացվել է 97 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 61
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 10
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 3
- չեն ընդունվել քննարկման՝ 14
- չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝ 0
- ուսումնասիրման ընթացքում են՝ 9

2008 թվականին Երևանի քաղաքապետարանի դեմ ստացված դիմում-բողոքների մեծ մասը վերաբերել է ինքնակամ շինարարությունը չկանխելու, դրանց հետևանքները

շվերացնելու, տասնյակ տարիներ օգտագործվող հողամասերը և շինությունները չօրինականացնելու դեպքերին, վատ վարչարությանը, տեղեկատվություն չտրամադրելուն, բակային տարածքներում ծառահատումներին, շինարարական նորմերի խախտմամբ շինարարություն իրականացնելուն և այլն:

2008թ. սկսել է նոր թափ առնել բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքների սեփականատերերին շուկայական արժեքից ցածր փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ բողոքները: Այս խնդիրներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտապես անդրադարձել է տարեկան գեկույցներում: Այդ մասին մանրամասն ներկայացված է նաև սույն գեկույցի 2-րդ բաժնում:

Բողոքներ են եղել նաև բազմաբնակարան բնակելի շենքերի սեփականատերերի կողմից, որոնք վերաբերել են շենքերի բակային տարածքները, երեխաների խաղահրապարակները օտարելուն, օտարված տարածքներում «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի և «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին» իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկման և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 28.10.1998թ. թիվ 660 որոշման պահանջների խախտմամբ շինարարություն կատարելուն և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվում են հասցեագրվել բողոքներ, որոնք վերաբերում են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներին: Խնդիրն արտացոլվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2007 թվականի տարեկան գեկույցում /բաժին 3.15./, որտեղ նշվել է, որ պատշաճ կերպով չեն կազմակերպվել առաջին պետական գրանցման աշխատանքները, որի իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված շափից մինչև 20 տոկոս ավելի յուրաքանչյուր միավոր հողամասի փաստացի օգտագործման դեպքում դրանց նկատմամբ չեն ճանաչվել դիմումատունների սեփականության իրավունքները, ինչը եղել է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը:

Փաստորեն, բազմաթիվ քաղաքացիներ տուժել են երկու պետական մարմինների՝ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի վատ վարչարության հետևանքով:

Այդ կապակցությամբ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալը 18.01.2008թ. գրությամբ Պաշտպանին հայտնել է, որ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների համաձայն, առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող

փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված չափից մինչև 20 տոկոս ավելի յուրաքանչյուր միավոր հողամասի փաստացի օգտագործման դեպքում նշված հողատարածության նկատմամբ ճանաչվում է նրանց սեփականության իրավունքը, եթե դրանք համապատասխանում են նույն հոդվածով սահմանված պայմաններին: ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների համաձայն համայնքի վարչական սահմաններում պետական և համայնքային հողամասերի օտարումն իրականացնում են՝ այդ թվում սեփականության իրավունքն անհատույց փոխանցելու միջոցով, համայնքի դեկավարները (Երևանում՝ Երևանի քաղաքապետը):

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի դեկավարը 21.01.2008թ. գրությամբ Պաշտպանին հայտնել է, որ առաջին պետական գրանցման աշխատանքներն ապահովելու նպատակով կադաստրային քարտեզագրման աշխատանքների ավարտի մասին Երևանի քաղաքապետարանը պաշտոնական գրություն չի ստացել, որի պատճառով անհրաժեշտ իրավական հիմքեր չեն եղել նման դեպքերում քավարարելու դիմողների խնդրանքները և նրանց առաջարկվել է ավել օգտագործվող հողամասերը գնել կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով:

Պաշտպանի կողմից ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին հասցեագրված մեկ այլ՝ 11.02.2008թ. գրությամբ մեջքերվել է ՀՀ կառավարության 31.12.1998թ. թիվ 867 որոշմամբ հաստատված կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի 8-9 կետերը, որոնց վերլուծությունից պարզ է դառնում, որ կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունք հաստատող փաստաթղթերում նշված չափերից, սեփականատերերի, օգտագործողների կողմից ավելի օգտագործվող հողատարածություններ հայտնաբերելու դեպքում կադաստր վարող մարմինը դրանք պետք է ներկայացներ համապատասխան համայնքի դեկավարին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին) ՀՀ կառավարության 31.12.1998թ. թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-7 կետերին համապատասխան որոշում կայացնելու համար:

Դրական պետք է համարել «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ընդունումը /ընդունված 10.06.2008թ./, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ Երևան քաղաքի վարչական տարածքում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը տիրապետվող և սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (ներառյալ՝ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում)` քաղաքացիներին պատկանող՝ բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասերին կից ավել օգտագործվող՝ մինչև 300 քառակուսի մետր սահմանագատված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը և (կամ) դրանց

վրա կառուցված բնակելի տները և (կամ) բնակելի նշանակության օժանդակ շինությունները սույն օրենքի ուժով համարվում են այն ֆիզիկական անձի (անձանց) սեփականությունը, որի (որոնց) սեփականությունը համարվող հողամասին կից է ավել օգտագործվող հողամասը և (կամ) շինությունները, և ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների այցերը Հայաստանի Հանրապետության տարբեր մարզեր, ցույց են տալիս, որ նմանատիպ խնդիրներ կան նաև մարզերում, որոնց նույնպես կարելի է տալ նմանատիպ լուծումներ:

Հարկ է անդրադառնալ զանգվածային հրապարակային միջոցառումների անցկացման կապակցությամբ Երևանի քաղաքապետարանի կողմից կայացված որոշումներին:

Այսպես, 2008 թվականի մարտի մեկից հետո Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցչի կողմից կայացվել են ավելի քան 90 որոշումներ, որոնցով արգելվել է խաղաղ ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին իրազեկում ներկայացրած անձանց՝ զանգվածային հրապարակային միջոցառում անցկացնելը: Նշված որոշումների գերակշռող մասի կայացման համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԱ ոստիկանության կամ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված պաշտոնական եզրակացություններն այն մասին, որ հրապարակային միջոցառում անցկացնելու իրազեկում ներկայացրած անձին սատարող ծայրահեղ տրամադրված որոշակի խմբեր ակտիվորեն նախապատրաստվում են իրականացնելու տարաբնույթ սաղրիչ գործողություններ, այդ թվում՝ բախումներ իրավապահ մարմինների աշխատակիցների հետ, փորձելու են հրապարակային միջոցառումները վերածել բռնություններով ուղեկցվող հասարակական կարգի շարունակական խախտումների, հիշյալ անձինք պատրաստվում են կատարել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված կլինեն սահմանադրական կարգը բռնի տապալելուն և այդ նպատակն իրագործելու նկատառումով զանգվածային անկարգություններ, ինչպես նաև իշխանության ներկայացուցիչների հանդեպ սաղրիչ և այլ հակաիրավական գործողություններ կատարելուն:

Մեր կարծիքով, վերը նշված պաշտոնական եզրակացությունները կասկածի տեղիք են տալիս իրենց հավաստիության և հիմնավորվածության տեսանկյունից, քանի որ այն դեպքերում, երբ նույն խմբերի կողմից մի քանի անգամ անցկացվել են հրապարակային միջոցառումներ՝ հանրահավաքներ, երթեր կամ ցույցեր, որոնց վերաբերյալ նրանց տված իրազեկումը քաղաքապետարանի կողմից ի գիտություն չի ընդունվել, դրանց ընթացքում հիշատակված պետական մարմինների պաշտոնական եզրակացություններում վկայակոչած որևէ հակաիրավական արարք մասնակիցների կողմից չի կատարվել:

Երևանի քաղաքապետարանի դեմ ուղղված դիմում-բողոքներից բնութագրական են հետևյալները.

## **Օրինակ 1**

Երևան քաղաքի Տերյան փողոցի 56 շենքի մի խումբ բնակիչներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել են, որ իրենց շենքերի միջև ընկած տարածքում կառուցվող շենքում «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի կողմից իրականացվում է 5-րդ հարկի ապօրինի շինություն: Անցյալ տարի Երևանի քաղաքապետարանը մի շարք գրություններով տեղեկացրել է, որ «...կառույցի նախագծում փոփոխությունների կատարումը համարվել է ոչ նպատակահարմար»: Հիշյալ հանգամանքը որպես ապացույց ընդունվել է նաև Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքի առաջին ատյանի դատարանի կողմից կայացրած 26.12.07թ. վճռում: Սակայն երկարետունյա համապատասխան սյուները չեն ապամոնտաժվել: 2007թ. նոյեմբեր ամսից մինչև 2008թ. փետրվար ամիսն այդ աշխատանքները դադարեցվել են, այնուհետև վերսկսվել են իրք վերափոխված նախագծով, որի մասին իրենք որևէ տեղեկություն չունեն:

Դիմել են Երևանի քաղաքապետարան, սակայն քաղաքապետարանը տեղեկատվություն չի տրամադրել 5-րդ հարկի շինության վերաբերյալ:

Դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը 31.07.2008թ. գրությամբ պարզաբանել է, որ «Նիկոլ Աղբալյանի անվան միջնակարգ դպրոցի /Տերյան փողոց հ. 54/ և Աղայան փողոց հ. 19 շենքի միջև եղած տարածքում գրասենյակների, հյուրանոց-կացարանների և այլ ծառայությունների մասնաշենք կառուցելու համար «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊ ընկերությանը Երևանի քաղաքապետարանի կողմից 31.10.06թ. տրվել է համաձայնեցված նախագիծ և 08.11.06թ. շինարարության թույտվություն: Հետագայում կատարվել է կառուցման նախագծի փոփոխում, այն 01.02.08թ. վերահամաձայնեցվել է և տրվել հ. 50-05/2-961-86 կառուցման նախագիծ, որը բաղկացած է նկուղային, 5 վերգետնյա և մանսարդային հարկերից: Շինարարությունն իրականացվում է առանց նախագծային շեղումների:

Ինչ վերաբերում է քաղաքացիներին տեղեկացնելուն, ապա հայտնվում է, որ «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊ ընկերության կողմից ի սկզբանե փակցված է ցուցանակ, որտեղ նշված շինարարության վերաբերյալ տրված է տեղեկություն»:

27.06.2008թ. ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության պետի կողմից քաղաքացիներին տրվել է թիվ UՀ-25/2485 գրությունը, որտեղ եղել են հակասություններ Երևանի քաղաքապետի կողմից տրամադրված տեղեկությունների վերաբերյալ: Մասնավորապես, քաղաքաշինական պետական տեսչության պետի գրությամբ տեղեկացվել է, որ «Երևանի Տերյան թիվ 56 և Աղայան թիվ 19 շենքերի հարևանությամբ գտնվող տարածքում գրասենյակի և հյուրանոցային 4 հարկի /մանսարդային հարկով/ կառուցման համար, սահմանված կարգով, ձևակերպվել են քաղաքաշինական

գործունեության իրավունք տվող բոլոր փաստաթղթերը: Հետագայում Երևանի գլխավոր ճարտարապետի կողմից 2008 թվականի հունվարի 12-ին տրվել է թիվ 50/2-25989-06 ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ կիսակառույց գրասենյակային և հյուրանոցային շենքի նախագծի մեջ փոփոխություններ կատարելու համար և թույլատրվել նախատեսել 5 վերգետնյա և մանսարդային հարկով շենք՝ նախկինում նախատեսված 4 հարկի փոխարեն:

Կառուցապատողը սահմանված կարգով պատվիրել է նախագծի մշակում և իրականացրել 5-րդ հարկի աշխատանքները: Ծինարարական աշխատանքները դադարեցվել են՝ կառուցապատողի հաստատված նախագիծը փոփոխելու պատճառաբանությամբ: Հարկի ավելացման հիմնավորումները փաստաթղթերում բացակայում են, իսկ ճարտարապետահատակագծային առաջադրանքով նախատեսված 100 տոկոս կառուցման դեպքում շինության մաս հանդիսացող սալվածքները կիրականացվեն պետական սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա»:

Նկատի ունենալով տրամադրված տեղեկություններում առկա անհամապատասխանությունները՝ Երևանի քաղաքապետին է ուղարկվել ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության պետի 27.06.2008թ. գրությունը և առաջարկվել 20-օրյա ժամկետում ներկայացնել պարզաբանում առկա հակասության վերաբերյալ:

Նշված ժամկետում պատասխան չստանալով՝ 10.09.2008թ. առաջարկվել է հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել պարզաբանումներ գրությամբ բարձրացված հարցի վերաբերյալ, որին նույնպես պատասխան չի տրվել:

29.09.2008թ. առաջարկվել է անհապաղ պատասխանել նամակին և ներկայացնել պարզաբանում սահմանված ժամկետում նամակներին չպատասխանելու պատճառների վերաբերյալ:

Դիմումի քննարկման արդյունքները, ինչպես նաև Պաշտպանի գրություններին չպատասխանելը հիմք են տվել փաստելու, որ Երևանի քաղաքապետի կողմից թույլ են տրվել խախտումներ, որոնք արտահայտվել են հետևյալում՝

1/ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթն ամրագրում է. «Պաշտպանն իրավասու է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից և պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ»,

2/ Նույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ տեղեկությունները պետք է ուղարկվեն Պաշտպանին

հնարավորինս արագ, հարցումն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ»:

3/ Վարչական իրավախախումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.8. հոդվածի համաձայն. «Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանը սահմանված ժամկետներում չպատասխանելը կամ սահմանված ժամկետներում պահանջվող նյութերը չտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով»:

Դիմումատուի և շենքի մյուս բնակիչների՝ Երևանի քաղաքապետին հասցեազրած դիմումին չպատասխանելու արդյունքում խախտվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, ըստ որի՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը»:

Բացի այդ, դիմումատուն և շենքի մյուս բնակիչները չեն տեղեկացվել Երևանի գլխավոր ճարտարապետի կողմից 2008 թվականի հունվարի 12-ին տրված թիվ 50/2-25989-06 ճարտարապետահատակագծային առաջադրանքին՝ կիսակառույց գրասենյակային և հյուրանոցային շենքի նախագծի մեջ փոփոխություններ կատարելու մասին, որով պետք է թույլատրվեր նախատեսել 5 վերգետնյա և մանարդային հարկով շենք: Արդյունքում խախտվել է ՀՀ կառավարության «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և իրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» 28.10.1998թ. թիվ 660 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջը, ըստ որի. «Պետական կառավարման տարածքային կամ տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց համաձայնեցմանը ներկայացված քաղաքաշինական ծրագրերը և նախագծերն ստանալուց հետո 3-օրյա ժամկետում պարտավոր են դրանց մասին իրազեկ հասարակայնությանը նշելով վերոհիշյալ փաստաթղթերին ծանոթանալու պայմանները՝ հրապարակման, ցուցադրման և հասարակական քննարկման տեղն ու ժամանակը»:

10.10.2008թ. կայացվել է որոշում Երևանի քաղաքապետի գործողություններում մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու մասին, որի մեկ օրինակն ուղարկվել է Երևանի քաղաքապետին:

Չնայած «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետարանը պարտավոր էր պատասխանել Պաշտպանի վերոնշյալ որոշմանը 20-օրյա ժամկետում, սակայն այդ ժամկետը ևս խախտվել է և պատասխան չի տրվել:

## **Օրինակ 2**

Երևան քաղաքի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 28.11.2007թ. իրեն ընդունել է ՀՀ վարչապետը, ծանոթացել բողոքին և հանձնարարական տվել, որի համաձայն իրեն և երկու եղբայրներին Դալմայի այգիների տարածքում վարձակալությամբ հատկացված 2900 քմ մակերեսով հողամասի դիմաց պետք է տրամադրել 1200 քմ տնամերձ հողամաս: ՀՀ կառավարության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման վարչության պետ Խ. Վարդանյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Գ. Մելքոնյանը քննարկել են վարչապետի հանձնարարականը, սակայն որևէ լուծում հարցին չեն տվել:

Բողոքի կապակցությամբ Երևանի քաղաքապետը 01.09.2008թ. գրությամբ ի թիվս այլ տեղեկությունների հայտնել է, որ ներկայումս խնդրի լուծման համար Երևանի քաղաքապետարանի միջնորդությամբ դիմումատուի և հողի սեփականատիրոջ միջև կրկին ընթանում են բանակցություններ և սեփականատիրոջ կողմից առաջարկություն է ներկայացվում քաղաքացուն աջակցություն տրամադրելու վերաբերյալ:

Երևանի քաղաքապետին առաջարկվել է հայտնել, թե ի՞նչ փուլում է գտնվում քննարկումը և ի՞նչ էական քայլեր են ձեռնարկվել վերոնշյալ հարցը լուծելու կապակցությամբ:

Բողոքը գտնվում է քննարկման փուլում:

## **Օրինակ 3**

Երևան քաղաքի մի խումբ բնակիչներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել են, որ իրենց շենքի 6-րդ մուտքին հարակից մոտ 5-6 մետր լայնությամբ հետիւնային ճանապարհի վրա սույն թվականի ապրիլի 3-ից կատարվում է ավտոտնակի կառուցման շինարարական աշխատանքներ: Նշված հատվածի փակման հետևանքով 600-1000 մետրով երկարում է մոտակա կանգառ, խանութ, հիմնական փողոց տանող բնակիչների ճանապարհը և անհարմարություններ ստեղծում նրանց համար: Բացի այդ, վերոնշյալ ճանապարհի փակումը ավելի քան վտանգավոր է դառնում արտակարգ իրավիճակների դեպքում:

Վերոնշյալի մասին 2008թ. ապրիլի 3-ին հեռախոսով տեղեկացրել են Երևանի քաղաքապետարանի, Արարկիրի քաղաքապետարանի և ոստիկանության Արարկիրի քաժնի աշխատակիցներին, սակայն որևէ միջոց չի ձեռնարկվել շինարարական աշխատանքները կասեցնելու ուղղությամբ:

Դիմումում նշված տեղեկությունների վերաբերյալ Երևանի քաղաքապետը պարզաբանել է, որ քաղաքապետարանի կողմից ինքնակամ շինարարական աշխատանքները

իրականացնելու համար 07.04.2008թ. կազմվել է արձանագրություն և Երևանի քաղաքապետի 25.04.2008թ. որոշմամբ ապօրինի շինարարական աշխատանքներ իրականացնող անձը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 400.000 դրամի չափով և պարտավորեցվել է վերջինիս միջոցներ ձեռնարկել իրավախախտման պատճառներն ու պայմանները վերացնելու համար: Նշանակված տուգանքը Գ.Լ.-ի կողմից վճարվել է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավախախտը ամբողջությամբ չի կատարել Երևանի քաղաքապետի վերոնշյալ որոշման պահանջները, մասնավորապես՝ չի ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ իրավախախտման պատճառները և պայմանները վերացնելու ուղղությամբ՝ Երևանի քաղաքապետի 08.10.2008թ. գրությամբ հայցադիմում է ներկայացվել Երևանի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան, Գ.Լ.-ին պարտավորեցնելու քանդել շենքի դիմաց ինքնակամ կառուցած 20.0 քմ մակերեսով ավտոտնակը:

#### **Օրինակ 4**

Երևան քաղաքի բնակիչը ՀՀ նարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ իր բնակարանի հարեան պատին կից տարիներ շարունակ գործում է 10 000 ԿՎՏ հզորության բազմաբնակարան շենքի Էլեկտրական ենթակայան, որի վնասակար հատկությունների մասին բազմիցս դիմել է տարբեր իրավասու պետական մարմինների:

Երկար ժամանակ անց Երևանի քաղաքապետի 23.05.2006թ. և 28.04.2007թ. որոշումներով «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ը Զարյան 102. բակում հատկացվել է 39 քմ հողատարածք՝ Էլեկտրական ենթակայանը թիվ 87-11 հատակագծին համապատասխան նշված վայր տեղափոխելու համար: Սակայն, ըստ դիմումատուի, ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանումը մերժել է վերոնշյալ որոշումներից բխող իրավունքների պետական գրանցումը՝ պատճառաբանելով, որ այդ հողատարածքի վրա ինչ-որ անձի կողմից ապօրինի կերպով տեղադրվել է մետաղական կրպակ:

Այդ կապակցությամբ Պաշտպանի հարցմանը Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը 02.10.2008թ. գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետի վերոնշյալ որոշումների համաձայն հողօգտագործողը պետք է համապատասխան նոտարական վավերացումից հետո 30-օրյա ժամկետում այն գրանցեր ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի լիազորված մարմնում, ինչը չի կատարվել հատկացված տեղում ապօրինի տեղադրված մետաղական կրպակի պատճառով: Ներկայումս մետաղական կրպակը ապամոնտաժված է: Նկատի ունենալով, որ Երևանի քաղաքապետի որոշումների ժամկետները հողօգտագործողի

կողմից չեն պահպանվել, ուստի «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն պետք է դիմի Երևանի քաղաքապետարան ժամկետները երկարացնելու հարցով:

Բողոքի քննարկումը դադարեցվել է :

## Օրինակ 5

Երևան քաղաքի Արովյան փողոցի հ.3 շենքի սեփականատերը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքում հայտնել է հետևյալը.

ՀՀ կառավարության 08.07.2004թ. հ.1047-Ն որոշմամբ Արովյան փողոց հ.5 շենքին հարող տարածքը տրամադրվել է ՍՊԸ-ին կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով, որի հիման վրա 20.08.2004թ. կայացվել է Երևանի քաղաքապետի որոշումը: Կառուցապատողը հողային աշխատանքներ կատարելիս այնքան է մոտեցել իր սեփականությանը, որ բացվել է իր շինության հիմքը, իսկ փորձած փոստրակի խորությունը կազմում է մոտ 10մ, որի պատճառով սեփականության իրավունքով իրեն պատկանող Արովյան փողոցի հ.3 շենքի փլուզման իրական վտանգ է ստեղծվել: Ավելին, կառուցապատողի գործողությունների հետևանքով փակվել է դեպի իր տարածքը տանող մուտքը՝ զրկելով իրեն իր սեփականություն մուտք գործելու հնարավորությունից:

Դիմումատուի նշմամբ, քննարկվող տարածքում նախատեսվում է կառուցել 18 հարկանի շենք, ինչն անբույլատրելի է քաղաքաշինական նորմերով: Համաձայն քաղաքաշինական նորմերի (ՆԻ Շ. 02.07.89թ.) 2.12. կետի՝ երկու բնակելի շենքերի (2-ից 3 հարկանի) միջև անհրաժեշտ է պահպանել 15մ տարածություն, իսկ 4 հարկանի շենքերի դեպքում՝ 20մ հեռավորություն, մինչդեռ տվյալ դեպքում չի պահպանվել այդ նվազագույն հեռավորությունը:

Դիմումատուի պնդմամբ, 2006թ. դիմել է Երևանի քաղաքապետարան նշված տարածքի մի մասն իրեն հատկացնելու խնդրանքով, ներկայացրել է հողամասի տեղագրական հանույթը, հայտնել է իր պատրաստակամությունն այդ տարածքը գնելու վերաբերյալ և ստացել պատասխան, որ այդ հողը կարող է վաճառվել սակարկություններով: Սակայն նույն այդ հողակտորի վերաբերյալ 2008թ. իր դիմումին Երևանի քաղաքապետարանից տրվել է պատասխան, որ այն 2004 թվականից տրամադրված է կառուցապատման իրավունքով:

Քաղաքացին դիմումին կից ներկայացրել է նաև ՀՀ քաղաքաշինության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություններից իրեն տրված պատասխանների պատճենները, որոնց ուսումնասիրությունը վկայում է, որ այդ շինարարությունը կատարվում է առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի և իրական վտանգ է սպառնում Ա.Ա.-ին սեփականության իրավունքով պատկանող շենքի փլուզման համար:

Վերոնշյալ հարցերով Ա.Ս.-ն 03.06.2008թ. դիմել է նաև ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության պետին: Որևէ պատասխան չստանալով, 45 օր անց՝ 18.07.2008թ., քաղաքացին դիմում է ներկայացրել ՀՀ նախագահին՝ գանգատվելով իր սեփականության իրավունքի խախտման և ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության պետին հասցեազրած իր 03.06.2008թ. դիմումն անպատասխան բողնելու հանգամանքներից: Դրան հետևել է ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության առաջին բաժնի վարիչի 21.07.2008թ.՝ իրեն հասցեազրած գրությունը, որում, ըստ դիմումատուի, իր բողոքում նշված հարցերից և ոչ մեկի վերաբերյալ պարզաբանում չի բովանդակվում, իր սեփականության իրավունքի խախտումների փաստերին որևէ արձագանք՝ դրական կամ բացասական նրանում առկա չէ:

Քաղաքացու բողոքում բարձրացված հարցերի կապակցությամբ Պաշտպանի կողմից հարցումներ են ուղարկվել ՀՀ նախագահի աշխատակազմի դեկանարին և Երևանի քաղաքապետին:

Գործը դեռևս քննարկման փուլում է:

## Օրինակ 6

Երևան քաղաքի բնակիչ Ա.Զ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ 11.04.08թ. դիմումով խնդրել է Երևանի քաղաքապետից տրամադրել 2008թ. ապրիլի 9-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում տեղի ունեցած հրապարակային միջոցառման իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշման օրինակը կամ այդ միջոցառումն իրականացնելու համար որևէ այլ օրինական հիմք: Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցիչը մերժել է տեղեկատվության տրամադրումը:

Ի պատասխան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցմանը Երևանի քաղաքապետը հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի լիազոր ներկայացուցիչն իր 15.04.2008թ. գրությամբ դիմումատուին տեղեկացրել է, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին կետի, վարույթն իրականացնող մարմնում վարչական վարույթի նյութերին ծանոթանալ կարող են միայն տվյալ վարչական վարույթի մասնակիցները:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության գրասենյակ 01.04.2008թ. մուտք է արվել ՍՊԸ-ի տնօրենի 01.04.2008թ. հ. 4 դիմումը, որով հայտնվել է, որ ս/թ ապրիլի 8-13 Երևան քաղաքում ընկերության կողմից անցկացվելու է ՀՀ-ում նախադեպը չունեցող «Երևանի գունազարդ երկինք 2008» օդագնացների միջազգային փառատոն: Արդյունքում խնդրել է Երևանի քաղաքապետի թույտվությունը: Երևանի քաղաքապետի լիազոր ներկայացուցիչը տեղեկացրել է ընկերությանը, որ առարկություն չունի:

Քանի որ «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրավունք ունեն առանց լիազոր մարմնին իրազեկման անցկացնելու ոչ զանգվածային իրապարակային միջացառումներ՝ չխախտելով հասարակական կարգը, լիազոր մարմնի որոշում ի գիտություն ընդունելու մասին չի կայացվել:

Քաղաքացին, ի լրումն դիմումով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի լիազոր ներկայացուցչի 15.04.2008թ. գրությունը համարում է ոչ իրավաչափ և որպես հետևանք պահանջում է վճարի հատուցում:

Դրան ի պատասխան 20.08.2008թ. քաղաքապետարանից ստացվել է պարզաբանումն այն մասին, որ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված պատասխանը համապատասխանել է ՀՀ գործող օրենսդրության պահանջներին, քանի որ դիմումատուի դիմումն ուղղված Երևանի քաղաքապետարանին պարունակել է ոչ թե տեղեկատվության տրամադրման խնդրանք, այլ դիմումով քաղաքացին խնդրել է տրամադրել Երևանի քաղաքապետի /ներկայացուցչի/ որոշման օրինակը կամ միջոցառումն իրականացնելու համար հիմք հանդիսացած որևէ այլ օրինական հիմք: Այսինքն, խնդրել է տրամադրել կոնկրետ վարչական վարույթի փաստաթղթերի օրինակները: Հետևաբար, քաղաքացու 01.04.2008թ. հ. 212 դիմումի բովանդակությունը թույլ է տալիս ենթադրելու, որ այն չի պարունակել տեղեկատվություն ստանալու խնդրանք, այլ ուղղված է եղել կոնկրետ փաստաթղթերի տրամադրմանը:

29.10.2008թ. Պաշտպանին է ուղարկվել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/2583/05/08 վարչական գործով վճռի պատճենը, որի համաձայն ոչ իրավաչափ /անվավեր/ է ճանաչվել հայցվորի 2008թ. փետրվարի 3-ին Երևանի քաղաքապետին հասցեազրած թիվ 143 դիմումին չպատասխանելու Երևանի քաղաքապետի անգործությունը, պարտավորեցվել է Երևանի քաղաքապետին հնարավորություն տալ հայցվորին ծանոթանալ վարչական վարույթների նյութերին և իր հայեցողությամբ դրանցից կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ, ինչպես նաև Երևանի քաղաքապետից հօգուտ հայցվոր բոնագանձվել է 4000 ՀՀ դրամ, որպես վերջինիս կրած դատական ծախսի փոխհատուցում:

### 3.14. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ

Այս վերնագրի տակ տեղ են գտնել տարածքային կառավարման մարմինների՝ մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների՝ Երևանի քաղապետարանների, քաղաքապետարանների (քաղի Երևան քաղից) և գյուղապետարանների դեմ ուղղված դիմում-բողոքները:

Մարզպետարանների, քաղաքապետարանների և գյուղապետարանների դեմ ստացված բողոքների շարքում զգալի թիվ են կազմել աղետի գոտու բնակիչներից ստացվածները և հիմնականում վերաբերել են բնակարանային, հողհատկացման, հողօգտագործման հետ կապված խնդիրներին՝ պետական ֆինանսավորման կամ այլ միջոցներով աղետի գոտում կառուցվող բնակարանների անարդարացի բաշխմանը, աղետի գոտու վերականգնողական ծրագրերով ընտանիքի անդամների թվի ավելացումն անտեսելուն, անօթևան մնացածներին հաշվառման ցուցակներում շընդգրկելուն և նման այլ խնդիրներին, ինչպես նաև աշխատանքային իրավունքների և սոցիալական աջակցության ոլորտում բույլ տրված խախտումներին:

Ինչպես նախկինում, ներկայումս էլ աղետի գոտում, բնակարանային խնդիրները շարունակում են մնալ օրակարգային և վերջնական լուծում առայժմ չեն ստացել: Դեռևս կան աղետի հետևանքով բնակարան կորցրած և վթարային շինություններում կամ տնակային պայմաններում բնակվողներ:

### **3.14.1. Մարզպետարաններ**

2008թ. Հայաստանի Հանրապետության մարզպետարանների դեմ ստացվել է 22 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 15
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 0
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 0
- չեն ընդունվել քննարկման՝ 4
- չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝ 0
- ուսումնասիրման ընթացքում են՝ 3

### **Օրինակ 1**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Շամբարակ քաղաքի երկու բնակիչներ Պաշտպանին հասցեազրած գրությամբ հայտնել են, որ փախստական են և 1997 թվականից բնակվում են Շամբարակի հանրակացարանում: Այժմ իրենց առաջարկում են ազատել զբաղեցրած սենյակները, պատճառաբանելով, որ շենքն անցել է ՀՀ պաշտպանության նախարարության տնօրինությանը: Դիմել են ՀՀ Նախագահին, ՀՀ Գեղարքունիքի մարզպետին, սակայն հարցը լուծում չի ստացել:

Ի պատասխան Պաշտպանի գրությանը ՀՀ Գեղարքունիքի մարզպետը հայտնել է, որ դիմումատուների բողոքներն ուսումնասիրվել և քննարկվել են Շամբարակի քաղաքապետի հետ:

Պարզվել է, որ վերը հիշված հանրակացարանի շենքը չի անցել ՀՀ պաշտպանության նախարարության տնօրինությանը, այն գտնվում է քաղաքապետարանի տրամադրության տակ և այնտեղ իրականացվում են վերանորոգման աշխատանքներ, արդյունքում հանրակացարանում հաշվառված անձանց բնակության հասցեներում կարող է կատարվել միայն սենյակների համարակալման հերթականության փոփոխություն, որը հիմք չէ նրանց հանրակացարանից դուրս հանելու համար:

Միաժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել Շամբարակի քաղաքապետի հետ հետագայում, հնարավորության դեպքում, դիմողներին բնակարանով ապահովելու հարցում:

## Օրինակ 2

Քաղաքացին Պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ բնակվում է Աբովյանի Շարտարագիտական քոլեջի հանրակացարանում: Որպես փախստական ստացել է բնակարանի գնման վկայագիր, ձեռք է բերել բնակարան, որի արժեքի 60%-ը մարզպետարանի կողմից փոխանցվել է բնակարանի սեփականատիրոջը, իսկ 40%-ը՝ ոչ: ՀՀ Կոտայքի մարզպետի և իր միջև կնքված պայմանագրով նախատեսված է հանրակացարանի իր սեփականաշնորհված սենյակը օտարել համայնքին կամ պետությանը միայն նվիրատվությամբ: Ըստ դիմումատուի, նվիրատվությունն անհնար է դարձել, քանի որ ընտանիքում կան անշափահաս երեխաներ, իսկ մարզպետարանը չի համաձայնվում ընդունել սենյակը հանձնման-ընդունման ակտով: Նոր բնակարանի առուվաճառքի գործարքը կատարվել է 2007թ. սկզբում, իսկ բնակարան վաճառողը մինչ այժմ չի ստացել իր բնակարանի արժեքի 40%:

Ի պատասխան Պաշտպանի հարցմանը ՀՀ Կոտայքի մարզպետը հայտնել է, որ Աբովյան քաղաքում դիմումատուին պատկանող Շարտարագիտական քոլեջի հանրակացարանի սենյակը հանձնվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությանը:

Իսկ բնակարանի գնման վկայագրի արժեքի 40%-ը փոխանցվել է բնակարանը վաճառողին:

Դիմումի բննարկումը դադարեցվել է հարցը դրական լուծվելու կապակցությամբ:

### 3.14.2. Երևանի քաղապետարաններ

Երևանի քաղապետարանների դեմ ստացվել է 31 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 19
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 4

• փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝	0
• չեն ընդունվել քննարկման՝	6
• չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝	1
• ուսումնասիրման ընթացքում են՝	1

Թաղապետարանների դեմ ուղղված դիմում-բողոքները հիմնականում վերաբերել են վատ վարչարությանը, ինքնակամ շինարարության դեպքերը չկանխելուն, բնակարանային պայմանների բարելավմանը, սոցիալապես անապահով անձանց համար գույքահարկի գծով արտոնություններ չսահմանելուն, աղքահանությանը և այլն:

## Օրինակ 1

Երևան քաղաքի բնակիչը ՀՀ նարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքում հայտնել է, որ Երևանի Արարկիր քաղային համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի 21.12.2007թ. որոշմամբ նշանակվել է դատարանի վճռով անգործունակ ճանաչված իր կնոջ՝ Լ.Լ.-ի խնամակալը, որի հետ տարիներ շարունակ բնակվում են Արարկիր համայնքում այլ անձին պատկանող բնակարանում: Խնամարկյալի ապրուստը հոգալու, բուժումը, խնամքը հեշտացնելու, ինչպես նաև փաստացի բնակատեղը գնելու նպատակով ցանկանում է վաճառել Դավիթաշեն համայնքի երրորդ թաղամասում գտնվող՝ իր և կնոջ համատեղ սեփականությունը հանդիսացող երեք սենյականց բնակարանը: Դիմել է Արարկիր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմին, վերը նշված բնակարանի վաճառքը թույլատրելու համար, սակայն մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, որ այդ բնակարանը գտնվում է Դավիթաշեն համայնքի վարչական տարածքում:

Դիմումատուն հայտնել է նաև, որ մի քանի անգամ դիմել է նաև Դավիթաշեն համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ բնակարանի վաճառքի թույլտվություն ստանալու համար, սակայն քանավոր մերժում է ստացել անհիմն պատճառաբանություններով:

Դիմում-բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանում է պահանջել Երևանի Դավիթաշեն համայնքի դեկավարից՝ առաջարկելով հայտնել քաղաքացու խնդրանքը մերժելու, Դավթաշեն համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման օրինաչափության և իրավական հիմքերի մասին: Դավիթաշեն համայնքի դեկավարը 31.07.2008թ. գրությամբ հայտնել է, որ քաղաքացի Դ.Լ.-ն խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով էր դիմել առանց անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու: Հետագայում նա ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը, որից հետո հանձնաժողովի հերթական նիստով կայացվել է

համապատասխան որոշում, ըստ որի՝ Դ.Լ.-ին թույլատրվել է վաճառել Դավիթաշեն 3-րդ թաղամասում գտնվող բնակարանը:

## Օրինակ 2

Երևան քաղաքի բնակիչ Ա.Ս.-ն և դիմումը ստորագրած 20 բնակիչներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հայտնել են, որ դիմումատուի որդին 1990թ. հունվարի 20-ին զոհվել է Արցախյան պատերազմում: Իրենց շենքի հարևանությամբ՝ Ա.Խաչատրյան և Գյուլբենկյան փողոցների հատման մասում հիմնել են վարդերի այգի՝ նվիրված որդու հիշատակին: Այզում տեղադրված է նաև ցայտադրյուր և որդու կիսանդրին:

2005թ. մարտ ամսին ինչոր անձինք այգու առաջ տեղադրել են մետաղյա մեծ տաղավար առևտուր կազմակերպելու նպատակով, որը շենքի բնակիչների բողոքների հիման վրա, համայնքի նախկին ղեկավարի հանձնարարականով հանվել է: 2006թ. փորձ է կատարվել նույն մետաղյա տաղավարը տեղադրել այգու հարևանությամբ, սակայն նորից կանխվել է: 2008թ. տեղի ունեցած համայնքի ղեկավարի ընտրություններից 3 օր անց այդ մետաղյա տաղավարը տեղադրվել է այգու առաջնամասում, որի հետևանքով այգին և հուշարձանը դարձել են աննկատ:

Դիմել են Արարկիր համայնքի ղեկավարին և Երևանի քաղաքապետարան, սակայն միջոցներ չի ձեռնարկվել:

Ստացված պարզաբանումների արդյունքում պարզ է դարձել, որ տաղավարը նշված վայրում տեղադրվել է Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման և Արարկիրի թաղապետարանի կողմից տրված շինարարության թույլտվության հիման վրա: Հետագայում, ինչպես նշվեց վերևում, թաղապետարանն ապամոնտաժել է տաղավարը, ինչի հետևանքով տաղավարի սեփականատերը դիմել է դատարան՝ թաղապետարանին որոշակի գործողություններ պարտադրելուն պարտավորեցնելու պահանջով: Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը 05.04.2007թ. որոշմամբ հաստատել է քաղաքացի Լ.Հ.-ի և Արարկիրի թաղապետարանի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որից հետո տաղավարը տեղադրվել է նշված տարածքում: Սակայն Արարկիրի թաղապետարանը բազմիցս դիմել է Երևանի քաղաքապետարան նշված տաղավարն այլ վայր տեղափոխելու համար համապատասխան որոշում ընդունելու խնդրանքով:

Տաղավարը ներկայումս հանվել է վերոնշյալ տարածքից:

## Օրինակ 3

Երևան քաղաքի Ավան համայնքի բնակիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ Երևան քաղաքի խորհրդային շրջխորհրդի գործկոմի

25.04.1994թ. որոշմամբ սեփականության իրավունքով իրեն հանձնվել է բնակարան: Որոշման հիման վրա ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից 04.11.2002թ. տրվել է սեփականության իրավունքի գրանցման վկայական: 2008թ. պատահարար պարզել է, որ վկայականում կան սխալներ: Մասնավորապես, վկայականի առաջին էջում որպես սեփականատեր նշված է միայն իր անունը, իսկ վերջին էջում իրավունքի տեսակը նշված է որպես ընդհանուր համատեղ սեփականություն: Նշված սխալն ուղղելու համար 11.09.2008թ. դիմել է ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի Ավան տարածքային ստորաբաժանում՝ ներկայացնելով գործումի որոշումը և վկայականը, սակայն ընդհանուր բաժնից հայտնել են, որ Ավանի բաղադրետարանից պետք է ներկայացնի տեղեկանք, քեզ ովքե՞ր են մասնակցել բնակարանի սեփականաշնորհմանը, որպեսզի դրա հիման վրա կատարեն ուղղում: Նույն օրն այցելել է բաղադրետարան, որտեղ կոմունալ բաժնի աշխատակիցը հայտնել է, որ տեղեկանքը տրամադրելու համար անհրաժեշտ է ներկայացնել համատիրությունից տեղեկանք պարտքերի բացակայության մասին: Տարիների ընթացքում գոյացած իր պարտքերը կազմում են 140.000 ՀՀ դրամ, որը միանվագ մուծելու հնարավորություն չունի:

Դիմել է Ավանի բաղադրետարանի աշխատակազմի ղեկավարին՝ խնդրելով, որ բացառության կարգով տրամադրեն այդ տեղեկանքը, սակայն նույն պատճառաբանությամբ ստացել է մերժում:

Այդ պատճառով հիշեցում է ուղարկվել համայնքի ղեկավարին, որին ի պատասխան Երևանի Ավան բաղային համայնքի ղեկավարը 25.11.2008թ. թիվ 30/01-1397 գրությամբ հայտնել է, որ Ավան համայնքի բնակիչ Գ.Պ.-ն գրավոր դիմում չեր ներկայացրել տեղեկանք ստանալու համար: Նրա խնդրանքը բավարարվել է գրավոր դիմում ներկայացնելուց հետո:

Ինչ վերաբերվում է գրությանը չպատասխանելուն, ապա համապատասխան բաժնի կողմից այն համարվում է թերացում, և պատասխանատուն ստացել է բանավոր խիստ նկատողություն:

### **3.14.3. Քաղաքապետարաններ**

#### **Քաղաքապետարանների դեմ ստացվել է 18 բողոք, որից**

- ընդունվել են քննարկման՝ 11
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 1
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 0
- չեն ընդունվել քննարկման՝ 3
- չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝ 0
- ուսումնասիրման ընթացքում են՝ 3

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները Պաշտպանի հանձնարարությամբ պարբերաբար այցելություններ են կատարում Հայաստանի Հանրապետության բոլոր մարզեր: Հանդիպումներ են կազմակերպվում քաղաքապետերի, քաղաքներում ակտիվ գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների հետ, որի ընթացքում քննարկվում են համայնքների բնակչության իրավունքներին վերաբերող խնդիրներ: Այս տարի լրացավ 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի աղետալի երկրաշարժի 20-րդ տարին: Այս քանի տարիների ընթացքում, թեկուզ դանդաղ, բայց կատարվել են զգալի աշխատանքներ բնակարանի անօրեաններին բնակարաններով ապահովելու կապակցությամբ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ աղետի գոտում հատկապես Գյումրի քաղաքում, դեռևս կան հազարավոր անօրեան ընտանիքներ, որոնք արդեն քանի տարուց ավելի գոյատևում են բնակվելու համար անհրաժեշտ տարրական պայմաններից գործ ժամանակավոր կացարաններում, վագոն-տնակներում: Յուրաքանչյուր տարի պետությունը հույս է տալիս անօրեաններին բնակարաններով ապահովելու համար՝ սահմանելով որոշակի ժամկետներ, սակայն ամեն տարի այդ ժամկետները երկարում են: Բողոքներ կան նաև ՀՀ կառավարության կողմից իրազործվող բնակարանների գնման վկայագրերի /ԲԳՎ/ տրամադրման ծրագրի հետ: Անօրեանները դժգոհում են, որ բնակարանների գնման համար տրամադրվող գումարները շատ ցածր են շուկայական գներից, որի հետևանքով չեն կարողանում գնել բնակարաններ և հրաժարվում են առաջարկվող գումարներից:

## Օրինակ 1

Գյումրի քաղաքի բնակիչ Լ.Գ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմումով հայտնել է, որ ՀՀ քաղաքացիական գործերով վերաբնիչ դատարանի 28.09.2005թ. վճռով Գյումրու քաղաքապետարանի հայցն ընդդեմ իրեն՝ ինքնակամ զբաղեցրած տարածքից /տնակից/ վտարելու պահանջի մասին, մերժել է: Դատարանները հայցը մերժելիս հիմք են ընդունել այն հանգամանքը, որ Լ.Գ.-ին տեղափոխվելու համար առաջարկվող բնակարանը եղել է անբարեկարգ, բնակության համար ոչ պիտանի և այնտեղ բնակվել են աղետի հետևանքով անօրեան մնացած այլ անձինք:

Մինչ օրս Գյումրու քաղաքապետարանը չի բարելավել իր բնակարանային պայմանները: Ավելին՝ տնակի երկու կողմում կատարվել է հողհատկացում և սեփականատերերը քաղաքաշինական և անվտանգության նորմերի խախտմամբ սկսել են շենքի շինարարական աշխատանքներ, որի հետևանքով ոտնահարվում է իր իրավունքները և վտանգ է սպառնում իր ընտանիքի անդամների կյանքին ու առողջությանը:

Երկու շինարարական աշխատանքներն ել իրականացվում են տնակին կից, իսկ երրորդի սկզբելու դեպքում կփակվի տնակ տանող միակ ճանապարհը: Վերջերս նմանատիպ իրավիճակում գտնվող 101/031 տնակի վրա պատի փլուզման հետևանքով զոհվեց երեք մարդ: Չնայած դրան, քաղաքապետարանը թույլատրել է սկսել շինարարական աշխատանքները՝ հետևություն չանելով այդ աղետալի միջադեպից:

Քաղաքացու դիմումում նշված տեղեկությունների վերաբերյալ Գյումրու քաղաքապետը հայտնել է, որ քաղաքացին 09.03.2004թ-ին դիմել է Գյումրու քաղաքապետին և ՀՀ կառավարությանն 10.06.1999թ. թիվ 432 որոշմամբ հաստատված կարգի համաձայն, ընտանիքի մեկ անձով հաշվառված է մեկ սենյականոց բնակարանի կարիքավոր ընտանիքների հերթացուցակում և օգտվում է 15-րդ կետի արտոնությունից:

Երկրաշարժից հետո քաղաքացին 1 անձով փաստացի բնակում է Տերյան և Սունդուկյան փողոցներին հարակից տարածքում տեղադրված ժամանակավոր կացարանում:

Գյումրի քաղաքի գարգացման ծրագրի շրջանակներում կենտրոնական փողոցին հարակից տարածքը քաղաքաշինության նպատակով իրացվել է և քաղաքացուն առաջարկվել է տնակի գրադեգրած տարածքը ազատել և կնքել բնակարանի վարձակալության պայմանագիր երկու տարի ժամկետով ամսեկան 20 000 ՀՀ դրամ վարձավճարով, որից վերջինս իրաժարվել է:

Ներկայումս դժբախտ պատահարներից խուսափելու նպատակով դիմումատուի կողմից գրադեգրած ժամանակավոր կացարանի հարևանությամբ իրականացվող շինարարությունը քաղաքապետարանի միջնորդությամբ դադարեցվել է մինչև հարցի լուծումը:

Դիմումը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

## Օրինակ 2

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի N 1 հանրակացարանի բնակիչ Ս.Մ.-ն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ ամուսինը քսան տարի աշխատելով Բյուրեղավանի շշերի գործարանում 15.10.1997 թվականին ստացել է վերոնշյալ սենյակը: Վերջին չորս տարիների ընթացքում բնակվել են Ռուսաստանի Դաշնությունում: Չնայած դրան, պարտաճանաչ վճարել են բնակվարձը:

Նախկինում վերոնշյալ հանրակացարանում սեփականաշնորհում չի կատարվել՝ վթարային լինելու պատճառաբանությամբ: Ներկայումս հանրակացարանը գտնվում է քաղաքապետարանի հաշվեկշռում: Վերադառնալով Հայաստան՝ տեղեկացել են, որ կատարվում է բնակարանների սեփականաշնորհում, սակայն իրենց առաջարկել են

նախկինում հատկացված բնակարանը գնել 8000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով, այլապես սպառնացել են վտարել բնակարանից:

Քաղաքացու դիմումի կապակցությամբ կատարված հարցմանն ի պատասխան Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքապետը պարզաբանել է, որ դիմումում նշված փաստերն իրականությանը չեն համապատասխանում, քանի որ Ս.Ա.-ի ընտանիքը 2000 թվականից բացակայել է հանրապետությունից, նշված սենյակներում ոչ-ոք չի բնակվել և ժամանակին բնակվարձ պարտաճանաչ չի վճարվել: Ներկայացված օրդերն անհիմն է, քանի որ վերոնշյալ հանրակացարանը ՀՀ կառավարության 09.07.1997թ. թիվ 253 որոշմամբ հանդիսանում է Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականությունը, իսկ օրդերը տրամադրված է «Հայապակի» արտադրական միավորման արհեկոմի նախագահի կողմից 1997թ. հոկտեմբերի 15-ին: Դիմումում նշված սենյակները, որպես թիվ 1 երկու սենյականց բնակարան, Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 31.07.2007թ. թիվ 12/3 որոշմամբ ներկայացվել է աճուրդի, հայտարարություն իրապարակվել ՀՀ օրաթերթում և աճուրդային հանձնաժողովը ստացված հայտերի համաձայն կազմակերպելով աճուրդը՝ 2007թ. հուլիսի 30-ին այն օտարել է:

Քաղաքացու ընտանիքն աճուրդի մասնակցության հայտ չի ներկայացրել: Ներկայացման դեպքում առաջնահերթությունն աճուրդային հանձնաժողովի կանոնակարգի համաձայն կտրվեր իրենց:

Բողոքի քննարկումը դադարեցվել է:

### 3.14.4. Գյուղապետարաններ

Գյուղապետարանների դեմ ստացվել է 12 բողոք, որից՝

- ընդունվել են քննարկման՝ 7
- ներկայացվել են դիմողի իրավունքների պաշտպանության հնարավորությունները՝ 2
- փոխանցվել են այլ մարմնի քննարկմանը՝ 0
- չեն ընդունվել քննարկման՝ 3
- չեն քննարկվել դիմումատուի խնդրանքով՝ 0
- ուսումնասիրման ընթացքում են՝ 0

Գյուղապետարանների դեմ ուղղված բողոքները վերաբերում են հիմնականում հողային վեճերին, առաջին պետական գրանցման ժամանակ կազմված քարտեզներում տեղ գտած անձշտություններին:

## **Օրինակ 1**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Կախակն համայնքի բնակչութիւն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իրենց գյուղը մեծամասամբ բնակեցված է փախստականներով: 1992թ.-ից գյուղում պարբերաբար անցկացվել է սեփականաշնորհում: Սեփականաշնորհման 2 փուլերն ավարտվելուց հետո գործընթացն իրենց համայնքում դադարեցվել է, ինչի արդյունքում գյուղի բազմաթիվ բնակիչներ չեն կարողացել ձեռք բերել հողի սեփականության իրավունք: Քաղաքացին նաև հայտնել է, որ 2003թ. համաձայն կառավարության կողմից ընդունված որոշման Կախակն համայնքին հանձնվել է 30 հա վարելահող, որի վերաբերյալ փաթեթը կազմվել և ներկայացվել է մարզպետարան, սակայն գործին ընթացք չի տրվել:

Հարցի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով հարցում է կատարվել Գեղարքունիքի մարզպետին, որը հայտնել է, որ ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին կետի համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով տրամադրում է համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ: Կախակն համայնքի ղեկավարի կողմից սեփականաշնորհումից չօգտված համայնքի բնակիչների անհատույց սեփականության իրավունքով հողամասերի տրամադրման վերաբերյալ որևէ փաթեթ մարզպետարան չի ներկայացվել:

Մեկ այլ հարցում է կատարվել Գեղարքունիքի մարզի Կախակն համայնքի ղեկավարին, որի կապակցությամբ ստացված պատասխանով հայտնվել է, որ ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն անհատույց սեփականաշնորհման իրավունքով հողամասերի տրամադրման ժամկետ էր սահմանվել մինչև 2003թ. հուլիս ամիս: Այնուհետև 20.06.2006թ. հողային օրենսգրքում կատարվել է փոփոխություն որի հիման վրա ժամկետը երկարացվել է մինչև 2007թ. հունիսի 30-ը, որի մասին գյուղապետարանը չի տեղեկացվել: Նախկին գյուղապետի կողմից բնակիչներին հողամասեր չեն հատկացվել, իսկ գործող գյուղապետի ժամանակ հայտեր չեն ներկայացվել:

Միաժամանակ տեղեկացել է, որ գյուղապետարանը դիմել է ԱԺ՝ հարցին համապատասխան իրավական լուծում տալու համար, իսկ մինչ այդ դիմողներին ժամանակավորապես տրամադրվել է հողամաս՝ վարձակալական հիմունքներով՝ մինչև սեփականաշնորհման հարցի լուծումը:

## **Օրինակ 2**

Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գյուղի բնակչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ ՀՀ կառավարության 1992թ. հունիսի 8-ի թիվ 340 որոշմամբ սահմանված կարգով ինքն աճուրդով գնել է Արծվանիստի կալերի 6-րդ պահեստը: 1993թ.-ից առ այսօր իր ընտանիքի և ծնողների հետ միասին բնակվում է

հիշատակված տարածքում: Նպաստառու է, չունի տնամերձ հողակտոր և ընտանիքի ծախսերը հոգալու համար որևէ եկամուտ: Պահեստին կից կա անմշակ հողակտոր, որի մշակումից ստացված միջոցներով կարողանում է գոյատևել: Քաղաքացին նաև հայտնել է, որ արդեն 14 տարի է, ինքը մշակում է այդ հողակտորը, սակայն գյուղապետարանն առանց իրեն տեղեկացնելու ներքին կարգով սեփականաշնորհել է այն :

Դիմումի կապակցությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզպետը 03.06.2008թ. գրությամբ հայտնել է, որ Արծվանիստի բնակչի կողմից բարձրացված հարցը բազմիցս ուսումնասիրվել է: Դիմումատուի բողոքն անհիմն է և չի համապատասխանում իրականությանը: Կից ներկայացրել է նաև համայնքի ղեկավարի կողմից 28 մայիսի 2008թ. ներկայացված տեղեկանք, ըստ որի դիմումատուն համայնքում սեփականության իրավունքով ունի՝ 1.15 հա վարելահող, 0.29 հա խոտհարք, 0.20 հա տնամերձ, ինչպես նաև զբաղվում է ձկնորսությամբ:

Քաղաքացին ծանոթանալով համայնքի ղեկավարի ներկայացրած պարզաբանմանը՝ 03.07.2008թ. դիմումով հայտնել է, որ այն չի համապատասխանում իրականությանը և ինքը տնամերձ հողամաս երբեւ չի ստացել: Բացի այդ, գյուղապետն իրեն չի տրամադրում 1992թ. աճուրդով գնված և իր կողմից տնօրինվող շինության վերաբերյալ համապատասխան տեղեկանք, որպեսզի կատարի իրավունքների պետական գրանցում:

Առկա խնդրին ծանոթանալու նպատակով Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներն այցելել են վիճելի տարածք, դիմումատուի մասնակցությամբ քննարկում կազմակերպել գյուղապետարանում: Համայնքի ղեկավարը հայտնել է, որ պատրաստակամ է տրամադրել պահանջվող տեղեկանքը, իսկ 2008թ. սեպտեմբերի 8-ի գրությամբ տեղեկացրել է, որ առկա հողային վեճը լուծվել է գյուղապետարանի միջոցով, կողմերը եկել են համաձայնության, դիմումատուին առաջարկվել է իր կողմից մշակվող տարածքը տնօրինել վարձակալության իրավունքով, որին վերջինս համաձայնվել է:

### Օրինակ 3

ՀՀ Կոտայքի մարզի Արովյան քաղաքի բնակչի Ս.Ա.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքում հայտնել է հետևյալը.

13.04.2007թ. Նորգյուղ համայնքում աճուրդ-վաճառքով գնել է 7000 քմ գյուղատնտեսական նշանակության վարելահող: Ըստ դիմումատուի, նշված հողամասի մի մասը Նորգյուղ համայնքի ղեկավարի կողմից գաղտնի կերպով վաճառվել է այլ անձի, կեղծվել է հողամասի գլխավոր հատակագիծը, խախտվել են հողամասի սահմանները, որի հետևանքով իր 7000 քմ վարելահողից մնացել է մոտ 2500 քմ:

Դիմումի կապակցությամբ հանրային մարմիններ Պաշտպանի կատարած հարցման արդյունքում ստացված կադաստրային գործի նյութերի և պաշտոնատար անձանց

գրությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքացուն պատկանող հողամասի գտնվելու վայրը փաստաթղթերում ենթարկվել է որոշակի փոփոխության:

Քաղաքացուն աճուրդով օտարված 0.7հա գյուղատնտեսական նշանակության հողամասի տեղադրության խախտման մասին եզրահանգում է կատարվել նաև ՀՀ Կոտայքի մարզպետի 09.06.2008թ. գրության մեջ՝ ուղղված Նորգյուղ համայնքի ղեկավարին, որով Նորգյուղ համայնքի ղեկավարին առաջարկվում է ճշտել օտարված 0.7հա հողամասի նախկին դիրքը՝ համաձայն օտարման պայմանագրի անբաժանելի մասը կազմող հատակագծի և վերադարձնել սեփականատիրոջը: Այդ գրության պատճենը դիմումատուն տրամադրել է Մարդու իրավունքների պաշտպանին:

Հաշվի առնելով, որ վիճահարույց հարցով քաղաքացին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, բողոքի քննարկումը դադարեցվել է:

Հարկ է նշել, որ նշված գործով 2008թ. հունիսի 20-ին Կոտայքի մարզի դատախազությունում հարուցվել է քրեական գործ՝ Կոտայքի մարզի Նոր-Գյուղ համայնքի ղեկավարի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելու դեպքի առթիվ՝ ՀՀ քրեական օր. 314 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Հարուցված քրեական գործի նախաքննությունը հանձնարարվել է ոստիկանության Աբովյանի քննչական բաժին: Նախաքննությունը շարունակվում է:

#### Օրինակ 4

Քաղաքացի Լ.Մ.-ն Պաշտպանին ուղած դիմումում հայտնել է, որ Արարատի մարզի Նոր-Կյուրին գյուղի տարածքում 1975թ.-ին Հայելեկտրո միավորման այգեգործական միության կողմից իրեն հատկացվել է 500քմ հողամաս, որը մշակում է առ այսօր: Վերահաշվառման և հատակագծի կազմման ժամանակ անհասկանալի պատճառով տարածքը կցվել է իր հարեւանների՝ Մ.Ն.-ին և Հ.Ս.-ին պատկանող հողամասերին: Դիմել է ՀՀ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի Մասիսի տարածքային ստորաբաժանում՝ կատարված սխալն ուղղելու և իրեն պատկանող հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելու համար:

ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի տարածքային ստորաբաժանման ղեկավարը պատասխանել է, որ ««Քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ առաջին պետական գրանցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 31.12.1998թ. թիվ 867 որոշման պահանջի համաձայն՝ այգեգործական հողամասերի քարտեզագրման աշխատանքները կատարել է քարտեզագրում կատարող արտոնագիր ունեցող կազմակերպությունը՝ ՀՀ Արարատի մարզի Նոր-Կյուրինի գյուղապետարանի հետ համատեղ, որի արդյունքում Լ.Մ.-ի հողակտորը չի

ներգրավվել քարտեզում, ուստի հարցի լուծման համար պետք է դիմել Նոր-Կյուրինի գյուղապետարան՝ հողամասի տեղը և կարգավիճակը ճշտելու համար:

Լ.Մ.-ի դիմումին ի պատասխան 09.11.2006թ. նամակով ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ նախագահի տեղակալը հայտնել է, որ նրա սեփականության իրավունքը կարող է գրանցվել այգեգործական հողամասի նկատմամբ իրավունքի ձեռքբերման փաստաթղթերը՝ այգեգործի անդամատոմար և հատկացված հողամասի՝ համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագիծը ներկայացնելու դեպքում:

Դիմումատուն բողոքում է, որ դիմել է Նոր-Կյուրին համայնքի ղեկավարին, սակայն իրեն չի տրամադրվել հատկացված հողամասի համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագիծը:

Պաշտպանը դիմել է ՀՀ Արարատի մարզի Նոր-Կյուրին համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանին՝ հատկացված հողամասի՝ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը Լ.Մ.-ին չտրամադրելու վերաբերյալ պարզաբանում ստանալու համար:

Պատասխան չստանալով՝ Պաշտպանն ուղարկել է հիշեցում՝ առաջարկելով անհապաղ պատասխանել նամակին և տալ պարզաբանում սահմանված ժամկետում նամակին չպատասխանելու պատճառների մասին:

Սակայն ՀՀ Արարատի մարզի Նոր-Կյուրին համայնքի ղեկավարը չի պատասխանել նաև Պաշտպանի երկրորդ նամակին:

Փաստորեն, Լ.Մ.-ին հատկացված հողամասի հատակագիծը ՀՀ Արարատի մարզի Նոր-Կյուրին համայնքի ղեկավարի կողմից չտրամադրելու արդյունքում ոտնահարվել են նրա սեփականության և տեղեկատվություն ստանալու սահմանադրական իրավունքները: Վերջինս զրկվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով սահմանված իր իրավունքների իրականացումից, այն է՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ իշտի հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

Հիմք ընդունելով բողոքի քննարկման արդյունքները և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները՝ Պաշտպանի 08.12.2008թ. որոշմամբ ՀՀ Արարատի մարզի Նոր-Կյուրին համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանի գործողություններում դիմումը դիմումը է քաղաքացի Լ.Մ.-ի իրավունքների խախտում և համայնքի ղեկավարին առաջարկել է ապահովել Լ.Մ.-ին հատկացված հողամասի՝ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի տրամադրումը:

## ԲԱԺԻՆ 4.

### ՀԱՏՈՒԿ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

#### 4.1. Զինվորական ծառայության հետ կապված իրավունքներ

ՀՀ Սահմանադրության 8.3 հոդվածը սահմանում է, որ ՀՀ զինված ուժերը գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո: Այս դրույթը, որի կենսագործման արդյունավետությունից է նաև կախված զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների ներդրման ակտիվացումը, արտացոլված է նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում և մի շարք այլ փաստաթղթերում: Այդ նպատակով միջազգային կառույցների հետ ՀՀ համագործակցության ծրագրերում ամրագրվեցին դրույթներ՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտների զարգացման և նոր ինստիտուտների ստեղծման վերաբերյալ: Այդ գործընթացից անմասն չմնաց նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը: 2007թ. սկզբին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդականի հաստիք և նույն թվականի նոյեմբերին կատարվեց նշանակում:

Այս ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության գերատեսչական, վերզերատեսչական կամ հասարակական մեխանիզմների շրջանակում առավել արդյունավետը լինելու նախադրյալներ ունի հենց օմբուդսմենի ինստիտուտը: Ուստի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր հատուկ ուշադրության ներքո է պահում երկրի համար չափազանց կարևոր այս բնագավառում կատարվող զարգացումները, թե՛ իրավունքների պաշտպանության մեխանիզմների կիրառման, թե՛ իրավաստեղծ ու իրավակիրառ պրակտիկայի վերլուծության, ուսումնասիրության և առաջարկությունների ներկայացման միջոցով:

2008թ. ընթացքում նույնպես քայլեր են ձեռնարկվել հիշյալ բնագավառում մարդու իրավունքների պաշտպանության և զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացմանը նպաստելու ուղղությամբ: Այսպես, որոշակիորեն ընդլայնվել է Պաշտպանի գործունեությունը ոչ միայն զինված ուժերում, այլ նաև զինվորական ծառայության հետ կապված այլ իրավահարաբերություններում մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Եթե նախկինում այս ոլորտում արձանագրվող խախտումները հիմնականում դիտարկվում էին ՀՀ պաշտպանության նախարարության գործունեության համատեքստում, ապա այս տարի փորձ է արվել այս խնդիրների քննարկման ընթացքում համալիր վերլուծության ենթարկել նաև այլ պետական և տեղական

ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների և այլ առնչվող ինստիտուտների գործունեությունը: Շարունակվել է նաև նախորդ տարի սկիզբ առած պլանային այցելությունների գերատեսչական շրջանակի ընդլայնումը: Մասնավորապես, հաճախակի են դարձել Պաշտպանի ներկայացուցիչների այցելությունները ՀՀ ոստիկանության զորքերի զորամասեր: Այցելություններ են կազմակերպվել նաև ՀՀ ՊՆ կայազորների ռազմական ուստիկանության բաժիններ, դրանց կից կարգապահական մեկուսարաններ:

Զարգացումներ են արձանագրվել նաև միջազգային համագործակցության և օտարերկրյա փորձի ուսումնասիրության բնագավառում: Պաշտպանը տարվա ընթացքում հանդիպումներ է ունեցել ՆԱՏՕ-ի բարձաստիճան պաշտոնական պատվիրակությունների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ՀՀ-ՆԱՏՕ անհատական զործընկերության գործողությունների ծրագրի նպատակների իրականացմանը Պաշտպանի մասնակցության հարցերը: Հանդիպումների ընթացքում որոշվել են ՆԱՏՕ-ի համապատասխան կառույցների հետ համագործակցության ուղենիշները: Առավել գործնական հարթության վրա է համագործակցություն ծավալվել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ: Ստորագրվել է Փոխընթացան հուշագիր, որի շրջանակներում ԵԱՀԿ-ն փորձագիտական օժանդակություն է ցուցաբերելու Պաշտպանի աշխատակազմին՝ ՀՀ զինված ուժերում կարգապահական պատասխանատվության հարցերի ուսումնասիրության նպատակով:

Պաշտպանի ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդականը մասնակցել է ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից պատրաստված՝ «Զինված ուժերի անձնակազմի իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկի ներկայացման արարողությանը և Պաշտպանի հանձնարարությամբ նախնական պայմանավորվածություններ ձեռք բերել այս գրասենյակի հետ հետագա համագործակցության ծավալման շուրջ: «Զինված ուժերի անձնակազմի իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկը դիտվում է որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ուղեցույց: Փոխհարաբերություններ են հաստատվել նաև ԱՄՆ դեսպանությանը կից պաշտպանական գրասենյակի հետ: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների համար ճանաչողական այց է կազմակերպվել ԱՄՆ Եվրոպական հրամանատարության գլխավոր ռազմական տեսուչի գրասենյակ՝ զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերով փորձի փոխանակման նպատակով:

Զինվորական ծառայության հետ կապված իրավունքների իրականացման և դրանց պաշտպանության ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ընթացքում վերհանված հիմնական խնդիրները հանգում են հետևյալին.

1. ՀՀ մարդու իրավունքերի պաշտպանի 2007թ. տարեկան գեկույցում նշվել էր, որ զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների հայտնաբերմանը և դրանց կանխարգելմանը խոչընդոտող հիմնական պատճառներից մեկը զինծառայողների իրավագիտակցության ցածր մակարդակն է, որն առավել ցայտուն է արտահայտվում պարտադիր ժամկետային զինծառայողների, մի շարք դեպքերում՝ նաև կրտսեր սպայական կազմի մոտ: Հաշվետու տարվա ընթացքում արձանագրվել է, որ այդ խնդրի լուծման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել: Պատճառն այն է, որ նախագորակոչային պատրաստության շրջանում գորակոչիկների իրավական պատրաստությանը պատշաճ ուշադրություն չի դարձվում: Մի շարք զինծառայողների գրույցների ընթացքում նշել են, որ թեև դպրոցում զինպատրաստության դասեր նախատեսված են, սակայն դրանք կամ չեն անցկացվում կամ դրանց ընթացքում չեն շոշափվում զինվորական ծառայությանն առնչվող, այդ թվում՝ զինծառայողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հարցեր: Արդյունքում, քաղաքացիները մինչև գորակոչը և դրա ընթացքում չեն կարողանում պատշաճ միջոցներ ձեռնարկել իրենց իրավունքների պաշտպանության ուղղությամբ, քանի որ տեղյակ չեն իրենց իրավունքների և պարտականությունների մասին: Նրանք զինված ուժեր գորակոչվում են ծառայության վերաբերյալ խեղաքյուրված պատկերացումներով, որոնք ձևավորվում են շրջապատից լած տարբեր կարծիքների հիման վրա: Այս ամենը նպաստում է զինծառայողների միջև ոչ կանոնադրական հարաբերությունների ձևավորմանը, ինչն էլ իրենց հերթին հանգեցնում է իրավունքների խախտման ու բռնության դեպքերի: Որոշ դեպքերում դրանք ողբերգական ավարտ են ունենում: Եվ ամենին պատահական չէ, որ հաշվետու տարվա ընթացքում շարունակվում էին զինվորական ծառայության ընթացքում գոհված զինծառայողների հարազատների կողմից կազմակերպվող բողոքի գործողությունները:

Սակայն առավել մտահոգիչ է, եթե իրավագիտակցության ցածր մակարդակ են ունենում հրամանատարական կազմի բարձաստիճան սպաները: Այս խնդիրը հատկապես սուր շեշտադրում է ստանում մարտական ուղի անցած և ներկայումս հրամանատարական պաշտոններ գրադարանող որոշ բարձրաստիճան սպաների շրջանում: Նրանց վարքագիծը ոչ միանշանակ ազդեցություն է բողոնում պատշաճ կրթություն ստացած սպաների և պարտադիր ժամկետային զինծառայողների վրա, և ի վերջո հանգեցնում անվստահության և փոխադարձ հակակրանքի մթնոլորտի ձևավորմանը: Բացի այդ, նման վարքագիծ ունեցող հրամանատարները հաճախ թերահավատ և նույնիսկ անլուր վերաբերմունք են ցուցաբերում զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերին՝ զինված ուժերում դրանք համարելով երկրորդական:

**Սյունիքի մարզ կատարած պլանային այցելության ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները հանդիպել են Սիսիանում տեղակայված ՀՀ ՊՆ ենթակայության**

զորամասի գինծառայողների հետ, որոնցից մի քանիսը նշել են, որ զինվորական ծառայության 8 ամիսն արդեն անցել է, սակայն իրենց դեռևս արձակուրդ չի տրամադրվել, թեև իրենցից ուշ զորակոչված զինծառայողներին այն արդեն տրամադրվել է: Այս փաստը հաստատել է նաև զ/մ սպաներից մեկը: Նրանք հավելել են, որ հաճախ զ/մ հրամանատարը հենց այնպես շարքից ընտրում է մի զինծառայողի և արձակուրդ ուղարկում, առանց պարզելու թե արդյո՞ք նա եղել է արձակուրդում, թե՞ ոչ: Խնդիրը պարզելու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչները գրուցել են զ/մ հրամանատար գնդապետ Տ. Փ.-ի հետ: Նա նշել է, որ որպես զ/մ հրամանատար ինքն է որոշում, երբ և ում տրամադրել արձակուրդ: Եվ ցանկության դեպքում կարող է արձակուրդ չտրամադրել ոչ բարեխիղճ ու կարգազանց գինծառայողներին: Միաժամանակ հավելել է, որ ծառայության 8 ամիսը չլրացած զինծառայողներին արձակուրդի տրամադրումը բացառվում է, մինչդեռ զինծառայողները հակառակ փաստն էին պնդում: Հրամանատարի հետ գրույցը միանշանակ մտահոգության տեղիք է տալիս, քանի որ նրա կողմից արված ոչ միանշանակ, որոշ դեպքերում նաև ոչ կոռեկտ հայտարարությունները մարդու իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ հիմք են հանդիսանում նշված զորամասը մարդու իրավունքների պոտենցիալ խախտման տեսանկյունից դասել ոխսայինների շարքը և պահել մշտական ուշադրության ներքո:

Հենց իրավագիտակցության ցածր մակարդակը հաճախ որոշ հրամանատարների կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսորման պատճառ է դառնում, որի արդյունքում զինծառայողների իրավունքների կողին խախտումները կարող են ողբերգական ավարտ ունենալ:

Ահազանգի հիման վրա Աշտարակում տեղակայված ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության զորամաս այցելած Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են, որ զորամասի հրամանատար գնդապետ Գ.Ա.-ն մի քանի ժամով զորամասն ինքնակամ լրած պարտադիր ժամկետային զինծառայողին «դաստիարակելու» նպատակով վերջինիս զորամասի անձնակազմի առջև ծեծի է ենթարկել, ապա նաև ստիպել մաքրել զորամասի զուգարանը, ինչից խուսափելու նպատակով զինծառայողը ստիպված ինքնավնաման է դիմել՝ կտրելով ձեռքի երակները: Ուշագրավ է, որ ավելի ուշ թերթերից մեկին տված հարցազրույցի ընթացքում զորամասի հրամանատարը չի հերքել այդ փաստը և նշել է, որ զուգարան մաքրելը ևս պատժի տեսակ է: Այս դեպքից գրեթե մեկ ամիս անց քրեական գործ հարուցված չի եղել և Պաշտպանը գրություն է ուղարկել ՀՀ պաշտպանության նախարարին՝ առաջարկելով միջոցներ ձեռնարկել դեպքի հանգամանքները պարզելու և մեղավոր պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են, որ հաշվի առնելով գնդապետ Գ.Ա.-ի անցած մարտական ուղին, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերը նշված

պատահարից հետո Գ.Ա.-ի կողմից ծառայողական պարտականությունների կատարման թերացումներ կամ խախտումներ չեն գրանցվել և նա սպայական ժողովում գիտակցել է իր սխալը՝ իրավապահ մարմինների կողմից որոշում է կայացվել քրեական գործ չհարուցել և բավարարվել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի հրամանով հայտարարված նկատողությամբ:

Փաստորեն, զինծառայողին ինքնավենաման հասցրած հրամանատարը քրեական պատասխանատվության չի ենթարկվել: Անշուշտ, նման դեպքերը հանգեցնում են թե՛ գորակոչիկների և նրանց հարազատների, թե՛ ընդիանրապես հասարակության շրջանում զինված ուժերի նկատմամբ անվստահության մթնոլորտի ձևավորմանը: Բնականաբար, այսօրինակ դեպքերի մասին տեղեկացված գորակոչիկը կամ նրա ծնողը կգերադասի բոլոր օրինական կամ ոչ օրինական միջոցներով խուսափել զինվորական ծառայությունից, քանի որ երաշխիք չունի, որ իր կողմից թույլ տված հնարավոր կարգապահական խախտման համար օրինական պատասխանատվության ենթարկվելու փոխարեն հրամանատարներն իր նկատմամբ փաստացի «հաշվեհարդար» չեն տեսնի՝ ընդ որում մնալով անպատճի:

Դեպքեր են գրանցվում նաև, եթե զինծառայողի իրավագիտակցության ցածր մակարդակի պատճառով կոպտորեն խախտվում են վերջինիս դատավարական իրավունքները.

Ահազանգի հիման վրա Իջևանի համապատասխան գորամաս կատարած այցելության ընթացքում պարզվել է, որ դեպքից մի քանի օր առաջ պարտադիր ժամկետային զինծառայողը գեկուցագիր է ներկայացրել հրամանատարին՝ ՈԴ մեկնող քրոջ հարսանյաց հանդեսին ներկա գտնվելու նպատակով իրեն կարճաժամկետ արձակուրդ տրամադրելու խնդրանքով, սակայն մերժվել է: Չհամակերպվելով այս փաստի հետ՝ զինծառայողը դիմել է ինքնավենաման: Դեպքի առիվ Տավուշի մարզի ռազմական ոստիկանության բաժնում նյութեր են նախապատրաստվել: Նախ պարզվել է, որ զինծառայողը առանց ծանուցազրի, միայն ռազմական ոստիկանության աշխատակցի բանավոր պահանջով, զ/մ սպաներից մեկի ուղեկցությամբ դատարժշկական փորձաքննություն անցնելու նպատակով ուղարկվել է ռազմական ոստիկանության բաժին: Բացի այդ, զրույցի ընթացքում զինծառայողը հայտնել է նաև, որ Տավուշի մարզի ռազմական ոստիկանության բաժնի օպերիչազր, կապիտան Է. Մ-ն հարցաքննության ընթացքում իրեն համոզել է ստորագրել երկու մաքուր քոթերի վրա, այն պատճառաբանությամբ, որ դրանք պետք է կցվեն գործին: Է. Մ-ն Պաշտպանի ներկայացուցչի հետ հեռախոսազրույցի ընթացքում հայտնել է, որ այդ զինծառայողը որպես հոգեկան խնդիրներ ունեցող, գտնվում է ռազմական ոստիկանության մշտական հսկողության տակ և հսկողական վարույթի շրջանակներում նրա հետ պետք է պարբերաբար հանդիպումներ կազմակերպվեին, սակայն ժամանակի սղության պատճառով չեն հասցրել, ըստ այդմ դատարկ քոթերը ստորագրման են տրվել նրան, իբրև թե, հետագայում լրացվելու և

հսկողական վարույթին կցվելու համար: Պաշտպանը գրություն է ուղարկել ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության վարչության պետին՝ առաջարկելով ծառայողական քննություն անցկացնել և միջոցներ ձեռնարկել դատավարական նորմերի խախտումներ թույլ տված պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Ի պատասխան՝ ՀՀ ՌԴ վարչության պետը հայտնել է, որ Է. Մ.-ն խախտել է հսկողական վարույթի վարման կարգը և դրա համար կարգապահական պատասխանատվության ենթարկվել:

2. Ինչպես նախորդ տարի, հաշվետու տարում նույնպես բազմաթիվ բողոքներ են ստացվել տարածքային զինկոմիսարիատների գործունեության դեմ:

Չորակոչի ընթացքում զինկոմիսարիատների գործունեությունից դժգոհություններ են եղել՝ կապված բժշկական քննության և հետազոտման հարցերի հետ: Խնդիրը նրանում է, որ երբեմն զինվորական կոմիսարիատների հանձնաժողովների բժշկ-մասնագետների եզրակացությունները չեն համընկնում այլ բուժիմնարկների տված եզրակացություններին: Արդյունքում, հանձնաժողովների երբեմն ոչ օբյեկտիվ մոտեցումների արդյունքում պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում նաև առողջական վիճակի պատճառով զինծառայության համար ոչ պիտանի անձինք, որոնց առողջական վիճակը ծառայության ընթացքում ավելի է վատթարանում, և նրանք զորացրվում են (շատ հաճախ՝ նաև ժամկետից շուտ) արդեն առողջական լուրջ խնդիրներով:

Այլ դեպքերում զորակոչիկը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետում է ստանում որոշակի ժամանակահատվածով, սակայն հաջորդ անգամ բժշկական հանձնաժողովը եզրակացություն է տալիս, որ նա պիտանի է զինվորական ծառայության, թեև նշված ժամանակատվածում նրա բուժման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել: Հանձնաժողովների նման եզրակացությունները պատճառաբանվում են ՀՀ պաշտպանության նախարարի 2006թ. մարտի 30-ի թիվ 378 հրամանով հաստատված «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգով» հաստատված հիվանդությունների ցանկում կատարված փոփոխություններով: Սակայն, հարկ է նկատել, որ քաղաքացիները ի զորու չեն համապատասխան տեղեկատվական աղբյուրներից ձեռք բերել վերը նշված կարգը և դրա հավելվածները: Հետևաբար, լինում են նաև դեպքեր, երբ որոշ քաղաքացիներ բողոքարկում են բժշկական հանձնաժողովների որոշումները, թյուրիմացարար կարծելով, թե իրենց պետք է զինվորական ծառայությունից առողջական վիճակի տարկետում տրվեր այս կամ այն հիվանդության պատճառով<sup>12</sup>:

<sup>12</sup> Չորակոչի խնդիրներին տարփա ընթացքում անդրադարձել է նաև Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, որի անցկացրած մոնիթորինգի գեկույցը՝ Պաշտպանին է ներկայացվել և աշխատակազմում ուսումնասիրվել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2007թ. տարեկան գեկույցում անդրադարձ էր կատարվել նաև զինկոմիսարիատների կողմից զինված ուժերի պահեստագործում անձանց ընդգրկելու և հաշվառելու խախտումների վերաբերյալ բողոքներին: Նշվել էր, որ այդ խնդիրները ծագում են հատկապես այլնտրանքային ծառայության անցման հետ կապված հարցերով, ինչի մասին պարբերաբար ահազանգում են նաև միջազգային իրավապաշտպան կառույցները: Այս խնդրի լուծման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնելու նպատակով Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրություն էր կատարվել, ինչի արդյունքում պարզվել էր, որ անձինք փաստացի իրաժարվում են ժամկետային զինվորական կամ այլնտրանքային ծառայությունից, օրենքով սահմանված կարգով պատիժ են կրում դրա համար, բայց մինչև 27 տարին լրանալը չեն կարող հաշվառվել պահեստագործում, քանի որ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ պահեստագործում ընդգրկվում և հաշվառվում են օրենքով սահմանված հիմքերով մինչև 27 տարին լրանալը զինված ուժեր կամ այլ զորքեր չգործակոչված քաղաքացիները: Եվ քանի որ պահեստագործում հաշվառումը կապված է զինգրքույկ ստանալու, բնակության վայրում անձանց գրանցման ու վերագրանցման, անձնագրի ժամկետի երկարածզման, հանրապետությունից երի թույլտվություն ստանալու և այլ հարցերի հետ, այս անձինք չեն կարողանում իրականացնել ՀՀ Սահմանադրությամբ իրենց վերապահված որոշ իրավունքներ: Հաշվետու տարվա ընթացքում այս հարցի օրենսդրական լուծման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել, իսկ տարբեր կրոնական խմբերին հարող անձանց հետ կապված նման խնդիրները լուծում են ստացել միայն Պաշտպանի անմիջական միջամտությունից հետո<sup>13</sup>:

Զինկոմիսարիատների գործունեության վերլուծությունը վկայում է, որ շատ հաճախ անհիմն ուշացվում է պահեստագործում հաշվառվող քաղաքացիներին զինվորական գրքույկների տրամադրումը: Զինկոմիսարիատների հիմնական պատճառաբանությունն այն է, որ պահեստագործում հաշվառվող անձանց զինվորական գրքույկներ կարող են տրամադրվել միայն հերթական զորակոչ հայտարարվելուց հետո, քանի որ այդ պահից է սկսվում համապատասխան հաշվառման մատյանների վարման գործընթացը: Լինում են դեպքեր, երբ քաղաքացիները զինգրքույկ չեն ստանում սահմանված ժամկետից նույնիսկ ամիսներ անց, ինչը խոչընդոտում է նրանց ազատ տեղաշարժի, աշխատանքի և այլ սահմանադրական իրավունքների իրականացման համար: Երբեմն զինգրքույկի տրամադրումը մերժվում է զավեշտի հասնող պատճառներով:

Այսպես, Մաշտոցի զինկոմի տեղակալը, որն այդ պահին համարվում էր նաև վերջինի պարտականությունների ժամանակավոր պաշտոնակատարը, իրաժարվել է տրամադրել

<sup>13</sup> Այս մասին ավելի մանրամասն տես՝ այլնտրանքային ծառայության կազմակերպման հարցի վերաբերյալ կետում:

պահեստագորի սպայի զինգրքույկը այն պատճառաբանությամբ, որ զինգրքույկները գտնվում են զինկոմի չիրկիզվող պահարանում, իսկ իր մոտ եղածները սպառվել են: Նա նշել է, որ զինկոմն իր բացակայության դեպքում ըստ ներկայացված հայտերի տրամադրում է միայն որոշակի քանակությամբ զինգրքույկներ, որոնք սպառվելու դեպքում այլ դիմող անձանց զինգրքույկ չի տրամադրվում մինչև զինկոմի վերադարձը: Զինկոմը արձակուրդից պետք է վերադառնար միայն մոտ 1 ամիս անց: **Պաշտպանի միջամտությունից հետո միայն հարցին դրական լուծում է տրվել:**

**3. Պաշտպանի 2007թ. տարեկան գեկույցում անդրադարձ էր եղել ՀՀ կառավարության 1996թ. օգոստոսի 12-ի թիվ 247 որոշմամբ հաստատված ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնադրությանը: Մասնավորապես նշվել էր, որը համաձայն ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը և պայմանները չեն կարող կարգավորվել ՀՀ կառավարության ընդունած իրավական ակտով: Բացի այդ նշվել էր, որ ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնադրությունը չի նախատեսում իրավախախտման տեսակային կազմերը (զանցակազմերը), ինչն էլ խնդիրներ է առաջացնում հրամանատարների կողմից նույն արարքի համար տարատեսակ կարգապահական տույժերի տրման տեսանկյունից և հարուցում անձնակազմի արդարացի դժգոհությունը:**

Սակայն ընթացիկ տարում այդ խնդրի լուծման ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել: Առկա մտահոգությունները հաստատվել են որոշ զինծառայողների հետ զրույցների ժամանակ, որոնք նշել են, որ կարգապահական տույժերի նշանակումն ու խրախուսանքի միջոցների կիրառումը շատ դեպքերում սուրյեկտիվ բնույթ են կրում, և մեծապես կախված են զորամասի հրամանատարի կողմից տվյալ զինծառայողի հանդեպ ունեցած վերաբերմունքից: Զորամասերի հրամանատարների հետ զրույցների ընթացքում պարզ է դարձել, որ որոշակի դժգոհություններ կան նաև զինված ուժերում տեղի ունեցած դեպքերի կամ պատահարների ուսումնասիրման նպատակով իրականացվող ծառայողական քննությունների հիման վրա տրվող կարգապահական տույժերի կիրառման պրակտիկայից: Շատ հաճախ դեպքեր են լինում, երբ զորամասում տեղի ունեցած դեպքի ուսումնասիրությունն իրականացնող համապատասխան գերատեսչության ներկայացուցիչները, խորանուիս չինելով դեպքի մանրամասներին, ծառայողական քննությամբ շինծու խախտումներ են հայտնաբերում զորամասի հրամանատարության գործողություններում՝ դրանց տալով գնահատողական բնույթի որակումներ, օրինակ՝ «պատշաճ հսկողություն չիրականացնելու», «բացատրական աշխատանքներ չտանելու» և այլն: Ենթադրենք, մարտական հերթապահության ընթացքում պարտադիր ժամկետային զինծառայողի անզգուշության պատճառով նրան վնաս է պատճառվում, և դրա համար

պատասխանատվության են Ենթարկվում թե՛ մարտական հերթապահության պատասխանատու սպան, թե՛ զորամասի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալը, թե՛ զորամասի հրամանատարը: Եվ սա այն դեպքում, եթե հրահանգավորման մատյանները պատշաճ լրացված են: Այսինքն ստացվում է, որ իր պարտականությունները պատշաճ կատարող մարտական հերթապահության պատասխանատու սպան, ընդամենը մի քանի րոպե ուշադրությունից բաց քողնելով անզգույշ զինծառայողին, կարող է պատասխանատվության Ենթարկվել «պատշաճ հսկողություն չիրականցնելու» համար: Բայց չէ՞ որ սպան չի կարող ամբողջ 15 օրվա ընթացքում անընդեղ հսկողության տակ պահել 10-15 պարտադիր ժամկետային զինծառայողի: Նույն տրամաբանությամբ կարող են պատասխանատվության Ենթարկվել դեպքի վայրից շատ հեռու գտնվող զորամասի հրամանատարը կամ նրա տեղակալը՝ «բացատրական աշխատանքներ չտանելու» համար, թեև ուսումնական զործընթացի շրջանակում կատարել են սահմանված բոլոր պարտականությունները, և չին կարող ինչ-որ կերպ կանխարգելել նշված դեպքը:

Այսպիսով, պատշաճ ուշադրություն պետք է դարձնել նման անարդարացի տույժերի նշանակումը կանխելու վրա, քանի որ դրանց արդյունքում, զինծառայողների կարգապահական տույժերն ուղղակիորեն ազդում են նաև հերթական զինվորական կոչումների շնորհման, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման վրա: ՀՀ պաշտպանության նախարարության գերատեսչական իրավական ակտերով սահմանվում է, որ կարգապահական տույժ ունեցող զինծառայողների հերթական զինվորական կոչումները կարող են շնորհվել և զինծառայողը առաջխաղացման կարգով բարձր պաշտոնի կարող է նշանակվել միայն տույժերը հանելուց հետո: Սրանից բխում է, որ թերի ծառայողական քննության կամ վերադաս հրամանատարի կամայական որոշման հիման վրա տրված կարգապահական տույժը կարող է խոչընդոտել զինծառայողի հետագա առաջխաղացման և զինծառայողի մոտ զինված ուժերում ծառայության նկատմամբ ակնհայտ բացասական վերաբերմունքի դրսնորման պատճառ դառնալ:

Վերը շարադրվածի հաշվառմամբ Պաշտպանի հանձնարարությամբ համապատասխան ուսումնասիրություն է կատարվում այս ոլորտում, որի արդյունքները արտահերթ գեկույցի տեսքով կներկայացվեն Պաշտպանի կողմից:

Ինչպես նշել ենք, ուսումնասիրությունների անցկացման գործընթացին օժանդակություն է ցուցաբերում ԵԱՀԿ երևանյան գրասենյակը:

4. Ընթացիկ տարվա ընթացքում բողոքներ են ստացվել նաև զինծառայողների և նրանց ընտանքների անդամների սոցիալական ապահովության հարցերի վերաբերյալ:

Դիմումներով քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերված հիվանդության և մահվան միջև առկա պատճառական կապի չհաստատման հետևանքով քաղաքացու ընտանիքին կերակրողին կորցնելու կապակցությամբ տրամադրվող կենսաթոշակի իրավունքից զրկելու վերաբերյալ:

**Օրինակ՝** Երևան քաղաքի բնակիչը դիմում-բողոքով հայտնել է, որ ամուսինը մասնակցել է Արցախյան պատերազմին, որի ընթացքում՝ 1992թ. վիրավորվել է, երկար ժամանակ բուժվել տարբեր բուժհաստատություններում: 20.01.2000թ. Շենգավիթի ԲՍՓՀ կողմից իր ամուսնուն սահմանվել է հաշմանդամության 1-ին խումբ՝ «վիրավորումը ստացել է ՀՀ սահմանները պաշտպանելիս» պատճառական կապով՝ 2 տարի ժամկետով: Ամուսինը մահացել է 09.12.2000թ., որի պատճառն է հանդիսացել երկողմանի ֆիբրոզ-կավերնոց տուրերկուլյոզը: 2002 թվականից իր ընտանիքին, որպես զինծառայողի ընտանիքի, նշանակվել է կենսաթոշակ, որն էլ ընտանիքը ստացել է մինչև 28.10.2007թ.:

ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ 07.11.2007թ. ՀՀ ԲՍՓ գործակալության փորձաքննական բաժինը հսկողական կարգով վերանայել է դիմումատուի ամուսնու մահվան պատճառական կապի վերաբերյալ որոշումը, որի արդյունքում Երևանի թիվ 7 ԲՍՓՀ որոշումը ճանաչել է անվավեր և մահվան պատճառը չի կապվել ՀՀ պաշտպանության ժամանակ ստացած վիրավորման հետ, չի բացահայտվել մահվան պատճառի և ստացված վնասվածքների միջև առկա պատճառական կապը, որի արդյունքում կենսաթոշակի վճարումը դադարեցվել է:

Բողոքի քննարկման ընթացքում, Պաշտպանի հարցմանն ի պատասխան, հայտնել են, որ ՀՀ պաշտպանության նախարարության նախաձեռնությամբ նախապատրաստվել է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ, որը ուղարկվել է շահագրգիռ գերատեսչությունների քննարկմանը:

Նշված նախագիծը սահմանված կարգով քննարկվելու և ընդունվելու դեպքում, կերակրողին կորցնելու կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք կրերեն զոհված (մահացած), հաշմանդամության կենսաթոշակառու 148 զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքների անդամներ:

Դիմումներ են ստացվել նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության հարցերի վերաբերյալ:

**Օրինակ՝** ՀՀ Արարատի մարզի քնակիչ Ե.Թ.-ն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրած դիմում-բողոքով հայտնել է, որ 1983թ. ամուսնացել և Ոռուսաստանից

տեղափոխվել է ամուսնու ծննդավայր՝ Ավշար գյուղ: 1992թ. իր ամուսինը՝ զինծառայող Մ.Թ.-ն, զոհվել է Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ: 2002թ. հունիսի 1-ին ՀՀ Նախագահի կողմից հայրենիքի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած անձնազնության և խիզախության համար Մ.Թ.-ն հետմահու պարզեատրվել է Արիության մեղալով:

Դիմումատուն հայտնել է նաև, որ 25 տարի շարունակ ապրում է Հայաստանում և չունի իր բնակարանը, ամուսնու մահից հետո երեխաների հետ շարունակում է բնակվել սկեսուրիմ պատկանող վթարային բնակարանում: Որպես զոհված ազատամարտիկի ընտանջք՝ բնակարանի բարելավման կարիքավորների հերթացուցակում հաշվառման կանգնելու խնդրանքով բազմից ովհմել է Ավշար գյուղի գյուղապետին, որն ամեն կերպ նվաստացնելով և վիրավորելով իր արժանապատվությունը, ընթացք չի տվել դիմումներին:

Դիմել է ՀՀ վարչապետին, ՀՀ Արարատի մարզպետին, ՀՀ պաշտպանության նախարարին: ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության պետն իր 09.04.2007թ. գրությամբ տեղեկացրել է, որ որպես զոհված ազատամարտիկի ընտանիք հաշվառված է Արարատի մարզպետարանի կողմից ՊՆ ուղարկված բնակարանի բարելավման կարիքավորների հերթացուցակում, հետևաբար, ՀՀ ՊՆ բնակիանձնաժողովը, ըստ սահմանված կարգի, կանդրադառնա նրա բնակարանային խնդրին, որի մասին կտեղեկացվի լրացուցիչ:

Ի պատասխան Պաշտպանի 30.07.2008թ. գրությանը՝ ՀՀ պաշտպանության նախարարը թիվ ՊՆ/510-545 նամակով հայտնել է, որ դիմումատուն, որպես զոհված ազատամարտիկի այրի, հաշվառված է 2003թ. Արարատի մարզպետարանի կողմից ՀՀ ՊՆ ուղարկված բնակարանի բարելավման կարիքավորների հերթացուցակում՝ թիվ 78 հերթական համարակալումով:

ՀՀ ՊՆ բնակիանձնաժողովը, դեկավարվելով ՀՀ կառավարության 16.07.2005թ. թիվ 947-Ն որոշմամբ, նրա բնակարանային հարցին սահմանված կարգով կանդրադառնա 2008թ. կայանալիք առաջիկա նիստերից մեկում:

Պաշտպանի մեկ այլ՝ 19.08.2008թ. գրությամբ խնդրվել է ՀՀ պաշտպանության նախարարին տեղեկացնել դիմումում բարձրացրած հարցի վերաբերյալ նախարարության բնակիանձնաժողովի նիստին կայացրած որոշման մասին: Գրությանն ի պատասխան ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանը թիվ ՊՆ/510-607 նամակով հայտնել է, որ Ե.Թ.-ի բնակարանային գործի ուսումնասիրությունից պարզվել է, որ նրա ընտանիքը երեք անձով (ինքը, դուստրը, տղան) բնակում են Արարատի մարզի Ավշար գյուղում գտնվող բնակարանում, որը նախկինում եղել է սկեսրոջ սեփականությունը: Սկեսրոջ մահից հետո վերոնշյալ բնակարանը հանգույցյալի կողմից 1/2 չափով (2 սենյակ և 1000քմ հողամաս) կտակվել է թոռանը՝ զոհված ազատամարտիկ Մայիս Թովմասյանի որդուն: Ե.Թ.-ի

ընտանիքի բնակմակերեսը բավարարում է բնակարանային պայմանների պահանջներին: Ղեկավարվելով ՀՀ կառավարության 16.07.2005թ. թիվ 947-Ն որոշման դրույթներով՝ դիմումատուի բնակարանային պայմանների բարելավման հարցը ենթակա է մերժման, որը կրննարկվի սեպտեմբեր ամսվա 3-րդ տասնօրյակում կայանալիք ՊՆ բնակիանձնաժողովի նիստում:

Դիմումի հետագա ընթացքն ապահովելու նպատակով 20.11.2008թ. գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարից պահանջվել է տեղեկատվություն նախարարության բնակիանձնաժողովի սեպտեմբեր ամսվա նիստին տեղի ունեցած քննարկման վերջնական արդյունքների մասին:

Ի պատասխան գրությամբ՝ ՀՀ պաշտպանության նախարարը հայտնել է, որ ՀՀ ՊՆ բնակիանձնաժողովը 30.09.2008թ. Ե.Թ.-ի դիմումի համաձայն, կրկին անգամ ուսումնասիրել է նրա բնակպայմանները և թիվ 3 արձանագրությամբ որոշել է նրան՝ իր և աղջկա համար 1 սենյականոց բնակարան ձեռք բերելու համար հատկացնել 4 090 000 դրամ, քանի որ նրա պնդմամբ տան 2 սենյակը պատկանում է նրա որդուն, իսկ ինքը և աղջկը տուն չունեն, ինչպես նաև հայտարարել է, որ տունը վթարային է:

«Հայսեյսմշին և ԿՊ ԳՀ» ԲԲԸ-ի կողմից դիմումատուի որդու տունը 4-րդ աստիճանի վթարային ճանաչելուց հետո ՀՀ ՊՆ բնակիանձնաժողովը կրկին անգամ կանդրադառնա նրա բնակպայմաններին՝ նախատեսելով 2 սենյականոց բնակարան /բնակելի տուն/ ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն: Զոհվածի մոր մահից հետո տունը պետական գրանցման չի ենթարկվել՝ զոհվածի եղբոր ՀՀ-ից բացակայելու պատճառով:

Դիմում-բողոքի քննարկման արդյունքում դրանում բարձրացված հարցը ստացել է դրական լուծում:

5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան գեկույցներում պարբերաբար անդրադարձել ենք Հայաստանում մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացման և դրա շրջանակներում՝ համոզունքների հիմնավորմամբ պարտադիր զինվորական ծառայությունից իրաժարվելու հարցին: Բազմիցս նշվել է նաև, որ մի շարք միջազգային կառույցներ պարբերաբար ահազանգում են ՀՀ կողմից այս ոլորտում ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման մասին: Այսպես, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) թիվ 1361 (2004)1 բանաձնով անընդունելի և չափազանց երկար է համարել 42 ամիս այլընտրանքային քաղաքացիական ծառայության ժամկետը: Առաջարկվել է կրճատել ծառայության ժամկետը մինչև 36 ամիս: Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը Հայաստանի ստանձնած պարտավորությունների և հանձնառությունների կատարման վերաբերյալ թիվ 1532(2007) բանաձնով կրկին

անդրադարձել է այլընտրանքային ծառայության մասին «Եվրոպական չափանիշներին համապատասխանող» օրենքը ընդունելու և «համոզնունքների հիմնավորմամբ գինվորական ծառայությունից հրաժարվելու համար ազատազրկման դատապարտված անձանց ներում շնորհելու» Հայաստանի հանձնառությանը: Այս հարցին անդրադարձել է նաև «Միջազգային համաներում» միջազգային իրավապաշտպան կառույցը, որի 2008թ. հունվարի 18-ի 54/003/2008 գեկույցում վեր են հանվում ՀՀ-ում Եհովայի վկաների նկատմամբ բռնության փաստերը: Մասնավորապես, գեկույցում նշվում է, որ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը չափազանց երկար է և պատժիչ բնույթ է կրում, քացի այդ այլընտրանքային ծառայությունը ՀՀ-ում փաստացի գտնվում է ՀՀ պաշտպանության նախարարության վերահսկողության ներքո, քանի որ թե՛ այլընտրանքային ծառայության կազմակերպումը, թե՛ ծառայության անցման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է գինվորական համապատասխան ստորաբաժանումների կամ ծառայությունների միջոցով:

Ընթացիկ տարում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և նրա ներկայացուցիչները մի շարք հանդիպումներ են ունեցել «Եհովայի վկաներ» կազմակերպության, իրավապաշտպան կառույցների ներկայացուցիչների հետ ու քննարկել ՀՀ-ում այլընտրանքային ծառայության ինստիտուտի կայացմանը խոչընդոտող երևույթների վերացման հարցերը:

Պաշտպանը նաև գործուն աջակցություն է ցուցաբերել մի շարք հարցերի շուտափույթ լուծման ուղղությամբ: Մասնավորապես, նրա միջամտությամբ լուծվել է Եհովայի վկաների կրոնական կազմակերպությանը հարող, ազատազրկման ձևով պատիժ կրած անձանց հաշվառման հարցը, որոնք տարածքային գինկոմիսարիատների կողմից հարուցվող խոչընդոտների պատճառով չեն հաշվառվում և արդյունքում չեն կարողանում գրանցվել իրենց բնակության վայրերում կամ անձնագրում ունենալ օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականությունը հավաստող կնիք, ինչպես նաև գինվորական գրքույկ:

Սակայն, նման էպիզոդիկ լուծումները միայն ժամանակավորապես են կասեցնում առկա տարածայնությունները: Այդ է վկայում այն փաստը, որ 2008թ. նոյեմբերի 1-ի դրությամբ «Եհովայի վկաներ» կազմակերպության ներկայացրած տվյալներով գինվորական ծառայությունից խուսափելու պատճառով քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ են կրում այս կազմակերպությանը հարող մոտ 80 քաղաքացիներ: Այնինչ, այլընտրանքային ծառայության անցման պատշաճ պայմաններ նախատեսելու դեպքում հնարավոր կլիներ այս անձանց ներգրավել հանրօգուտ աշխատանքներում՝ միաժամանակ նրանց հնարավորություն տալով բավարարել իրենց կրոնական պահանջմունքները: Ըստ այդմ, հարցի վերջնական լուծման և միջազգային կառույցների առջև ստանձնած ՀՀ պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում ցուցաբերել այս խնդրին:

ՀՀ իրավասու պաշտոնատար անձինք «Եհովայի վկաներ» կազմակերպության ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում բազմից հաստատել են իրենց պատրաստակամությունը համապատասխան փոփոխություններ կատարել ծառայության կազմակերպման հարցերի իրավական կարգավորման շրջանակներում: Օրինակ, ՀՀ պաշտպանության նախարարը նշված կազմակերպությանն ուղարկած պատասխան նամակով հայտնել է, որ ՀՀ ՊՆ-ն պատրաստ է քննարկել գործող օրենքի շրջանակներում այլընտրանքային ծառայությունը Եհովայի վկաների կրոնական համոզմունքների պահանջներին հնարավորինս մոտեցնելու հարցը:

Մեր կողմից ուսումնասիրվել են «Եհովայի վկաներ» կազմակերպության փաստարկներն այլընտրանքային ծառայությունը չընդունելու վերաբերյալ և միջազգային իրավապաշտպան կառույցների մոտեցումները այդ հարցերի շուրջ: Արդյունքում ներկայացրել ենք մեր կարծիքը և այդ խնդիրների դրանց լուծման հնարավոր տարրերակներ:

«Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության կողմից բարձրացվող հիմնական հարցերից մեկը վերաբերում է այլընտրանքային զինվորական և աշխատանքային ծառայության ժամկետներին: Ինչպես վերը նշվեց, այդ հարցին հատուկ անդրադարձել է ԵԽԽՎ-ն իր համապատասխան բանաձևերում, ինչպես նաև մի շաբթ միջազգային իրավապաշտպան կառույցներ:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը նախատեսվում է 36, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայությանը՝ 42 ամիս: Նույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ այլընտրանքային զինվորական ծառայություն գորակոչված քաղաքացին սահմանված կարգով ուղարկվում է այլընտրանքային զինվորական ծառայություն անցնելու վայրի գորամաս և ընդգրկվում գորամասի անձնակազմում և նրա վրա տարածվում են զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքերի դրույթները՝ բացառությամբ մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ կապված պահանջների: Վերը նշվածից բխում է, որ այլընտրանքային զինվորական ծառայողը փաստացի կրում է զինծառայողի համար նախատեսված հիմնական պարտականությունները, բացի նրանցից, որոնք, ծառայության որոշ տեսակների բնույթից ելնելով, չեն կատարում նաև այլընտրանքային ծառայող չհանդիսացող այլ զինծառայողներ (օրինակ՝ խոհարարները, վարորդները և այլն): Հետևաբար, այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը անհրաժեշտ է հավասարեցնել զինվորական ծառայության ժամկետին, այն է՝ 24 ամիս: Ինչ վերաբերում է այլընտրանքային աշխատանքային ծառայության 42 ամսյա ժամկետին, ապա պետք է նշել, որ թեև միջազգային պրակտիկայում չկան կոնկրետ չափանիշներ պարզելու, թե արդյո՞ք այս ժամկետը կարելի է պատժի համարել այլընտրանքային աշխատանքային ծառայությունն

ընտրած քաղաքացիների համար, թե՞ ոչ, սակայն միայն այն հանգամանքը, որ այն գրեթե կրկնակի ավելի է զինվորական ծառայության ժամկետից մտահոգիշ է: Ըստ այդմ, այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը անհրաժեշտ է նվազեցնել առնվազն 6 ամսով, առավել ևս, որ ՀՀ ՊՆ-ն սկզբունքայնորեն չի առարկում այս ժամկետի նվազեցման դեմ:

«Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպությանը հարող զինապարտները այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելուց հրաժարումը պատճառաբանում են այն հանգամանքով, որ այդ ծառայությունը կազմակերպվում և դրա իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացվում է ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից: Օրինակ, այլընտրանքային ծառայության գորակոչն անցկացվում է զինկոմիսիարիատների միջոցով, կամ ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչությունը պարբերաբար ստուգայցեր է կազմակերպում այլընտրանքային աշխատանքային ծառայության անցման կազմակերպություններ, այլընտրանքային ծառայողներին տողանով շարպելու պահանջ է ներկայացնում և այլն: Բացի այդ, որոշ զինապարտներ բողոքել են, որ այլընտրանքային աշխատանքային ծառայության համազգեստը տրամադրվում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ այլընտրանքային աշխատանքային ծառայության կազմակերպման և իրականացման համար պատասխանատու է այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպության դեկավարը: Միաժամանակ, նույն օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ այլընտրանքային ծառայության գորակոչը կազմակերպում և դրա (այլընտրանքային ծառայության) իրականացումը վերահսկում է պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի վերը նշված դրույթի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են, որ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության կողմից պարբերաբար անցկացվող ստուգայցերի միջոցով, որոնց նպատակն է պարզել այլընտրանքային ծառայողների ներկայությունը այլընտրանքային աշխատանքային ծառայության անցման կազմակերպություններում:

Հաշվի առնելով վերը շարադրյալ՝ առաջարկում ենք օրենսդրությամբ սահմանել այլընտրանքային ծառայության համար դիմումների ներկայացման, ծառայության կազմակերպման և իրականացման նկատմամբ վերահսկողության նոր համակարգ, որն ամբողջությամբ կիրականացվի աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտում ՀՀ իրավասու գերատեսչության կողմից: Այլընտրանքային ծառայողներին «Զինապարտության

մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պահեստազորում գրանցելու փոխարեն կարելի է ստեղծել այլընտրանքային ծառայություն անցած քաղաքացիների հաշվենատյան և պահեստազորի գինգրքույթի փոխարեն նրանց տրամադրել այլ սահմանված նմուշի գրքույկ:

Ինչ վերաբերում է այլընտրանքային աշխատանքային ծառայողների համագգեստին, ապա 2004թ. հունիսի 25-ի ՀՀ կառավարության թիվ 940-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանվել է այլընտրանքային աշխատանքային ծառայողների համագգեստի ձևը, որը էականորեն տարբերվում է ՀՀ ԶՈՒ պարտադիր գինվորական ծառայության շարքային կազմի համար նախատեսված համագգեստից: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպության ղեկավարն է այլընտրանքային աշխատանքային ծառայողին ապահովում սննդով, սահմանված ձևի արտահազուսոով (համագգեստով), ներքնաշորերով և այլն:

Սակայն, վերը նշված հարցերում ևս տարակարծություններից խուսափելու նպատակով նպատակահարմար է այս բոլոր գործողությունների իրականացումը դնել աշխատանքի և սոցիալական ապահովության ոլորտում ՀՀ իրավասու գերատեսչության վրա:

«Եհովայի վկաներ» կազմակերպության ներկայացուցիչները մտահոգված են նաև այն փաստով, որ այլընտրանքային ծառայողներին լիարժեք հնարավորություն չի տրվում այցելել կրոնական հանդիպումներին, ունենալ կրոնական գրականություն, քանի որ մշտապես գտնվում են այլընտրանքային ծառայության վայրի տարածքում: Նրանք գտնում են, որ դա սահմանափակում է իրենց կազմակերպության ներկայացուցիչների կրոնական իրավունքների իրականացմանը, և առաջարկում են այլընտրանքային ծառայողներին հնարավորություն տալ աշխատանքային օրվա ավարտից հետո, ինչպես նաև հանգստյան օրերին մեկնել իրենց բնակության վայրերը և մասնակցել կրոնակական հանդիպումներին:

«Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ այլընտրանքային ծառայություն է համարվում ժամկետային պարտադիր գինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես գինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: Այս դրույթից բխում է, որ այլընտրանքային ծառայությունը սուսկ մասնակիորեն փոխում է հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու քաղաքացու սահմանադրական պարտականության բնույթը՝ ելնելով նրա կրոնական համոզմունքներից: Հետևաբար, այլընտրանքային ծառայողները պետք է ունենան նույն ծավալի իրավունքներ և ազատություններ, ինչպիսին որ նախատեսված է պարտադիր ժամկետային գինծառայողների համար: Սակայն, գինվորական ծառայության հետ կապված հարցերը կարգավորող օրենսդրական դաշտի վերլուծությունը ցույց է տալիս, որ պարտադիր

Ժամկետային գինծառայողներին 24-ամսյա զինվորական ծառայության ընթացքում մեկ անգամ կարող է արձակուրդ տրվել, այն էլ՝ խրախուսանան կարգով (չհաշված հասուկ դեպքերը): Ստացվում է, որ պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողը, որի ծառայության պայմանները ավելի խիստ և վտանգավոր են, քան այլընտրանքային ծառայողինը, այս տեսանկյունից կհայտնվի ավելի անբարենպաստ վիճակում, ինչը միանշանակ հակասում է անձանց իրավահակասարության սկզբունքին:

Այդ իսկ պատճառով, կարելի է նախատեսել այլընտրանքային ծառայողներին տրամադրվող կարճաժամկետ արձակումների ճկուն մեխանիզմ, որի շրջանակներում նրանք շաբաթվա ընթացքում մեկ անգամ կկարողանան մեկնել այլընտրանքային ծառայության վայրին առավելագույնս մոտ գտնվող կրոնական հանդիպումների վայրեր և վերադառնալ:

Հարկ է նշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև զինված ուժերի գործունեությանը վերաբերող օրենսդրության, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի խնդիրների քննարկմանը: Պաշտպանի կողմից ուսումնասիրվել և առաջարկություններ են ներկայացվել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կայազորային կարգավահական մեկուսարանների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ:

Մասնավորապես, Պաշտպանն է բարձրացրել «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունների ընդունման հետևանքով որոշակի շրջանակի անձանց իրավունքները խախտվելու հարցը:

Այսպես, Պաշտպանին ներկայացված «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին և 3-րդ մասերի բովանդակությունից բխում է, որ մինչև 2009թ. հունվարի 1-ը պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատում ուսման համար տարկետում ստացած զորակոչիկները բակալավրիատում ուսումն ավարտելուց հետո ենթակա են պարտադիր զինվորական ծառայության զորակոչ: Սակայն, Բոլոնիայի հոչակագրի սկզբունքների հիման վրա՝ «Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում ամրագրված է, որ ՀՀ-ում սահմանվում է բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգ: Նույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ բարձրագույն կրթության երկաստիճան

համակարգում երկրորդ աստիճանի մրցութային ընդունելությունն իրականացվում է առաջին աստիճանի /բակալավրիատի/ գնահատականների հաշվառմամբ: Նշված դրույթները կոնկրետացնելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ ՀՀ ԲՈՒՀ-երում մագիստրատորայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին N 1193-Ն հրամանով սահմանվում է, որ մագիստրատորայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ:

- նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատակով,
- մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,
- տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների թեզիսների և գեկուցումների առկայությունը,
- ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

Սրանից բխում է, որ բակալավրիատից մագիստրատուրա անցումն իրականացվում է ոչ թե նոր ընդունելության, այլ բակալավրիատում ձեռք բերած գնահատականների ու առաջադիմության հիման վրա և հանդիսանում է ուսման շարունակությունը: Ավելին, ՀՀ ԲՈՒՀ-երի բակալավրիատի ուսանողներին օտարերկրյա ԲՈՒՀ-երի մագիստրատուրաներում սովորելու համար ընդունելության քննություններ հանձնելու պահանջներ չեն ներկայացվում: Հետևաբար, բակալավրիատում ուսման համար պարտադիր գինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացած քաղաքացին մեխանիկորեն ձեռք է բերում նաև մագիստրատուրայում /այդ թվում նաև օտարերկրյա պետությունների ԲՈՒՀ-երի մագիստրատուրաներում/ ուսման համար տարկետման իրավումը: Վերը նշվածը տարածվում է նաև ՀՀ միջազգային /միջկառավարական/ ԲՈՒՀ-երում սովորող անձանց վրա:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում բակալավրիատում սովորող անձանց իրավական կարգավիճակը փաստացի կվատթարանար, կխախտվեր «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ կրթության շարունակականության, հաջորդականության և սովորողների զարգացման մակարդակին համապատասխանության սկզբունքները:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Պաշտպանը առաջարկել է օրենքի նախագիծը վերախմբագրել այնպես, որպեսզի չսահմանափակվի մինչև 2009թ. հունվարի 1-ը երկաստիճան կրթական համակարգում ուսման տարկետում ստացած քաղաքացիների մագիստրատուրայում ուսման համար պարտադիր գինվորական ծառայությունից

տարկետում ստանալու իրավունքը և օրենքի հետադարձ ուժով չվատքարանա վերը նշված անձանց շրջանակի իրավական կարգավիճակը:

Օրենքի նախագիծը լրամշակման նպատակով հետ է վերադարձվել ՀՀ ՊՆ:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս Պաշտպանի աշխատակազմ բողոքներ են ստացվել «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր գինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի գործողության շրջանակներում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ: Այդ բողոքները հիմնականում վերաբերել են օրենքով նախախսատեսված դիմումի քննարկման գործընթացի կազմակերպմանը, որոնցում հիմնական թերացումը տարածքային գինվորականությունը են եղել:

Թե՛ ժողովրդագրական և թե՛ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից լնդիանուր առմամբ դրական գնահատելով վերը նշված օրենքով կարգավորվող հարաբերությունների շրջանակը, և հաշվի առնելով, որ օրենքի առկայությունը նպաստում է իրավապահ մարմիններում առկա կոռուպցիոն ռիսկերի նվազմանը, Պաշտպանը իրավասու մարմիններին առաջարկել է ընդլայնել օրենքի գործողության շրջանակը՝ այն տարածելով նաև 2007թ. հոկտեմբերի 31-ից հետո 27 տարին լրացած և գինվորական ծառայությունները, ինչպես նաև այն հանգանանքը, որ տարիքային ցենզի հիման վրա օրենքի գործողության սահմանափակումը հակասում է անձանց իրավահավասարության սահմանադրական սկզբունքին: Ստեղծվել է իրավիճակ, երբ մինչև 2007թ. հոկտեմբերի 31-ը 27 տարին լրացած անձը ընդգրկվում է օրենքի կարգավորման շրջանակում, կատարում համապատասխան վճարում և գրանցվում պահեստագոր, իսկ, օրինակ՝ 2007թ. նոյեմբերի 1-ին, այսինքն՝ օրենքի գործողության ժամկետից ընդամենը 1 օր ուշ 27-ը լրացած անձը այս իրավունքից չի կարող օգտվել: Առաջարկը ներկայացնելիս Պաշտպանը նկատի է ունեցել, որ օրենքի գործողության ժամկետային շրջանակների պարբերական ընդլայնումը կարող է բացասական միտում ձևավորել, որի շրջանակներում որոշ անձինք կփորձեն խուսափել գինվորական ծառայությունից՝ համոզված լինելով, որ հետագայում դրամական փոխառությունում վճարելով կխուսափեն պատժից: Այդ իսկ պատճառով առաջարկել է նմանօրինակ խնդիրները բացառել օրենսդրական ձևուն մեխանիզմների միջոցով:

Ինչպես վերը նշվեց, Պաշտպանը հատուկ ուշադրություն է դարձրել և առաջարկություններ ներկայացրել իրավակիրառ պրակտիկայի արդյունքում անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ՝ հիմք ընդունելով ներկայացված դիմումներում արձարձված խնդիրները:

## Օրինակ 1

Նախավիճ գինծառայող Գ.Ա.-ն տարվա սկզբին գորամասի արձակուրդների գրաֆիկը հաստատելիս զեկուցագիր է ներկայացրել գորամասի հրամանատարին՝ խնդրելով իրեն հերթական արձակուրդ տրամադրել 2008թ. ապրիլ ամսին: Սակայն, գորամասի հրամանատարը, տեղյակ լինելով, որ Գ.Ա.-ի պայմանագրի ժամկետը լրանում է նույն տարվա օգոստոսի վերջին, և նա ցանկություն չունի երկարածգել պայմանագրիր, կարգադրել է նրան արձակուրդ հատկացնել հոկտեմբերին: Գ.Ա-ին միայն տեղեկացրել են, որ արձակուրդի փոխարեն պայմանագրի ժամկետի ավարտից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով կստանա դրամական փոխհատուցում: Պայմանագրի ժամկետի ավարտից հետո Գ.Ա-ին չօգտագործված հերթական արձակուրդի փոխարեն դրամական փոխհատուցում է տրվել ընդամենը 32.000 ՀՀ դրամ: Համաձայն չինելով փոխհատուցման չափի հետ՝ Գ.Ա.-ն դիմել է Պաշտպանին:

Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են, որ չօգտագործված արձակուրդի դիմաց դրամական փոխհատուցում հաշվարկվել է հաշվի առնելով «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ն մասը, համաձայն որի՝ զինծառայողները պետական բյուջեի միջոցների հաշվին ստանում են դրամական բավարարում: ՀՀ կառավարության 27.11.2000թ. թիվ 778 որոշման 2-րդ կետով սահմանված է, որ զինծառայողների ամսական դրամական բավարարման մեջ մտնում են պաշտոնային դրույքաչափը. զինվորական կոչման դրույքաչափը և երկարամյա ծառայության համար այդ դրույքաչափերից հաշվարկվող տոկոսային հավելումները: Վերը նշվածի հիման վրա «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն զինծառայողին ծառայությունից արձակվելու տարում արձակուրդի հաշվարկված օրերի դիմաց հաշվարկվել է դրամական բավարարում, որի փոխհատուցումը կատարվել է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով հաստատված «Զինծառայողների դրամական բավարարման մասին» կանոնագրքով նախատեսված կարգով:

Համաձայն չինելով ներկայացված պարզաբնան հետ՝ Պաշտպանը պատասխան գրությամբ ներկայացրել է իր առարկություններն առ այն, որ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասով հստակ սահմանվում է, որ զինծառայողի՝ պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ զորացրվելու դեպքերում չօգտագործված հերթական արձակուրդի փոխարեն վճարվում է դրամական փոխհատուցում՝ օրենքով սահմանված կարգով և չափով: Այս դրույթից բխում է, որ այդօրինակ հարաբերությունները չեն կարող կարգավորվել ենթաօրենսդրական իրավական ակտերի շրջանակներում կամ դրանց հղում կատարելու միջոցով: Մինչեռ, ՊՆ կողմից Գ.Ա-ի դրամական փոխհատուցման չափը, ըստ էության, որոշվել է ՀՀ կառավարության

27.11.2000թ. թիվ 778 և 13.12.2007թ. թիվ 1554-Ն որոշումների, իսկ կարգը՝ ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով հաստատված «Զինծառայողների դրամական բավարարման մասին» կանոնագրքի շրջանակներում, ինչը հակասում է «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասին:

Բացի այդ, անթույլատրելի է համարվել այն, որ ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդից օգտվելու դեպքում այդ ժամանակահատվածի համար զինծառայողը ստանում է դրամական բավարարումն ու այլ լրավճարները (պարզևալճարները, հավելավճարներ և այլն), իսկ չօգտագործված ամենամյա արձակուրդի դիմաց դրամական փոխհատուցման մեջ հաշվարկում է միայն դրամական բավարարումը, որը կազմում է զինծառայողի ամբողջ ստանալիք գումարի մի շնչին մասը միայն: Պաշտպանը կարծիք է հայտնել, որ հաշվարկման այդ եղանակը հակասում է գործող օրենսդրությանը, քանի որ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված «դրամական փոխհատուցում» և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվող «դրամական բավարարում» հասկացությունները չեն կարող նույնացվել: Հետևաբար, առաջարկվել է համապատասխան օրենսդրական կարգավորման բացակայության դեպքում հարցը լուծել ՀՀ աշխատանքային օրենսգրքի շրջանակներում, քանի որ սույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված է, որ օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների ծառայողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսգրքով, եթե համապատասխան օրենքով այլ քան նախատեսված չէ: Իսկ օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով:

## Օրինակ 2

Արտաշատի ՊՆ ենթակայության գորամաս կատարած այցելության ժամանակ շարքային կազմի զինծառայողներին հետ գրույցի ընթացքում պարզվել է, որ գորամասում ծառայություն անցնող միակողմանի ծնողագուրկ զինծառայողներից երկուսը Կապանից են, մեկը՝ Մարալիկից: Ըստ այդմ, խախտվել է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները, համաձայն որի՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ գտնվող գորամասում ծառայելու արտոնությունից օգտվում են երկկողմ և միակողմ ծնողագուրկ գորակոչիկները: Իսկ բնակության վայրին մոտ գտնվող գորամաս է համարվում գորակոչիկի հաշվառման

(հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրից մինչեւ 100 կմ տեղակայված գորամասը: Բնականարար, թե Կապան և թե Մարտալիկ քաղաքներից գորամասի հեռավորությունը էականորեն գերազանցում է 100 կմ-ն:

Ենթադրելի էր, որ նշված գիճծառայողները Արտաշատի գորամաս են ուղարկվել, քանի որ իրենց բնակության վայրին ավելի մոտ ուսումնական գորամասեր չկան և ուսումնական 6-ամյա փուլից հետո կուղարկվեն իրենց մշտական բնակության վայրին մոտ տեղակայված գորամասեր: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքը բացառություն չի նախատեսում ուսումնական գորամասերի համար, ՀՀ պաշտպանության նախարարին գրություն է ուղարկվել այս խնդիրը պարզաբանելու և անձանց իրավունքների խախտումները վերացնելու համար: Թեև ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են, որ գորակոչիկները ընդգրկվում են ուսումնական գորամասի փոփոխական կազմում, իսկ գիճվորական մասնագիտություն ստանալուց հետո նրանք բաշխվում են հիմնական ծառայության վայրեր՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջների համաձայն, սակայն, կարծում ենք, որ այս պարզաբանումն այնուամենայնիվ հակասում է վերը նշված օրենքի դրույթին և այս հարցը շարունակում է մնալ Պաշտպանի ուշադրության ներքո:

### Օրինակ 3

Երևան քաղաքի բնակիչ Վ.Պ.-ն Պաշտպանին ներկայացրած դիմում-քողոքով հայտնել է, որ 2005թ. ընդունվել է Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան սկզբում անվճար հիմունքներով, այնուհետև, ոռտացիայի արդյունքում, տեղափոխվել է վճարովի համակարգ: 2008թ. սեպտեմբերի 24-ին 1-ին կիսամյակի ուսման վարձի վճարումը մի քանի օր ուշացնելու պատճառով համալսարանի ռեկտորի հրամանով հեռացվել է համալսարանից: 29.09.2008թ. ուսման վարձը վճարելուց հետո, համալսարանի ռեկտորի 30.09.2008թ. հրամանով վերականգնվել է համապատասխան ֆակուլտետի վճարովի համակարգում: Չնայած դրան՝ այդ մի քանի օրվա ընթացքում կորցրել է պարտադիր գիճվորական ծառայությունից տարկետման իրավունքը:

Մինչև բուհում վերականգնվելը Վ.Պ.-ն պարտադիր գիճվորական ծառայության գորակոչվելու համար տարածքային գիճվորական ծանուցագիր չի ստացել, հետևաբար նա պարտադիր գիճվորական ծառայությունից չի խուսափել: Իսկ Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի 30.09.2008թ. հրամանով փաստացի վերականգնվել է նրա ուսանողի կարգավիճակը:

Պաշտպանի կողմից ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված գրությամբ նշվել է, որ համաձայն «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի ա/կետի՝ պարտադիր գիճվորական ծառայության գորակոչից ուսումը շարունակելու համար

տարկետում տրվում է պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ օրդինատուրա, ինտերնատուրա և մագիստրատուրա) ցերեկային ուսուցման ուսանողներին:

Նույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ շարքային կազմի գորակոչը և գորացրումը կատարվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ տարին երկու անգամ՝ ապրիլ-հունիս և հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Նկատի ունենալով, որ Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի հրամանը՝ Վ. Պ.-ին ԲՈՒՀ-ից հեռացնելու, այնուհետև վերականգնելու վերաբերյալ, կայացվել է սեպտեմբեր ամսին, որի ընթացքում գորակոչ չի եղել և այն, որ Վ.Պ.-ն ներկայումս հանդիսանում է ուսանող՝ նախարարին խնդրվել է պարզաբանել, թե ինչո՞ւ Վ.Պ.-ին չի տրամադրվում պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում:

Գրությանն ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարը հայտնել է, որ Վ.Պ.-ի դիմումը քննարկվել է ՀՀ պաշտպանության նախարարությունում, որի արդյունքում պարզվել է, որ Վ.Պ.-ն 2005 թվականին ընդունվել է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան: 2008թ. 1-ին կիսամյակի ուսման վարձը չմուծելու պատճառով ԵՊԲՀ ռեկտորի հրամանով հեռացվել է համալսարանից, սակայն մի քանի օր անց՝ վարձը վճարելուց հետո ԵՊԲՀ ռեկտորի 30.09.2008թ. հրամանով վերականգնվել է նույն ֆակուլտետում:

Թեև հեռացման պահից Վ.Պ.-ն կորցրել է պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման իրավունքը, սակայն վերականգնվելով նույն ֆակուլտետում՝ «Զինապատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան նրա տարկետման իրավունքը վերականգնվել է, և նա ենթակա է գորակոչի միայն ուսումը ավարտելուց հետո՝ օրենքով սահմանված կարգով:

Բողոքի քննարկումը դադարեցվել է հարցը դրական լուծվելու կապակցությամբ:

#### 4.2. Հաշմանդամների իրավունքներ

2008թ. ընթացքում հաշմանդամության ոլորտին վերաբերող օրենսդրությունն էական փոփոխությունների չի ենթարկվել: Շարունակում են հրատապ մնալ հաշմանդամների կրթության, գրադարձության, սոցիալական ապահովության և այլ խնդիրները:

Այսպես, հաշմանդամների կրթությունը կարգավորող հիմնական իրավական ակտերը 1999թ. ընդունված «Կրթության մասին» և 2005թ. ընդունված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքներն են: Նախատեսված է ներառական կրթության հնարավորություն, ընդ որում՝ նշվում է, որ ներառական կրթություն կարող է կազմակերպվել այն ուսումնական հաստատություններում, որոնք ապահովված են կրթության առանձնահատուկ պայմաններով: Նման պայմաններն ենթադրում են ոչ միայն

համապատասխան մասնագետների առկայություն, այլ նաև շինությունների մատչելիություն. թեքահարթակներ և հարմարեցված սանհանգույցներ: Եթե թեքահարթակների հարցը մասնակիորեն լուծված է, ապա սանհանգույցների մատչելիությունը մինչ օրս մնում է օրակարգում:

Օրենսդրությամբ նախատեսվում է նաև տնային ուսուցում, սակայն դրա հետ կապված ևս գոյություն ունեն մի շարք խնդիրներ: Մասնավորապես, մանկավարժները հավելյալ աշխատավարձ չեն ստանում, ինչն էլ դժվարեցնում է տնային ուսուցման որակի և արդյունավետության ապահովումը:

Ինչ վերաբերում է հաշմանդամների միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթությամբ, ապա ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

Չնայած նման՝ օրենսդրությանը ընձեռած հնարավորությամբ, երիտասարդ հաշմանդամների մի որոշ մասն է օգտվում դրանից: Պատճառը հոգեքանական բարդույթներն են, ինչպես նաև կրթական ծրագրերի անհամապատասխանությունը տարբեր բնույթի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Հաշմանդամների զբաղվածությանն առնչվող օրենսդրությունը նախատեսում է մի շարք արտոնություններ հաշմանդամ աշխատողների համար, մասնավորապես ՀՀ աշխատանքային օրենսդրությունը հնարավորություն է ընձեռում նաև հաշմանդամություն ունեցող աշխատողներին իրենց պահանջով՝ բժշկական եզրակացության հիման վրա, աշխատել ոչ լրիվ աշխատաժամանակով: Բացի դրանից օրենսդրությունը ամրագրված է, որ հաշմանդամները կարող են ներգրավել արտաժամյա աշխատանքի, եթե բժշկական եզրակացությամբ դա նրանց արգելված չէ: Հաշմանդամի ներգրավումն արտաժամյա, ոչ աշխատանքային օրերի կամ գիշերային աշխատանքներում թույլատրվում է միայն նրանց համաձայնությամբ և պայմանով, եթե նման աշխատանքները բժշկական եզրակացությամբ նրանց արգելված չեն: 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամների համար սահմանվում է աշխատաժամների կրծատված տևողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի:

Աշխատանքի ընդունելիս հաշմանդամների համար փորձաշրջան չի սահմանվում, իսկ աշխատողների թվի կամ հաստիքների կրծատման ժամանակ աշխատանքի հավասար արտադրողականության և նույն որակավորման դեպքում հաշմանդամներն օգտվում են աշխատանքում մնալու առավելությունից:

Գործատուներին հնարավորություն է տրվում օգտվել աշխատավարձի փոխհատուցման ծրագրից, բացի դրանից գործում են այլ խրախուսական մեխանիզմներ:

Այսպես, գործատուին պետության կողմից փոխատուցվում է իր մոտ աշխատող հաշմանդամի աշխատավարձի մի մասը, սակայն ոչ ավելին քան նվազագույն աշխատավարձը: Նման ծրագիրը կարգավորվում է 2006 թվականի հուլիսի 13-ի ՀՀ կառավարության «Աշխատաշոկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխատուցման կարգը, չափը և պայմանները հաստատելու մասին» թիվ 996-Ն որոշմամբ: Ներկայումս նվազագույն աշխատավարձը կազմում է 25000 ՀՀ դրամ, իսկ 2009թ. հունվարի 1-ից կկազմի 30000 ՀՀ դրամ:

Այլ խրախուսական մեխանիզմ է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված արտոնությունը. «Հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 տոկոսի չափով»:

Այնուամենայնիվ, հաշմանդամների գրադաժության հարցը դեռևս լուծված չէ, և հատկապես այս ոլորտն ունի կատարելագործման կարիք: Զվոտաների համակարգի ներմուծումը կարող է էապես նպաստել հաշմանդամ աշխատողների թվի ավելացմանը: Համաձայն բազմաթիվ հետազոտությունների արդյունքների, աշխատունակ հաշմանդամների մի ստվար զանգված նախընտրում է աշխատել, քան ստանալ բարձր կենսաքոշակ:

Ինչ վերաբերում է շինությունների մատչելիությանը, ապա հարկ է նշել, որ 2007թ.-ի հունվարի 1-ից գործում են պարտադիր շինարարական նորմեր, սակայն կառուցվող շինություններից շատերը չեն համապատասխանում դրանց: Պատճառը թերևս այն է, որ բացակայում են վերահսկողության գործուն մեխանիզմներ, և նախագծերը հաստատվել են մինչ նորմերի ուժի մեջ մտնելը:

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական դաշտը ընդհանուր առմամբ համապատասխանում է միջազգային նորմերին և պահանջներին, բխում է հաշմանդամների իրավունքներից և օրինական շահերից: Ավելին, առկա է հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թվականների ռազմավարությունը, որը 2005 թվականի նոյեմբերի 17-ին ստորագրվել է ՀՀ վարչապետի կողմից: Ռազմավարությունն ուղղված է հաշմանդամների համար հասարակական կյանքի բոլոր բնագավառներում մատչելիության, հավասար իրավունքների և հնարավորությունների, հաշմանդամ երեխաների կրթության ապահովմանը և նրանց գրադաժության խթանմանը, ինչպես նաև նպատակ է հետապնդում կիրառել հաշմանդամների հիմնահարցերի լուծմանն ուղղված պետական և ոչ պետական մարմինների միջև սոցիալական գործընկերության սկզբունքները, նաև ապահովել հաշմանդամության և հաշմանդամների հիմնահարցերի վերաբերյալ հանրային կրթությունը

և իրազեկությունը: Ուազմավարությունը հանգամանորեն նշում է կյանքի տարբեր ոլորտներում առկա խնդիրները, նախանշված նպատակները և դրանց հասնելու ուղիները, սակայն այդ ուղիները իրենց հերթին իրացման գործուն մեխանիզմներ են պահանջում, որոնք բացակայում են տվյալ ուազմավարությունում: Ավելին, ուազմավարության իրացման վերջնաժամկետը 2015 թվականն է, մինչդեռ ճիշտ կլիներ թերևս միջոցառումներից յուրաքանչյուրի համար նշել մեկ կամ երկու տարվա վերջնաժամկետ՝ կախված դրա իրացման բարդությունից: Բացի դրանից, անհրաժեշտ է նշել այն մարմինները, որոնք պատասխանատու կլինեն նպատակների պատշաճ իրագործման համար, ինչպես նաև պատասխանատվության միջոցները՝ դրանց ոչ պատշաճ կատարման կամ չկատարման համար: Սա հնարավորություն կընձեռի առավել հետևողական լինել և արդյունավետորեն հասնել նպատակներից յուրաքանչյուրին:

Իրավիճակի բարելավմանը կարող է նպաստել նաև ՄԱԿ-ի «Հաշմանդամների իրավունքների մասին» կոնվենցիան, որը ստորագրվել, սակայն դեռևս չի վավերացվել Հայաստանի Հանրապետության կողմից:

#### **4.3. Փախստականների իրավունքներ**

Փախստականների կողմից ՄԻՊ-ին ուղղված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց հուզող խնդիրները անցած տարիների համեմատ, ըստ էության, չեն փոխվել: Դա նշանակում է, որ այդ խնդիրները վերջնական լուծումներ չեն ստացել: Բողոքները հիմնականում վերաբերում են փախստականների բնակարանային հարցերին, կենցաղային պայմանների բարելավման, սոցիալական ապահովության և այլ խնդիրների:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից փախստականներով հոծ բնակեցված թվով 29 բնակավայրերում անցկացված մոնիթորինգը մարդու իրավունքների լուրջ խախտումներ չի արձանագրել:

Արագածոտնի մարզի Ջրաբերդ գյուղում, որտեղ բնակվում են փախստականներ Աղբքաջանից, չկա փոստ, վատ է գործում կապը և բացակայում է հեռախոսային ցանցը, չկա գազ, չկա բնակարանների ջեռուցման համար վառելիքի ձեռքբերման հնարավորություն, բացակայում է տրանսպորտը, նրանք ստիպված են ամեն անգամ անցնել 4 կմ մինչև մոտակա բնակավայր՝ գնումներ կատարելու նպատակով: Տրանսպորտի բացակայությունը թույլ չի տալիս Ջրաբերդի փախստականներին ճիշտ ժամանակին համապատասխան մարմիններին հասցնել իրենց բողոքները: Նույն իրավիճակում են գտնվում նաև Գեղարքունիքի մարզի փախստականները:

Կոտայքի մարզի Քասախ գյուղի ուղղիչ աշխատանքային գաղութի տարածքում ծայրահեղ վատ պայմաններում բնակվում են փախստականների մոտ 30 ընտանիք: Ծանր

կենցաղային պայմաններում է գտնվում Մ. Ավանեսյանի ընտանիքը, որը երկու երեխաների և անչափահաս թոռների հետ միասին բնակվում է թիվ 20 շենքի նկուղում առանց լույսի և բնակության համար անհրաժեշտ տարրական պայմանների:

Համաձայն ՀՀ ՍԻՊ աշխատակազմի աշխատանքային խմբի գնահատման, այդ ընտանիքի բնակության պայմաններն անհամատեղելի են նորմալ բնակության պայմանների հետ, այնտեղ տիրում է սուլայի հակասանիտարական վիճակ, որը վտանգավոր է մարդկանց առողջության համար:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից անցկացված մոնիթորիզը և հետագա վերլուծական հետազոտությունները պարզել են, որ պետական մարմինները, որոնք կոչված են լուծելու փախստականների խնդիրները, հաճախ ոչ օբյեկտիվ են ներկայացնում փախստականների իրական վիճակը: Նրանցից լսում ենք փախստականների նատուրալիզացիայի և ինտեգրացիայի ոլորտում հաջողությունների վերաբերյալ: Կամ նրանք չեն հասկանում այդ բառերի նշանակությունը, կամ էլ բյուրիմացության մեջ են գցում հասարակայնությանը և միջազգային կազմակերպություններին:

Փախստականների վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ նատուրալիզացիան իրականացվել է գործարքի կամ նրանց նկատմամբ շանտաժի արդյունքում, այսինքն՝ «դու կընդունես ՀՀ քաղաքացիություն, իսկ մենք թույլ կտանք սեփականաշնորհել այն բնակարանը, որը կառուցվել է միջազգային կազմակերպությունների կողմից»: Դրանից հետո նախկին փախստականներին թողնում են բախտի քմահաճույքին:

Փախստականների իրավունքների խախտումների վերաբերյալ նրանց իսկ կողմից կրկին հնչեցվել են շատ փաստեր ոչ վաղ անցյալում՝ 2008թ. նոյեմբերի 7-8-ը ՀՀ տարածքային նախարարության միզրացիոն գործակալության և ՍԱԿ ՓԳՀ գրասենյակի կողմից կազմակերպված «Հայաստանում ամրապնդել փախստականների պաշտպանության կարողությունները» թեմայով ազգային խորհրդատվության ժամանակ: Վերլուծել են այն ձեռքբերումները և դեռևս գոյություն ունեցող բացերը Հայաստանի փախստականների պաշտպանության համակարգում, ինչպես նաև բացահայտել են այն համապատասխան քայլերը, որ անհրաժեշտ է իրականացնել դրանք օժանդակող մեխանիզմների միջոցով: Խորհրդատվությանը մասնակցել են փախստականների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները, փախստականների հարցերին առնչվող նախարարությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչները: Բոլոր մասնակիցները հանդես են եկել հստակ առաջարկություններով՝ աջակցելու փախստականների ամբողջական, այսինքն՝ տնտեսական և սոցիալական ինտեգրմանը հասարակության մեջ: Այս միջոցառման մասնակիցների մեծամասնությունը միակարծիք էին պետական այնպիսի ծրագրի բացակայության հարցում, որը կիմնվեր հոգևոր, քաղաքական և տնտեսական

խնդիրների լուծման վրա: ՍՍԿ ՓԳՀ Բուշրա Հալեպոտան, հետազայում՝ 2008թ. դեկտեմբերի 22-ին, նամակով շնորհակալություն է հայտնել խորհրդատվության մասնակիցներին՝ նշելով, որ աշխատանքային խմբերի կողմից ներկայացված առաջարկությունների նախագիծը հիմք կհանդիսանա փախստականների իրավական, սոցիալական և տնտեսական կայուն ինտեգրման համար՝ հետագա գործողությունների ծրագիր մշակելու միջոցով:

Պետք է փաստել, որ փախստականների բնակարանային խնդիրներն առայժմ մնում են ամենաարդիականը: ՀՀ մարզերում այսօրվա դրությամբ 400 ընտանիքներ չեն կարողացել ձեռք բերել բնակարաններ բնակարանի գնման վկայագրերով՝ շուկայում բնակարանների գների անընդհատ փոփոխության պատճառով: Ավելի քան 1000 ընտանիք դեռևս կարիք ունի ստանալու բնակարանի գնման վկայագիր: Երևանում բնակարանի գնման վկայագիր ստանալու առաջնահերթությունը տրված է 1100 ընտանիքների, որոնց բնակարանային խնդիրը պետք է լուծվի 2009 թ-ի ընթացքում: Մնացած այն փախստականները, որոնք չեն ընդգրկվել առաջնահերթ ցուցակում, լավագույն դեպքում բնակարան կարող են ձեռք բերել 2010-2012 թթ.-ին:

Այսօր, երբ Հայաստանը, ըստ Էության, չի լուծել Աղբեջանից բռնազարդածների խնդիրները, պետության դեկավարությունը և միջազգային կազմակերպությունները բախվել են նոր խնդիրների հետ: Դա փախստականների և ապաստան փնտրող Իրաքի /943 մարդ/, Իրանի, Վրաստանի /117 մարդ/, Թուրքիայի /քրդեր/ և այլ երկրների քաղաքացիների նոր ալիքն է, ընդհանուր 1588 մարդ: Ներգաղթածների այս կատեգորիայի կարգավիճակը վերջնականապես կորոշվի «Փախստականների և ապաստան փնտրողների մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Ի տարբերություն 1988-1992թթ. փախստականների, պետությունն ի վիճակի չե ապահովել նոր ներգաղթածներին ժամանակավոր կացարաններով, ինչը դժվարացնում է ՍԻՊ գրասենյակի աշխատակիցների կողմից մոնիթորինգի անցկացնելը: Հայտնի է միայն մեկ տեղեկություն, որ նոր ներգաղթած փախստականները զրկված են պետական ծառայությունների կողմից տեղեկատվություն ստանալու հնարավորությունից և սփռված են Հանրապետության ողջ տարածքով՝ բնակվելով ծանոթ-բարեկամների մոտ կամ վարձով:

Պաշտպանի գրասենյակի աշխատակիցներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում տարբեր սեմինարների և համաժողովների՝ նվիրված փախստականների և միզրանտների իրավունքների պաշտպանությանը: 2008թ.-ի նոյեմբերի 20-21-ը ՍՍԿ-ի ՓԳՀ և ՀՀ տարածքային նախարարության միզրացիոն գործակալության հետ համատեղ Հայաստանի շահագրգիռ ծառայությունների և նախարարությունների համար կազմակերպվեց սեմինար «Փախստականներ, ներգաղթ՝ Սարդու իրավունքների Եվրոպական դատարանի կոնտեքստում և հեռանկարների մասին» թեմայով: Սեմինարն անցկացնում էին Եվրոպական դատարանից իրավիրված դատավորները: Զննարկվեցին ՀՀ-

ում ապաստանի համակարգի վերաբերյալ օրենսդրությունը և պրակտիկան, ապաստանի ոլորտում Եվրոպական նորմերը, ապաստանի որակավորման և ապաստանի տրամադրման ընթացակարգերի վերաբերյալ նորմերը: Նիդեռլանդների, Ֆինլանդիայի և Սեծ Բրիտանիայի փորձագետների կողմից ներակայցվեցին այդ երկրների փորձն ապաստան հայցողների ընդունելության, ապօրինի միզրանտների վտարման և արտաքաման, կամավոր վերադարձի և հարկադիր միջոցների կիրառման ընթացքում մարդու իրավունքների հիմնահարցերը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներ Ալվինա Գյուլումյանի և Յան Սիկուտայի կողմից ներկայացվեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կառուցվածքը, մատչելիությունը, ընթացակարգերը և իրավագորությունը ապաստանի հարցերով: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին այդ բնագավառում առկա հիմնախնդիրները, որոնք վերհանվել են Պաշտպանին հասցեագրած բողոքների քննարկման արդյունքում:

Պաշտպանի աշխատակազմի մասնագետների խորհրդատվությունը օգնել է շատ փախստականների և նրանց խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների՝ լուծելու իրենց խնդիրները վարչական ընթացակարգերով կամ դատական կարգով:

Պաշտպանի աշխատակազմի կողմից կիրառվող մոնիթորինգի և կանխարգելիչ միջոցառումների արդյունքում 2008թ.-ին բողոքների թիվը զգալի պակասել է:

Որոշ փախստականներ Պաշտպանին ուղղված շնորհակալական նամակներում երախտագիտություն են հայտնում իրենց խնդիրների լուծման առիթով:

Պաշտպանի գրասենյակի աշխատակիցներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև ոլորտին վերաբերող ՀՀ օրենսդրության կատարելագործման առումով, մասնավորապես, «Փախստականների և ապաստան փնտրողների մասին» ՀՀ օրենքի տարիներ շարունակ ընթացող մշակման աշխատանքներին:

#### 4.4. Երեխաների իրավունքներ

Ցուրաքանչյուր հասարակության մեջ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը սկսվում է երեխայի հանդեպ վերաբերմունքից: Երեխաներին սիրող հասարակությունը հոգ է տանում նրանց ազատությունների և արժանապատվության ապահովման մասին՝ ստեղծելով պայմաններ, որոնց դեպքում նրանք կկարողանան լիակատար բացահայտել իրենց ընդունակությունները և հիմք դնել հասուն տարիքում լիարժեք ու բեղմնավոր կյանքով ապրելու համար:

Երեխաների իրավունքների պաշտպանությունը բարդ և բազմակողմանի գործընթաց է, որում պետք է ներգրավվեն ոչ միայն նրանց ծնողները, ընտանիքի անդամները, այլև

հասարակությունը և պետությունը՝ պետական ողջ համակարգի միջոցով։ Այդ մասին է վկայում ինչպես ազգային օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային մի շարք փաստաթղթերում ամրագրված այն դրույթը, որը հոչակում է յուրաքանչյուր երեխայի իրավունքը, առանց որևէ խսրականության, իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես անշափահասի։

Ահա այս սուբյեկտների համակողմանի և փոխկապակցված գործողությունների արդյունքում միայն կարելի է հասնել երեխայի և նրա իրավունքների պաշտպանվածությանը կոնկրետ պետությունում։

Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում հայաստանյան իրավիճակը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից։ Մի կողմից, լինելով տարբեր միջազգային կազմակերպությունների մասնակից-անդամ, Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային կարևորագույն փաստաթղթերը, որոնք առանձին դրույթներ են բովանդակում նաև երեխայի իրավունքների մասին։ Բացի այդ, մեր պետության կողմից վավերացվել են նաև երեխայի իրավունքներին ուղղակիորեն առնչվող մի շարք կարևոր Կոնվենցիաներ, որպիսիք են՝ «Երեխայի իրավունքներին մասին» ՍԱԿ-ի 1989թ. Կոնվենցիան, «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցման մասին» Հաազայի 1980թ., Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաազայի 1993թ. Կոնվենցիան, «Ծննդական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցառումների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաշման, իրականացման և համագործակցության մասին» Հաազայի 1996թ. Կոնվենցիան և այլն։

Ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան, ՀՀ-ի կողմից ընդունվել են երեխայի իրավունքներին առնչվող մեծ թվով օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, կատարվել են համապատասխան փոփոխություններ ու լրացումներ գործող իրավական ակտերում, հաստատվել է «Երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագիրը և այլն։ Նշված իրավական ակտերը թեև գուրկ չեն թերություններից, հակասություններից և իրականացման մեխանիզմների բացակայությունից, այնուամենայնիվ, օրենսդրական դաշտում ակնհայտ է պետության պատրաստականությունը՝ երեխայի իրավունքների պաշտպանության ապահովման ուղղությամբ որոշակի քայլեր ձեռնարկելու գործում։

Եթե որոշակիորեն դրական կարելի է համարել երեխայի իրավունքների ոլորտում ՀՀ օրենսդրության առկայությունը, ապա այլ է պատկերը իրավակիրառ պրակտիկայում։ Թեև ստեղծված են մի շարք կառույցներ հանրապետական և տեղական մակարդակներով (այդ թվում՝ երեխայի իրավունքների պաշտպանության Ազգային Հանձնաժողովը,

մարզպետարաններում (Երևանի քաղաքապետարանում) երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, տեղական ինքնակառավարման մարմիններում խնամակալության և հոգաբարձության մարմինները և այլն), այնուամենայնիվ, մեր ուսումնասիրությունները վկայում են, որ շատ դեպքերում նշված մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով երեխաները մնում են անպաշտպան, իսկ նրանց իրավունքները՝ ոտնահարված: Այդ տեսակետից, թերևս, անելիքներ շատ կան:

2008թ. ընթացքում երեխայի իրավունքների վերաբերյալ Պաշտպանին հասցեազրկել են 11 դիմում-բողոքներ, որոնք հիմնականում վերաբերել են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են՝

**ա) ալիմենտի վճարման վերաբերյալ դատական ակտերի կատարման դժվարությունները,** ինչը պայմանավորված է ինչպես ծնողների կողմից ալիմենտը ժամանակին չվճարելու, իրական եկամուտները բարցնելու, այլ երկիր մեկնելու, այնպես էլ դատական ակտերի հարկադիր կատարողների կողմից դատական ակտի հարկադիր կատարումն ապահովելու հարցում օրենսդրությամբ իրենց վերապահված բոլոր հնարավորությունները չօգտագործելու, ոչ օպերատիվ գործելու, որոշ դեպքերում անգործություն դրսնորելու դեպքերի հետ:

Հատկանշական է, որ այլ պահանջներով դատական ակտերը, օրինակ՝ վտարման պահանջի վերաբերյալ, նույն ծառայության աշխատակիցները կատարում են շատ օպերատիվ, բայց պասիվություն են ցուցաբերում երեխայի շահերը պաշտպանող դատարանի վճիռների կատարման գործում:

**Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին է դիմել քաղաքացի Ա.Գ.-ն հայտնելով, որ իր հետ ապրող անշափահաս երեխայի օգտին մինչև նրա չափահաս դառնալը իր նախկին ամուսնուց Ա.Ա.-ից դատարանը վճռել է յուրաքանչյուր ամիս բոնագանձել նրա վաստակի և այլ եկամուտների 16 տոկոսը: Ա.Ա.-ն մի քանի ամիս ալիմենտ վճարելուց հետո մեկնել է Հայաստանի Հանրապետությունից: Երկու տարի անց վերադառնալով հայրենիք՝ վերջինը հրաժարվել է վճարել այդ տարիների ընթացքում կուտակված ալիմենտի պարտքը: Դիմումատուն դժգոհել է, որ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը անտեսելով իր դիմումները, որևէ քայլ չի ձեռնարկել ալիմենտի պարտքի բոնագանձման ուղղությամբ:**

Պաշտպանը դիմել է ՀՀ գլխավոր հարկադիր կատարողին՝ մեջբերելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 101 հոդվածի դրույթները: Ըստ այդ հոդվածի 3-րդ մասի՝ «Ալիմենտային պարտքի չափը որոշում է դատական ակտերի հարկադիր կատարողը՝ ելնելով դատարանի վճռով որոշված ալիմենտի չափից: Նույն հոդվածի 4-րդ մասը

սահմանում է. «Երեխաների համար սույն օրենսգրքի 69-րդ հոդվածին համապատասխան վճարվող ալիմենտային պարտքի չափը որոշվում է՝ ելնելով ալիմենտ վճարելու պարտավոր անձի վաստակից եւ (կամ) այլ եկամտից այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում ալիմենտի բռնագանձում չի կատարվել։ Եթե ալիմենտ վճարելու պարտավոր անձն այդ ժամանակահատվածում չի աշխատել, կամ եթե չներկայացվեն նրա վաստակը եւ (կամ) այլ եկամուտը հաստատող փաստաթղթեր, ալիմենտային պարտքը որոշվում է՝ ելնելով դրա բռնագանձման պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կրկնապատիկի չափից»։

Ի պատասխան, ՀՀ գլխավոր հարկադիր կատարողը հայտնել է, որ պարտապան՝ Ա.Ա.-ից գանձվել է 408.000 ՀՀ դրամ, որը փոխանցվել է Ա.Գ.-ին։

Բողոքի քննարկումը դադարեցվել է։

թ) Բողոքների հաջորդ խումբը վերաբերել է **միմյանցից առանձին ապրող ծնողների կողմից երեխայի հանդեպ ունեցած իրենց իրավունքները չարաշահելու դեպքերին։**

Ինչպես գիտեք, ՀՀ օրենսդրությունը ելնում է ծնողական իրավունքների հավասարության սկզբունքից, ինչը ծնողների առանձին ապրելու դեպքում հաճախ հակասում է երեխայի շահերին։ Տարբեր պատճառներով, հիմնականում ամուսնալուծության, երեխայից առանձին ապրող ծնողը հաճախ չարաշահում է երեխայի հետ տեսակցություն ունենալու իր իրավունքը՝ ի հաշիվ երեխայի լավագույն շահերի։ Թերևս կարելի է եզրահանգել, որ այս հարցում դատական պրակտիկան գնացել է սխալ ուղղությամբ։

Երբ երեխայից առանձին ապրող ծնողը դատարան է դիմում երեխայի հետ տեսակցելու կարգ սահմանելու խնդրանքով, ծնողների իրավունքների հավասարությունը հաճախակի բացարձակեցնելով, դատարանը առանձին ապրող ծնողի համար սահմանում է երեխային տեսակցելու որոշակի օրեր՝ երեխային իր տուն տանելու, նշանակված ողջ օրը երեխայի հետ լինելու իրավունքով, ինչը նախատեսվում է շաբաթվա մեջ ոչ թե մեկ, այլ երեք օր՝ ծնողների համար գրեթե հավասարեցնելով երեխայի հետ շփման ժամանակամիջոցը։ Այս իրավիճակը խաքարում է երեխայի հիմնական դաստիարակությունը, գրկում է երեխայի խնամքն իրականացնող ծնողին արդյունավետ բաշխելու երեխայի ուսման և դաստիարակության ժամանակը։ Դատարանի կողմից անտեսվում է այն հանգամանքը, որ առանձին ապրող ծնողի համար եխային տեսակցելը հաճախ ընդամենը ժամանց է, որի ընթացքում չեն ծրագրվում և իրականացվում երեխայի ուսմանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներ։ Խոսքն այստեղ վերաբերում է այն դեպքերին, երբ դեռևս չի անդրադարձվում անջատ ապրող ծնողի բացասական վարքագծին կամ երեխայի վրա բացասական ազդեցությանը։

Առանձին ապրող ծնողի տեսակցությունը երեխայի հետ ապահովելու մասին դատարանի վճռի կատարումը դրվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության վրա՝ տեսակցության ապահովման կարգի բացակայության պայմաններում, անգամ երբ երեխան ցանկություն չունի շփվել այդ ծնողի հետ:

Դատարանի վճռի կատարման ընթացքում երեխայի հետ շփվելու իրավունք ստացած ծնողի վարքագծին և ըստ այդմ երեխայի դաստիարակության վրա ազրեցությանը ոչ ոք չի հետևում, չի վերահսկում, իսկ ազրեցության բացասական լինելու մասին մյուս ծնողի պնդումը գնահատվում է որպես հակակրանքով թելադրված դիրքորոշում:

Խնամակալության և հոգաբարձության մարմինը, որի մասնակցությունը նման հարցերով դատաքննությունների ժամանակ պարտադիր է, պետք է նախապես ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրի խնդիրը և ունենա բոլոր հարցերի պատասխանները: Մինչդեռ իրականում այս մարմնի դիրքորոշումը հաճախ պայմանավորված է ծնողներից մեկի նկատմամբ համակրանքով, այլ ոչ թե երեխայի շահերի պաշտպանության պարտականությամբ:

**Օրինակ՝** Երեան քաղաքի բնակչութիւն. Ն. Դ.-ն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իր երկու անշափահաս երեխաների հետ հեռացել է ամուսնու տնից և այժմ բնակվում է ծնողների մոտ: Այդ ընթացքում երեխաների հայրը՝ Վ. Ա.-ն ցանկացած ժամանակ տեսակցել և շփվել է երեխաների հետ: Սակայն որոշ ժամանակ անց Վ. Ա.-ն, առանց իրեն և դպրոցի տնօրինությանը տեղյակ պահելու, դպրոցից տարել է երեխաներին և տեղափոխել իր բնակավայր, իսկ երեխաներին վերադարձնելու իր խնդրանքները մերժվել են, զրկվել է նույնիսկ իր երեխաներին տեսակցելու հմարավորությունից :

Թեև Գորիսի քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը նպատակահարմար է գտել, որ երեխաների խնամքն ու դաստիարակությունը հանձնվի հորը, այնուամենայնիվ, ընդհանուր իրավասության դատարանի վճռի համաձայն երեխաների խնամքն ու դաստիարակությունը հանձնվել է մորը: Այդ վճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան, որը երեխաների խնամքի և դաստիարակության, ինչպես նաև ալիմենտի բռնագանձման պահանջների մասով գործն ուղարկել է նոր քննության:

Քաղաքացին բողոքել է, որ մինչ դատական քաշքուկների ավարտը երեխաների հետ տեսակցելու համար դիմել է պատկան մարմիններին, մասնավորապես մարզպետին, ՀՀ ոստիկանության մարզային վարչության համապատասխան քամին, քաղաքապետարան, սակայն նրանց կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել:

Պաշտպանը դիմել է Գորիսի քաղաքապետին՝ մեջքերելով ՀՀ կառավարության «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ

կառավարության 2000թ. մարտի 13-ի թիվ 111 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 22.06.2006թ. թիվ 922-Ն որոշման 6-րդ կետը, ըստ որի՝ «Խնամակալության և հոգաբարձության մարմինն իրականացնում է երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ երեխայի իրավունքների և շահերի խախտման, երեխայի կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու, ծնողների կամ նրանցից մեկի կողմից երեխային դաստիարակելու, կրթության տալու պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման կամ ծնողական իրավունքների չարաշահման դեպքերում», և պահանջել է պարզաբանել, թե մինչև գործի դատական քննության ավարտը ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից իր անշափահաս երեխաների հետ դիմումատուի տեսակցությունը կազմակերպելու ուղղությամբ:

Ի պատասխան, Գորիսի քաղաքապետը հայտնել է, որ ներկայումս քանակություններ են տարվում երեխաների ծնողների հետ այդ հարցի շուտափույտ լուծման կապակցությամբ : Արդյունքների մասին առաջիկայում կիրագեկեն Պաշտպանին:

գ) Բողոքների մի մասն էլ վերաբերել է **Խնամակալության և հոգաբարձության մարմինների գործողություններին (անզործությանը)**՝ երեխայի խնամքը ծնողներից որևէ մեկին հանձնելու, ծնողներից որևէ մեկի մոտ երեխայի մնալու նպատակահարմարությունը որոշելու և երեխայի կապակցությամբ այլ վեճերի առնչությամբ նրանց տված եզրակացություններից և որոշումներից դժգոհություններին: Այս բողոքներով դիմումատուններին պարզաբանվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի որոշումները դատական կարգով բողոքարկելու նրանց իրավունքը:

Այսպիսով, հարկ է նշել, որ երեխայի իրավունքների պաշտպանությունը եղել և մնում է Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Ավելին, մենք չենք քավարարվում միայն մեզ հասցեազրած սակավաթիվ դիմում-բողոքների քննարկմամբ, այլև սեփական նախաձեռնությամբ սկսել ենք երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության ուսումնասիրության և դրա կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկների մշակման գործընթաց: Առաջին արդյունքները արտացոլվել են 2008թ. հրապարակված՝ «Երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ առկա որոշ խնդիրների վերաբերյալ» Պաշտպանի արտահերթ հրապարակային գեկույցում, որը տպագրվել է ՍԱԿ-ի մանկական իիմնադրամի և «Եվրասիա համագործակցություն» իիմնադրամի օժանդակությամբ: Դրանում, իհարկե, **ընդգրկվել են երեխայի իրավունքների պաշտպանությանն առնչվող ՀՀ օրենսդրության մեջ առկա ընդամենը մի քանի հիմնախնդիրներ:** Իրականում այդ ոլորտը քավականիմ լայն է և ներառում է քազում այլ

**Իարցեր, որոնք խորը ուսումնասիրության և լիարժեք լուծումներ գտնելու կարիք ունեմ: Մեր գործումնությունն այդ ուղղությամբ շարումակական է լինելու:**

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները պարբերաբար այցելություններ են կատարում երեխաների խնամքի ու դաստիարակության տարբեր հաստատություններ, կանաց և անչափահասների գաղութ, ծանոթանում տիրող իրավիճակին, պայմաններին, վերհանում առկա խնդիրները:

Հարկ է հիշատակել, որ առաջիկայում նախատեսվում է Պաշտպանի աշխատակազմում երեխայի իրավունքների պաշտպանության գծով առանձին պատասխանատուի հաստիքի ստեղծումը: Այդ նպատակով ուսումնասիրվում է տարբեր երկրների, այդ թվում՝ Լիտվայի Հանրապետության երեխայի իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեությունը և փորձը:

#### **4.5. Ազգային փոքրամասնությունների իրավունքներ**

2008թ.-ը, ի տարբերություն նախորդ տարիների, նշանավոր է նրանվ, որ չկան գրավոր դիմում-բողոքներ ազգային փոքրամասնությունների իրավունքների խախտման վաստերի վերաբերյալ:

Ինչպես նախորդ տարիներին, 2008թ. ևս Պաշտպանը և աշխատակազմի աշխատակիցները շարունակում են ակտիվ համագործակցել 24 հասարակական կազմակերպությունների հետ, որոնք ներկայացնում են ազգային փոքրամասնությունների 11 համայնքներ: Պաշտպանին կից փորձագիտական խորհրդին անդամակցում են Պաշտպանի կողմից ներգրավված ազգային փոքրամասնությունների 2 համայնքների ղեկավարներ:

Ազգային փոքրամասնությունների համայնքների ղեկավարների և Պաշտպանի գրասենյակի միջև ձևավորված համագործակցային հարաբերությունների, ինչպես նաև նրանց ստացած խորհրդատվությունների, մարդու իրավունքների բնագավառում ձեռք բերած գիտելիքների շնորհիվ, այդ համայնքների ղեկավարները ունակ գտնվեցին ինքնուրույն լուծելու իրենց որոշ խնդիրներ: Պաշտպանը կամ նրա աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են ազգային փոքրամասնությունների համայնքների բոլոր միջոցառումներին, այդ թվում՝ նրանց, որոնք կազմակերպվել են միջազգային կազմակերպությունների (ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ) կողմից Հայաստանում և նրա սահմաներից դուրս:

Հայաստանի Հանրապետության հաշվետվության կապակցությամբ դիտարկում անցկացնելու նպատակով 2008թ. սեպտեմբերի 24-ին այցով Հայաստանում էր գտնվում ԵԽ փորձագիտական հանձնաժողովի պատվիրակությունը:

Հանձնաժողովի անդամներն անհատական հանդիպումներ և զրույցներ են անցկացրել ազգային փոքրամասնությունների 11 համայնքների ղեկավարների հետ Հայաստանի կողմից

Եվրոպական Խարտիայի պահանջների իրականացման իրական իրավիճակի վերաբերյալ: Հաշվի առնելով հանդիպումների գաղտնիությունը՝ տվյալ պահին հնարավոր չէ որոշել, թե ի՞նչ խնդիրներ են շոշափվել դրանց ժամանակ:

2008թ. սեպտեմբերի 26-ին փորձագիտական հանձնաժողովի պատվիրակությունը մասնակցել է լեզվի Եվրոպական օրվա տասնամյակին նվիրված սեմինարին, որը կազմակերպել էր ԵԽ, ԵԱՀԿ երևանյան գրասենյակը և Երևանի պետական լեզվաբանական համալսարանը: Սեմինարին մասնակցել են ազգային փոքրամասնությունների ղեկավարները: Ելույթ ունեցողների կողմից նշվում էին Հայաստանի կողմից Եվրոպական խարտիայի պահանջների կատարման ինչպես դրական, այնպես էլ խնդրահարույց կողմերը:

ՀՀ-ն արդեն մի քանի տարի է օժանդակում է եզրիական, ոռուսական, քրդական, ասորական համայնքների մշակութային և կրթական ծրագրերի զարգացմանը: Հանրապետության որոշ դպրոցներում հայերենի հետ միասին դասավանդվում են վերոհիշյալ ազգությունների լեզուները: Եզրի ազգության համար Հայաստանում հայ գիտնականների կողմից կազմվել են այբուրեն և ուսումնական ձեռնարկներ: Երկրի տասնմեկ ազգային փոքրամասնություններն ունեն իրենց գրասենյակները, որտեղ ղեկավարներն ու համայնքի մանկավարժները կազմակերպել են մշակութային կենտրոններ և մայրենի լեզվի ուսուցման պարագաներներ: Պետության կողմից ամենամյա ֆինանսական օգնություն է հատկացվում ազգային փոքրամասնությունների համայնքներին: ՀՀ Նախագահի աշխատակազմը և Մշակույթի նախարարությունը ամեն տարի կազմակերպում են տուրիստական շրջագայություններ Հայաստանով, փառատոններ և ցուցահանդեսներ բոլոր ազգային փոքրամասնությունների համայնքների համար:

Եզրիների, ասորական, քրդական և վրացական համայնքներն ունեն ժամեր հանրային ռադիոյով, որտեղից հեռարձակվում են մայրենի լեզվով հաղորդումներ: Հանրապետությունում հեռարձակվում են քաղմաթիվ ոռուսական և ուսումնական հաղորդումներ, որոնք բավարարում են Հայաստանի ոռուսական համայնքի և բոլոր ռուսական համայնքների պահանջները:

Հանրապետության «Արմենակոբ» մասնավոր հեռուստաընկերությունը շաբաթը մեկ անգամ ազգային փոքրամասնություններին ուղիղ եթերի հնարավորություն է տրամադրում հեռարձակում «Հայաստանի ազգային փոքրամասնությունները» հաղորդաշարի միջոցով: Հաղորդման հեղինակ և վարող է հանդիսանում ՀՀ վաստակավոր լրագրող, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի փորձագիտական խորհրդի անդամ Հ. Թամոյանը, որը նաև վարում է Եզրիների ռադիոհաղորդումներ:

Պարբերաբար ազգային փոքրամասնությունների խնդիրներին է անդրադառնում «Ավետիս» հեռուստաընկերությունը, ինչպես նաև կազմակերպում է հեռուստամիջոցառումներ:

Այն ազգային փոքրամասնությունների համայնքները, որոնք հարգելի պատճառներով չունեն հնարավորություն ստեղծելու հեռուստա և ռադիո ծրագրեր, օգտվում են արբանյակային համակարգից, որը տրամադրվում է հունական, հրեական, լեհական, գերմանական, ուկրաինական դեսպանատների միջոցով։ Բոլոր ազգային փոքրամասնություններն ունեն ՁԼՄ-ներ և հրապարակում են թերթեր, ամսագրեր և բուկլետներ։ Ազգային փոքրամասնությունների մոտ մշակութային, կրթական շատ խնդիրների առաջացման պատճառ է հանդիսանում պետության կողմից ոչ բավարար ֆինանսավորումը և համապատասխան կարգերի բացակայությունը։

Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունի նաև Աղքաղջանական համայնք, որը հասկանալի պատճառներով վարում է պասիվ կենսակերպ։ Նրանց անվտանգությունը Հայաստանում լիովին երաշխավորված է։

Ի տարրերություն նախորդ տարիների, նկատելիորեն բարձրացել է ազգային փոքրամասնությունների ակտիվ մասնակցությունը ինչպես երկրի, այնպես էլ ողջ տարածաշրջանի հասարակական-քաղաքական կյանքին, ինչը դրական ինտեգրացիոն տեղաշարժ է։

Վերը շարադրվածը դեռ չի խոսում այն մասին, որ ազգային փոքրամասնությունները խնդիրներ չունեն։ Խնդիրներ կան։ Դրանք են՝ բնակարանային, կենցաղային, սոցիալ տնտեսական, հոգևոր, մշակութային և կրթական, սակայն դրանք այն սոցիալ-տնտեսական հիմնահարցեր են, որոնց բախվում են նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զգալի մասը և դրանց լուծումը կապված է Հայաստանի տնտեսական վիճակի հետ։

2008թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը երկու դիմում-բողոք է ստացել, մեկը Աղքաղջանից բնագաղթված՝ ազգությամբ վրացուի Լ.Թերիաշվիլուց, որի կողմից բարձրացված խնդիրը ստացել է դրական լուծում։

Մյուս դիմում-բողոքը ներկայացրել է ազգությամբ հույն, ՀՀ քաղաքացի Է. Տրիանդաֆիլովայից։ Բողոքի իմաստը կայանում է նրանում, որ Վանաձոր քաղաքի քաղաքապետարանի աշխատակիցները խնդրում են Է. Տրիանդաֆիլովային ազատել այն տարածքը, որտեղ ժամանակավորապես տեղադրված է տնակը, որում նա բնակվում է 1988 թ.-ից։ Բողոքի բննարկումը շարունակվում է։

## ԱՄՓՈՓՈՒՄ

### Համակարգային խնդիրների անատոմիան

Հակակշիռների և զսպումների համակարգ

Ամենատարբեր առիթներով բազմիցս նշել եմ, որ Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների տեսանկյունից կան համակարգային խնդիրներ: Այս ամփոփագրում որոշեցի հակիրճ անդրադառնալ նշված թեմային, և բացահայտել այդ խնդիրների էությունը: Նախ նշեմ, որ դրանք վերաբերում են մեր երկրի անկախացումից սկսած՝ ամբողջ ժամանակաշրջանին: Մեր երկրում պետական շինարարությունն ի սկզբանե ընթացել է սխալներով: Իհարկե, դա չի ազատում այսօրվա իշխանություններին պատասխանատվությունից: Սակայն, վերջիններս այսօր, փաստորեն, պատասխանատու են ոչ միայն իրենց գործողությունների կամ անգործության համար, այլև բոլոր նախորդների կատարած սխալների համար: Ինչեւ, նպատակս է՝ հակիրճ անդրադառնալ ոչ այնքան նշված համակարգային խնդիրներից բխող հետևանքների վերլուծությանը, որքան դրանց առաջացման պատճառների վերհանմանը: Անշուշտ, սա դժվար խնդիր է, և դրա մասին կարելի է բազում աշխատություններ գրել: Թերևս, գոնե հատվածական կերպով այդ մասին հարկ է գրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան գեկույցում: Նախ նշեմ, որ առկա քաղաքական համակարգի ավտորիտարիզմը (այսպես եմ անվանում մասնակի ազատ ուժինը) վերաբերում է ինչպես իշխանություն, այնպես էլ ընդդիմություն ներկայացնող քաղաքական կուսակցությունների մեծամասնությանը: Այսօր հասարակությունը, ըստ էության, ժողովրդավարական կուսակցությունների, այլ ոչ թե ժողովրդավարական կարգախոսների իսկապես մեծ պահանջարկ է զգում: Ժողովրդավարացմանն ավելի պատրաստ է հայաստանյան հասարակությունը, քան քաղաքական համակարգը: Նմանատիպ իրավիճակը ազդում է երկրում մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի վրա:

Հունվարի կեսերին Human Rights Watch-ը և Freedom House-ը հրապարակեցին Մարդու իրավունքների վերաբերյալ իրենց տարեկան գեկույցները: Համաձայն այդ գեկույցների՝ երկրները բաժանվում են 3 խմբի՝ ազատ, մասնակի ազատ և անազատ: Հայաստանը, ըստ այդ դասակարգման, հանդիսանում է մասնակի ազատ երկիր, իսկ հարեան Աղբբեջանը՝ անազատ: Մեր կարծիքով, այդ դասակարգումը պայմանականորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

1. ժողովրդավարական երկրներ,
2. ավտորիտար երկրներ,
3. տոտալիտար երկրներ:

Իհարկե ավտորիտար ռեժիմը ավելի լիբերալ ռեժիմ է, քան տոտալիտարը: Բայց միսիթարվելու համար այդ տարրերությունը բավարար չէ:

Տոտալիտարիզմը կարելի է սահմանել՝ որպես քաղաքական ռեժիմ, որում իշխանությունը փորձում է փոխել մարդու բնույթը, վերածել նրան հնագանդ էակի:

Ավտորիտարիզմը լրեցնում է որոշակի կարծիքներ, իսկ տոտալիտարիզմը բոլորին պարտադրում է միայն պաշտոնական կարծիքը, առաջինն օգտագործում է գրախոսություն, իսկ երկրորդը կիրառում է «ճշմարտությունները» մարդկանց «գլուխը մտցնելու» հնարքները: Առաջին դեպքում ռեժիմը պահանջում է հնագանդություն, իսկ երկրորդ դեպքում պարտադրում է լիակատար համաձայնություն: Առաջին դեպքում, ի տարրերություն երկրորդի, հնարավոր է քաքնվել լրության հետևում: Ավտորիտար ռեժիմը դաժան և անհանդուրժողական վերաբերմունք է դրսնորում ընդդիմադիրների նկատմամբ, մինչդեռ, տոտալիտար ռեժիմը քամահրում է ողջ ժողովրդին՝ նրա առօրյա կյանքում և նրա գիտակցության մեջ: Ավտորիտարիզմը մարդկանց պարտադրում է մասնակի կապիտուլյացիա, մինչդեռ, տոտալիտարիզմը՝ ամբողջական:

Տոտալիտար պետությունների «գաղափարախոսական դաստիարակությունը» ձգտում է ոչ այնքան համոզել, որքան՝ արգելափակել, կաթվածահար անել միտքն ու ձևավորել որոշակի գիտակցություն:

Տոտալիտար «գաղափարախոսական դաստիարակության» առաջնահերթ նպատակն է՝ մարդու ուղեղում դրոշմել սեփական լիակատար անզորության, անօգնականության և պետությունից բացարձակ կախվածության զգացումը:

Իշխանության մենախոսությունը հետապնդում է վախ ներշնչելու նպատակ, այն ամենուր ցուցադրում է իշխանության ամենազորությունը:

Եվ ինչի<sup>8</sup> հանգեցրեց մարդկային գիտակցության վրա տարվող այս աշխատանքը: Նրանց նվաստացրեցին, զրկեցին սեփական կեցության մի մասից, սակայն չվերածեցին ճկվող կամ կառավարելի էակի: Հակառակ օգտագործվող միջոցների անսովոր ուժգնությանը՝ մարդու մարդկայնությունը մնաց անպարտ:

Դատապարտված լինելով կեղծավորության, զրկված լինելով որևէ մտավոր, բարոյական և հոգևոր սենյից՝ «տոտալիտար» մարդն աղքատացած է, ցամաքած, դատարկված, նա չի հավատում ոչնչի և ոչ-ոքի: «Պետք է ապրել» դիրքորոշումն արդարացնում է կոմպլումիսները, ինքնահրաժարումն ու համակարգի առաջարկած մանր բարիքների մեջ պարփակվելը: Կարիք կա<sup>9</sup> արդյոք հավելել, որ այսպիսի մարդը չի համապատասխանում իր կոչմանը: Սա հակաքաղաքակրթություն է: Եվ անկախությունից ի վեր մենք չենք կարողանում թոքափել այդ բոլշևիզմից մնացած մշակույթը:

Որպես Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ իմ խնդիրը չէ քննարկել, թե որքանո՞վ է, օրինակ, Ադրբեյջանի հասարակությունը համաձայն իր

անազատ պայմանների հետ, բայց խորին համոզմունք ունեմ, որ Հայաստանի Հանրապետության հասարակության համար մասնակի ազատ լինելն անընդունելի է:

Հայաստանի Հանրապետությունը ազատ հասարակության կերտմանը այլընտրանք չունի: Մենք օր առաջ պետք է հրաժարվենք մեր բացառապես տոտալիտար անցյալի ժառանգությունից, որքան էլ դա դժվար լինի: Աննիրաժեշտ է մեծ համառություն և հաստատակամություն բոլշևիզմի ժառանգությունից ազատվելու համար:

Ժամանակն է, որպեսզի հստակ տարանջատվեն բիզնեսն ու իշխանությունը, ձևավորվի առանձին և միմյանց հետ համագործակցող, բայց չհամընկնող քաղաքական և տնտեսական էլիտա: Ժամանակն է՝ հրաժարվել օլիգարխիկ համակարգից: Ի տարրերություն ֆեոդալիզմի, կապիտալիզմը լուծեց նշված հիմնախնդիրները: Միայն այս պայմաններում մարդու իրավունքների գերակայության և իշխանությունների տարանջատման սկզբունքները իրականում կիրագործվեն և չեն կրի գուտ ձևական բնույթ: Այլապես, եթե հասարակական պրակտիկան գնա այլ ճանապարհով ու նույն անձը միաժամանակ լինի և՛ քաղաքական գործիչ, և՛ պաշտոնատար անձ, և՛ գործարար, ապա դատապարտված կլինենք ունենալ ֆեոդալիզմին բնորոշ հասարակական հարաբերություններ՝ քողարկված 21-րդ դարի ինստիտուցիոնալ և իրավական համակարգերով, որտեղ մարդու իրավունքները կրեն միայն ձևական բնույթ: Մարդը, որ դուրս է մղված որոշումների կայացման գործընթացից, կորցնում է հասարակական գարգացումների վրա ներգործելու հնարավորությունը, և հասարակությունը մուտք է գործում մշտական վթարների, անսարքությունների և աղետների ժամանակաշրջան: Այսօր մենք քաղում ենք նախկինում սկիզբ առած և շարունակվող սխալների պտուղները: Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորմանը այլընտրանք գոյություն չունի:

Խնդիրների շրջանակը, որ կարող է լուծել քաղաքացիական հասարակությունը, ներառում է մարդու իրավունքների ու ազատությունների ապահովումը, անվտանգության պահպանումը, մասնավոր սեփականության պաշտպանությունը:

Քաղաքացիական հասարակության մեջ ազատորեն գարգանում է ասոցիատիվ կյանքը, ընդլայնվում է զանգվածային շարժումների, կուսակցությունների, համոզունքներով կամ որևէ այլ հատկանիշով միավորված խմբավորումների ոլորտը: Այն հանգեցնում է պետական իշխանության ապակենտրոնացման՝ ձևավորելով ինքնակառավարման համակարգ, ապահովում է մեծամասնության և փոքրամասնության համագործակցությունը՝ նրանց դիրքորոշումները համաձայնեցնելով բաց բնույթ կրող բանակցությունների ճանապարհով և առանց սոցիալական բախումների:

Որո՞նք են քաղաքացիական հասարակության իմնական հատկանիշները: Առաջին հերթին, դա հասարակության մեջ արտադրության միջոցների ազատ սեփականատերերի

առկայությունն է: Այսինքն, խոսքը գնում է տնտեսական բազմազանության մասին, երբ իշխանությունը չի վերահսկում տնտեսական ռեսուրսների բաշխումն ու վերաբաշխումը և այս ոլորտում չի թելադրում պարտադիր լուծումներ:

Քաղաքացիական հասարակության հատկանիշներ են նաև գաղափարախոսական և քաղաքական բազմակարծությունը: Ակնհայտ է, որ առանց այդ հատկանիշների, քաղաքացիական հասարակության գոյությունն անհնար է:

Ներկայումս Հայաստանի բնակչության իրավական մշակույթը հասել է իր նվազագույն մակարդակին. սոցիալապես արժևորվում է ոչ թե սեփական իրավունքների և դրանց հետ կապված պատասխանատվության իմացությունը, այլ իմացությունն այն բանի, թե ի՞նչ է բույլատրում կամ արգելում դեկավարությունը: Ավանդական է դարձել մարդկանց հույսը՝ ունենալ լավ դեկավար, ով կկայացնի արդարացի, ճշմարիտ որոշում, բայց ոչ ծգտումը՝ դիմել օրենքին և պաշտպանել սեփական իրավունքները դատարանի միջոցով: Այլ կերպ ասած՝ ամենուր տիրում, իշխում է մարդը, բայց ոչ՝ օրենքը: Եվ հենց այս ժառանգությունն է, որ պետք է արմատախիլ արվի:

Այս առումով իշխանական համակարգի հարցը ամենասերտ կերպով առնչվում է ազատության հասկացությանը: Ազատությունը մարդու էության անքակտելի մասն է: Ազատությունն իրականանում է միայն հակակշիռների և զապումների համակարգի պայմաններում: Իշխանության բոլոր այլ ձևերը՝ սկսած անարքիայից մինչ բռնատիրություն, գերակշիռների այս կամ այն ձևեր են:

Մենք դեռևս չենք հաղթահարել մեզանում տոտալիտարիզմի միջոցով արմատավորված ստրուկին: Այս առիթով կցանկանայի հայտնի գրքից մի հատված մեջքերել. «Փարավոնը մեր ժողովրդին պահում էր ստրկության մեջ, սակայն իմ երկնային հայրը ժողովրդին ազատություն պարզեց՝ դուրս բերելով նրան ստրկության ու մեղքի տանից: Սակայն նշանակո՞ւմ էր արդյոք սա, որ մարդիկ դարձան ազատ: Ասում եմ ձեզ՝ ո՛չ: Քանզի մեզանից յուրաքանչյուրի մեջ նատած է մեր սեփական փարավոնը, որը դարձնում է մեզ ստրուկը տարփանքի, կոպտության, ազահության, նախանձի ու եսասիրության, ասել է թե՝ ստրուկը մեղքի: Եվ բավարար չէ միայն դուրս գալ Եգիպտոսից: Կարևոր է, որ Եգիպտոսը դուրս գա մեզանից»<sup>14</sup>: Վերաձևակերպելով այս ամենը՝ կարելի է նշել, որ դուրս գալ տոտալիտարիզմից բավարար չէ. կարևոր է, որ տոտալիտարիզմը դուրս գա մեզանից:

Բացահայտելով ոռուսական իշխանության հոգեվերլուծական կառուցվածքը, Կ. Յունգը նկատել է. «Բոլոր ժողովուրդները ունեն Ղեկավարի և Խեղկատակի արխետիպեր, և միայն Ռուսաստանում է, որ նրանք այնքան մոտ են միմյանց, որ ես չեմ զարմանա, եթե ինչ

<sup>14</sup> Տես՝ Մարկ Արեն. «Реквием по Иуде». М., 2006, с. 52-53

որ ժամանակ այստեղ դեկավար դառնա Խեղկատակը<sup>15</sup>: Նույն իրավիճակը հիանալի ներկայացրեց Մ. Բոլգակովը իր «Ծան սիրտը» ստեղծագործության մեջ:

Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությունում ամրագրված են իշխանությունների տարանջատուման մի շարք մեխանիզմներ, որոնց գործադրումը կարող է էականորեն սահմանափակել իշխանության տարբեր քևերի կամայականությունների հմարավորությունը:

Բայց, ցավոք սրտի, տոտալիտար անցյալի իներցիան դեռ ազդեցիկ է: Հետխորհրդային պետություններում փորձում են ստեղծել նախագահական կամ կիսանախագահական համակարգեր, իսկ դե ֆակտո ստացվում է սուպերնախագահական համակարգ: Փորձում են ստեղծել խորհրդարանական համակարգ, իսկ ստացվում է խորհրդարանական մեծամասնության դիկտատորայի համակարգ: Արդյունքում անհետանում է ժողովրդավարության համար անհրաժեշտ սկզբունքը՝ փոքրամասնության շահերի երաշխավորումը: Փոքրամասնությունը պետք է հնարավորություն ունենա իր ձայնը լսելի դարձնել և բանավեճի միջոցով՝ երբեմն նաև համոզել մեծամասնությանը:

Այդ տեսակետից Հայաստանում պետք է լինի բազմակենտրոն քաղաքական համակարգ, որտեղ գոյություն ունեն երկու կամ ավել ուժային կենտրոններ՝ իրենց քաղաքական և տնտեսական բաղկացուցիչներով: Հարկ է նշել, որ խոսքը գնում է միմյանց հավասարակշռող կենտրոնների մասին, որոնցից ոչ մեկը չի կարող միակողմանի ճնշումներ իրականացնել իշխանական ինստիտուտների վրա: Այդ առումով խոսելով հակակշիռների մասին՝ մենք նկատի ունենք հավասարակշռություն պետության և հասարակության միջև, հասարակության «ուժային կենտրոնների», քաղաքական համակարգի բաղկացուցիչ մասերի, քաղաքականության և տնտեսության միջև: Միայն դրանից հետո կարելի է խոսել պետական իշխանության ճյուղերի միջև իրական հավասարակշռության գոյության մասին:

Այնպիսի տպավորություն է, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չենք սովորել հակակշիռների համակարգի միջոցով ապահովել կայունություն: Դա հաջողվում է միայն գերակշիռների համակարգի հիման վրա: Ներկա իշխանական համակարգի խնդիրը մնացել է նույնը՝ Իշխանություն - Անհատ, Իշխանություն - Հասարակություն, Իշխանություն - Ընդդիմություն հարաբերությունների համակարգի ազատականացումը, և այդ խնդիրը պետք է արմատապես լուծել: Ամբողջ համակարգը պետք է հիմնված լինի մարդու իրավունքների երաշխավորման և պաշտպանության վրա: Օմբուդսմանը գուտ օղակ է հանդիսանում այս համակարգում: Թեև այդ օղակը մեծ կարևորություն ունի, բայց նույնիսկ նա չի կարող փոխարինել ամբողջ համակարգը:

<sup>15</sup> Տես՝ "Общество и политика (современные исследования, поиск концепций)." Под ред. В.Ю. Большакова С-Петербург, 2000., с. 102.

Անկախությունից ի վեր բյուրոկրատիան և օլիգարխիան, իրենց ենթարկելով պետությունը, քաղաքական որոշումների մշակման և ընդունման գործընթացները ամբողջությամբ կենտրոնացրել են իշխանական կառույցներում, ինչի արդյունքում էականորեն սահմանափակվել են այդ գործընթացների նկատմամբ հասարակական հսկողության հնարավորությունները:

Վերոնշյալի համատեքստում հետխորհրդային Հայաստանի իիմնական խնդիրը մնում է այն, որ դեռևս չի ապահովվել հասարակության կայունությունն իշխանական կառույցների հակակշիռների համակարգի ներքո, երբ սահմանադրականությունը դառնում է պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների իրավական ռեժիմ:

Իհարկե Հայաստանում դա ավելի դժվար է, քան օրինակ Բալբյան երկրներում: Դա պայմանավորված է նրանով, որ մեր նորագոյն պատմությունը բացարձակապես եղել է տոտալիտար և դա իր խորը արմատներն է թողել մեր մտածողության վրա, սակայն հարկավոր չի լինել քաղաքազիտության կամ իրավունքի գիտակ, որպեսզի իմանալ, որ միայն հակակշիռների և զապումների համակարգը կարող է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ մարդու իրավունքներն ու ազատությունները իրականում երաշխավորված կլինեն:

Ամենամեծ վտանգը Հայաստանի Հանրապետության համար անտարբերությունն է:

Ունենք երկու ճանապարհ՝

ա) հակակշիռների ու զապումների համակարգ- քաղաքացիական հասարակություն - մարդու իրավունքների պաշտպանություն ու առաջնորդություն,

բ) գերիշխանության համակարգ - անտարբեր հասարակություն - մարդու իրավունքների ծնական բնույթ - փակուլի:

Հնարավորությունը և իրավունքը՝ որպես մարդու

ներքին արժեհամակարգի տարրեր

Հակակշիռների և զապումների համակարգը բնական օրենք և օրինաչափություն է: Քաղաքական և իրավական միտքը զարգացման որոշակի փուլում այդ համակարգը սկսեց կիրառել նաև պետական շինարարության ոլորտում՝ որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման առավել արդյունավետ համակարգ: Բայց մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը մշակույթ է, որը հասարակության ներքին արժեհամակարգում ներմուծելու համար ամենին պարտադիր նախապայման չէին Զ. Լոքքի և Շ. Լ. Մոնտեսըյոյի «իշխանությունների բաժանման տեսությունը» և «մարդու բնական և անօտարելի իրավունքների» սկզբունքի հոչակումը:

Ո՞րն է մեր հասարակությունում ավելի գերադասելի՝ ունենալ իրավունք, քե՞զ իրական հնարավորություն՝ քեկուզե հակաօրինական, օրենսդրությամբ չամրագրված:

Անկախացումից ի վեր, ցավոք, հայ հասարակությունում այդ հարցի պատասխանը միանշանակ է՝ հնարավորություն: Պատմության մեջ առաջընթաց են ապրել այն ժողովուրդները, որոնց մշակույթում իրավունքը գերակայել է հնարավորությանը: Ցավոք, հայ հասարակությունը այդպես էլ չկարողացավ հասնել նրան, որ «իրավունքը» գերակայի «հնարավորությանը»:

18-րդ դարում բացարձակ միապետության պայմաններում Պրուսիայի կայսր Ֆրիդրիխ Մեծը հողային վեճ ուներ իր հպատակ գյուղացիներից մեկի հետ, որը չէր համաձայնվում վաճառել իր հողամասը կայսրին, և վերջինս ովհեց դատարան: Սակայն դատարանում կայսրը պարտվեց: Դրանից հետո Ֆրիդրիխ Մեծը իր զինանշանի վերևում գրեց՝ «Փառք Աստծո, որ Գերմանիայում կան արդար դատավորներ»: Նա պետական գործիչ էր և մի վայրկյան չտատանվեց՝ երկու արժեքներից ո՞րի վրա հենվել՝ հնարավորության, թե՞ իրավունքի: Պատմության մեջ կա նաև հակառակ օրինակը՝ 1911թ. Մեքսիկայի հեղափոխության արդյունքում իշխանություն եկավ Պորֆիրիոն Դիասը, որի հայտնի սկզբունքն էր՝ «Խմ ընկերներին ամեն ինչ, իմ թշնամիներին՝ օրենք»:

Անկախացումից ի վեր ՀՀ-ում գործում է Պորֆիրիոն Դիասի սկզբունքը, որի ծնունդն է այսօրվա օլիգարխիկ կապիտալը: Արդյունքում անկախացումից հետո անցած 18 տարիների ընթացքում հասարակությունում ձևավորվել է սեփականության լեզվիմության ճգնաժամ: Այդ սոցիալական անարդարության վրա հիմնված համակարգը չէր կարող պարբերաբար չհանգեցնել ճգնաժամերի: Բայց դեռ ոչ մի օլիգարխիկ համակարգ պատմականորեն երկար չի գոյատևել: Օլիգարխիկ կապիտալը պետք է ընդունի իրավունքի և օրենքի գերակայությունը և հասարակությունից վերցրածի մի մասը վերադարձնի նրան՝ գալով թափանցիկ հարկային դաշտ: Դրա արդյունքում կմվազի կոռուպցիան և հասարակության մեծ մասը կվերածվի արժանապատիվ ապրող միջին խավի: Հակառակ դեպքում, հասարակությունը վաղ թե ուշ կվերցնի իրեն հասանելիքը: Մենք առաջարկում ենք այն կոմպրոմիսը, որը կձևավորի քաղաքակիրք, ազատ տնտեսական հարաբերություններ և զերծ կպահի Հայաստանի Հանրապետությունը ցնցումներից: Առանց ազատական տնտեսության, անիմաստ է խոսել մարդու իրավունքների պաշտպանության մասին: Ժամանակն է հրաժարվել «հնարավորությունների» մշակույթից ի օգուտ «իրավունքի» մշակույթի:

### Ոեպրեսիվ համակարգ

Ներկայիս իշխանությանը նախորդ խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանից ժառանգություն են մնացել ոեպրեսիվ մեխանիզմը և դրանով պայմանավորված՝ հասարակական հարաբերությունների դեֆորմացիան, որից օր առաջ պետք է ազատվել:

Այսօր այդ ռեպրեսիվ համակարգի հիմնասյուներն են, հատկապես, Դատախազությունը և Հատուկ քննչական ծառայությունը: Դրա ապացույցն է ՀՔԾ աշխատանքի ոճը, որի արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակն ստանում է բազմաթիվ բողոքներ այն մասին, որ մարդկանց ստիպում են տալ ինքնախստովանական ցուցմունքներ՝ երրորդ անձանց դեմ:

Ռեպրեսիվ մեխանիզմի վառ օրինակ է, այսպես կոչված, «Փաստացի սեփականության» վերաբերյալ քննիչի գրությունը:

Լինելով խորհրդային ռեպրեսիվ մեքենայի ժառանգորդները՝ այդ մարմինները մնացին պրոֆեսիոնալ՝ անհատին պետությանը ստորադասելու դեպքում և ոչ պրոֆեսիոնալ՝ իրավունքի գերակայության ապահովման խնդրում: Այդ ոչ պրոֆեսիոնալիզմը ծանր բեռ է բոլորին համար և առաջին հերթին իշխանության համակարգի համար, որը կարելի է ասել, դարձել է այդ ոչ պրոֆեսիոնալիզմի պատանդ:

### Վախի սինդրոմ

Իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ռեպրեսիվ համակարգի գոյության հետևանքով վախի մթնոլորտը մեր հասարակությունում չի նվազում: Թվում է, թե նման իրավիճակում ավելի հեշտ է վերահսկել Պետությունը, քայց պատմությունը ապացուցում է, որ ցանկացած վախ հաղթահարելի է, և վախի մթնոլորտում ապրող մարդիկ վտանգավոր են հենց իշխանությունների համար:

Հաճախակի բնույթ են կրում այն դեպքերը, երբ մարդկանց վախեցնում են զգուշացնելով՝ «Դու, քո եղբայրը, քո ամուսինը, քո երեխան, քո հայրը կամ երբակալվեն, կիետապնդվեն» և այլն: Նման դեպքերում մարդիկ հաճախ ստիպված են լինում լոել, քանի որ զիտեն, որ պաշտպանված չեն և իրենց հասցեագրված սպառնալիքները կարող են իրականանալ: Այդ քաղաքացիները դիմում են մեզ, սակայն քանավոր կերպով, չցանկանալով բացահայտել սեփական անձը:

Այդ սպառնալիքները հաճախ հնչում են դատախազության և հատուկ քննչական ծառայության աշխատակիցների կողմից և չի կարելի հերոսություն պահանջել նման իրավիճակում հայտնված մարդկանցից, քանի որ հետևանքները նրանք են կրելու:

Ինչպես կարող են մարդիկ պաշտպանվել նման իրավիճակում: Ո՞րն է ավելի արդյունավետ՝ դիմել ոստիկանությանը, անվտանգության ծառայությանը կամ դատարան: Այս հարցը պատասխան չունի:

Այսօր Հայաստանում դժվար է խոսել ազատ հասարակության մասին: Իշխանության և ընդդիմության միջև առկա բանավեճերը բավարար չեն համարելու, որ երկրում գոյություն

ունի խոսքի ազատություն: Մարդիկ իրոք վախեցած են, և սա շատ անհանգստացնող է: Վախի հաղթահարումը մեր հասարակության ամենալուրջ խնդիրներից մեկն է:

### Արդար դատաքննության իրավունք

Քազմաքիվ խորքային խնդիրների արմատները, որոնց բախվում է Հայաստանը, կապված են դատական իշխանության անկախության ապահովման հետ: Թեև մեր երկրում իրականացվել են դատաիրավական բարեփոխումներ, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ (դատարանի շենքերը հագեցած են ժամանակակից մակարդակի սարքավորումներով, դատավորները վերապատրաստվում են, և այլն), սակայն դա չի նշանակում, որ դատական համակարգը զարգացման միտում ունի: Վերջին երեք տարում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դատական մարմինների նկատմամբ վստահությունը անթույլատրելի ցածր է:

Իհարկե, ժողովրդավարության ամրապնդման համար ժամանակ է պահանջվում: Այդ ընթացքում կարող են լինել և սխալներ, բայց ժողովրդավարության համակարգը՝ նեռարյալ անկախ դատական համակարգը, կարող է կատարելագործվել միայն այն դեպքում, եթե ժողովրդավարություն հաստատելու ցանկությունը հստակ է: Տագնապալի և մտահոգիչ է, եթե սխալները համակարգային բնույթ են կրում:

Երկրի նորմալ զարգացման պարտադիր նախապայման է հանդիսանում, վերջին 18 տարիներին ձևավորված վարչաքաղաքական ռեալիստիկ մոդելից դեպի ժողովրդավարական կառավարում անցումը: Այս գործում ամենակարևորը իշխանության իրական բաժանման և զսպումների ու հակակշռությունների մեխանիզմների ապահովումն է:

### Միակողմանիության դրսևորում

Մտահոգիչ է նաև 2008 թվականի ընթացքում վարչական ապարատի գործունեության միակողմանիությունը, որը արտահայտվեց մարտի 1-ից 20-ն ընկած ժամանակահատվածում՝ արտակարգ դրության ժամանակ: Դրա հետևանքով 20 օր հնչում էր միայն իշխանության տեսակետը: Կրքերը բորբոքելու և հասարակությունը պառակտելու ավելի «արդյունավետ ճանապարհ» գոյություն չուներ: Բոլոր պայմաններում և հատկապես ողբերգական իրադարձություններից հետո, մարդկանց կարելի է հանգստացնել և որոշ չափով համախմբել միայն բազմակողմանի լրատվության միջոցով, այլ ոչ միակողմանի քարոզությամբ «ուղեղները լվանալով»:

Մարդու իրավունքներին առնչվող ևս մեկ կարևոր հասկացություն է իրավական պետության հասկացությունը, որը շատ խնդրահարույց է: Ինձ հայտնի ավելի քան 70 սահմանումներից ամենապարզը հետևյալն է. իրավական պետությունն այնպիսի պետություն է, որում մարդ կարող է մեծ հավանականությամբ ասել, թե ինչպես կպատասխանի պետությունն իր գործողություններին: Այսինքն՝ Եթե ես ինչ որ բան անեմ, ապա պետության արձագանքը կլինի հենց այսպիսին, ոչ թե այլ: Եթե ես կատարում եմ Ա գործողությունը (անգործությունը), ապա պետության արձագանքը կլինի Բ գործողությունը (անգործությունը), այլ ոչ թե Գ-ն կամ Դ-ն: Սա է իրավական պետությունը: Պետության և անհատի փոխհարաբերության այս օրենքները հասկանալի են ու միանշանակ: Եվ հնարավոր չէ, որ ես ինչ-որ բան անեմ, սակայն հայտնի չլինի, թե ի՞նչ կանի չինովնիկը դրան ի պատասխան:

Այս կապակցությամբ կարելի է բերել մի շատ պարզ օրինակ Հնդկաստանի պատմությունից:

Անգլիացիներն արգելել էին Հնդկաստանի բնակիչներին աղ եփել: Եվ այդժամ տասը հնդիկ նաստեցին օվկիանոսի ափին և սկսեցին անթաքույց աղ եփել: Եկան ոստիկանները և ձերբակալեցին նրանց: Մեկ օր անց ափին հայտնվեցին աղ եփող հարյուր հնդիկ: Ոստիկանները նրանց նույնպես ձերբակալեցին: Իսկ հաջորդ օրն օվկիանոսի ափին արդեն տաս հազար հնդիկ էին աղ եփում: Եվ անգլիացիները կասեցրին օրենքը: Իսկ ինչո՞ւ: Որովհետև ակնհայտ է, որ հնարավոր չէ բանտարկել տաս հազար հոգու: Եվ նրանք բոլորն էին աղ եփում, այդ պատճառով հնարավոր չէր բանտարկել մեկին, իսկ մյուսներին ազատել: Նշանակում է՝ այդպիսի օրենքը գործել չի կարող, քանի որ դա խախտում է իրավական պետության սկզբունքը, իսկ Մեծ Բրիտանիան իրավական պետություն էր: Իսկ ինչպիսի՞ հանգուցալուծում կստանար այդ դեպքը կոմունիստական երկրում: Առաջին օրը, երբ ափին տասը հնդիկ նատած լինեին, կգային ոստիկանները, բոլորին կծեծին, նրանցից վեցին կրանտարկեին, իսկ չորսին բաց կրողնեին, և բոլորը կմտածեին. «Սատանան գիտի, թե նրանց ինչու բաց բողեցին»: Իսկ հետո, մյուսներին վախեցնելու համար, կրանտարկեին ևս երեք հոգու, որոնք ընդհանրապես օվկիանոսի ափին չեին էլ եղել: Հայտնի չէ եփում եմ ես աղ, թե ոչ, կցանկանա իշխանությունը՝ կրանտարկի ինձ, չի ցանկանա՝ ես ազատ կլինեմ:

Պատճառը այն է, որ կոմունիստական երկիրը իրավական պետություն չէ, իսկ սա շատ կարևոր է մարդու իրավունքների պաշտպանության համար:

<sup>16</sup> Այս հատվածում մեջբերում է կատարված Մարեկ Նովինցկու մտքերից:

## Հանուն մարդու՝ թե՞ մարդու հաշվին

Խորհրդային միությունից և 18 տարվա հետխորհրդային ժամանակահատվածից մեզ, որպես ժառանգություն, մնացել է մի համակարգ, որը գործում է ոչ թե հանուն մարդու, այլ մարդու հաշվին:

Գոյություն չունի որևէ հասարակություն առանց հակասությունների: Սակայն այդ հակասությունների կրողները մրցակիցներ են, այլ ոչ թե քննամիներ, ովքեր փորձում են միմյանց ոչնչացնել: Այժմ ժամանակն է օբյեկտիվ նայելու իմքներս մեզ վրա, և մեր սխալների և հիմնախնդիրների համար շմեղադրել ում ասես՝ միայն ոչ մեզ: Ե'վ իշխանությունը, և՛ ընդդիմությունը պարտավոր են վերադարձնել հասարակությանը սերը, հանդուժողականությունը, առանց որի հնարավոր չէ հարգել միմյանց իրավունքները: Եկեք դասեր քաղենք այն մարդկանց խոսքերից, ովքեր ամբողջ կյանքը նվիրել են իրենց ժողովրդին:

«Հայերի մեղքերը ավելի են նպաստել Հայաստանի կործանմանը, քան ժամանակ առ ժամանակ մեր երկիր ներխուժող քննամիները: Հայերը քաղում են իրենց անհաշտ անցյալի պտուղները» (Գարեգին Նժդեհ):

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## Հավելված 1

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունները

Լրագրողների նկատմամբ 2008 թվականին շարունակվող

բռնությունների դատապարտման վերաբերյալ

11/08/08

Հայաստանում վերջին տասնինգ օրվա ընթացքում արձանագրվել են լրագրողներին ահարեկելու և մասնագիտական պարտականությունների իրականացմանը խոչընդոտելու մի շարք դեպքեր, մասնավորապես՝ հուլիսի 29-ին՝ Տավոշի մարզի «Հայլորի» թղթակից Գայանե Թամամյանի, օգոստոսի 1-ին՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի տնտեսական գծով պատասխանատու Գագիկ Հովհանիսյանի, օգոստոսի 11-ին՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Լուսինե Բարսեղյանի նկատմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված լրագրողները կարող են ներկայացնել իրենց հետ կատարվածի ամբողջական նկարագրությունը՝ ընդուած մինչև իրենց խոչընդոտող անձանց ինքնությունը բացահայտող լուսանկարները և ահարեկող անձանց մեքենաների համարները, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը կոչ է անում իրավապահ մարմիններին լինել հետևողական և հույս է հայտնում, որ տվյալ պայմաններում բոլոր անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման դեպքում առավել դյուրին կլինի բացահայտել օրյեկտիվ իրականաթյունը և մեղավորներին օրենքով նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկելը:

Նշված միջադեպերը վտանգում են բազմակարծությանը և խոսքի ազատությանը Հայաստանի Հանրապետությունում:

20/08/08

Ս.թ-ի օգոստոսի 18-ի երեկոյան Երևանի կենտրոնում հարձակման ու ծեծի է ենթարկվել «Ազատություն» ռադիոկայանի երևանյան գրասենյակի դեկավարի պաշտոնակատար Հրաչ Մելքոնյանը, որի խոսքերով հարձակումը կապված է իր մասնագիտական գործունեության հետ:

Վերջին ամսվա ընթացքում հաճախակի են դարձել լրագրողների նկատմամբ բռնությունները, ինչի կապակցությամբ բազմիցս կոչ եմ արել իրավապահ մարմիններին առավել հետևողական լինել մեղավորներին բացահայտելու գործում, քանի որ նշված երևոյթները սպառնում են երկրում խոսքի ազատության կայացմանը:

Շարունակում եմ մնալ իմ այն կարծիքին, որ անկախ այն հանգամանքից թե լրագրողն ինչ բնույթի հրապարակում է ներկայացրել, խիստ դատապարտելի է դժգոհության նման դրսերումը և այն պետք է համարժեք արձագանք գտնի բոլորի կողմից:

18/11/08

Սույն թվականի նոյեմբերի 17-ին՝ ժամը 20-ի սահմանում, 3 անհայտ անձանց կողմից հարձակման է ենթարկվել «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության նախագահ և «Հետք» իմաստերնետային թերթի խմբագիր Էդիկ Քաղդասարյանը։ Նշվածի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 18.11.2008թ. հայտարարություն է արել։

«Տարիներ շարունակ ականատես ենք լինում լրագրողների նկատմամբ բռնությունների, ինչի կապակցությամբ բազմիցս կոչ եմ արել իրավապահ մարմիններին առավել հետևողական լինել մեղավորներին բացահայտելու գործում, սակայն նրանք մինչ օրս չեն բացահայտվել։ Այս երևոյթներն իրենց մեջ պարունակում են ծայրահեղ վտանգավոր միտում և լուրջ սպառնալիք են հանդիսանում երկրում խոսքի ազատության կայացման համար։

Եվս մեկ անգամ կոչ եմ անում իրավապահ մարմիններին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ։ Հակառակ դեպքում, կարծում եմ, ճիշտ կլինի, որպեսզի ոստիկանության վերադասության կողմից քննարկվի օպերատիվ հետախուզական աշխատանքներ իրականացնող մարմիններում զբաղեցրած պաշտոնյաների կոմպետենտության հարցը»։

## Հավելված 2

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը

ՀՀ ԱՆ «Նուրբարաշեն» քրեակատարողական հիմնարկում  
տեղի ունեցած միջադեպերի վերաբերյալ

ՀՀ ԱՆ «Նուրբարաշեն» քրեակատարողական հիմնարկում գտնվող կալանավոր Գրիգոր Ոսկերչյանի շահերի պաշտպան՝ փաստաբան Ստեփան Ոսկանյանը, 23.12.2008 թվականին զանգվածային լրատվության միջոցներով հայտարարել է, որ իր պաշտպանյալը քրեակատարողական հիմնարկում ծեծի է ենթարկվել:

Նույն օրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ահազանգել ՀՀ ԱՆ «Նուրբարաշեն» ՔԿՀ գտնվող կալանավոր Գևորգ Մանուկյանի շահերի պաշտպան, փաստաբան Ինեսա Պետրոսյանը և հայտնել, որ իր պաշտպանյալը քրեակատարողական հիմնարկում ծեծի է ենթարկվել և իրեն չեն բողնում տեսակցել վերջինիս հետ:

Պաշտպանի հանձնարարությամբ աշխատակազմի աշխատակիցներն այցելել են ՀՀ ԱՆ «Նուրբարաշեն» ՔԿՀ, հանդիպել նախնական կալանքի տակ գտնվող Գրիգոր Ոսկերչյանին և Գևորգ Մանուկյանին: Պաշտպանի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Գրիգոր Ոսկերչյանը հայտնել է, որ 23.12.2008թ.՝ ժամը 10:00-ին կալանախուց են մտել հարկի հերթապահ Խարթուղարք Հակոբյանը և իրեն անձանոթ այլ անձինք՝ կալանախում խուզարկություն կատարելու համար: Իրեն, որպես տարիքով ավագի, բողել են կալանախում, իսկ մյուս կալանավորներին համել են խցից:

Խուզարկության ժամանակ խուզարկություն կատարողներից մեկը տեղեկանալով, թե ինքը ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով է մեղադրվում՝ ուժգին ապտակել է իրեն, որից հետո ևս մեկ հարված է ստացել աջ ոտքին: Ստացած հարվածների հետևանքով իր ինքնազգացողությունը խիստ վատացել է, որի պատճառով էլ իրեն նշանակված ժամից ուշ են ներկայացրել դատարան:

Մյուս կալանավոր Գևորգ Մանուկյանը պաշտպանի ներկայացուցիչներին հայտնել է, որ արդեն հանդիպել է իր փաստաբանի հետ, իսկ ինչ վերաբերում է իրեն ծեծի ենթարկելուն, ապա հրաժարվում է այդ առումով որևէ հայտարարություն անել, քանի դեռ չի խորհրդակցել փաստաբանի հետ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Ա. Հարությունյանը դատապարտում է նման բռնության երեսույթը՝ համարելով այն որպես ճնշում ամբաստանյալների վրա, ուստի, Գրիգոր Ոսկերչյանի հայտնած տեղեկությունների վերաբերյալ դիմել է ՀՀ արդարադատության նախարարին՝ առաջարկելով անցկացնել ծառայողական քննություն և պատժել մեղավոր անձանց:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը համապատասխան առյաններում բարձրացրել է նաև՝

ա) լրագրողների կողմից դատական նիստը լուսաբանելու պայմանների հետ կապված հարցերը, որպեսզի նրանք հճարավորություն ունենան ինքնուրույն լուսաբանել դատավարությունը, այլ ոչ թե ստիպված լինեն օգտվել մատուցված նյութից,

բ) ամբաստանյալների հարազատների՝ դատական նիստերի դահլիճ մուտքի ապահովման հարցը, քանզի դատական նիստերի դահլիճում էին գտնվում քաղաքացիական հագուստով բազմաթիվ ոստիկանության աշխատակիցներ, մինչդեռ ամբաստանյալների հարազատների մեծ մասը չին կարողացել մուտք գործել այնտեղ:

## Հավելված 3

### Կ Ա Ր Ծ Ի Ք

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննված թիվ 62215908 քրեական գործով՝ ըստ  
մեղադրանքի՝ Ա. Արզումանյանի, Մ. Մալխասյանի, Ս. Սիքայելյանի, Հ. Հակոբյանի, Գ.  
Ոսկերչյանի, Ս. Սիրունյանի և Շ. Հարությունյանի մեղադրական եզրակացության  
վերաբերյալ

2008թ. մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած դեպքերից հետո որպես  
մեղադրյալ ներգրավված, իսկ այնուհետև կալանավորված Ալեքսանդր Արզումանյանի,  
Մյասնիկ Մալխասյանի, Սասուն Սիքայելյանի, Հակոբ Հակոբյանի, Գրիգոր Ոսկերչյանի,  
Սուրեն Սիրունյանի և Շանթ Հարությունյանի նկատմամբ հարուցված թիվ 62215908  
քրեական գործի նախաքննությունն իրականացվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության  
կողմից: Նախաքննությունն ավարտվել է 2008թ. սեպտեմբեր ամսին, և քրեական գործի  
նյութերին դատավարական կարգավիճակ ունեցող սուբյեկտների ծանոթացումն ավարտվել է  
նոյեմբերի 25-ին:

Մեղադրական եզրակացությունը կազմվել է 2008թ. նոյեմբերի 26-ին, որը ՀՀ գլխավոր  
դատախազության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական  
Կ. Փիլոյանի կողմից հաստատվել է նոյն թվականի դեկտեմբերի 1-ին:

Նշված քրեական գործից առանձին վարույթ անջատված քրեական գործի  
մեղադրական եզրակացությունը մեր կողմից ուսումնասիրության է ենթարկվել միայն այն  
մասով, որը վերաբերում է թիվ զ/մ-ի զինծառայող Կ. Հայրապետյանին, որին ս.թ. հունվարի  
19-ի դատավճռով սուտ ցուցմունք տալու համար դատապարտել են մեկ տարկա  
ազատազրկման և դատարանի դահլիճից կալանքի վերցրել:

Մ. Մալխասյանի փաստաբանի կողմից ներկայացված մեղադրական եզրակացության  
ուսումնասիրությամբ պարզվել է, որ Մ. Մալխասյանին և նրա վարորդ Արման Շահինյանին  
առաջադրված մեղադրանքների հիմքում դրված են եղել հենց Կարեն Հայրապետյանի  
ցուցմունքները, որոնցից, սակայն, վերջինս կտրականապես հրաժարվել էր ինչպես  
դատաքննության ընթացքում, այնպես էլ Պաշտպանի ներկայացուցիչների հետ հանդիպման  
ժամանակ:

Նշված մեղադրական եզրակացության 31-32 էջերում նշված է հետևյալը. «...վկա  
Կարեն Հայրապետյանի ցուցմունքներով՝ այն մասին, որ 2008թ. փետրվարի 23-ին  
համագյուղացիներ Սիս Կարապետյանի և Բորիս Աբրահամյանի առաջարկով օրավարձի  
դիմաց մասնակցել է Ազատության իրապարակում կազմակերպված հանրահավաքներին ու  
գիշերել «Ապարան» ցուցանակով վրանի հարևանությամբ տեղադրված փոքր վրանում՝ Սիս  
Կարապետյանի հետ: Այդ օրերի ընթացքում Ապարանի վրանում գիշերողներին սնունդով

ապահովել է պատգամավոր Մյասնիկ Մալխասյանի վարորդը: Մ. Մալխասյանը հաճախակի այցելել է իրենց, սակայն զիշերել է այդտեղ փետրվարի 29-ի՝ լույս մարտի 1-ի զիշերը: Օրավարձիկ իրեն խոստացած գումարը՝ 3000 դրամը, վճարել է Սիս Կարապետյանը, ում գումարները տվել են հանրահավաքի կազմակերպիչները: Փետրվարի 25-ին կամ 26-ին Մ. Մալխասյանը, գալով Ազատության իրապարակ, վարորդին հանձնարարել է մեքենայի մեջ եղած իրերը հանել և լցնել վրանների մեջ: Վերջինս բացել է իր վարած սև «ԳԱԶ 31-10» մակնիշի մեքենայի բռնախցիկը, որի մեջ լցված են եղել 75-85 սմ երկարությամբ պատրաստված փայտե մահակներ: Դրանք տեղափոխել և լցրել են «Ապարան» գրառումով վրանի մեջ: Մարտի 1-ին ժամը 06:30-ի սահմաններում, նկատել է, որ ոստիկաններ են մոտեցել օպերայի իրապարակին, որին ի պատասխան՝ հավաքվածները սկսել են աղմկել: Վրանների մոտ նկատել է Մյասնիկ Մալխասյանին, ով գոռալով հանձնարարել է, որ ոչ մի դեպքում թույլ չտան ոստիկաններին առաջ գալ և հարձակվեն նրանց վրա: Դրանից հետո հավաքվածները վրաններից հանել են մահակներ, երկարյա ձողեր ու հարձակվել ոստիկանների վրա: Մյասնիկ Մալխասյանը նույնպես ձեռքում ունեցած փայտե մահակով հարձակվել է ոստիկանների վրա: Վախենալով տեղի ունեցող դեպքերից, հեռացել է իրապարակից»: (Հատոր 28, գ.թ. 60-63, 79-81)

Այնուհետև մեղադրական եզրակացությամբ նշվում է հետևյալը. «Թեև Արման Շահինյանին քրեական պատասխանատվության ենթարկվելուց զերծ պահելու նպատակով վերջինիս վերաբերյալ քրեական գործի դատաքննության ժամանակ վկա Կարեն Հայրապետյանը իրաժարվել է նախաքննական ցուցմունքներից՝ հայտարարելով, որ երբեւ չի հարցաքննվել և ցուցմունքներ չի տվել, իսկ քրեական գործում առկա՝ իր անվամբ գրված ցուցմունքներում եղած ձեռագիրն իրեն չի պատկանում, սակայն այդ կապակցությամբ դատարանի նշանակած դատաձեռագրաբանական փորձաքննությամբ հաստատվել է, որ նրա հարցաքննության արձանագրություններում ձեռագիր գրառումները և Կարեն Հայրապետյանի անունից բոլոր ստորագրությունները կատարվել են վերջինիս կողմից:

Կարեն Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 338-րդ հոդվածի 1-ին մասով՝ սուս ցուցմունք տալու համար, նրա նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ» (Հատոր 28, գ.թ. 228-237):

Չերծ մնալով գնահատական տալուց մեղադրական եզրակացության այս կամ այն հատվածին (հաշվի առնելով գործը դատական քննության փուլում գտնվելու հանգամանքը)՝ այնուամենայնիվ, չենք կարող չարձագանքել այն հատվածին, որտեղ անտեսվել է ՀՀ Սահմանադրության 21 հոդվածը: Դեռևս նոյեմբերին կազմված մեղադրական եզրակացությամբ նշվում է Կ. Հայրապետյանի մեղադրական այն դատավճուի մասին, որը, ըստ էության, գոյություն չուներ:

Իսկ ՀՀ Սահմանադրության 21 հոդվածի 1-ին մասի համաձայն, հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

## Հավելված 4

Մամլո հաղորդագրություն

Պաշտպանի հայտարարությունը դատական պրոցեսների  
մոնիթորինգի վերաբերյալ

Այս դատական պրոցեսների մեր մոնիթորինգը ցույց տվեց, որ մեղադրական կողմի ապացուցողական քազան համոզիչ չէ, իսկ դատարանները միշտ պաշտպանում են մեղադրական կողմի մոտեցումները:

Իմ ներքին համոզմունքն ավելի համընկնում է պաշտպանության մոտեցումների հետ, և դա բնական է, քանի որ՝ Դատախազության և Հատուկ քննչական ծառայության նմանատիպ գործունեությունը, երբ փաստացի սեփականատիրոջ ինստիտուտ է առաջանում, գոնե պետք է հավասարակշռվի Մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

Ես ողջունում եմ ինչպես ներման, այնպես էլ համաներման ինստիտուտները, սակայն տվյալ դեպքում նախապատվությունը տալիս եմ համաներմանը:

Հաշվի առնելով, որ «7-ի գործը» արդեն դատարանում է, իսկ այդ գործը կարող է դառնալ փորձաքար երկրի հետագա զարգացման ուղղու համար՝ որոշել եմ չինել սուրյեկտիվ, ավելի պրոֆեսիոնալ հանդես գալ, չխախտել դատարանի անկախությունը (քանզի Ստրասբուրգի դատարանի նախադեպային իրավունքով դատական պրոցեսին գուգահեռ կարծիքները կարող են դիտարկվել որպես ոտնագություն դատարանի անկախության դեմ և ալտերնատիվ պրոցես իրականացնելու փորձ), մշտապես մոնիթորինգի տակ առնել այդ պրոցեսը և պաշտպանության ու մեղադրական կողմերի փաստարկների քախման ու դատավորի կեցվածքի հիման վրա հանդես գալ հայտարարությամբ:

Կոչ եմ անում քաղաքացիական հասարակության ինստիտուտներին և մամուլին հանդես գալ նույն պրոֆեսիոնալ մշտական վերահսկողությամբ: Սա այն դեպքն է, երբ բոլոր իրավապաշտպան կառույցները, մամուլը կարող են ամենօրյա հետևողական պրոֆեսիոնալ գործունեությամբ, առանց շոուների, լուրջ արդյունքի հասնել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ  
ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հավելված 5

### Դ ի տ ա ր կ ո ւ մ

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը  
երկարացնելու վերաբերյալ որոշումների

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) չափորոշիչների  
համատեքստում

Ուսումնասիրելով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 62202608 քրեական գործով ներգրավված մի շարք մեղադրյալների նկատմամբ ընտրված խափանման միջոցի վերաբերյալ դատարանների որոշումները՝ պարզվում է, որ.

1. Որոշումների մեծ մասում հիմք ընդունելով միջնորդություն ներկայացնող նախարարների մարմնի փաստարկումները, առանց մյուս կողմի միջնորդությունները քննարկելու՝ դատարանն այդ միջնորդությունը դիտարկում է հիմնավորված:

Որոշումների մեջ զգալի թիվ են կազմում նաև այնպիսիները, որոնցում կրկնվում է նախարարների մարմնի միջնորդությունը, դրանք նույնարովանդակ են ամբողջապես և ուղղակի դեպքերի նկարագրություն են իրենցից ներկայացնում: Ըստ Էության, նախարարների մարմնի միջնորդության պատճառաբանություններին է միայն դատարանն անդրադարձել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումներում և հազվադեպ է անդրադարձել պաշտպանական կողմի միջնորդության պատճառաբանությանը: Դատավարությունը պետք է բնույթով լինի մրցակցային և մշտապես ապահովի «զենքերի» հավասարություն կողմերի միջև: Գարսիա Ալվան ընդդեմ Գերմանիայի գործով հայցվորին թույլ չեր տրվել ծանոթանալու դատախազության գործին, որը պարունակում էր ոստիկանության իրազեկի ցուցմունքներ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռեց, որ 5(4) հոդվածի համաձայն դատավարությունը պետք է սկզբունքորեն բավարարեր 6-րդ հոդվածի պահանջները քրեական գործով արդար դատաքննության և այլ առումներով:

2. Հաջորդ դիտարկումն այն է, որ դատարան ներկայացրած միջնորդություններում տվյալ մեղադրյալի հետ կապված դեպքերի նկարագրությունները չեն եղել կոնկրետ: Նկարագրել են ընդհանուր վիճակը՝ չմասնավորեցնելով անձի կոնկրետ գործողությունները: Օրինակ, գրեթե բոլոր միջնորդություններում նշվում է, թե մեղադրյալը «ներգրավվելով 2008 թվականի փետրվարի 19-ին կայացած Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրություններում Նախագահի թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի պարտություն կրելուց հետո երկրում ներքաղաքական իրավիճակն ապակայունացնելու նպատակով վերջինիս մի խումբ համախոհների կողմից օրենքով սահմանված կարգի խախտմամբ կազմակերպված

հրապարակային միջոցառմանը, նրանց ուղղորդմամբ և հրահրմամբ անմիջական մասնակցություն է ունեցել 2008 թվականի մարտի 1-ից 2-Ա ըմկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած, լայնածավալ բռնություններով, ջարդերով, հրկիզումներով, պետական, հանրային և մասնավոր գույքի ոչնչացմամբ, վճարումով, բացահայտ հափշտակություններով, իշխանության ներկայացուցիչներին զինված դիմադրություն ցույց տալով, հրազենի, պայրուցիկ նյութերի, որպես զենք օգտագործելու համար հարմարեցված տարատեսակ առարկաների գործադրությամբ, սպանություններով զուգորդված զանգվածային անկարգություններին»: Դա նշանակում է, որ փոխարենը հստակեցնելու, թե զանգվածային միջոցառմանը մասնակից անձը կոնկրետ ինչ գործողություններ է կատարել, նախաքննության մարմինը ներկայացրել է ընդհանրական փաստարկում՝ դրանով իսկ բացառելով անձի արարքի անհատականացման հարցը:

3. Որոշումներում առավել հաճախ կարելի է հանդիպել հետևյալ եզրահանգմանը. «Մեղադրյալը կարող է բարենվել վարույթն իրականացնող մարմնից, ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությամբ, կատարել քրեական օրենքով արգելված արարք, խոսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց»: Այս ամենը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից պարզ մեջքերում է առանց պատճառաբանությունների և կրկնվում է բոլոր որոշումներում: Սինդեռ, դատարանը պետք է հիմնավորեր որ կան կոնկրետ հիմքեր եզրահանգելու մեղադրյալի կողմից նախաքննությունից թաքնվելու կամ պատասխանատվությունից խոսափելու համար:

Պացուրիան ընդդեմ Վրաստանի գործով Դատարանը նշել է, որ ո՞չ նախնական կալանքի վերաբերյալ որոշմամբ, ո՞չ կալանքի երկարաձգման վերաբերյալ որոշմամբ ազգային դատարանները չեն դիտարկել արգելանքի հնարավոր այլ միջոցներ, և ազգային դատարանների կողմից այդ բացքողումն անուշադրության դրսնորում է Կոնվենցիայի 5(3) հոդվածի պահանջների հանդեպ (տես, Դոլգովան ընդդեմ Ռուսաստանի, 02.03.2006, կետեր 47, 48 և 50): Դատարանն այս գործով վճռել է, որ ազգային դատարանը փոխարեն իրականացնելու իր պարտավորությունը՝ նշելու կալանավորման երկարացումը արդարացնող համոզիչ հիմքեր, հիմնվել է նախատպված և արստրահված (վերացական) պայմանների վրա: Դատարանը գտել է, որ ազգային դատարանի որոշումը խախտել է դիմումատուի իրավունքները՝ երաշխավորված Կոնվենցիայի 5(3) հոդվածով:

4. Ուսումնասիրված որոշումների մեծ մասում դատարանները ընդհանրապես չեն անդրադարձել խափանման այլ միջոցների ընտրման հարցին, մինչդեռ նրանք պետք է դա քննարկեին: Այլ բան է, եթե քննարկումից հետո միայն դատարանը կարող էր նպատակահարմար չգտնել կալանքի փոխարեն այլ խափանման միջոց ընտրելը:

Դիտարկման մեջ նշված թերությունների մասին Մարդու իրավունքների պաշտպանը անդրադարձել է դեռևս իր 2006 և 2007 թվականների տարեկան զեկույցներում, սակայն, ցավոք, դրանց պատշաճ անդրադարձ չկատարելը համապատասխան մարմինների կողմից հանգեցրել է արատավոր պրակտիկայի շարունակմանը, ինչը, մեր կարծիքով, բնորունելի չէ:

## Հավելված 6

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուղերձը

Մարդու իրավունքների միջազգային օրվա և

Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի 60-ամյակի առթիվ

Այսօր կարելի է խոսել նախորդ դարում տեղ գտած երկու՝ թեև միանգամայն տարբեր, սակայն նույնքան մեծ՝ բոլշևիկյան և մշտապես շարունակվող մարդու իրավունքների հեղափոխությունների մասին: Դրանցից առաջինը, բարեբախտաբար, հասավ իր մայրամուտին: Իսկ երկրորդը՝ մարդու իրավունքների հեղափոխությունը, շարունակվում է ու թեև ոչ միշտ է հաղթանակում, այնուհանդերձ, ուղեկցվում է իր առջև դրված նպատակներից գոնեւ մի քանիսին հասնելու լավատեսությամբ:

Հոչակագրի ընդունումը տեղի ունեցավ մինչ այդ պատմության մեջ չարձանագրված կոնսենսուսի շնորհիվ, որին հաջողվեց հասնել ծայրահեռ քաղաքական լարվածության ու կոնֆլիկտների պահերին: Այս փաստաթղթով ձևավորվեց մարդու իրավունքների այսօրվա ըմբռնումը՝ ընդգրկելով համընդհանուր բնույթի հիմնարար իրավունքներ: Հոչակագիրը թարգմանվել է աշխարհի ավելի քան 360 լեզուներով, իսկ այն ճանաչելու օրն ամեն տարի տոնվում է որպես Մարդու իրավունքների միջազգային օր:

Հոչակագրի հեղինակները, որոնք ծագումով տարբեր մշակույթներ են ներկայացնում, հոգացել են այն մասին, որպեսզի Համընդհանուր հոչակագիրը դառնա առավել արդարացի և խաղաղ աշխարհի համատեղ տեսլական: Այն դարձել է առաջին միջազգային փաստաթուղթը, որը որպես հիմնական դրույթ ընդունում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հասանելի լինելը յուրաքանչյուրին և ամենուրեք: Այն դարձավ պատմության մեջ առաջին ակտը, որի ոգեշնչման աղբյուր հանդիսացան ոչ թե հաղթանակած հեղափոխությունները կամ ազգային-ազատագրական շարժումները, այլ միջազգային համաժողովի նիստերի սեղանի շուրջ ծավալված քննարկումները: Այդ ակտը տասնամյակներ ի վեր սահմանեց հիմնարար, համընդհանուր ազատությունների և իրավունքների չափորոշիչները:

Համընդհանուր հոչակագիրը բովանդակություն է հաղորդում մարդու իրավունքների մասին ՍԱԿ-ի տարբեր կոնվենցիաների դրույթներին: Այն թվարկում է քաղաքացիական և քաղաքական, ինչպես նաև սոցիալական, մշակութային և տնտեսական իրավունքները: Համընդհանուր հոչակագրի ներքո միջազգային հանրության ստանձնած պարտավորությունների շնորհիվ այս իրավունքներից գրեթե բոլորը դարձել են միջազգային սովորութային իրավունքի մասը: Դրանք հիմքն են մարդու իրավունքների մասին ՍԱԿ-ի երկու կոնվենցիաների: Հաջորդող միջազգային պայմանագրերը և մարդու իրավունքների

տարածաշրջանային կոնվենցիաները ևս մշակվել են Համընդհանուր հոչակագրի հիմքի վրա: Հոչակագրում և նշված կոնվենցիաներում թվարկված իրավունքները նաև ներմուծվել են շատ երկրների սահմանադրություններում և ներպետական օրենսդրության մեջ: Ինքնին ՀՀ Սահմանադրությունն արտացոլում է նրանց ազդեցությունը:

Հոչակագրի արժեքաբանությունը պարզ է և հստակ: 1-ին հոդվածն ամրագրում է, որ բոլոր մարդիկ հավասար են և ազատ, քանի որ նրանց միավորում է մարդկային արժանապատվության ընդհանուր հատկությունը: Այն նաև մատնանշում է մարդկային գործողությունների բանականությունը և ազնիվ վարվելու պարտավորությունը՝ եղբայրության ոգով: Իր հերթին, հոչակագրի երկրորդ հոդվածը մատնանշում է, որ մարդու իրավունքները համընդհանուր են ոչ այն պատճառով, որ ճանաչվել են այս կամ այն պետության կամ միջազգային հանրության կողմից, այլ այն պատճառով, որ դրանք պատկանում են համայն մարդկությանը: Այս իրավունքները հասանելի են յուրաքանչյուրին, յուրաքանչյուր իրավիճակում և յուրաքանչյուր վայրում: 7-րդ հոդվածն անդրադառնում է այս դատողությանը՝ պնդելով, որ բոլոր մարդիկ հավասար են իրավունքի առջև, և որ յուրաքանչյուր ոք ունի խստրականության ցանկացած ձևից ինքնապաշտպանության իրավունք:

Հանուն ժողովրդավարության և մարդու իրավունքների այս պայքարը շարունակվում է աշխարհի գոյության սկզբից, և յուրաքանչյուր պարտություն այդ պայքարում բերում է այդ աշխարհի կործանմանը: Այստեղ ներկա գտնվելով՝ մենք կանոնում ենք վերահաստատել բոլոր մարդկանց համար ավելի ու ավելի բարելավված ու արդար աշխարհ կառուցելու պարտականությունը:

Ի՞նչ նկատի ունեմ ժողովրդավարություն ասելով: Իմ մոտեցմամբ՝ ժողովրդավարությունը հարուստ բովանդակություն ունեցող, համալիր նորմատիվ հասկացություն է, որը խարսխված է երկու հիմքերի վրա: Դրանցից առաջինը ժողովրդի ինքնիշխանությունն է: Այս ինքնիշխանությունն իրագործվում է կանոնավոր կերպով անցկացվող ազատ ընտրություններում, որոնցում մարդիկ ընտրում են իրենց ներկայացուցիչներին, ովքեր ել իրենց հերթին ներկայացնում են նրանց տեսակետները: Դեմոկրատիայի այս ասպեկտը դրսերվում է մեծամասնության սկզբունքում և օրենսդրական մարմնի առանցքային լինելու մեջ, որոնց միջոցով գործում են ժողովրդական ներկայացուցիչները: Սա ժողովրդավարության ֆորմալ ասպեկտն է:

Ժողովրդավարության մյուս ասպեկտն արտացոլվում է ժողովրդավարությունը բնութագրող արժեքներում (այլ, քան մեծամասնության սկզբունքի արժեքը): Սրանցից ամենակարևորներն են իշխանության բաժանումը, իրավունքի գերակայությունը, դատական անկախությունը, որոնք իրենց արտացոլումն են գտնում այնպիսի հարթություններում, ինչպիսիք են բարոյականությունն ու արդարությունը, խաղաղ հանրային կյանքը և

անվտանգությունը, ողջախոհությունը և բարեխաղճությունը: Սա ժողովրդավարական արժեքների գերակայության ասպեկտն է, որը կազմում է ժողովրդավարության իրական, էական կողմը:

Երկու ասպեկտները՝ և՝ ֆորմալ, և՝ էութեականը, անհրաժեշտ են ժողովրդավարության համար: Հասարակարգը, որում մարդիկ ինքնիշխան չեն, և օրենսդիր ու գործադիր ճյուղերը նրանց չեն ներկայացնում, չի կարող լինել ժողովրդավարական: Ժողովրդավարական չի կարող լինել նաև այն հասարակարգը, որին բնորոշ չեն իշխանության բաժանումը, իրավունքի գերակայությունը, դատավորների անկախությունը, մարդու իրավունքները և հիմնարար արժեքները: Չի կարող ժողովրդավարական լինել այն հասարակարգը, որը մեծամասնությունը ժխտում է փոքրամասնության իրավունքները:

Ժողովրդավարության հասկացությունը հարուստ է իր բովանդակությամբ: Այն չպետք է դիտարկվի միազին չափման շահեկան դիրքերից: Ժողովրդավարությունը բազմաչափ է, այն հիմնված է իրավունքի գերակայության և իշխանության բաժանման վրա, որոնց կենտրոնում են, իհարկե, մարդու իրավունքները: Իսկապես, ժողովրդավարությունը հիմնված է ամեն անհատի ունեցած իրավունքների վրա, որոնք նույնիսկ մեծամասնությունը չի կարող հերքել այն պարզ պատճառով, որ մեծամասնության գերակայության սկզբունքը հենց այդ անհատի ձեռքբերում է: Ժողովրդավարությունն ունի իր սեփական ներքին բարոյականությունը, առանց որի հասարակարգն այլևս ժողովրդավարական չի կարող լինել:

Հետխորհրդային հասարակություններն այսօր հայտնվել են կոշտ երկրնտրանքի առջև. կամ գտնել պետական սահմանափակ իշխանության սկզբունքի հետ անձի անհատական ազատության, ակտիվության և նախաձեռնության փոխազդեցության համաձայնեցված մոդել, կամ գնալ ուժեղ իշխանության ավտորիտար մոդելի ճանապարհով՝ իշխանությունից ժողովրդի օտարմամբ: Առայժմ քիչ չեն սեփական կորպորատիվ շահերի նպատակով իշխանության նոմենկլատուրային բյուրոկրատիայի օգտագործման դեպքերը, ինչը հետզհետե ավելի է օտարում հասարակությունը իշխանությունից՝ երաշխիք չծառայելով անհատների քաղաքացիական իրավունքների անձեռնմխելիության համար: Այս տեսակետից հետխորհրդային երկրների հիմնական խնդիրը մնում է այն, որ վերջիններս չսփորեցին ապահովել հասարակության կայունություն իշխանական կառույցների հակաշիռների և զապունների համակարգի միջոցով, եթք սահմանադրականությունը դառնում է պետության և քաղաքացիական հասարակության փոխհարաբերությունների իրական ռեժիմ: Մինչ օրս հետխորհրդային երկրների մեծ մասում կայունությունն ապահովվում է իշխանական կառույցների համակարգում գերակշռման սկզբունքի հաշվին: Եվ այլևս նշանակություն չունի՝ ինստիտուտներից որի՞ օգտին է գերակշռում ապահովում:

Այս առումով իշխանական համակարգի խնդիրը ամենասերտ կերպով առնչվում է ազատության հասկացության հետ: Ազատությունը մարդու էության անքակտելի մասն է: Եվ ազատությունն իրականանում է միայն հակակշիռների համակարգի պայմաններում: Իշխանության բոլոր այլ ձևերը՝ սկսած անարիստայից մինչ բռնատիրություն, գերակշիռների այս կամ այն ձևեր են:

**ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ  
ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



№ 2-0433

“25” 12 2008.

Народному Защитнику  
Республики Грузия  
господину Созару Субари

Уважаемый господин Субари!

На мое имя поступило заявление от руководителя организации «Союза общественных организаций «Еркир» по депатриации и освоению» Р. Татояна.

В заявлении выражается беспокойство по поводу проведения судопроизводства по обвинению руководителя политического движения «Единый Джавахх» Вагна Чахаляна, активиста Гургена Шириняна и членов их семей.

По утверждению Р.Татояна следствие и судебный процесс проводится с грубыми нарушениями прав человека.

Учитывая наши договоренности, прошу Вас провести мониторинг и выяснить соблюдаются ли права человека, закрепленные в международных документах, к которым присоединилась и Республика Грузия.

Пользуясь случаем еще раз поздравляю Вас с наступающим Новым 2009 годом и Святым Рождеством.

С наилучшими пожеланиями

А. Арутюнян



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱԾՍՊԱՆ

0002 Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ.՝ 53 02 62,  
Էլ. փոստ՝ [ombuds@ombuds.am](mailto:ombuds@ombuds.am)

№ 2-0384  
21 11  
— 2008թ.

## ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ԴԻՄՈՂ՝ ՀՀ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ  
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ք. Երևան, Պուշկինի փողոց 56ա

ՊԱՏԱՍԽԱՆՈՂ՝ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

### ԴԻՄՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքի (21 փետրվարի 2007 թվականի, ՀՕ-135-Ն) 14-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը սահմանում են, որ վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ դատավորը կարող է մինչև 6 ամիս ժամկետով գործուղվել նույն կամ վերադաս ատյանի դատարան:

Գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հետևյալ պատճառաբանությամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշմամբ դատավորին նույն ատյանի կամ վերադաս ատյանի դատարան գործուղելու արդյունքում ստեղծված դատարանը չի կարող համարվել դատական մարմին, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 94-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատարանների լիազորությունները, կազմակերպման և գործունեության կարգը սահմանվում են

Սահմանդրությամբ և օրենքներով: Մինչդեռ վճռաբեկ դատարանի նախագահի որոշման արդյունքում ձևավորված դատարանը չի համապատասխանում օրենքի հիման վրա ստեղծված դատարան հասկացությանը: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը չեն համապատասխանում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի, յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաշառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք՝ կրկին «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» մասով:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով և 101-րդ հոդվածի 8-րդ կետով՝ խնդրում եմ որոշել Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի՝ ՀՀ Սահմանդրության 18-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպան*

*Ա. Հարությունյան*